

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՎԱՆ»

474

# ԳԱՂՈՒԹԱՀԱՅ

## ՏԱՐԵԳԻՐԳ

Բ. Տ Ա Ր Ի 1940

Խմբագրեց  
Հ. ՄԿՐՏԻՉ ՎՐԳ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



Պատկեր  
Մատյան  
Գրախոս

Պ Ո Ւ Բ Ր Է Շ

1940

Տպ. «Հայ Մամուլ»

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

|   |                       | Էջ  |
|---|-----------------------|-----|
| Բացման հօսք, Քառորդ դար մը ետք                | Հ. Մ. Պոսուրեան       | 3   |
| <b>Գրական-վիպական</b>                         |                       |     |
| Յիէտոյ տ'Արթիքոյ կաղանդ և յուշեր              | Հրաչ Քաջարեանց        | 6   |
| Սասնոյ ծուեր (հազարամեակ մը)                  | Գ. Գեղարեունի         | 13  |
| Մայրութիւն (տորալէս)                          | Հօրիօն                | 16  |
| Դանուերի վրայ (յուշեր)                        | Վ. Գ. Մեհսուսեան      | 39  |
| Ինչո՞ւ գերի ենք ու անհայրենիք                 | Սօս-Վանի              | 53  |
|   | (Կենսագրութիւնով)     |     |
| Ծնունդի իրիկունը                              | Մասիս Մալաքեան        | 6   |
|   | (Լուսանկարը էջ 216)   |     |
| Սիրտ, ժպիտ և արցունք                          | Հ. Ն. Ապրոյեան        | 179 |
| <b>Բանաստեղծական</b>                          |                       |     |
| Սրտի արձագանգներ                              | Վահրամ Սօֆեան         | 50  |
|   | (Կենսագրութիւնով)     |     |
| Դաշտի ազրիւր, Գիւղի ժամ, Յորենի արտեր         | Օ. Զարմունի           | 75  |
|   | (Կենսագրականով)       |     |
|   | յուսանկարը ա. էջ 208) |     |
| Ձայն մը Անդենէն, Գիշերային                    | Լ. Օլրեանու           | 120 |
| Հայրուկը, դաղթական պատանեակը                  | Գամեթ-Արեալիւր 144 և  | 165 |
| Երգ Անդրաշխարհեան, Անտէր մեռելներ             | Զարեհ Պլպոյլ          | 142 |
| Մեծ պապաս                                     | Հ. Մ. Պոսուրեան       | 162 |
| Վկան (թատերական տեսարան մը)                   | Հրահան                | 16  |
| Երգ երգոց                                     | Սօս-Վանի              | 16  |
| Լուսահոգի                                     | ԹաղեոսԿապուսիկեան     | 17  |
| Կանցնի կեանքը, Եկո՛ւր, ո՛վ իմ պաշտելիս        | Արմենուհի Օհանեան     | 17  |
| Առ... Հ. Ս. Երեմեան (Ատրուշան)                | Տէ. Վ. Գ. Թորգոմեան   | 18  |
| Վերելքիս մէջ                                  | Հօրիօն                | 19  |
| Հնչեակ  | Թորոս Ազատեան         | 194 |
|   | (Կենսագրութիւնով)     |     |
| Քառեակներ                                     | Եգ. Գոյանեան          | 209 |
| Իրիկնային (Ալպէս Մամէն)                       | Թրգմ. Ալիշար          | 210 |
| <b>Հնախօսական-Բանասիրական</b>                 |                       |     |
| Երգումի սովորութիւնը հին Հայոց մէջ            | Նուպար Մագուսեան      | 92  |
| Բիւզանդական պարիսպներ Կ. Պոլսոյ մէջ           | Կ. Յ. Բասմաեան        | 104 |
| Մեծն Տիգրանի զէմքը բարձրագոյն թ. Ա. Բեթքեհեան | Ս. Ա. Բեթքեհեան       | 106 |
| Տիկնանց Տիկին Շուշանիկ                        | Տէ. Վ. Գ. Թորգոմեան   | 113 |
| Հին հայ աւելորդապաշտութ. Եղնկայ քով           | Հ. Ն. Պողոսեան        | 116 |
| Անտիպ էջեր Զուղահայ ժողովրդական               | Արամ Եսեմեան          | 121 |
| բանահիւսուցիչ                                 | (Լուսանկ. ա. էջ (227) |     |

ՀՐՈՏԱՐՈՒԿՈՒԹԻՒՆ • ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՀՐՈՏԱՐՈՒԿՉՈՒԿԱՆԻ

# ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐԻ

Ռ. Տ Ա Ր Ի 1940

~~ԱԿ~~  
~~3410~~

Խմբագրեց  
Զ. ՄԿՐՏԻՉ ՎՐԻ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

~~ԱԿ~~  
~~58~~


Տ

Արտոնագրի  
Պահիրտ Ալպոյանեանի  
— Մարտի

ԱԿ  
4145

ՊՈՒԿՐԵՇ

1940



Faint, illegible text at the top of the page, possibly a header or title.

1910  
OCT 12

Faint, illegible text in the lower middle section of the page.



ՏԻՐԱՄԱՅՐ ՎԱՐԴՈՒՀԻ ՊՈՏՈՒՐԵԱՆ  
ԾՆ. ՉՐՓՂԼԵԱՆ

## Չ Օ Ն

Քե՛զի կը նուիրեմ, մա՛յր, «Գաղութահայ Տարեգիրք»-ի այս երկրորդ հասորը, երբ 1940 բուսկանին հետ՝ դառնալից կեանքիդ 80 ամեակը կը բեւակոխես:

Դուն, հիւզ 50 տարի առաջ, քու աշխատանքը բազուկներուդ արդիւնքով, ինձի տուիր քաղցած ստիք քաղցած ստիք քաղցած ստիք քաղցած ստիք:

Ես անոնց փոխարէն Քեզի կու տամ այս գիրքը:

Գիտեմ, չես կարող զայն կարդալ, բայց կրնաս տեսնել դուն Քեզ հոն եւ դեռ շատ մը անձանքներ, որոնք եկած են աշխարհի չորս ծագերէն Քու գիրքը զարդարելու:

Մի՛ զարմանա՛ր, քե՛ դուն. անգրագէտ կի՛ն մը, կ'երեւաս հոս քու դժբախտ կենցաղներով:

Երբ դուն չըլլայիր՝ այս գիրքն ալ պիտի լոյս չտեսներ:

Երախտագրութեան Որդիդ՝

Հ. ՄԿՐՏԻԶ

## ՔԱՌՈՐԴ ԴԱՐ ՄԸ ԵՏՔ

Երբ ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՏԱՐԵԳԻՐՔ-ի այս երկրորդ թիւը լոյս կ'ընծայեմ՝ աշխարհ բռնկած է պատերազմով:

Բիրտ ուժը կը փորձէ Իրպուռնքին և արդարութեան պաշտպան կանգնել:

Անկուշած տէրերը Ազգերու՝ իրենց երկրին սահմանները ընդարձակելու մարմալէն բռնկած՝ անմեղ ու խոնարհ մարդկութեան անհամար զոհերու վրայ կը սիրեն բարձրացնել իրենց գահերը:

Նոր երեւոյթ մը չէ՛ այս: Պատերազմը, որուն մանրանկարն է կռիւը, մարդկութեան ընկեր ծնած է: Նախամարդուն երկու հարազատները կռիւով բացած են մարդկային կեանքի ասպարէզը:

Այս տարի (1939 Սեպտ.) Եւրոպայի մէջ քաղաքակիրթ ազգեր՝ պատերազմ յայտարարեցին: Թնդանօթները՝ հաղարաւոր անօթի մարդերով ամբացած բերդերը կը փչրեն, օշանաւերը՝ իրենց թափած ուռմբերով հիմնայառակ կ'ընեն քաղաքներու ասպարանքները, ընդծովեաները՝ ամենի նաւերու հետ հաղարաւոր կեանքեր կ'ընկղմեն, մարդիկ, թերևս առանց զիրար առելու՝ զիրար կը սպաննեն, ու ընծանիքներ, գիւղեր, քաղաքներ, նոյն իսկ ազգեր սևեր հաղած իրենց սիրելիները կ'ողբան:

Երբ այս օրերս իմ հին թղթերս կը խուզարկեմ՝ 1914ի օրագրութեանս մէկ մասը ձեռքս կ'անցնի: Կը կարդամ զայն յուզումով, կարծես այսօր, քառորդ դար մը ետք գրած եմ զայն: Անգամ մ'ալ միասին կ'ուզեմ կարդալ այդ տողերը, զոր գրած եմ 1914ի ընդհ. պատերազմի յաջորդ տարին, 1915ի աշնան:

«Թրանսիլվանիոյ Նեղիսաբերուպոլիս հայաբազմաբ խցիկիս մէջ կ'աւսասիմ իմ ապագայի հայրենակիցներուս շալու համար «Հայ Հանրագիտակ» մը: Թեեւ ազգեր ռուսական եւ սերպիական սահմաններուն վրայ գիբար կը բնաշնջեն, հունգարական լրագիրները մինչեւ իսկ կարծես, լսելի բնել կու տան հրեշտանիներու քնդիւնը, հրացաններու շալիւնը. կարծես շարժանկարի մը առջեւ բլլայի՝ իմ դիմաց կը բանան դաւար պատերազմի, ուր մարդիկ՝ մանաւանդ քուսառ մարդիկ. — որոնք կեանքի քաղցուրտեմեն կաթիլ մ'իսկ դեռ ըմպած չեն. — ապաստանած են գետնափորներու մէջ, իրենց պէս մարդ կոչուած քուսառակիցը որսալու եւ կամ անոր գնդակէն պատկանուելու համար: Կը տեսնեմ հազարաւորներ, որոնք մինչեւ հիմա կեանքի ապագայի երջանկութեան հասնելու համար կը տկային աւսասանքին, հիմակ անոնք ակնբարթի մէջ քնդանօթի մը հարուածին գծին վրայ գետին կը տապալին, կը լսեմ վերջապէս ողբերը եւ վայնասունները մայրերու, հարսներու, որբացած զաւակներու որոնց


սե խապրիկներ կը հասնին պատերազմի դաշտէն. կարծես վառօդի հոսք գոց պատուհաններէս ներս կը քափանցէ... Եւ սակայն ես անփո՛յթ, նսած գրասեղանիս առջեւ, կը նշանակեմ «Հայ Հանրագիտակ» իս մէջ քէ մեր մեծ վիպագիրը Ահարոնեան՝ ե՛րբ ծնած է. Դարանաղետաց գաւառը այսօրուան ո՛ր անունին կը համապատասխանէ, Արսլանպէկ գիւղը ո՛րքան բնակիչ ունի:

Ես իմ այս աշխատութիւնս շարունակելով. կարծես անտարբեր եմ գիճում մարդկութեան հնարած խոր ու անբաւ ցաւին դիմաց, եւ կարծես կը խնդամ անոնց վայնասուններուն մօտիկ...

\* \* \*

Այսօր Ե. Լալաեանցի, «Ազգագրական Հանդէս»ները ձեռք կ'առնեմ Զանգեզուր գաւառի մասին տեղեկութիւններ փողելու համար: Նկարները, հողագործ հայրենակիցներուս պատկերները, այն դեռա՛տի կիներ մանաւանդ օտորոցին ֆով նսած, ու հայրը, երիտասարդ հայրը, մագոս կուրծք բաց, գեղջկական պարզունակ նայուածք մը կը նետէ իր գաւկին վրայ որ կը կնանայ, որուն կարծիք համար ու գալ տարուան հացիկին համար, այսօր արեւուն տակ արիւն ֆրփնէ մտած աշխատած է իր եզներուն հետ...

Այս նկարը զիս կը սրափէ յանկարծ եւ գիրքս վար դրած ոտքի



կ'ելլեմ: Կ'ըսեմ, «Ռուսաստանը պատերազմի մէջ»... Եւ դեռ բաներ մը պիտի մտածէի՝ յանկարծ սենեկիս դուռը կը զարնեն, «դրք-դրք»: «Սապար» («մտէ՛ք»ի իմաստով): Թղթաբերն է. Պուտաբէրի լրագիրս բերած է, որուն առաջին էջին վրայ առանց իսկ ուզելու՝ կը կարդամ խորագիր *հետեւեալ* յուրը. «ՌՈՒՍՍԿԱՆ ՆՐԿՈՒՄ ԲԱՆԱԿՆԵՐ ԲՈՂՈՐՈՎԻՆ ԶԱՆԶԱՆՈՒՄԻՆ, ՀԱԶԱՐԱՒՈՐ ՍՊԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ՔԻՉ ԳԵՐԻՆԵՐ»:

Ազգայնամուտը քիչ ևս չի զարգացել: Զանգեզուրի, օրորոցի մէջ քնացող մանուկը, կարծես ինձի հետ կը խօսի. — «Ես հիմա մեծցած իբր ռուս զինուոր, պատերազմի դաշտին վրայ եմ»: Անոր հայրը արդէն տառապանքով աշխատեցնելու շտապով ձեռնարկեց՝ նայուածքը իր մանուկէն կը վերցնէ եւ ինձի դարձած կ'ըսէ.

— Ես ասո՞ր համար աշխատեցայ:

Որդ մը, ինչպէս անզգայիօրէն հասունցած խնձորին միջուկը կ'ուտէ, այդպիսի անբարեկամք որդ մը, այդ օրէն սկսաւ իմ սիրտը կրծել. եւ ես այդ օրը չհրցայ աշխատիլ. գոցեցի այդ պատերազմը հանդէսը եւ բնաւ չուզեցի մտնել գրասեղանիս:

Եթէ ուշի որով դիտեցին զիս ուրիշները այդ օր՝ պիտի ըսէին. «Հոգեկան մեծ ցաւ մը կը տանայի». վասնզի երբեմն ինքզինքիս զայով կը զգայի որ ձեռնարկի մը պէս կը պստէ հրապարակին վրայ, տարածում փայտով:

Ի՞նչ կը խորհէի.

Կը խորհէի անուշտ, թէ չէի կրնար անտարբէր մնալ համաշխարհային պատերազմին առջեւ քանի որ իմ աշխատակիցներն ալ սխալուած են մասնակցիլ եւ ջարդուիլ: Մեռնիլ իբրեւ ռուսահպատակներ:

Թրեմախոսանքը արդէն շատ զոհեր տուաւ, մանաւանդ Սուլթան Համիտի օրով. քիչ առաջ վերջացող Պալմանեան պատերազմին մէջ մեծ ալ մեծ կորուստներ ունեցանք: Ու հիմա մեր ռուսահայ եղբայրներն ալ կ'անհետան, կը մեռնին պատերազմի դաշտին վրայ:

\* \* \*

Քանի մ'օրէ ի վեր Պոլսեան լրագիրներն ալ դադարեցան: Թուրքն ալ միացեր է յաղթական Գերմանիոյ: Ուրախ եմ, ոչ թէ անոր համար որ Իթքիահասակները պիտի յաղթեն, այլ անոր համար որ այս համաշխարհային պատերազմը շուտով պիտի վերջանայ եւ մարդկութիւնը աւելի նուազ զոհեր պիտի տայ:

\* \* \*

Այսօր Պոլսեան լրագիրը «Հայաստան» լրագիրը ստացայ: Ծարաւի էի հայկական լուրերուն: «Հանրագիտակ» իս հետ սկսայ հաշտուիլ, Պոլսեան կը պատրաստուի զինակից ըլլալ Գերմանիոյ, աւելի լաւ: «Հայաստան» էն կ'իմանամ որ Պոլսեան հայ երիտասարդները իբրեւ կամաւոր կ'ուզեն Ռուսիոյ կողմէն կռուիլ: Այս կայսրութիւնը զիս կը տանէ: Եթէ Գերմանացին յաղթէ՝ մեր կորուստը Ռուսիոյ բռնակին մէջ պիտի փնտնենք: Եթէ Ռուսը յաղթէ մեր տանկայ եղբայրները պիտի սպաննուին, կ'անհետնան բոլոր անոնք որոնք պատերազմը հնարեցին:

\* \* \*

Այս իրիկուն վիճակէն փախաւ հասաւ 37 տարեկան Պոլսեցի հայ մը: Զինակից Աւստրիոյ բուրձ հիւպատոսը զինքն ուզած է Պոլսի դրկել ծառայելու համար տանկայ բռնակին:

Կը հարցնենք փախստական զինուորացուն, — ո՞վ պիտի յաղթէ այս համաշխարհային պատերազմին մէջ:



— Ապահով՝ Անքանքր, կը պասասխանէ

— Բայց չե՞ք տեսներ որ Գերմանացիներն շատ մը բռնամի մայրաքաղաքներ պաշարած են:

— Երբ Բարիզն ալ գրաւէ՝ նորէն պիտի յարթուի, կը պասասխանէ հասաստմանու քիմիկ:

Անգլիական նաւատորմը Տարսանէյը կը ռմբակոծէ: Կ'ուրախանամ, շուտով Պոլիս պիտի մտնէ եւ պատերազմը պիտի վերջանայ կը խորհիմ: «Հայաստան» լրագիրը սակայն նիւթդ այն բոլորէն կը հասնի. երբ ես վարուծանի ու Սիամանթոսի անունները կ'անցընեմ «Հանրագիտակ» իս մէջ. վարը կը կարդամ քեզ Պարսիզակն ալ պիտի տեղահանուի: Քիչ անդին կը գրէ «Հայաստան» քեզ Պոլսոյ մտաւորականները գիշերանց ձերբակալուած հեռուները փոխել են:

Այսօր քեզ «Հանրագիտակ» ով կը գրադիմ անհամբեր «Հայաստան» ին կը սպասեմ: Երբ Ռուբէն Զարդարեանի կենսագրականը աւարտած էի՝ փոստով կը հնչէ ականջիս:


Նամակաբերը ինձի կու տայ «Հայաստան»-ը: Ամենէն առաջ վերջին լուրերուն աչք մը կու տամ: «Վարուծան ու Սեւակ սպաննուած»: «Պարսիզակ տեղահանուած»:

Երբ բնական թելիս վրայէն վեր կը հանեմ գլուխս, աչքերս դեռ քայտ են, «Հանրագիտակ»-ս հեռուն նետուած է. ե՛ս նետեմ եմ: Ռո՛ւ համար գրեմ, «Վարուծանը եւ Սեւակ սպաննուած, Պարսիզակ տեղահանուած»...:

Քառորդ դար մը ետք նոյն պետերազմն է որ կը կրկնուի Բոլոնիոյ մէջ, Յրանսայի մէջ, Թուրքիոյ մէջ, Բրիտանական երկիրներու մէջ մեր ազգակիցները զէնք առած են ձեռքերնին: Մեր փոքրիկ ազգն է որ ամէն ճակատի վրայ պիտի տուժէ, ու սակայն ես «Հանրագիտակ» իս ե. գիրքի ձեռագիրը կը պատրաստեմ: Քանի մը օր առաջ նահատակ Ռուբէն Զարդարեանի կենսագրականը գրեցի, անոր քով առաւելօքն իր երկու որդիներունը:

Պատերազմ կայ եւ սակայն այս ծառայողներն ալ լոյս կ'ընծայեն, որովհետեւ հաւատարմութեամբ այլեւ թէ այս իմ հայ ազգը միշտ պիտի ապրի:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



Ֆրունուսա 1939

# ՖԻԵՍՈՅ ՏՄԱՐԹԻՔՈՅ, ԿԱՂԱՆԴ ԵՒ ՅՈՒՇԵՐ

Իզմիրի աղէտէն ետք ամերիկեան և անգլիական «բարեխնամ» հաստատութիւններ Փոքր Ասիոյ հայ որբերը ցրուեցին Յունաստանի կղզիներուն մէջ: Բախտը կամ դժբախտութիւնը քչեց տարաւ մեզ Գորֆու: Շուրջ հինգ հարիւր հոգի էինք: Միջնաբերդի զօրանոցը մեր բնակարանն էր, մուտքի զրան վրայ կը ծածանէր Նորին Վեհափառութեան դրօշը և մեր հաստատութիւնը կը կոչուէր «Lord Mayors Fund»:

Եւ եղաւ որ օրին մէկը կաթողիկէ բոկոտն քահանաներու ուխտէն Հայր Կիւրեղ շրջի կղզիէ կղզի և շուրջ վաթսուն հոգի հաւաքէ, Իտալիա փոխադրելու համար: Աղգականական կապեր, բարեկամութիւններ, բարեխօսութիւններ ի զօրու էին Հայր Կիւրեղի մօտ՝ Իտալիա մեկնող բախտաւորներու խումբին մասնակից ընելու համար այս կամ այն որբը:

Իմ մեծ հայրս հարուստ եղած է և բարերար: Ճակատարաց եւ հպարտ կերպով կը յատարարեմ այս իրողութիւնը: Իր շնորհիւ ոմանք փաստարան եղած են, ուրիշներ ճարտարագէտ, ոմանք բժիշկ, ուրիշներ՝ եպիսկոպոս: Անոնցմէ մին երախտահատոյց ուղած էր ըլլալ մեծհօրս, (յուսերուն մէջ թող պառկի) և զիս յանձնարարեբ էր Հայր Կիւրեղին:

Շոգեանաւը, նոր Նոյեան Տապան, (քանզի «յանձնարարութեամբ» կարավանին խառնուած էին ամէն տեսակ արարածներ, հինգ տարեկանէն մինչ քսանըհինգ տարեկան, բոլորն ալ ուսում կ'ուղէին առնել և ազագային «Իլիշան ըլլալու» մասին կը խօսէին), ճամբայ ելաւ Գորֆուէն յամի շնորհաց 1924ին, Մարտ ամիս:

Նոր երկիր պիտի տեսնէի, նոր մարդ պիտի ճանչնայի, ուրիշ բանի մասին չէի մտածեր և ժամներկու տարեկան էի:

Վեներաբլի մէջ դիմաւորեցին մեզ Միսիթարեան Հայրեր և փոխադրեցին Ֆիեսոյ Տ'Արթիքոյ անշան գիւղակ մը, երկու քիլոմէթր երկայն, մէկ քիլոմէթր լայն: Տեղացիները կը ճանչնային միայն իրենց եկեղեցին, ժամը մէկ անգամ անցնող հանրակառքը և դպրոցին վարժապետը:

Եւ սակայն այդ աննշան գիւղակին վրայ, յանկարծ աշխարհի յորս կողմերէն կարկուտի պէս նամակ աեղաց.

— Նարմալեյ Անոյեան

«Հայկական որբանոց»

Ֆիեսոյ Տ'Արթիքոյ

Վեներաբլի գաւառ (Իտալիա)

Ամերիկայէն, Եգիպտոսէն, Յունաստանէն, Պուլկարիայէն, Թուրքիայէն, և այլ երկիրներէ, Միհրանին քեռայրը, Վիչէնին մայրիկը, Կարապետին եղբայրը, Ալֆոնսին մօրեղբայրը, Պետրոսին մեծ հայրը, գրեցին, գրեցին, գրեցին:

Մեր բնակավայրը: Կեդրոնական պալատ մը, վերակացուներուն յատուկ, անոր առջև հոյակապ ծառուղի մը: Աջ ու ձախ երկու շէնքեր, ննջարան և վարժարան:

Մեր տեսուչը: Հ. Վրթանէս վրդ. Ոսնայէկեան, խօսքը ծանր, ձեռքը ծանր, պարաքը ծանր: Ոմանք դպրոց կը դրկէր, ուրիշներ՝ գործի, և շատեր՝ տուն, այսինքն հոն՝ ուրկէ որ եկած էին:

Մեր մեծաւորը: Հ. Դանիէլ վրդ. Ստեփանեան, աւելի ծեր՝ քան պարտէղին հաստարուն և բարձրահասակ ծառերը և բարի՝ անոնց շափ: Ծառերուն վրայ գմբիով մեր անուններուն սկզբնատառերը կը փորագրէինք և անոնք չէին բողոքեր: Հ. Դանիէլին հետ հազար տեսակ չարութիւններ կ'ընէինք և ինք չէր արտնջար:

Մեր մատակարարը: Հ. Սիմէոն վրդ. Ծրեմեան, կէս զիշերին պատարագ կ'ընէր. շատ կը կարդար և գրքերու հեղինակ էր:

Հ. Գրիգոր վրդ. Սարգսեան՝ Երեսուն տարեկան էր, սակայն մեզի հետ գնդակ կը խաղար, մեր ետեէն կը վազէր և գրաբարի դաս կու տար:

Մարգար՝ նշանաւոր տղայ էր, իր շուրջ կը հաւաքէր Սարբերդցի հայրենակիցները, կը պարէր ու կ'երգէր.

— Աղջկան՝ «օրօմայիլ»

Մայրիկին՝ «փայթօն»,

Հայրիկին՝ «թփալ» եւ մը,

Ան ալ «փայլան» չունենայ...

և կամ՝

Աղջկան՝ «իփեֆ Ֆէսան»

Մայրիկին՝ «եազմա»,

Հայրիկին՝ իւղոս Ֆես մը,

Ան ալ «փիւսկիլ» չունենայ...

և կամ՝

Աղջկան՝ Երիսասարդ,

Մայրիկին՝ փեսայ,

Հայրիկին «խըռՖաձ» կից մը,

Ան ալ փրէն Ֆրօնըսայ...

Չորս գին՝ վերակացուներ, որբեր. ծիծաղներ:

Երբեմն կը պատահէր որ Ստեփան կոխ ընէր Արտաչէսին հետ, «Էջու կտոր» կոչելով զինք, և որովհետեւ ի վերջոյ գիւղի մէջ կ'ապրէինք, ցանկապաթին առջև խկապէս էշ մը կեցած կ'ըլլար, Հայր Դանիէլ կը մօտենար և կ'ըսէր.

— Էջը ո՛չ դուն ես, ո՛չ ալ ինք, ահաւասիկ կեցեր է հոն:

Այս բաները տեղի ունեցան յամի շնորհաց 1924ին և տեւեցին երկու ամիս: Պարտէղին ծառերը սկսած էին ծաղկիլ և օր մը, յանկարծ, Հ. Վրթանէս աջ ձեռքով բռնեց ղիս, ձախ ձեռքով Չաւէնը, և մեղ զրկեց առն, այսինքն գիտէք... չեմ գիտեր ինչո՞ւ, թերեւ որովհետեւ մենք ալ «յանձնարարութեամբ» եկած էինք, թերեւ փոր-

ձելու համար թէ կարող ենք ձիթենիի ճիւղով վերադառնալ։  
Ապրեցայ Յունաստան երեք տարի, և ինծի տարեկից ունէ Եւ-  
րոպացի պէտք է ապրի երեսուն տարի՝ տեսնելու համար ինչ որ ես  
եսայ հոն, և ինչ որ կրեցի . . .

Եւ սակայն երբք չբողոքեցայ սիրելի Հ. Վրթանէս վարդապետը,  
երբք չբողոքեցայ փնտռելի Ֆիեսոյ տ'Արթիքոն։

Յամի շնորհաց 1927ին, (Հոկտեմբեր) 15 տարեկան պատանի մը  
ներկայացաւ Մուրաա-Ռափայելեան վարժարանի տեսչութեան, տըժ-  
գոյն խոնուն պատանի մը . . . մնացեալը գիտէք, եթէ չէք գիտեր՝ ղի-  
մեցէք Հ. Թաղէոս վրդ. Թոմաճանին, յորելեար, միանձն Մխիթար-  
եան, հասցէ։

Հայոց Կղզի Ս. Ղազար  
Վեցեթիկ (Իսախա)



Տարիները դիզուեցան իրարու վրայ, ձէք Լոնաւընի հատորնե-  
րուն պէս, և ահա դարձեալ ամանորի սեմին պանդխտութիւն, պայ-  
քար և մթուժիւն մեր շուրջ։

Կաղանդը կամ Ծնունդը սուրբ օրեր են։ Գոնէ սուրբ օրերու  
ընթացքին կ'ուզեմ հայերէն խօսիլ։

Ինչ ընել։ Ո՛ւր երթար Բարեկամ չունիմ։ Ազգական չունիմ։  
Ղեւոնդին ետեէն երթամ, լոյսի ետեէն երթալու պէս։ Ղեւոնդ հայ է  
և մանկութեան ընկեր։ Դպրոցին մէջ, փաղաքշանքի համար, ղինք կը  
կոչէինք «Ղոնդ», ինչպէս նաև, չեմ գիտեր ինչո՞ւ, «ափսէ»։ Եւ որով-  
հետև «ղոնդ» էր և «ափսէ» չկրցու աւարտել լիկէոնը։ Այնուհետև  
չատ ձիւն տեղաց խեղճ տղուն գլխուն, ի միջի այլոց հայանուն թըշ  
ուառականներ ղինք շահագործեցին դրասափ պէս, երեք տարի, օրա-  
կան երկու լիբ վճարելով և տասներկու ժամ աշխատեցնելով։ Երկու  
լիբով ուսե՛լ, խմե՛լ, քնանա՛լ . . .

— Ղո՛նդ, բա՛ ի փաղաքշանքով, այսօր երթանք Ֆիեսոյ տ'Արթի-  
քոյ, մանկութիւն, հին յուշե՛ր, ոսկի օրեր։

Հայրենակիցս նախ գլուխը շարժեց, ապա համաձայնեցաւ։ Թէև  
սանկ-նանկ է. բայց խորքին մէջ գէշ տղայ չէ։ Ապացոյց որ մերժել  
չուզեց առաջարկս։

«Շնորհաւոր նոր տարի» ըսինք իրարու, աղուոր «սիկարէթ»ներ  
գնեցինք, նստանք շոգենաւ և ճամբայ ինկանք դէպի Ֆուզինա, դէպի  
Ամերիկա ճամբայ իշնալու պէս։

Ոտք ոտքի վրայ նետեցինք, «Յառաջ» ի մէջ կաղանդ պապային  
«նուէր»ները կարդացինք, ըրարձրաձայն։

«Ինքրդ րմբոս եւ յամառ.  
Միժաղրդ ջի՛նջ արձարե,  
Ո՛ւր երեսա ոսկիվառ  
Արե եւ լոյս կը ցարե»

Այս սողերը շատ սիրեցի, եղանակ յարմարցուցի և միասին  
երգեցինք մինչև . . .

Յետոյ նստանք հանրակառք: Հերկուած արածերու և անբեւաթափ ծառերու մէջէն անցանք:

Կապոյտ էր երկինք, արև կար մեր վրայ:

Յիսեսոյ ա'կրթիքոյ: Երկու քիլոմէթր երկայն: Մէկ քիլոմէթր լայն: Ոչինչ չէ փոխուած: Նո'յն տնակները: Ես ու Ղեւոնդը փոխուած ենք միայն:

Ղեւոնդ դարձեր էր գորգ նորոգող (ի'նչ հեզնութիւն) և ես եղեր եմ գրող (մեղա'յ տէր, մեղա'յ): Ծիշք այդ պատճառաւ Հ. Դանիէլ Սահփանեան մեզ չդիմաւորեց, ճիշդ այդ պատճառաւ որրանոցին մէջ գասնք ամայութիւն, ննջարաններուն մէջ եզրկապացորեն, ճաշարանին մէջ՝ աղբ, մատուռին մէջ՝ լքում:

Եւ հակայն խորանին առջև քառակուսի տապանաքարը հո'ն էր նոյնութեամբ:

«Աս համգեաւ ի Տէր

Վերակացու սախ Հ. Սախուէլ վրդ. Սամաբեան,

Գործակալ Մխիթարեան Ուխտի.

Ծն. Օգոստոս 1788, վլսն. Օգոստոս 1847»:

Ծառերուն վրայ մեր տնուններուն սկզբնատառերը փնտռեցինք: Չգտանք իբրև թէ հոն ապրած չըլլայինք:

Իրարու հասէ վաղեցիներ առանց Հայր Գրիգորին:

Թիկնեղ գամբռ մը յանկարծ մեր վրայ յարձակեցաւ:

Պոռացիներ թէ ինք և ո'չ իսկ ծնած էր՝ երբ մենք հոս կ'ապրէինք:

— Իմ նախահայրերս հոս ծնած են շարունակեց գամբռը, դուք օտարականներ էք, եկուորներ էք:

— Իսկ մենք թոռնիկներն ենք Չամչեանի, Ինճիճեանի, Աւետիքեանի, անոնք հոս կու գային ամէն ամառ:

×

Ոչինչ չէ փոխուած, նո'յն ճամբաները, նո'յն տնակները: Ես ու Ղեւոնդը փոխուած ենք միայն:

Կարծես թէ ժամանակը վերածած ենք հեղուկի, և 14 տարին ըմպած մէկ ակնթարթի մէջ և կորսնցուցած մեր թարմութիւնը, պայծառութիւնը, և այրած, մորկած, տառապած, մռայլած:

— Բանի որ նոյն շէնքերը նո'յն ձևով կանգուն են, նո'յն ծառերը նո'յն հեռաւորութեամբ կարգի, ուրեմն հոս է նաև մանկութիւնս, կ'ուզեմ փնտռել դայն:

Ղեւոնդ սկսաւ ծիծաղիլ վրաս և ծաղրել զիս, և սակայն հանդիպակաց դուռը բացուեցաւ և մանկութիւնս դուրս վաղեց զուարթաձայն: Վերի յարկէն լուծակի ձայն մը լսուեցաւ: Շորէն կու լար Արտաչէսի ճպտոսին տակ:

Մանկութիւնս վճիռ էր ճառագայթի պէս, և սուրաց պարտէզին մէջ. ճառագայթի՛ պէս:

Փայլակ և Յովհաննէս խոտերուն վրայ գօտեմարտ ըրին և Փայլակ յաղթեց:

Տիրան և Վիչէն դատարան գացին՝ մասնաւոր դասեր առնելու համար:

Մանկութիւնս սիրուն էր՝ ծաղիկի մը պէս:

Ոտնագնդակը ճիւղերուն վրայ մնաց, զարնուեցաւ պատէ պատ և ապակի մը կոտրեց: Հայր Գանիէլ վար իջաւ սանդուխներէն և ի պատիժ Մարտիրոսին «ծուներ դիր» հրամայեց:

Հայր Վրթանէս պատարագեց և քարոզ մը խօսեցաւ «խղճմտանք» ի մասին:

Ծաղիկներ բացուեցան և քիւերուն տակ ծիծեռնակներ բոյն շինեցին:

Դեռատի բանաստեղծ Նշան Պէշիկթաշլեան և նկարիչ Աւետիս Մուրատեան այցելութիւն տուին:

Զանգակը չորս անգամ հնչեց և աղաքը կարգի մ'առն չորս անգամ, երթալու համար՝ աղօթարան, ճաշարան, դասարան և ննջարան: Հենրիկոս Ամերիկայէն հինգ ասլար սաացաւ և հայր Մանուէլ աղօթագիրք մը նուիրեց Յակոբին:

Մանկութիւնս խօսուն էր թռչունի մը պէս, քարձրացաւ աթոռի մը վրայ և աղուոր ոռանաւորներ արտասանեց:

Արեւը ջերմացաւ և ծերունագարդ Հայր Գարրիէլ վրդ. խմբանկար մը հանեց:

Մարգար Խարբերդցիներն իր շուրջ հաւաքեց, երգեց ու պարեց:

— «Աղջկան «օբօսօպիլ»,

Մայրիկին «փայթօն»,

Հայրիկին ալ...»:

Մանկութիւնս ճառագայթ էր, ծաղիկ էր և թռչուն, պայուսակ մը տուին ձեռքը և ճամբու գրին...

— Ի՞նչ ունիս եղբայր, նորէն աչքերդ լեցուեցան, աղաղակեց Ղեւոնդ, շուտով հեռանանք այստեղէն:

Հերկուած արտերու և տերեւթափ ծառերու մէջէն անցանք և ճաշարանի նմանող առաջին խանութէն մտանք ներս:

— Սպասաւոր, բեր գինի, կարմիր գինի և թալէաթի գլուխը, լաւ խորոված:

— Խնթեցա՞ր, եղբայր, բողոքեց Ղեւոնդ, հոս պէտք չէ հայերէն խօսիլ, ապա թէ ոչ մեզի հետ կը վարուին իրրե օտարական, ու կը ճաշենք առտսպելական գիներով:

— Եթէ նոյնիսկ հալար լիբ վճարել ասն, դարձեալ հայերէն պիտի խօսիմ:

— Մեծահարուստի հովեր մի՛ առնիր, զրպանդ 50 լիբէն աւելի չկայ:

«Նպատակիս հասնիմ միայն, թող զիս հանեն կախաղան»: Նպատակս հայերէն խօսիլ է այսօր:

Ճերմակ ձեռնոցներով և պաշտօնական զգեստներով ծառայեցին մեզի:

Նախ դերմանացի ճամբորդ կարծեցին, յետոյ գաղանի ոստիկան,  
յետոյ «վարիէթէ»ի դերասան:

Երբ չըջագայութեան ելանք՝ գիւղակին կեդրոնավայր-հրապարակին վրայ՝ հետաքրքիր աչքեր հեռակեցան մեզի, մանաւանդ աղջիկներու աչքեր... Եւ՝ իբրև նորոյթ՝ վայելեցինք մեծ յաջողութիւն: Բոլոր բնակիչները ոչ միայն զիրար կը ճանչնան հոս, այլև գիտեն, օրինակի համար թէ քանի՞ սանդղմեզը երկար է Ռիքարտոյի քիթը, Լուիճի քանի՞ չապիկ ունի, Պերի պարել զիտէ՞:

Հայրենակիցս, հակառակ անոր որ «զոնդ» է և «ափսէ», աննախընթաց յաղթանակներ ունեցաւ: Նշան ըրաւ մէկուն, և անա ամբողջ գեղջուկ գեղեցիկ սեւը չըջապատեց զինք. «ամէնքդ չեմ կրնար գոհացնել», ըսելով, երգելով, խնդալով սարաւ զիրենք ղէպի մերձակայ պարտէզները:

Պէտք չէ դաւաճանել բարեկամութեան, նոյնիսկ... կինով մը:

Ղոնդ դաւաճանեց ինձի՝ բաղմաթիւ կիներով:

Եւ սակայն առանձին չմնացի:

Զիս ալ չըջապատեցին զուարթ տղեկներ և աղջնակներ: Ամէնքն ալ ծնած 1930էն յետոյ ի՞նչ սիրուէ: Ի՞նչ սիրուէ: Թռչուններու երամակի մը պէս:

Եւ յիշեցի Հայնէն: Ֆիեսոյ ա՛՛Արթիքոյ լերան մը ստորաը չի գտնուիր և Հայնէ մեռած է ութսուն երկու տարինելէ ի վեր, եւ սակայն նո՛յն մանուկները չըջապատեցին զիս կարծես, նո՛յն հարցումներն ըրին ինձի.

— Ո՛վ ես դու, ո՞վ, եւ ի՞նչ կ'ընես

— Հայաստան ե, սիրելիներ,  
Հայրենիքս իմ, ես յարեցի,  
Հոն գետեղեց դրախտն Աստուած  
Եւ խօսեցաւ նախ՝ հայերէն,  
Աղամի հետ եւ Եւայի.

... Բայց արտաքին գիրեմք շուտով  
Զուակներով եւ բողոքներով  
Քեցց հարաւ, քեցց հիւսիս,  
Եւ արեւելք եւ արեւմուտք,  
Եւ ուրացաւ զանոնք ի սպառ  
Մոռցաւ նոյնիսկ իրենց լեզուն...

Թեւ թեւի, շուրջանակի, մանուկները կրկնեցին՝

— Մոռցաւ նոյնիսկ իրենց լեզուն...

Ղոնդն ալ՝ իր գեղջուկներուն հետ՝ մոռցաւ... զիս, և մեկնեցայ Ֆիեսոյ ա՛՛Արթիքոյէն մանուկներուն յանկերգը՝ ականջներուն մէջ.

— Մոռցաւ նոյնիսկ իրենց լեզուն...

×

Ուրիկէ՛ սկսայ, ո՛ւր հասայ: Եթէ՛ կարոյ Ղազարոսեան կարդայ այս քրուութիւնը՝ պիտի ըսէ որ կառուցում չունի, գլուխ չունի, պոչ չունի:

Այս դարուն ամէն ոք կառուցանելով զբաղած է, ամէն ոք գլուխ է կամ պոչ, Սո այս դարուն չեմ պատկանիր: Լեւրիչներուն կը թողում կառուցանել, ըլլալ գլուխ կամ պոչ: Աղուոր հատորներ հրատարակել, անմահանալ...

Սո թուղթին կը յանձնեմ անկապ խօսքեր, թոթովանքներ և չեմ ցանկար որ անոնք ծաղիկէ մը աւելի ապրին:

Թչնամի եմ բառին, գոյնին և եղանակին, որոնք գաղափարները կը պղծեն, կը յօշոտեն զգացումները: Կը սիրեմ ինչ որ կազմալոյծ է, կը պաշտեմ ինչ որ աննիւթ է:

Չեզի հետ խօսելով դրականութիւն ընելու գիտաւորութիւն չունիմ: Կաղանդ է այսօր և մայրենի լեզուս կ'ուզեմ խօսիլ: Այսքան, ուրիշ ոչինչ: Կը վախնամ որ կորսնցնեմ հայկական հնչումս: Անցեալ օր ասաներկու ժամ փաստարանութիւն ըրի՝ համոզելու համար խօսակիցներս թէ Իտալացի չեմ:

Դուք այսօր կը հաւաքուիք և իրարու կը պատմէք ձեր յիշատակները: Կը խօսիք ձեր կաղանդի ճոխ սեղանին, ձեր անուշիկ մամիկին, ձեր տաքուկ օճախին մասին: Սո նման յիշատակներ չունիմ, և որովհետեւ կ'ուզեմ հայերէն խօսիլ, նիւթ կը փնտռեմ, յուշե՛ր, յուշե՛ր. ու միտքս կու գան ամայի և անվախճան ճամբաներ, արիւնի ծովեր և արցունքի հեղեղներ, Քորֆու կղզին, Իտալիա մեկնող «Ամմիրամիս» չոզնաւը, Ֆիեսոյ ա'Արթիքոյ, Հ. Դանիէլ Ստեփանեան եւ ուրիշներ, ուսերուս վրայ ունիմ քառորդ դար, կուրծքիս տակ՝ հրդեհ, գրող եմ, ներողութիւն, արհեստչունիմ և բարեկամս «Ղոնդ» կը կոչուի:



Գիտեմ որ չ'արժեր խօսիլ, չ'արժեր գրել, բայց ի՞նչ ընեմ, կ'ուզեմ հայերէն խօսիլ: Առանձին եմ: Երբ «Ղոնդ» գորգ նորոգելով զբաղի՝ կ'ապաւինիմ ընթերցման, մի'ակ միւթարութիւնս: Երէկ հինգ հարիւր անգամ կարդացի Ալիշանի «Լուսնկան գերեզմանաց Հայոց»ը, Բայց չի բաւեր միայն կարդալ, կ'ուզեմ խօսիլ, սիրտս պարպել, անկապ խօսքեր ընել, ի՞նչ փոյթ, թոթովել, մայրենի՝ լեզուով, մայրենի՝ լեզուով:

ՀՐԱՉ ՔԱԶԱՐԵՆՑ

Վեհեսիկ 1939



Ս Ա Ս Ն Ա Յ Ծ Ռ Ե Ր

«Երբամ քաղեմ կողովներով,  
Բերեմ լըցեմ կարասներով»:

Ամենադիւցազներգականն է, մին մասերէն՝ այն մանեակին, որ հայկական վիպասանութիւն կը կոչուի և փշուրներն են հասած մեզի:

Սասնայ ծուերը, մեր երկրի մէկ մասին, զոր կրնանք նկատել ամենազեղեցիկը, ստեղծագործողն ու հայատիպը, Սասնոյ Ծննդոց գիրքն է: Եւ, հնագոյն հայ դիւցազնավէպերէն մին, որ ամբողջական հասած կը կարծուի մեզ՝ աւանդարար:

Ան կ'ոգէ Սասնոյ հիմնադիրները՝ Սանասարը, Աղրամելիքն ու անոնց յաջորդները: Կ'երգէ՝ գալուստնին Արարատու երկիրը, շահասակութիւններն են և պայքարը, որ տեղի ունեցած է համազարմ երկու տոհմերու՝ Սասունցիներու և Մասսսուրցիներու միջև, շառաւիղներուն Մհերի, որ կը կռուի գերակայութեան համար, և որ կը վերջանայ Սասունցի Դաւթի յաղթանակովը:

Կազմուած է՝ ժողովրդային երգերու պատառիկներէ, բազմաթիւ պատմութիւններէ, պատմական դէպքերէ, զրոյցներէ, որ հին Հայաստանի ներքին կեանքը կը պատկերացնեն, անոր մտային աշխարհը կը բանան մեր առջև. հեռաւոր արձագանգը կու տան՝ ընկերային զարգացմանը, կը ներկայացնեն կենցաղը՝ ինքնայատուկ գոյներով, ձեւով ու կշիռով, եւ մշակուած է ու պաճուեցուած՝ երևակայութեան ոսկի շառափներով՝ ինչպէս բոլոր սկզբնական դիւցազնավէպերը, անգիտակցական եղանակով մը:

Սասնայ ծուերուն մէջ կը գտնենք գաղափարը սիրոյ զօրութեան, հերոսներ, որ իրենց գերմարդկային ոյժով կը մրցին իրարու հետ շփաներու կը հանդիպինք, որ անարկու ներգործութիւննին կը ծաւալեն երկրի վրայ: Հրաշագործութիւններով լի երկիր մը կը տեսնենք մոգական: Ուր ձին Հրաշագործութիւններով լի երկիր մը կը տեսնենք մոգական: Ուր ձին լեզու կ'ելլէ՝ կը քաջալերէ հեծեալը, իրենց գերեզմանէն, մեռելները կը բարբառին՝ խորհուրդ կու տան զաւակնուն: Մհերի մը կը հանդիպինք, որ երկու կողմ կ'ընէ առիւծ մը, Դաւթի մը՝ գաղանները նախապինք, որ երկու կողմ կ'ընէ առիւծ մը, Դաւթի մը՝ գաղանները նախապինք, որ երկու կողմ կ'ընէ առիւծ մը, որու ձայնը արեւելէն արեւմուտք կ'երկարի: Եւ կը գտնենք կշիռի շփ մը, որ սպանելէ ետք հարկահաւաքները, պատը ծակելով կը թռչի՝ կ'երթայ ու պիտի երթայ:

Այս հերոսները, խորհրդաւոր ու դիւթական գէնքերը՝ անբացաբեկի կը մնան մեզի: Բայց շատ պարզ են՝ հրաշքներու աշխարհին

մէջ, որ արեւելեան բորբ երեւկայութիւնն է: Բնական՝ քանի որ, մեր խորիմաց ժողովրդին համար՝ որ յաճախ շատ ու շատ կը պարզանայ ու կը հաւատարի նիստուկացով անասնականին՝ ամէն ինչ հոգի ունի, ըլլայ մարդ, կենդանի, բոյս՝ թէ իր, ուրիշ կերպ չէ կարելի բացատրել: Նաև, երկրաբանակ չար ու բարի ուժերու կը հաւատայ ան՝ առիւղնե-րուն, քաջերուն, ուրբմն վէպին վախճանն ալ անխուսափելի մասն է իր, և շատ բնական:

Վերջապէս, Սասնոյ ծուերուն մէջ հանդիսատես կ'ըլլանք՝ մարդոց կրօններուն, կռիւններուն, սիրագործութեանց: Պատերազմներու, որ Վանայ լճին հիւսիսայէն կողմէն՝ մինչև Եփրատ տարածուող հողը, արիւնով ողողած է: Եւ կենցաղին՝ ժողովրդի մը պարզակեաց, որ Արարատու երկրին բնակիչներէն մէկ մասն է, ու ամենահարազաներէն մին հայ տարրին:

×

Սասնայ ծուերը՝ առասպելախառն պատմութիւնն է անցեալի: Երջանի մը, ուր մարդոց նախասիրութիւնները՝ կեղծիքներուն կը հակին, քան թէ բժախնդրութեանը՝ իրական անցքերու: Բանաստեղծա-խառն ձև մըն է, խառն՝ պատմութեամբ և առասպելով, երեւկայու-թեամբ ու ճշմարտութիւններով, ուր բանաստեղծներն են՝ ազգա-դէտներն ու ժամանակագիրները: Կ'ոգէ անձեր ու շարքը դէպքերու, որ չեն խուսափիր ժամանակագրութեան ճշգրտներէն: Վայրեր, որ վա-ւերական են աշխարհագրատութենէն: Սկիզբ ունի է. դարը (Ք. ա) եւ քառասուն ճիւղ է ունեցեր՝ ըստ պատմողներուն հաւաստմանը: Բայց ինչ կը հասկնան՝ ճիւղ ըսելով, սերնդի պատմութիւն, չէ պարզուած:

Անտաշ զանգուած մըն է՝ մեր զիւրազանս վէպը. կուտակում մը, և կը պատկանի՝ սեռին՝ նախնական արուեստին: Անկատար, սակայն մէկ զուտ ճիւղը քերթողական արուեստին: Ծիգ մը, որ ունի բազադ-րեալ մասերուն՝ պարզ նմուշները, որ չեն հասած կատարումին, զա-նազանութեան, զուտ յարաբերութեան, և կը մնայ ստորակարգեալ մը: Պէտք է դասել՝ արեւելքցիներու նախասիրած ձևին կարգը, անկախ սեռ մը՝ ձգտման և արտայայտութեան: Արուեստ մը, որ կրկին խո-նարհեղուցած է՝ արուեստի արտաքին ձև մը, զարձնելով զայն իրեն համար իսկ անկատար:

Մէկ նման կէտ ունի՝ պատմական անտաշ եղելութիւն մը: Որ-պէս գործողութիւն՝ պատերազմը, պաշտպանելու համար կամ ըն-դարձակելու իրենց երկիրը. աս է նաև կապը գլխաւոր և երկրորդա-կան գործողութեանց: Իսկ իրեւ առաջնորդ դէպքերուն և գլխաւոր անձնաւորութիւն՝ Սասունցի Դաւիթը: Ան է որ կը նպաստէ՝ քերթ-ուածին միութեան, կը շղթայէ դէպքերուն յառաջխաղացումին, գոր-ծողութեան ընթացքին, և մեկ կը մօտեցնէ քիչ առ քիչ, մեղմիւ, վախ-ճանին: Եփոթութիւն մը սակայն, քերթուածին հրեք առաջին մա-սերը՝ թէև թոյլ հանգոյցներով կը կապուին, և քերթուածը Սասունցի

Կաւելթի մահով կը հասնի վախճանին: Բայց ոչ մէկ կապ ունի չոր-  
րորդ մասը, աս հայ Պրոմէթէոսը, պզտիկ Մհերը չի կապուիր քերթ-  
ուածին հետ:

Սասնայ ձուերը՝ զուրկ է ճարտարապետական կառոյցէն, տրամա-  
դիկ քալուածքէ, նկարագրութիւններէ, որ մեզ քանի մը բառով պի-  
տի ընէին տեղեակ նիւթին: Հանգոյցները՝ որ պիտի սահմանէին հա-  
ուածները պատմուածքին, պիտի հաւասարակչուէին՝ տեսա-  
րան եկող ու հեռացող պայքարներուն ուժը, թոյլ են. որով, ա-  
նոր գծուար կը դառնայ՝ նախապատրաստելու հնարը վախճանին: Վախ-  
ճան, որ է վարկեանը, ուր դէպքերը քակուելով կը խառնուին իրա-  
րու. քերթուածին հերոսը՝ կը դպչի իր նպատակին, և խնդիրը՝ զըր-  
ուած բանաստեղծէն՝ կը ստանայ իր եզրակացութիւնը: Նաև պատա-  
հարին շուրջ՝ ուր յայտ պիտի գար գաղափարը, առասպելներ կը  
խառնուին ու կը պղտորեն դայն: Վերջապէս չէ հասած հասարակական  
այն զարգացման, որ կը ժխտէ՝ կեանքէն հեռու եղող ամէն միտք,  
առասպելական վերարբմուէնք գէպի բնութիւնը:

Հերոսները՝ յաճախ կենդանի են ու հարազատ, բնութագրուած  
առարկայօրէն. ճշ իրապաշտութեամբ, որ կը վերլուծէ՝ փոխադարձ  
յարարելութիւններու, կախուսներու ամբողջութիւնը՝ արամարանու-  
թեամբ, Լեզուն՝ պատկերաւոր չէ, և զուրկ փոխյարարելութիւններէ,  
նմանութիւններէ, այլարանութիւններէ, որ շուէն ու հոգին են Կող-  
թան Երգերուն: Հազիւ թէ՝ բազմաթիւ փոփոխակները նկատի ունե-  
նալով՝ կարելի կ'ըլլայ եղրակացութեան մը գալ ոճի մատին: Պատ-  
մուածքը պարզ է, ունի ասոյթներ ու դարձուածքներ. կենդանի կը  
մնայ՝ հերոսներուն իրարու յաջորդող շարժումներովը: Կը պատկանի  
սեւին, դիւցազնավէպի, առաջին թոթովումներուն, ուր արուեստը  
բնազդական է աւելի՝ քան պատճառարանեայ:

Դիւցազնավէպը՝ հարուստ է հէքեաթային տարրերով, առա-  
պելներով, դիւցազնական երգերով, ժողովրդային երգերով, զրոյցնե-  
րով, պատմական միջադէպով ու կենցաղային պատկերներով: Զրոյց-  
ները ու առասպելները՝ երգերու նիւթէն շատ անգամ աւելի հին  
կ'ըլլան, բայց ընդհանրապէս՝ ոչ ազգային: Անոնք երկրէ երկիր կը  
չրջին, և չէ կարելի որոշապէս վերագրել՝ ազգի մը, աշխարհամասի  
մը: Իսկ երգերը՝ միշտ ազգային են, անոնց նիւթը ազգին պատկանող  
անձեր ու անցքեր են, ծնած կենդանի խօսքով ու եղանակաւ, որոշ  
զարգացման հասած անհատի մը շրթունքէն: Անոնց յօրինուածքը եր-  
կու երեք նախադասութիւններու հիւսք մըն է որ կ'արտայայտէ զգա-  
ցում մը. կամ համեմատութեամբ կը պատկերաւորէ դէպք մը, պա-  
հելով՝ նախադասութիւններու և համեմատութիւններու ներքին ու  
արտաքին կապը: Զ'անցնի՛ր կառուցումին՝ երկու կամ երեք տունե-  
րու կապակցութենէն:

ժողովրդին բերնով աւանդուած այս քերթուածը, իւրաքանչիւր երգողէն՝ կրած է փոփոխութիւն մը, պէտք է շտեղձ գտնելու համար սկզբնական ձևը, գոյնը: Զատել թափառական զրոյցները, բանգէտ ձևանալ ուզող աւանդողներէն ազուցուած կտորները՝ Պրիմձե Բաղաբէն, Աղջիկ Տարօնուէն, Տարօնի պատերազմէն, Վահան Մամիկոնեանի վեպէն եւ այլն, որ շեղած են՝ իսկական հունէն, ժամանակէն ու վայրէն: Չէ կարելի նկատել դիւցազնավէպերը՝ մաս ժողովրդի մը անգիր դպրութեանը: Անոնք գործերն են մարդուն՝ որքան ալ նախնական փորձերը ըլլան սեռին որ դուրս ելած է մանկութեան չըջանէն, թեւեւ կոխած պատանեկութեան: Այլևս անասնականէն՝ դէպի վեհին կը՝ ձգտի, յաւերժացնելու հերոսները, ինքզինքը: Նաև, հիւսուած է ժողովրդենի, տեսակէտը չի հիմնաւորուիր. դիւցազնավէպերը վեր են ըլլալէ՝ ժողովրդային կառուցում մը: Ժողովուրդները, որ կարիքն ունին մեծ մարդոց պաշտպանութեանը, հերոսներու, անհատներու բերնով՝ երգած են, և մշտնջենաւորած իրենց յիշողութիւնները՝ առասպելաբանելով. անշուշտ ծնունդ տալու համար ևս նորերու: Այս ժողովրդային երգերը ու չափազանցուած պատմութիւնները, յետոյ զրոյէ մը ազուցուած ու վերածուած են քերթուածի: Կազմուած է՝ միասնական կառոյցով վիպասանութիւն մը, հերոսներու յաջորդականութեամբ, գործողութիւններու միութեամբ: Դիւցազնավէպերու կրած փոփոխութիւնները են ընդլայնումները ժողովուրդներունը:

Անյայտ կը մնայ հեղինակին անունը, բանաստեղծը, որ ազգային երգերը, առասպելները, զրոյցները, պատմական դրուագները ազուցանելով կառոյց այս քերթուածը, որ Սասնայ ձուեր, Զովանց Տուր, Սասնայ փեհիլվաններ անուններով մեզի կու գայ: Ով որ ալ ըլլայ անոր հեղինակը սակայն, գրաւոր՝ թէ անգիր դպրութենէն, է. դարէն (Ք. ա.) թէ ժ. դարէն (Ք. յ.) մին է մեր ամենահին դիւցազնավէպերէն, որ ունի գոյներու սեփականութիւն, դարձուածքներ, կենդանի պատմում՝ արագընթաց ու համակող. թէև չէ կարելի նկատել գեղարուեստական գործ մը:

Գ. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ

Բլովսիւ 1939



Հայաստանի Հայ Ֆիլհարմոնիայի պեսական կապելլա

4/145  
4/145  
4/145  
4/145

# Մ Ա Յ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

4/145  
3/110

Գրեց՝ ՀՕՐԻՕՆ

Ա.

— Շատ աղուոր, անուշիկ տնակ մըն է. պարտէզներու մէջ, Խնձորենիներու և սալորենիներու խումբ մը՝ հեշտալի սառու եր մը կը ձգէ ննջասնեակիդ վրայ: Շատ գոհ պիտի մնաս, Չապէլա:

— Խաղաղ գիւղակ մը: Տանախրուէին՝ այրի՝ պարկեշտ կին մը թուեցաւ ինծի: Երկու փոքրիկներ ունի, որոնք, ձանձրոյթի պահե-  
րուղ, կրնան քեզ գուարճացնել:

Այդ պահուն, Տիկ. Չապէլի նայուածքին յոգնած գուարթութիւն-  
նը կարծես կը խուսափի իր ամուսինին աչքերէն ու կ'ոտոտտեն սեն-  
եակին զանազան կէտերու վրայ: Հառաջանքի կաթիլ մը՝ իր երեւ-  
կայութեան մէջ՝ փոքրիկ բոլորակ մը կը գծէ:

Դուրսը՝ գիշերին քրտինքը և քաղաքին աղմուկը: Հանրակառ-  
քերու քաղաքակրթութիւնը կը սահի փողոցին երկաթ լճակին վրայէն:

— Վաղը երեկոյ, այս ժամանակ, արդէն այնտեղ ենք: Երկու  
օրէն, այսինքն կիրակի գիշեր՝ վերջին շոգեկառքով՝ նս կը վերադառ-  
նամ, յառաջիկայ ուրբաթ երեկոյ վերստին քեզի միանալու համար:  
Է՛, ի՛նչ ընենք: Այս տարի թող այսպէս անցնի: Ստիպուած եմ: Տնօ-  
րէնին բացակայութիւնը... գործերու...: Բայց վստահ եմ թէ պիտի  
չձանձրանաս: Ամէն օր քեզի թերթ և հանդէսներ պիտի ղրկեմ: Չե՛ս  
խօսիր:

— Եթէ Արմենուէին ալ միասին ըլլար...

Սպասուէին կարճահասակ և հաստարագուկ անտարբերութիւնը  
կը վերցնէ սեղանին պարագ սպասները: Պատին հպած ժամացոյցը՝  
անձայն՝ ուղղանկիւն եռանկիւն մը կը գծէ իննիւն և տասներկու քիւն  
վրայ: Այդ գիշեր բացառարար շուտով կ'անցնին ժամերը, ինչպէս բո-  
լոր վերջին ժամերը:

— Ուրիշին քսակին չինք կրնար խառնուիլ, կը հապճեպէ միւ-  
սիւ Արամի թեթև զգոհութիւնը: Անշուշտ, Տիկ. Արմենուէի ներ-  
կայութիւնը՝ այն տեղ... Բայց... իր եղբոր գործերը... այս տարի...:



Սակայն, եթէ սիրտդ կոտրած կամ չուզելով պիտի երթաս, Չապէլս, աւելի լաւ է որ հրաժարիս այս ասարուան օղափոխութենէն, ես կորսուած կը նկատեմ ըրած կանխաւճարս: Խօսէ՛:

Տիկ. Չապէլի գեղեցիկ և խոշոր աչքերուն ճաճանչները՝ իրիւ պատասխան՝ կը փայլին իր ամուսինին դէմքին վրայ:

Նկատի ունեցիր որ այդ պզտիկ գիւղը՝ իմ ընտրութիւնս չէ: Տեղւոյն ջուրն ու օդը յանձնարարեց բժիշկը. մանաւանդ ջուրը, որ չեմ գիտեր թէ ինչե՛ր կը պարունակէ եղեր:

Մութի պզտիկ շէտ մը՝ յանկարծ՝ կը կախուի միւսիւ Արամի շրթներէն: Տասը տարուան պատմութիւն մը, որուն էջերը չուզեր աւելորդ տեղը դարձնել: Տիկ. Չապէլ կը շարունակէ ցոյց առ իր գեղաշար ակռաներուն սպիտակութիւնը, թէպէտ կը խորհի թէ օղափոխութեան այդ փոքրիկ մենաստանին ընտրութիւնը՝ արդիւնք է իր ամուսինին նախանձուութեան: Բայց չի պատուեր խոհեմութեան վարագործը: Համակերպութիւնը կը նկատէ ամենամեծ առաքինութիւնը ընտանեկան յարկի մը: Ի՞ր մօքին մէջ սակայն, մեղքին բազուկներուն պէս կ'երկարի՛:

— Ճակատագիրս է . . .

Ինչ առաջ մեկնած են այրի Տիկ. Արմենուհի, դպրոցական ընկերուհին Տիկ. Չապէլի, ու պ. Զարեհ, Արմենուհիի եղբայրը, որոնք միակ բարեկամներն ու այցելուներն են այս տունին, և որոնք եկած էին «բարի ճամբորդութիւն» մաղթելու Տիկ. Չապէլի: Միւսիւ Արամի դռնը հազուադիւտօրէն կը բացուի ուրիշներու առջև: Կեանքին հանդէպ՝ ան իր որոշ տեսութիւններն ունի: Ան չի հաւատար բարեկամութեան. անոր տակ ծայկուած կը տեսնէ շահ, խորամանկութիւն, դաւաճանսութիւն՝ ընտանեկան պատիւի դէմ, եւ այլն: Գրասենեակէն տուն, տունէն գրասենեակ: Կիրակիները՝ շարժանկարի կամ հանրային պարտէզ մը, փոքրիկ պոռոյտ մը՝ իր կնոջ հետ, որուն վրայ կը գուրգուրայ, զոր կը սիրէ, կը պաշտէ նոյնիսկ: Հաճոյքով կը գործադրէ անոր ամենափոքրէն մինչև ամենամեծ ցունկութիւնները:— Չապէլ գոհարեղէններու և զգեստեղէններու ընտիր հաւաքածոյ մ'ունի: Ասոնց փոխարէն, սակայն, ան չի հանդուրժեր որ իր սեփականութեան վրայ ուրիշ մէկը յանդգնի ձեռք դպցնել: Այդ պիտին շանակէր. միւսիւ Արամի համար, աշխարհի վերջին օրը: Պատուախնդրութիւնը կը հասցնէ գերադրական աստիճաններու, երկնային բարձունքներու, բացարձակին:

Ե՛ր, ու պառկինք: Վաղը ժամը ութին կայարան պէտք է ըլլանք:

Արևին առաւօտեան վեհափառութիւնը՝ գիւղին լքուածութեան և յիշակայ բարձունքներուն վրայ: Օգոստոսեան խաղաղութիւն մը՝

գեղեցիկ սկզբունքի մը նման՝ կը տարածուի բարերար ծառերուն եւ դեղնած դաշտերուն վրայ, որոնք երկրաչափական նկարներ կը պարզեն Ահա, դիմացը, բազմակող եւ բազմանկիւն ըլլալ մը, որուն որմզդական գագաթը կը հպի երկինքի նազելի աստուածունհիներու շրթներուն: Քովը՝ անդունդ մը, ուր, այդ պահուն, ճերմակ շոգիի հսկայ զանգուած մը՝ շարժական ուժկիանի մը տպաւորութիւնը կը թողու: Առուի մը թարութիւնը՝ փոքրիկ տնակին ամառն քով ուր, Տիկ, Չապէլ, աթոռակի մը գեղջուկ համեստութեան վրայ յատած, նախաճաշի մը անգործութեան նուիրուած է: Հինգերորդ օրն է արդէն, բայց, իր աչքերուն յուսահատ երջանկութեան մէջ կը պատկերանայ շուրջի տարածութեան ընտանութիւնը:

Կ'ըմպէ դեղնորակ կաթը, ուժայ ուժայ, հանդարտ, շտապելու ոչ մէկ պատճառ՝ ինչպէս քաղաքին մէջ, ու կը նայի երկար, ու կը շնչէ լիաթօք: Կը հրանայ բնութեան — կամ աստուածութեան — ողորմածութեան վրայ: Ան օտաբեր է բոլոր բոյսերը, ծաղիկները, ծառերը՝ որոնք զարդարուած են օրհնեալ պտուղներով, որոնց որովայնը լի է կեանքի բեղմնաւոր աւելով: Ի՛նք, աւա՛ղ... Ի՛նք միայն...

Բայց, Չապէլ հազիւ կը սկսի քիչ մը խորանալ իր շուրջի երջանկութեան մէջ, անմիջապէս դառն կը թուի իրեն՝ իր կեանքին իմաստը: Կոպերը կարծես կը ծանրանան ու, յանկարծ, եղբրական բան մը կ'ուռի իր կուրծքին աակի Սարսուռ մը՝ որ տասը տարիներու ընթացքին՝ իրեն պարզեւած է ջղային տարօրինակ վիճակ մը: Ու ինք դժբախտ զիտակցութիւնն ունի իր այդ վիճակին: Արցունքներով կը ժպտի, ժախտներով կ'արտասուէր...

Ի՛նչ յոյսերով, ի՛նչ աղջիկ երազներով նեւուած էր Արամի բազուկներուն մէջ: Չէր յուսախարուած, բայց իր երջանկութիւնը անրիժ պիտի ըլլար, եթէ... Սակայն, պարապ էր իր ներսը, ու պտուղի մը զմայլելի ու աստուածային դողը երեք չէր զգացած:

Արամ ամէն ինչն տուած էր իրեն, բացի մայրութեան երջանկութենէն: Ու ինք, անգթօրէն, ատոր կը ձգտէր: Յանկութեան հրաւիրող իր ստիւքները չէին քամուած մանկիկի մը բերնին բաժակին մէջ...

Բոլոր այս մտածումները՝ մէկ հարուածով՝ կ'ուզէ վանել, ընդմիջու: Բայց միայնութեան մէջ՝ Չապէլի դժբախտութիւնը աւելի կը ծաղկի: Անցեալի կարգ մը մանրամասնութիւններ՝ իր յիշողութիւնը դարձեալ կը կտցեն: Քանի քանի՛ անգամներ անձնատուր եղած էր բժշկական աշխատանոցներու դատանութեան, երբեմն առանձին, յաճախ իր ամուսինին հետ: Դեռ կը դանի եւ խորշանք կը զգայ դեղերու հոտէն, զոր ստիպուած կ'ըմպէր կամ կուլ կու տար կատարելա ճշգրտակցութեան կը բաղդատէ, ի զուր, իր ամուսինին ըրած նիւթակն զոհողութեան անասանման չափը՝ արդիւնքին պարապութեան հետ: Օր մը անուանի բժիշկ մը յոյսեր ներշնչած էր իրեն: Ոչ մէկ թերութիւն էր մարմի-

նին, իր ձեւերուն, իր ներսին: Երբեմն վարանումներ, տարօրինակ կասկածներ մտած են իր դանկէն ներս, իր ամուսինին պակասութեան մասին: Ու իրականութիւնը մնացած էր միշտ անողոք.— աշխարհի առջեւ ինք անպտուղ ծառ մըն էր:

Ո՛հ, ինչո՛ւ այս չար մտածումներուն ալիքները միշտ կու գան զարնուիլ Զապէլի նաւակին խարխուղութեան.— ինչո՛ւ անոնց բախումները շատ աւելի վտանգաւոր համեմատութիւններու կը հասնին, երբ ան կը թիափարէ բաց ծովին վրայ, լքուած ու հեռու ակօրարար յոյսէն.. Բարեբախտաբար, ամենամեծ վտանգի պահուն իսկ, ան միշտ կ'անսայ ճակատագրի ձայնին, «երջանկութիւնը կատարեալ չէ», ու անոր կը յանձնէ՝ կուսական համակերպութեամբ մը՝ իր նաւակին զեկը: Է՛...:

Արեւին ամէնէն գեղեցիկ պահը: Մանկական զեփու մը ու առուակին երկիւղած ոտանաւորը: Միջոցին անրծութիւնն ու ծառերուն բերրի պաղատանքը:

Զապէլի աշքերը, կոնտուրի մը նման, կը սահին օրաթերթի մը դուզանհեռական ջրանցքներուն վրայէն: Օրուան հասարակ յուրեր: Քիչ վերջ, իր թոյլ ձեռքերէն կ'իյնայ ան խտտերուն միամտութեան վրայ: Կը նայի հեռուն, առանց զիտելու, առանց թարթելու: Ու ինք՝ համակերպութեան արձան մը՝ բնութեան այդ տաճարին մէջ...

Վաղը գիւղին եկեղեցիին տունն է: Զօրաւոր սուրբ մը, ինչպէս կը պատմէ տանտիրուհին, որ զոհացում կու տայ բոլոր իրեն զիմողներուն: Քանի քանի՝ հիւանդներ րժկութիւն կտոմ առնուազն միսթարութիւն գաած են անոր իւզաներկ պատկերէն: Վաղը, Զապէլ ևս պիտի երթայ սուրբին պաշտամունք մատուցանելու, անոր առջեւ բանալու իր կողերուն անբերրութիւնը և պիտի թախանձէ անոր նայուածքին հրաշքը: Զապէլ բիւրաւոր մոմեր վառած է քաղաքի շատ մը եկեղեցիներու մէջ, «Յիսուսի Յարութեան», «Առտուածածնի» երկար գէմքին ու անթիւ սուրբերու մերկութեան առջեւ: Աղօթած, լացած և վերացած... Թերեւս գիւղի այս համեստ սուրբը աւելի զօրաւոր է և աւելի բարի...:

Յանկարծ, հեռուէն, ձիի ոտքերու սալասմբակ զօփիւններ: Զապէլ կը նշմարէ կառք մը որ իրենց տնակին կը մօտենայ: Ու շուտով, իր նայուածքին ահաւոր այլայլումը, կայծակի մը նման, կ'իյնայ քաղաքի Զարեհի սպիտակ հագուստին վրայ:

— Ա՛հ...

Բացադանդութիւնը կոկորդին մէջ կը քարանայ, ու շփոթութիւնը, դող մը, չապուած զգացումներու խառնափնդորութիւն մը՝ Զապէլի երակներու բոլոր ճամբաներուն մէջ՝ կը լիցուին ու կը պարպուին ակնթարթային արագութեամբ: Դէմքին լուսինը կը զեղնի ու կը կարմրի, կը մարի ու կը վառի փոխն ի փոխ, զարմանալի ճշտու-



Թեամբ Սառի ծանր լեռ մը իր շրթներուն վրայ որոնք հաղիւ կրնան չարթիլ:

— Աստուած իմ, կորսուած եմ...:



Կեանքին գետը քաղաքին մէջ, իր սովորական և հասարակ ճամբէն կը հոսի՝ առանց հասնելու ծովի մը անմատչելի անհունութեան: Մեծ և ճաշակաւոր կերպով կահաւորուած տուէին մէջ՝ Արամ և սպասուհին Ամէն երեկոյ, կանոնաւորապէս գրեթէ նոյն ժամուն, տուն կը վերադառնայ: Թերթ, ճայ ու անկողին: Գիշերները, իր աչքերը քուն կ'աղբրսեն, բայց կոպերէն անդին կայ աշխարհ մը որ իր խռովքն ու չարչարանքն ունի: Տասը տարուան ընթացքին, առաջին անգամն է որ հետու է իր սիրելիէն: Քանի մ'օրէ ի վեր բաժնուած է անկէ, բայց ինքզինք անապատի մը մէջ կը կարծէ:

Այդ պահուն, Արամ կը դտնուի նամակատունին շէնքին մէջ. գրիչը ինքնարերարար կը շարժի: Առաջին նամակը իր Զապէլին. «Վաշնէ բնութեան և խաղաղութեան քաղցրութիւնը խմէ վճիտ և պաղ շաղիւրներէն և միշտ յիշէ դիս, ինչպէս ես քեզ միշտ կը յիշեմ: Ամէն քայլափոխիդ, իւրաքանչիւր շարժումիդ, ուրախ և արտում պահներուդ, խորհէ որ միշտ ներկայ եմ»:

«Թերթ կը զրկեմ: Կարդա՛ ծռուերուն շուքին տակ ու ջուրերուն պայծառութեան քով Պատէ ամենախորհրդէն հեռու, կարծով կամ հեախոտն, շինչպէս որ քեզի հաճելի է: Ու մանաւանդ լաւ և ախորժով կեր: «Քեզ անսնամ, զիրցած պիտի վերադառնաս»:

«Տը... կը գրկեմ քեզ և կը համբուրեմ շրթներէդ»:



Ճաշէն վերջ, Զապէլ և Զարեհ քով քովի, տնակին ամուլն մէջ: Պատկեր:

Երբեմն նայուածք նայուածքի, մերթ յուզում և ձանձրոյթ:

— Բայց, Զապէլ, պէտք է որ քեզի բացատրեմ, պէտք է որ քեզի, վերջապէս, ճշմարտութիւնը խօսիմ: Փամանակը...

Սիրոյ փոքրիկ աստղ մը Զարեհի աչքերուն մէջ:

— Այսինքն...

Թեթև սարսուռ Զապէլի ձայնին մէջ:

— Սիրելիս...

Զապէլի տոգունութիւնն ու նայուածքին ըզրվզումը ի լուր այս բառին Արդեօք Զարեհ խենթեցա՞ւ...

— Ներէ՛, Զապէլ, եթէ...

Խոչոր լուսեան մը խաւարը երկուքին միջև: Կնօջ աչքերը կը

կորսուին խռերուն ծովին մէջ, մինչ երիտասարդին սիրօը կը գալարուի անձանօթ արևներու կլափին մէջ:

Ու, թոյլ ու երկչոտ՝

— Զապէ՛լ...

— Վերջ տանք, պ. Զարեհ անհանգստութիւն կը դգամ:

Զարեհի թեքերուն թռիչքը կը կոտորի, ու բարակ անձրեւ մը իր երազներուն վրայ Սակայն սիրոյ բոցը՝

— Զապէ՛լ, ինչ որ այս առտու ըսի, այցելութեանս պատճառի մասին, իրականութեան չի համապատասխաներ: Գրոջս համար սենեակ վարձելու չեմ եկած: Այս տարի՝ գիւղ պիտի չգայ ան:

Երիտասարդ կնոջ անդնդախոր հեռաքրքրութիւնը:

— Ներէ՛ առաջին առթիւ այդ պատրուակը անհրաժեշտ կատեցի, նշմարելով երեսներուդ կարմիր այլայլումն ու շիտթութիւնը:

Զապէլի միտքը հորիզոններէն անդին կ'արշաւէ: Նոր է, բոլորովին նոր, այս կեանքը իրեն համար: Ամուսնանալէն ի վեր առաջին անգամն է որ կը գտնուի երիտասարդի մը դէմ առանձին: Այս պահուս իր մէջ կը մրտփէ գեղարիբ կիրքը, որչօփ ալ փայփայած ըլլայ զայն, ներքնովի զանազան խաբուսիկ առիթներու: Այո՛, քաղաքին մէջ իր նայուածքը յաճախ հանդիպած է Զարեհի աղաչաւոր կամ յատկանշական նայուածքներուն, ու չէ սաստած զայն: Այո՛, գողտրիկ վերապահութեամբ մը, նոյնիսկ հաճոյք զգացած է այս համակրելի երիտասարդին ներկայութենէն, երբ ան, իր բնին, իր քրոջը՝ Արմենուհիի հետ՝ իրենց կ'այցելէր: Ճիշդ է, իր ձայնին հրապոյրը կ'աւելնար եւ ծիծաղները աւելի հնչական կը դառնային անոր հասակին ի տես: Բայց չէ ուզած, չէ համարձակած՝ երբեք խորանայ անկարելիութեան մը բաւիղներուն մէջ, մանաւանդ իր ամուսինին հսկող ու ճառագայթող բիրերուն տակ: Այստեղ, սակայն, ցայտուն է պարագաներու տարրերութիւնը: Բայց այստեղ ալ, թէպէտ կատարեալ աղաթութիւն. սակայն վախին կամ վտանգին սարսափն է որ կը հրամայէ Զապէլի շարժումներուն, ջիգերուն, ձայնին: Եթէ, Աստուած չընէ, այդ պահուն իրենց դէմ ծառանայ Արամի հասակը բոցի մը զանգուածին պէս, ինքն ալ կորսուած է. իր անկոյճ հիւրն ալ: Որով, պարզ է, պիտի ջանայ մարել Զարեհի կրակը:

— Չէի կրնար երեւակայել որ պիտի փորձէիք զիս իտարել:

— Մտքէս իսկ չ'անցնիր: Ոտրե՞լ, Բե՞զ... ո՛հ, ո՛չ, ո՛չ, կ'երդ նում բոլոր սրբութիւններու վրայ... Բայց անա ինքնին արդէն պարզուեցաւ այցելութեանս նպատակը:

— Պարզ խօսեցէք, պ. Զարեհ, ու աղատեցէք զիս աւելորդ մըղ-ձաւանջներէ: Դէ՛չ բա՞ն մը պատահած է քաղաքին մէջ:

— Ո՛հ, դեռ «պարոն» Զարեհ...

Ու, պաղատանքին վանկերով. շունչին մէջէն՝

— Զապէլ, ես եկած եմ, ես եկած եմ... միայն... միայն քեզի Քեզի համար...

Վարագոյրը կը պատռի ու արեւը կը խաւարի: Ծառերը կը դողան ու կը մռնչեն, և առուակը հեղեղի մը կը վերածուի: Զապէլի աչքերը բաց են, բայց բան մը չեն տեսնու: Երևակայութիւնը լոկ կախալի վրայ է, կը սաւառնի մերթ դէպի քաղաք. մերթ ապագային, ու իր դէմը՝ բոցերու վրայ նստող երիտասարդին: Աստուած զրկեց զայն թէ սատանան: Ի՞նչ պիտի ըլլայ: Ի՞նչ պիտի պատահի: Ըմբոստանայ ու վտարէ՛ զայն, թէ՛ փափկութեամբ կամ լրջութեամբ՝ մերժումին նետը ուղղէ անոր ճակատին կամ սրտին: Ինչ որ ալ ըլլայ գէպքերուն ընթացքը, կ'երզնու յարգել իր ամուսինին բացակայութիւնը: Սակայն եթէ Աստուած զրկած է զայն...

— Գիտէ՞ք, պարո՛ն, որ ամուսինս երկու օր վերջ ճամբայ կ'ելլէ ու երրորդ առաւօտ կը հասնի այստեղ: Կրնա՞ք երևակայել թէ ի՞նչ սարսափելի դրութիւն մը կրնայ ստեղծուիլ ձեզի և ինծի համար: Նոյնիսկ՝ բաւական է որ ան ստուգէ թէ դուք այստեղ եղած էք...

— Այո՛, կ'ըսած եմ բոյսը և հաշուած բոյսը մանրամասնութիւնները: Դեռ բաւական ժամանակ ունինք:

Ու, աւելի վճռական՝

— Բայց Զապէլ, եթէ դուն կը փափաքիս, եթէ չունիս փոքր համակրութիւն մը ինծի հանդէպ, եթէ քեզի հաճելի չէ իմ ներկայութիւնս այստեղ, ես անմիջապէս կը մեկնիմ, կը հեռանամ ընդմիշտ...

Ամպերը հետզհետէ կը ցրուին, ու տեղ տեղ՝ կապոյտը երկինքի դաշտերուն մէջ: Զապէլ կը շնչէ ու թեթև ժպիտի մը հեղութիւնը կը բեկրեկի իր շրթներուն վրայ, որ կ'իյնայ վար, ու կը միանայ առուին կարկաչին...

Մինչ Զարեհ դեռ կը կմկմայ.

— Ես կը կարծէի... ես կը հաւատայի թէ զիս...

Ու բիւրերը լճակի մը մէջ.

— Ես կը յուսայի թէ ինծի հանդէպ գէթ համակրութիւն մը...

Ու աւելի բուռն.

— Զապէ՛լ, երկար, երկար ատենէ՛ ի վեր ես այս պահը կ'երազէի. ինչո՞ւ, չեմ գիտեր: Երկար ժամանակէ ի վեր՝ իմ քունիս խաղաղութիւնը խորտակուած է: Երկար ատենէ ի վեր ես կը տառապիմ, կը հիւժիմ նոյնիսկ. ինչո՞ւ, որովհետեւ... որովհետեւ կը սիրեմ քեզ, ծածկարար, զաղանի, խենթօրէն: Այո՛, կը սիրեմ քեզ, առանց յոյսն ունենալու ներկային կամ ապագային, վայելքին կամ երջանկութեան...

Օրօք: Այժմ, ընդվզումին տեղ՝ Զապէլի աչքերուն մէջ՝ գութին

քաղցրութիւնը: Բայց իր շրթներուն փոխարէն՝ կը խօսին առուակին լեզուները:

— Եկած եմ, քեզի ըսելու համար ասոնք: Աստուած չնորհեց ինձի այս առիթը: Ես պարպեցի իմ սիրտը: Այս բառերը ըսելու համար՝ տարիներ պէտք եղան: Հիմայ, խօսքը քուկդ է, Չապէլ: խօսէ՛ պարզ, ինչպէս...

Ու Չապէլ՝ քոյրօրէն՝

— Ազնիւ պ: Չարեհ... .

Բայց բառերը կը հալին ու լռութիւնը կը խօսի իր բիւրաւոր լեզուներով:

— Այժմ կ'անդրադառնամ ու չեմ կրնար լուծել կնճիռը: Չեմ գիտեր թէ ո՛վ զրկեց զիս այստեղ: Չեմ գիտեր թէ ո՛ր ոյժն է որ զիս հրեց դէպի քեզ: Ո՞ր իրաւունքը կամ ո՞ր պարտականութիւնը: Այո՛, չեմ գտիեր թէ ինչո՞ւ եկած եմ այստեղ: Ի՞նչ բանի համար: Ինչո՞ւ...

Եւ ուժասպառ.

— Ո՛հ, ներէ՛ ինձի, Չապէլ, ներէ տղայութեանս...

Ու Չարեհի բիւրերը ծովի մը մէջ: Ձերմութիւնն ու միամտութիւնը իր շեշտին և անհաւասարակչիւ երանդը իր չարմուսներուն:

— Ո՛հ, մի՛ լար, մի՛ լար, Չարեհ...

Երջանկութիւնը արցունքով կը սկսի ու արցունքով կը վերջանայ: Երկինքին վրայ ոչ մէկ բիծ: Պայծառ և ջինջ օրհնութիւն մը միջոցին մէջ: Ծառերուն խուռնն ու աղօթքը...

Ու մայրօրէն՝

— Չէի կարծեր, չէի կարծեր որ այդքան բուռն ես: Մի՛ լար, կը խնդրեմ: Սրբէ աչքերդ ու ելիր եւ պտոյտ մ՛ընենք...

Երածչաութիւն թէ բառերու քաղցր աւանանք մը: Ո՞ր լարերէն: Գութի՞ն թէ սիրոյ...

Քիչ վերջ, Չապէլի ու Չարեհի հասակները զիւզին ամայի ճամբաներուն մէջ: Մացառներու, վայրի վարդենիներու քով կամ հաստափոր ու բարձրաբերձ կաղամախիներու կամարին տակ՝ Չապէլի համակրելի պարզութիւնը ու Չարեհի երազային սարսուռը: Չապէլի ցցուած ստինքներուն զմայլելի շնչը, ու Չարեհի բոցավառ աչքերուն երիտասարդութիւնն ու աղերսը...

Խորհրդաւոր և արտւած մայրամուտը գիւղին...

\*  
\*  
\*

Ոսանձած մորթերու ցուցադրութիւնը քաղաքին աչնան ցուցահանդէսին մէջ։ Գլխաւոր փողոցները մասվաճառի հսկայ խանութներու վերածուած են։ Բազուկ և ոտք։ Միւս Օղափոխութենէ վերադարձողի սնափառութիւնն է որ իր չտես և այլամերժ ծիծաղը կը թափէ մայթերուն վրայ։ Իսկ պարկեշտութեան ծիրանին իրենց վրայ նետողները կ'երգնուն հանրային կարծիքին անունով։ Ու գայթակղութիւնը խորհրդարան կը տանին օրէնքի վերածելու համար։ Այն դասակարգն է որ չի լծուիր կեանքի անխելի, չի՛ գործեր, բայց կը դիտէ, որ կրօնք և հաւատք չունի, բայց մոմ կը վառէ հանրային բարոյականին առջեւ։

Զայէլ իր գունափոխութեան «մեղք»ը կը քառէ տունին մէջ։ Բնականոն կեանքը վերսկսած է։ Երեկոները, անհամբերութեամբ կը սպասէ ամուսինին զուարթութեան ու համրոյրին, որոնք սրագաքայլ տուն կը մտնեն և կը թափին իր այտերուն վրայ։ Արամի դէմքին վրայ այս տարի, յոգնածութեան նշմարելի ակօսներ։ Բայց գո՛հ է որ իր կինը կաղզուրուած է և նրբենի գիրութիւնով մը շղարչուած։ Երբեմն Զայէլն ախապէս սահմանուած տեղ մը, կը սպասէ իր ամուսինին, ու կ'երթան պարտէզի մը ժամանցին ու զովութեանն՝ ուտեն ախորժով։ մերթ կը խօսին, մերթ կ'ունկնդրեն ջուրակի մը եղբայրական հառաչները։ Յետոյ՝ տուն, «փաստանս», թոչունի կատակներ ու անկողինին մխիթարութիւնը։

Ստենէ մ'ի վեր, սակայն, Զայէլ երջանիկ մտահոգութեան մը մէջ է. կամ մտահոգ երջանութեան մը մէջ՝ զոր կը ծածկէ իր ամուսինէն, հակառակ իր բուն շաղձանքին։ Կը զգայ. եղբմական երանութեամբ, որ իր արիւնը կառչած է իր ներսին։ Երկու ամիսներ անցած են, բայց կը ստուգէ թէ ցամքած կամ չեղած է իր ճամբէն՝ օրէնքին ազդեցութիւնը ու կը թանձրանայ մայրութեան աւազանին մէջ։ Անշուշտ դեռ բոլորովին վստահ չէ, կրնայ սովորական կամ առժամեայ խանգարումի մը հետեանքն ըլլալ. սակայն չի յիշեր նման երկար պարաշայ մը այն տեսնէն ի վեր՝ երբ առաջին անգամ զգաց կարմիրին ցայտող սարսուռը։ Ո՛չ. մանաւանդ, կազմախօսական կարգ մը երեւոյթներ ևս լեզու ելած են, — գլխու պտոյտ, ստամոքսի յաճախակի խանգարում, սրտի թեթեւ խառնուածք, եւայլն։ Օր մ'արդաշտնաբար, կը դիմէ իրենց անձանօթ բժիշկի մը կարծիքին, որ կը հաստատէ բարեբաստիկ եղելութիւնը։

Իր ուրախութիւնը, անսահման երջանկութիւնը թէպէտ հետզհետ կը ճիւղաւորուի, բայց տակաւին չի պոռթկար իր ամուսինին։ Իր մէջ արեան կտորին հետ՝ կը մեծնայ նաև ամբողջ կասկած մը, կրամէն թէ Զարեհէն, Թերեւս գիւղի ջուրին կամ սուրբին հրաշքը։

Զապելի մանրակրկիտ կերպով կը չափէ թուականներու հեռաւորութիւնը. գիւղի այցելութիւնները Զարեհի և ամուսինին Տարբերութիւնը վտանգաւոր չի գտներ, և հեռաւորար իր երջանկութիւնը չի կործանիր, կը դիմանայ կասկածին ու զառամած մտածումներու պերին:

Այո՛, բոլոր ասոնք՝ զառամած մտածումներ և խարխուլ երեւկայութիւն կը նկատէ Զապել, որ ուսկից ալ ըլլայ պտուղին արարչական սերմը, այլևս անպէտ ծառ մը չէ ինք: Տասը տարիներու յուստառապանքներու վախճանը Մայրութիւնը, աստուածային մայրութիւնը կ'ապրի անո Դարձեալ կը դիմէ եկեղեցիներու մարմարակերտ գթութեան, ուր մոմերուն երախտագիտութիւնն ու գովարանանքը կը բարձրանան խուկին թաւիչին հետ, ու կը հասնին երկինքներու ողորմութեան:

Կը ժպտի ու կը հրճուի Անմատչելի երջանկութիւնը մօտ է իր սրտին խճիթէն ներս:

Յաճախ, յետփոքրեայ հանգիստի պահերուն, երբ իր մարմինը կը յանձնէ անկողինին փափկութեան, վերացումով ու մայրօրէն կը նայի իր մերկութեան, Հեզօրէն կը փայփայէ, կը շոյէ իր պորթին կամարած սկաւառակը, որուն տակ կ'ընծիւղի երազուած Ապագային ծիլը: Կը գուրգուրայ, ու երկար ատեն կ'ըմբոշխնէ փոքրիկ և պսպղուն արօրիւնները, որ միամտօրէն կը հաւատայ թէ կու գան նոր կեանք առնողի մը ձևաւորումէն: Յետոյ քաղցրօրէն կը չփէ ծիծերուն կարծրութիւնը, որոնց մէջ երեսուն տարիներէ ի վեր չհոսած աստուածապարգև հեղուկը՝ հետզհետէ պիտի ճերմկի ու պիտի պարպուի իրմէ փրթած արբանեակին մէջ:

Այո՛, վերջապէս գոցուած է վէրքին անդունդը Այ ոչ մէկ սև՝ մառնողութեան հունուքի, արամութեան: Ան շատ հեռուները չ'երթար. անտարբեր է թէ ի՛նչ պիտի փրթի իրմէ. ասո՞ւպ մը թէ լուսին մը Ո՛չ. Զապել թեւկոխած է րարձուէքի մը կատարը, ուրկէ կը նայի վար, հեռուները, իրերուն և մարդերուն. կը նայի հպարտութեամբ մը որ կը ըղիտի կատարեալ երջանկութեան մը ակերէն:

Այժմ կը խորհի թէ ի՛նչպէս հաղորդէ հրաշայի լուրը՝ իր ամուսինին: Ո՞ր հրճուանքին ոստումով պիտի նետուի անոր ճակտի մարմարին, կամ խինդին ո՞ր լեզուով ու ձայնին ո՞ր թրթռացումով պիտի ճռուողէ անոր քնարին: Եւ բառերու ի՛նչ հեղամուռնչ հեղեղով. առտուան խաղաղ և մաքուր պահուն, համբոյրէ մը վերջ, թէ երկոյցան խոնջէնքէն վերադարձին, հանդիստին և սիրոյ տանող վանկերով: Չէ՞ որ իրեն չափ, եթէ ոչ իրմէ աւելի բայց նոյն իրաւունքներով՝ իր ամուսինը ևս կը սպասէ երջանիկ աւետումին: Ո՛հ, ո՞րքան պիտի ուրախանայ ան, տասը տարիներու երաշտէն ու պարապէն վերջ: Իրենց տունը, անկասկած, պիտի վերածուի զրախտի մը, ուր

պիտի չյանդգնի մտնել թախիծին օձը: Իրենց սենեակները, անշուշտ, պիտի նմանին տօսական սրահներու, ուր խինդն ու ծիծաղը պիտի պարեն՝ գեղափայլ երաժշտութեան մը քայլերով: Կամ ծագկազարդ պարտէզի մը, որուն թովիչ բոյրը պիտի միանայ թռչուններու խառուածիկ գեղգեղանքին...

— Ինչպէս, Աստուած իմ, ի՞նչպէս. դուն ցոյց տուր ինծի ճամբան, ներշնչէ ինծի, թելադրէ ինծի...

Կը մտածէ, նաև, նախ հաղորդել իր միակ մտերմուհիին՝ Արմենուհիի. որմէ՝ ապահովաբար՝ ալիքներու պէս՝ պիտի տարածուի աշխարհին, և իր մայրական հպարտութի՛ւնն է որ պիտի փայփայուի Այս մտածումը, սակայն, ինչ ինչ պատճառներով, կը խուսափի իր գանկէն:

Ու երկոյ մը, երբ դուռը կը բացուի Արամի յոգնած զուարթութեան առջև, Չապէլ, կոտրելով թումբերը, հրաշուենչ և գեղածոր ոստուժով մը. գետի մը պէս կ'ողողուի ամուսինին դաշտերուն վրայ, ու անոր գլուխը առած իր բազուկներու քոյրակին մէջ, բիբերուն ու ձայնին բովանդակ քաղցրութեամբը՝

— Կրկէ՛ զիս, սիրելիս, սեղմէ զիս ուժգին. և համբուրէ զիս՝ համբոյրներուդ ամէնէն գեղեցիկովը:

Անակնկալին դիմակը Արամի դէմքին վրայ: Զարմանքին մանկութիւնը կը հոսի իր խոշոր բացուած աչքերէն, որոնք դեռ կը խարխափին տարտամին և մշուշին մէջ և կ'որոնեն իրականութիւնը: Բայց, գրեթէ մեքենաբար, իր ձեռքերը կ'երկարին Չապէլի փափկասուն ցօղունին ու շրթները անոր վարդաթոյր շրթներուն: Ու, տղայօրէն՝

— Ի՛նչ կայ, ի՛նչ կայ. Չապէլ. ի՛նչ պատահեցաւ:

— Համբուրէ՛, դարձեալ, դարձեա՛լ, ու գուշակէ, սիրելիս...

Դասական և հպարտ գեղեցկութիւն մը երբե՛ք չէր փայլած Չապէլի դէմքին վրայ ա՛յնքան վեհաշուքօրէն՝ որքան այդ պահուն:

— Բայց, ըսէ՛, խօսէ՛, Չապէլ...

— Ո՛հ, գուշակէ, սիրելիս, գուշակէ. երկար տարիներու մեր երազն է որ մարմին կ'առնէ: Աստուածները ժպտեցան մեզի...

Ու րոպեք կը քանդուին խանդավառութեան տարափին տակ...

— Զեմ հասկնաք, չեմ հասկնար գուշակել: Օգնէ՛ ինծի:

Ու աղբիւրի մը նման հեզ, որ կը զլլալայ ապառաժի մը ոտքին տակ, Չապէլ՝ խորհրդաւոր՝ քրմուհիի մը աղնուականութեամբ և լուսնային ժպիտով՝

— Հայր ես, Արամ, հա՛յր...

— Ի՞նչ...

Նայուածք նայուածքի...

— Այո՛, այո՛, սիրելիս, ու ես մայր, մա՛յր, Արամ... Ո՛հ, դարձեալ համբուրէ զիս, ս՛հ, երջանկութիւնս կառարեալ է, անբիժ, անխառն...

Հիմա՛կ է որ իսկապէս երջանիկ եմ... ո՛հ, այս երեկոյ, այս գիշեր... պիտի խմեմ, պիտի խմենք, պիտի զուարճանանք, մինչև լոյս, երկուքս, ես քեզի հետ, դու ինձի հետ... պիտի ըմպենք մեր կենացը, և մեր Ապագային համար...

Արամի թեւերուն կտոր գիծը, սակայն, հետզհետէ կը թուլնայ: կը քակուի ու կը քամուի իր կնոջ հասակէն ու կը կախուի վար, լքուած ու լիակած: Կամքին և ուրախութեան ակերը կարծես տակաւ կը ցամքին ու թեթեւ կնճիռի մը զուգահեռականը իր ճակտին վրայ: Մինչ Զապէլի հրճուանքը դեռ կ'ոստոտէ, փոխն ի փոխ, ճաշասենեակէն խոհանոց և խոհանոցէն ճաշասենեակ: Ու թռչունի մը պէս՝

— Արա՛մ. այս գիշեր մեր կեանքին ամէնէն գեղեցիկ խնդութիւնը պիտի տօնենք...

Արամի նա,ուածքը, սակայն, կը դամուի լեցուն շիշի մը փորին վրայ:

— Չե՛ս խօսիր. սիրելիս, ու մանաւանդ չես հրճուիր: Չէ՞ որ տարիներէ ի վեր երկուքս ալ այս օրուան կը սպասէինք:

Ու Արամ գրեթէ սառի կոյտ մը:

— Արա՛մ, սիրելիս, ի՛նչ ունիս. ինչո՞ւ չես խօսիր. ինչո՞ւ չես բաժներ ուրախութիւնս...

Զապէլի շրթներուն վրայ ևս, յանկարծ, բարակ սօուերի մը սեւ. բայց՝

— Ա՛ռ, վերցուր գաւաթդ և խմէ՛, խմե՛նք...

Մինչ, խոհերու խօրճի մը տակ, Արամ՝ լըջօրէն, գրեթէ հրամայական՝

— Հանդարտէ՛, Զապէլ, և նստէ տեղդ...

Կնոջ մարմինը՝ հիւժած էակի մը նման՝ կ'իյնայ աթոռի մը անորոշութեան վրայ: Սիրտը կը սկսի անբնականօրէն տրոփել: Խանդավառութիւնը կը հայի և ինք կարծես կը մտնէ դատապարտեալի մը դերին մէջ որ վճիռի կը սպասէ:

Պաղ լուծեան մը աւերը... Քիչ վերջ, դատաւորի մը շեշտերով, վանկ առ վանկ՝

— Զապէլ, ինչ որ ըսիր քիչ առաջ, ճի՛շտ է, վստա՞հ ես...

— Անչո՛ւշա, սիրելիս, աւելի քան վստահ: Բայց ինձի համար անըմբռնելի է հարցաքննութեան այս ձեւը և անտեղի՝ լըջութեանդ իմաստը: Փոխանակ...

— Կ'ըմբռնես աւելի վերջը...

Ու սե քայլերով, Արամ կ'ուզողուի դէպի ննջասենեակ, կոկորդին մէջէն կրկնելով՝ կարծես սպառնական՝

— Կ'ըմբռնես աւելի վերջը...

— Արա՛մ Արա՛մ... ո՛ւր, Աստուած իմ, ոչինչ չեմ հասկնար... ճաշ պիտի չընե՞ս...

— Առանձին ձգէ զիս:



Ու ննջասենեակին դուռը կը փակուի Զապէլի մեռած հրճուանքին առջև:

Համեմեներով զարգարուած ճաշասեղանին շուրջ, Զապէլ՝ լկուած աղջիկի մը նման՝ գլուխը ձեռքերուն մէջ առած, կը խորհի: Կարծես պիտի լայ: Առաջին անգամն է այս արտաոտոց տեսարանը՝ իրենց տունին մէջ: Քիչ առաջ, ինչե՛ր, ինչե՛ր կ'երեակայէր: Ինչ պատահեցաւ: Ինչ կը մտածէր իր ամուսինը, միթէ՞ կը կասկածի իր... կամ... կամ...: Բայց...: Ու Զապէլ ամոգոյն, երկար ատեն ճաշասեղանին առջև, առանձին՝ իր տարածամ, գունատ, մերկ մտածումներուն հետ, որոնք դեռ չեն գտուած, և կը հոսին պղտոր, ու կը թափին անդուշի մը մէջ՝ որուն յատակը դեռ չի տեսնուիր...:

\* \* \*

Յաջորդ առտու, գրասենեակ մեկնելու սովորական ժամուն, Արամ՝ թառապանքին պէս՝ կ'իջնէ սանդուխներու օձապտոյտ կիրճերէն: Կարմիրը իր քնատ աչքերուն մէջ և անանուն զոզ մը՝ իր մատներուն վրայ: Ի դո՛ւր կը ջանայ իշխել:

Պայ մը կը դեղերի, ու կանգ կ'առնէ իր բժիշկին դրան առջև և կը քայէ զանգակին պարանը:

— Ինչ լուր, կը յուսամ թէ գէշ բան մը չէ պատահած... այս ժամուս...

Արամ՝ ամպամած և անձրևոտ երկինքի մը նման՝

Տոքթէօրս, գիտութեան վերջին վճիռը կը հայցեմ: Ու եթէ գիտութիւնը անկարող է, կը խնդրեմ որ խոստովանիք ու ես... ճարս տեսնեմ...

— Զարմանալի... ինչ ունիք...

— Մի զարմանաք, բարեկամս, կեանքի և մահու հարց է:

— Կատակ կ'ընէք, ինչ կայ, պատմեցէք տեսնեմ:

— Կէ խնչրեմ, անգամ մը ես քննեցէք և ինձի որոշ կերպով յայտնեցէք թէ իրապէս անկարող եմ ես... որպէս այր:

— Ատոր համար, ա՞յտեղ, ա՞յս ժամուն... մանաւանդ որ ձեզի յայտնի է արդէն գիտութեան վճիռը:

— Կրկին քննութիւն մը անհրաժեշտ չէ՞ք նկատեր. որպէս անսխալակա՞ն պէտք է ընդունիլ այդ վճիռը:

— Անչուշտ...

— Բայց եթէ ձեզի յայտնեմ թէ այս միջոցիս հայր... եմ...

— Ինչ կ'ըսէք... անկարելի է... բայց կեցէք տեսնեմ, ինչ կ'ըսէք:

— Այո՛, այս միջոցիս ես հայր եմ.

— Զարմանալի՛. յղի՞ է ձեր կինը. ինչէն գիտէք:

— Չեմ գիտեր. կինս կը պնդէ.

— Կը շնորհաւորեմ. կը շնորհաւորեմ... բայց պիտի ստիպէք

զիս որ... աշխատանոցս գոցեմ եւ բեռնակիր դառնամ... բայց... սակայն, վստահ եմ որ կը կատակէք, կամ առնուազն թիւրիմացութիւն մը կայ մէջտեղ:

Ինչ վերջ, պողոտայի մը նստարանին վրայ, Արամ կը նստի իր մահամերձ երջանկութեան հետ: Կը հառաչէ, երկար, խոր...: Իր երէկը՝ երջանիկ դրախտ մը, ու այսօրը՝ ձիթենեաց պարտէզ մը... Ակամայ, կը նայի արեւին, որուն ոսկին երջանկօրէն կը ձեփուի բազկատարած ծառի մը պատկառանքին վրայ, կը տեսնէ կտրքերու տողանցքը եւ անցորդներու աճապարանքը՝ հացին կամ վայելքին ի խնդիր: Կը հետեի թռչուններու անհոգ եւ չարածճի թռչններուն, որոնք՝ կարծես՝ Մոլիէրի կատակերգութիւնները կը խաղան: Երկինքին մաքրամաքուր կապոյտը էակներուն խորհուրդ կու տայ համբուրել եւ սիրել...:

Ու գլուխը երկու ձեռքերուն մէջ, կը խորհի Գէշ երա՞ղ մը թէ... Գէշ երազ մը...: Ի՛նչ գործ ունի ինք այդ պահուն, այդտեղ՝ ուր երբեք եղած չէ: Իր կեանքին խորտակումը, վախճանը թէ...: Գիտութիւնը իսկապէս ճշմարտութիւնն է որ կը պատգամէ... Եթէ իրականութիւնն է անկենդանութիւնը իր սերմին, ուրեմն ի՛նչպէս մեկնել իր կնոջ ներսին պողաւորումը: Զապէլ մեղանջա՞ծ էր իր ընթանեկան յարկին հանդէպ, դաւաճանա՞ծ իր պատուոյն դէմ: Որո՞ւ կը պատկանէր, ուրեմն, այս արտաոտոց հայրութիւնը: Իր գանկին հորիզոնը չի՛ կրնար պարփակել նման ենթադրութիւններ, իր կնոջ սէրն ու ազնիւ զգացումները մարզարկի պէս պայծառ էին: Եթէ իրապէս Զապէլ խաբած է զինք, ուրեմն աշխարհի մէջ պարկեշտ կին գոյութիւն չի՛ կրնար ունենալ: Կայ ուրիշ բան մ՛այ: Թերես Զապէլ զոհն է կաղմարնախոսակտն վիճակի մը, ու անգիտակցարար կը պնդէ ցանկալի բայց անգոյ իրականութեան մը վրայ:

Կացութիւնը, սակայն, կը մնայ սե ու խառնակ՝ Արամի հոգիին աչքերուն առջեւ: Կամքին եւ ոյժին պողպատը կը մազլցի բոյոր զառիվերերէն, հասնելու համար եզրակացութեան մը բացատրանին: Մերթ կը խարխափէ վիհերու մութին մէջ, բայց իր նայուածքը չի հպիր ճառագայթի մը պայծառութեան...:

Ի՛նչ պէտք է ընել: Անգամ մ՛այ կը չափէ, կը խորաչափէ — եթէ իրականութիւնն է Զապէլի վիճակը եւ իր հայր ըլլալու անհաւանականութիւնը, սարսափելի հեռապատկեր: Ուրեմն... ուրեմն...:

Բուռնցքը՝ մուրճի մը պէս՝ քանի մ՛անգամ կը զարնուի իր գանկին: Ոտքի կ'ելլէ, վճռական. բայց քանի մը քայլ պնդին՝ անօրոշութիւնը ծանրօրէն կը ծալուի իր ուսերուն վրայ: Արեւ երկինքի կատարին կը մօտենայ, բայց իր մտքէն չ'անցնի գրասենեակի պարտականութիւնը: Ու, քայլերու ողբերգական մոռցումով, զին-

ուած դժբախտ զէնքերով, կը յառաջանայ դէպի անծանօթ, փրկելու համար իր պատիւը...

Չապէլ դեռ կ'երկարի անկողինին սեւրուն մէջ, կոպերուն դիակնային ծանրութիւնն ու զէմքին դալկութիւնը կ'ազդէր անըմբռնելի կը մնայ իրեն համար կը զարմանայ, կ'ապշիւ Երազուած իտէս մը մարմին կ'առնէ, ու ամուսինին խաչուած կերպարանքը ինչո՞ւ Ո՛վ գիտէ... Կը կ'սկսածի՞ շաւանաբար շանելուկին միակ լուծումը Բայց ինչո՞ւ կը կ'սկսածի Ո՛վ գիտէ... Ու կ'եզրակացնէ.— անսր կասկածը պէտք է փարատել Փրկութի՛ւնը:

Արամի դիակը ներս կը մտնէ ու կ'իյնայ բազկաթոռի մը դազադին մէջ:

Գիշերային տափատով՝ Չապէլի ապշութիւնը կը փութայ ամուսինին քով ու մագթաղենացիի աչքերով՝

— Գրասենեակ չգացի՞ր, Արամ:

Արամի բիրբըր տախտակամածին վրայ:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ, սիրելիս, ինչո՞ւ, ինչ կայ. դուն բան մը, գաղտնիք մ'ունիս զոր կը ծածկես ինձմէ: Դուն մտածում մ'ունիս զոր կը տանջէ քեզ և որուն հաղորդակից չես ըներ զիս: Ըսէ՛, ըսէ՛ ի՛նչ ունիս:

Չապէլի աղաչանքը կը բախի Արամի անգութ անտարբերութեան որ. կշռելով՝

— Չապէ՛լ, դեռ կը պնդե՞ս յղութեանդ վրայ:

— Ա՛յդ է քեզ մտաթանչող բանը: Զարմանալի Մինչ ես, ո՛հ, Աստուած իմ, կը խորհէի թէ ասկէ լերջ աշխարհի ամէնէն երջանիկ արարածն ես...

— Հարցումիս որոշ կերպով պատասխանէ:

— Ո՛հ, աւելի բարի եղիր, Արամ՛մ, աւելի անոյշ խօսէ, կ'աղաչեմ...

— Իսկապէս յղի՞ ես: Պատասխանի կը սպասեմ:

— Ու Չապէլ կ'մկմայով՝

— Կարծեմ թէ: Բայց չէ՞ որ սիրելիս, տարիներով մենք այդ բանը կը ցանկայինք: Մոռցա՞ր ըրած հազարն զոհողութիւններդ:

— Ուրեմն յղի ես, այո՞... .

— Ո՛հ, Արամ՛մ, սիրելիս, մի բարկանար... կը վախնամ...

— Կը վախնա՞ս... ինձմէ... հա՛, հա՛, հա՛... Ըսէ՛, ո՞րմէ յղի ես...

Ահաւոր բոց Չապէլի այբերուն հնոցին մէջ:

— Բայց, այդ ի՛նչ հարցում է:

— Ըսէ՛, ըսէ՛ շուտ. համբերութիւնս...

— Բայց սիրելիս, Գեղմէ... Դո՛ւն ես... միթէ՞...

— Ծճմարտութիւնը խօսէ՛, պարտաւոր ես:

— Դո՛ւն ես, Արամ՛, դուն ես հայրը...

— Ո՛հ. ձյմարտութիւնը չէ այդ:

Ու գրեթէ թող և հառաչանքին պէս երազկոտ՝

— Ես հայր չե՛մ կրնար ըլլալ...

Չապէլ անդունդի մը քոստին մէջ:

— Կը հասկնա՞ս... կը հասկնա՞ս... Ես հայր չեմ կրնար ըլլալ...

Որոտում և կայծակ: Առաստաղը կը փլի և Չապէլի աչքերը կը մթաղնին: Քրտինքի մը պաղուծիւնը կը դողացնէ իր մարմինը որ գետին կ'իյնայ փտած տանձի մը նման: Արամ արհամարանքին ու զայրոյթին բացազանչութիւններով դեռ կը մալտայ, ու շանթերու նայուածքով և պոզանքին լեղիութեամբ՝ դուրս կը նեռէ իր արիւնին կրակն ու խաբուած ըմբոստութիւնը:

Չապէլի աչքերուն դատողութիւնը, պահ մը վերջ, կը վերագանէ իր թռիչքը. բայց մտածումը կը սառի անծանօթ ուկիտանի մը մէջ որ հսկայ դամբարան մը կը թուի իրեն այդ պահուն: Բարձունքի մը երազէն՝ ինկած է իրակասութեան մը դառնութեան մէջ:

Այժմ կացութիւնը պարզ է իրեն համար, գռեհկօրէն պարզ, սարսափելիօրէն պարզ:

Իր ամուսինը հայր չի կրնար ըլլալ... անա պառճառը անոր բոցին խննդութեան...

Այժմ կ'անդրադառնայ անցեալի զանազան զէպքերու, կարգ մը եղբուքեանց, որոնք կը հաստատեն անոր պակասութիւնը: Հիմա՛յ կը հասկնայ, հիմա՛յ կ'ըմբռնէ կացութիւնը իր բովանդակ անաւորութեանը մէջ. ու հիմա՛յ նաև, կը թափանցէ ապագային մտայնութեան իր գէժ կը տնկուի իր վախճանին եղբրականութիւնը. որովհետև Արամ կանգ պիտի չառնէ ու պիտի գործէ գերագոյն յիմարութիւնը:

Պառաւի մը նման ձեռքերը ծունկին կը զարնէ, կ'աւաղէ: Բայց կը զգայ անոր անզորութիւնը: Ի՛նչ պիտի ընէ: Պէտք է չարժիլ, աճապարել, Փախչի՞ր, ո՞ւր: Ո՛հ, Ուրե՛մն: Պէտք է հրաժարիլ կա՛մ մայրութենէ, կա՛մ Արամէն: Երկուքն ալ զոնար: Անկարելիութիւններ: Ու պառի՛ւր, այդ չըլլալոց ջնարակը: Ու առեղծուածը պիտի վերջանա՞յ այդտեղ Պիտի վերսկսուի՞ նախկին կեանքը, չոր բայց հանգարտ կեանքը: Սակայն ի՛նչպէս հրաժարիլ մայրութենէ, այդ զմայելի երազէն, որուն ինք կը բաղձար իր բովանդակ էութեամբ և որուն երկնային սարսուռը հիմա՛յ է որ կը զգայ... Ո՛հ, Աստուած իմ...

Ու. Չապէլ կը դողայ և կը խորհի երկար, արագ, տառապանքին ճառագայթներով, որոնք չեն լուսաւորեր իր քայլերուն և ապագային խաւարը: Ու դուրս կը փութայ փոթորկի մը ուրուականին պէս:

— Պր. բժիշկ, կ'աղաչեմ, շո՛ւտ, ո՛րքան կարելի է շուտ, փրկեցէք զիս: Փրցուցէք այն ծիլը որ կ'ընձիւղի ներսս և որուն բնականոն բողբոջումը դո՛ւք ես հաստատեցիք քանի մ'օր առաջ: Ստիպուած

եմ, պատճառներու մէջ մի՛ մտնէք: Խնդրեմ, շո՛ւտ, հիմա՛յ, այս պահուս Այլապէս կորսուած եմ...

Ու անաւոր համակերպութեամբ մը, աչքերը դոց՝ որոնցմէ կը յորդի արցունքին խելագար կատաղութիւնը, ցաւին ու տառապանքին մէջ, Զապէլ սարսուռով կը զգայ դանակին դաժան անգթութիւնը, իր ներսին քանդուիլը, իր դժբախտ մայրութեան փլուզումը...

\*  
\*  
\*

Մինչ արեւը կը հակի հորիզոնին տեղնութեան, տուն կը մտնէ Արամի խարխուլ ընդվզումը: Արագ, դաներու ժխորէն կ'անցնի ու կը հասնի ննջասենեակ, ուր Զապէլի մարմինը, անշարժ, կը տանջուի վերմակի մը ասեղներուն տակ:

— Հիւանդ ես:

— Հիւանդ ես, այո՞. դաւելէ վերջ, սրբապղծելէ վերջ... Դուք ատակ էք ամէն գարշելութեանց...

Ու Զապէլ դալկօրէն, հազիւ՝

— Արա՛մ, խղճա՛...

— Ահա պերճախօս մեղքդ: Ոճիրէն վերջ՝ խիղճին ու գութին կ'ապաւինիք:

Ու Զապէլ վերմակին գերեզմանէն՝

— Արա՛մ, Արամ...

Ու աչքերը կը փակուին: Մինչ Արամ կ'որոտայ՝

— Անշամ մը ես մի՛ փորձեր խաբել զիս: Թատերգութիւնը բաւական հասարակ է և անհամ: Ել... ու հետեէ ինձի:

— Ելի՛ր, կ'ըսեմ:

— Ինչո՞ւ, Արամ, ո՞ւր... Չե՞ս տեսներ վիճակս...

— Ո՛չ, չեմ ուզեր տեսնել, չեմ ուզեր գիտնար: Քալէ՛: բժիշկին պիտի երթանք: Այնտեղ պիտի ստուգուի ամէն ինչ: Դեռ ես կասկած ներ ունիմ: Թերեւս դու յիմարացար ե կ'ուզես յիմարացնել զիս ես: Թերեւս յիլ չես, ու հիւանդ երեակայութիւնդ սանձարձակօրէն կը գործէ: Ե՛լ, բժիշկին պիտի երթանք: Անկէ վերջ միայն կա՛մ ծուկի կու գամ առջևդ, կամ...

— Կա՛մ...

— Ե՛լ, ըսի, լրջօրէն կը կրկնեմ:

— Բայց, սիրելիս, տկար եմ. սենեակէն դուրս չեմ կրնար ելլել: Վաղը, միւս օր, եթէ վիճակս աւելի բարւոքի...

— Ի՞նչ ունիս. դուն բա՛ն մըն ալ չունիս: Ես չեմ կրնար օր մ'իսկ ապրիլ այս դրութեան մէջ: Կ'ուզեմ գիտնալ ճշմարտութիւնը, կը հասկնա՞ս, ճշմարտութիւնը. ու յետոյ...

— Արա՛մ, քու բարի որտիղ կը դիմեմ, հանգիստ ձգէ զիս, տկար եմ. ու թերեւ իրաւունք ունիս դուն..

Արամին աչքերուն վիհը:

— Ի՛նչ, ի՛նչ բան, ի՛նչ, ի՛նչ բանի մէջ:

— Թերեւ ինչ որ հաղորդեցի քեզի, չի՛... չի համապատասխաներ իրականութեան..

— Ձեմ հասկնար. պարզ խօսէ. դարձ դարձիկ խօսելու ժամանակը չէ:

— Շատ գէշ կերպով հոսում ունեցայ... .

— Նորէն չեմ հասկնար...

— Ներսո ոչինչ կայ.

— Յդի չե՞ս...

— Ո՛չ . . .

— Լաւ. բայց ես դարձեալ վստահ չեմ: Այդ բանը բժիշկը պիտի հաստատէ: Այս պահուս զո՛ւն ալ, ե՛ս ալ ի վիճակի չենք ո՛չ դառելու, ո՛չ ալ պայծառ տեսնելու: Ելի՛ր, ելի՛ր, կ'ըրեմ: Պիտի ելլես ամէն գնով: Ես այլեւ չեմ հաւատար, հաւատք չունիմ խօսքերուդ. ելի՛ր:

— Ձեմ կրնար. Արամ, հասկցիր . . .

— Ուրեմն բժիշկը այստեղ կը բերեմ:

Ու Ձապէլ շփոթած՝

— Ո՛չ, ո՛չ, այդ ալ ոչ . . .

— Ինչո՞ւ:

— Մէկ երկու օրէն կ'աղէկնամ ու կ'երթանք ուղած բժիշկիդ:

— Բայց ես չեմ կրնար զիմանալ մէկ երկու օր: Այս պահուս իսկ ես կ'ուզեմ որ վերջ գտնէ ամէն կասկած ու դուն կամ նորէն իմինս կ'ըլլաս, կամ... ահա կ'երթամ, կէս ժամէն այստեղ եմ բժիշկին հետ:

— Ո՛չ, ո՛չ Արամ, կ'աղաչեմ . . .

— Բայց ինչո՞ւ:

— . . . Հիւանդ եմ . . .

— Աւելի լաւ. կը քննէ քեզ:

— Արա՛մ . . .

Ու Ձապէլի արցունքները:

— Ի զո՞ւր. չեմ ազդուիր, չեմ խարուիր:

Ու Ձապէլ կսկիծին ու երազին բերնով՝

— Արա՛մ, ի՛նչ գեղեցիկ էր մեր երեկը, մեր երազը . . . Ի՛նչ լաւ էինք, ո՛հ . . .

— Անցեալին վրայ չեն լար, անցեալով հպարտ կ'ըլլան.

— Արա՛մ, Արա՛մ, Արա՛մ...

Ձապէլի արցունքներուն գետը՝ անկողինին մէջ:

— Խօսէ՛:

— Արամս, նստէ: Արամս, նստէ՛, սիրելիս, նստէ՛ հանդարտ:

Պիտի պատմեմ, պիտի պատմեմ բոլորը, ճշմարտութիւնը: Ոչ թէ կը վախնամ մահէն, ո՛չ: Ձեռքդ հանէ գրպանէդ Մի խաղար ղէնքին հետ: Ձեմ վախնար մահէն. բայց ճշմարտութիւնը պիտի ըսեմ: Յետոյ ազատ ես պարպելու հրազէնդ: Ես քեզ միայն կը սիրեմ, քեզ կը պաշտեմ: Դուն գիտե՛ս Ձե՛ս ճանչնար զիս...

— Մտիկ կ'ընեմ, խօսէ՛... .

Ու Չապէլի արցունքները կը պատմեն բովանդակ ճշմարտութիւնը, բոլոր մանրամասնութիւններով: Բայց, աւարտելէ վերջ, յանկարծ, գրեթէ ըմբոստ, իրաւունքին անունով՝

— Ես մայրութեան կը ձգտէի, ես փորձեցի մա՛յր ըլլալ. ես ուզեցի մա՛յր ըլլալ, Արամ, մա՛յր Ահա իմ ակարութիւնս: Կը խոստովանիմ: Երե՛ք՝ ինձի. ահա մեղքս Սէր, պուտ մը սէր գոյութիւն չունի այստեղ. իսկ դաւաճանել քու սիրոյդ դէմ՝ երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք...

Խաղաղութիւն . . .

Արամի ծունկերը կքած են, ծռած, պզտիկցած, ու աչքերը՝ սառած լուսիններու պէս՝ կը դիտեն անհունի մը պարապը: Բառ չունի: Լեզուն կը բռնուի «Մայր» բառին ի լուր՝ իր ներքին աշխարհը կը կործանի: Գերագոյն ճիգեր կ'ընէ չարտայայտուել համար այս կործանումը. բայց չի յաջողիր. ջիգերը չեն հպատակիր իր հրամաններուն, ու կը գողայ, և իր կոխկոտուած այրութիւնը հաղիւ կը նետէ անոռի մը ողբերգութեան: Ու ահա, իր արցունքները ես, որոնք կը միանան Չապէլի գեռին:

Լուութիւնը՝ մահուան քայլերգի մը նման՝ կը տարածուի: Մութին թեթե մարմինը ներս սպրդած է պատուհաններէն. բայց սենեակին լոյսը վառող չկայ: Չապէլի տոգոյն դէմքը հաղիւ կը նշմարուի, երբեմն կը հազայ՝ վիշտին պէս: Իսկ Արամի հիւղակը՝ անկիւն մը՝ կը ծածկուի խաւարին ձիւնին տակ: Ո՛չ մին, ո՛չ միւսը չեն կրնար խորհիլ չեն կրնար խօսիլ: Անբացատրելի, անձանօթ, տխրաբոյր վիճակ մը, սուզի հագուստներով, մահամերձի կմախքով:

Գիշերը կը յառաջանայ, ու Արամի տունը խոշոր դազալ մը, ուր երկու դժբախտ էակներ կը թաղուին մեղքին անմեղութեան տակ . . .

\*  
\* \* \*

Պատշգամին խաղաղ հեղութիւնը ուր՝ Հոկտեմբերեան ջինջ զո-  
վութիւն մը՝ կը թափի երկինքի անտեսանելի թաղարներէն:

Արեւին վերջին պարը՝ նրբօրէն կարմիր հորիզոնին վրայ: Հեռուն,  
տեղ տեղ, ամպի երջանիկ գմբէթներ...

Վարը, մայթերը վերածուած են հսկայ թատերասրահներու:  
Ծպտուած կիներ ու մեղրամոմէ երիտասարդներ: Ու կարծես օթեակ  
մըն է, այդ պահուն, բարձրահայեաց պատշգամը ուր, Արամ, ճարոնա-  
կան զգեստի մը մէջ, երկար աթոռի մը վրայ տարածուած, ու Զապէլ՝  
հակած ձեռագործի մը սպիտակութեանը վրայ, կը դիտեն մ'երթ խռով-  
քին դիտակով, մերթ անդորր լճակի մը բիւրեղով:

Ու Արամ բարի ու մեղմ՝

— Հրաշալի՛ է վերջալոյսը, չէ՞, Զապէլ:

— Այո՛, սիրելիս, հազուադէպ վերջալոյս մը:

— Եւ ի՞նչ հանդարտ է պահը. կը սիրեմ:

— Ուրախ եմ, սիրելիս: Ես ալ կը սիրեմ այս պահը:

— Ու անա երկա՛ր կը շնչեմ. օգը մ'աքուր է, այնպէս չէ՞ Զապէլ:

— Ո՛հ, այո՛, մաքուր, անարատ. . .

— Եթէ լրագիր մ'ըլլար կը կարգայի, կամ գիրք մը. շատոնց  
գիրք չեմ կարդացած. . .

— Երբ ներս երթանք, ես կը կարգամ ազուոր գիրք մը, և դու  
մտիկ կ'ընես սիրելիս:

— Այդ ալ կ'ըլլայ. . .

— Այո՛, այսպէս կ'ընենք, սիրելիս:

— Բայց սա կարմիր ամպերէն կը ստկամ, Զապէլ. անպայման  
փոթորիկ կը բերեն, ինչպէս կ'ըսէր մայրս. . .

— Ո՛հ, ոչ միշտ. . .

— Նորէն կը հակառակիս, այդպէ՞ս կ'ըսէր քու մայրը:

— Ո՛հ, ո՛չ, սիրելիս, ան չէր հասկնար օդին զաղանիքներէն:

Ու Արամ՝ յանկարծ՝ գունատ՝

— Ամբարտաւան են անոնք որոնք օդէն չեն հասկնար. . . երբ  
ես մ'անուկ էի. . . շատ անգամ հիւանդ բժիշկներ ես դարմանած եմ. . .  
չե՞ս գիտեր. . . դո՛ւմ. . . բայց հիմա բնաւ չեմ սիրեր ձի հեծնել. . .  
կ'ատեմ, կ'ատեմ. հասկցի՛ր. . .

— Ո՛հ, կը հասկնամ. Արամս, կը հասկնամ: Ո՛հ, ի՞նչ լաւ ես. . .  
Անա ի՞նչ լաւ ես, Արամս. . . Ո՛հ, խնդրեմ, պուտ մը ևս ըմպէ սա հե-  
ղուկէն. . .

— Զիս խենդեցնել կ'ուզես, ցնդա՛ծ. մոռցար երեք օր առաջ-  
ուան սարքած «Բանդօմիկնադ» . . . հա՛, հա, հա՛. . . մա՛յր, այո՞. . . յե-  
տոյ. . . ոչինչ, զէրօ . . . այո՞, հա՛, հա՛, հա՛. . .



— Թանկագին Արամս, ո՛հ, ի՛նչ լաւ ես, և ի՛նչ հանդարտ: Խմէ՛, շատ կ'սողացեմ, սա հեղուկէն: Տե՛ս, յափկապէս քիչ զրի դգալին մէջ:

— Ու Արամ՝ վերստին հանդարտ ու բարի՝  
— Այո՛, կը տեսնեմ, քիչ զրեր ես . . . ի՛նչ ազնիւ ես, Զապէլ, ու ես որքան չար . . . ներէ՛, ներէ՛, ես մեղաւոր չեմ . . .

— Ո՛չ, երբե՛ք, սիրողները երբե՛ք մեղաւոր չեն. դու շատ բարի ես, իմ պաշտելիս . . .

— Ու ես քուկդ, քու գերիդ, այնպէս չէ՞, Զապէլ:  
Խաղաղութիւնը Արամի չրթներուն վրայ, ու երազի մը խորունկէն՝

— Ո՛րքան երջանիկ էինք չէ՞, Զապէլ:  
— Այժմ դարձեալ երջանիկ ենք, ոչ մէկ բան կրնայ վրդովել մեր երջանիկութիւնը. ոչ մէկ բան կրնայ խռովել . . .

— Ի՛նչպէս գեղեցկօրէն կը սիրէի՛ քեզ, կը զգուէի՛ քեզ, կը սեղ-մէի՛ քեզ կուրծքիս . . . կը սիրէի՛ քեզ . . .

— Դարձեալ կը սիրես զիս, ինչպէս ես քեզ կը սիրեմ:  
— Ո՛հ, ինչո՛ւ հիմակ ես կարող չեմ սիրելու . . . ինչո՛ւ այժմ քեզ չեմ կրնար սիրել, Զապէլ, ինչո՞ւ . . .

— Կը սիրես, սիրելիս. կը սիրես, առաջուրնէ աւելի բուռն. առաջուրնէ աւելի գեղեցիկ . . . դուն նոյն պատուական Սրամս ես . . .

Գլուխի յուսահատ տատանումներով՝

— Ո՛չ, չեմ կրնար. չեմ կրնար . . .

Այ արեւ մեռած է: Փողոցին լոյսերը կը վառին, ինչպէս աստղերը՝ անտեսանելի համայնքէ մը . . . Փողոցին բարկենդանային ցնծութիւնը . . .

— Այս տեղ սկսաւ զով ընել Արամս. եթէ կ'ուզես, եթէ կը փափաքիս, ներս երթանք:

— Ո՛չ, ներսը կը խենդենամ: Օդ կ'ուզեմ, հասկցի՛ր, ոչ թէ բժիշկ . . .

— Լաւ. ինչպէս որ կ'ուզես. սիրով կը հպատակիմ կամքիդ.

— Մի՛ հակառակիր, մի՛ հակառակիր կ'ըսեմ:  
— Բացարձակապէս այդ բանը մտքէս չ'անցնիր, սիրելիս . . .

Ու յանկարծ նորէն դող.

— Անա թէ ի՛նչպէս կը սողաս. սողո՛ւն . . . Քեզի ըսած եմ որ ես խենդ չեմ . . . վաղուրնէ սկսեալ գործի պիտի երթամ. բժիշկներուն խերը պիտի անիծեմ . . .

Բայց՝ յանկարծ՝ բարի՝  
— Ապրի՛ս, Զապէլ . . .

Զեփիւռի մը աննիւթ թևերը . . .  
— Զապէ՛լ գալ տարի միասին զիւր պիտի երթանք այնպէս չէ՞:

— Անշուշտ, սիրելիս . . .  
— Ու պիտի . . . ու պիտի . . .

— Անչուչտ...  
 — Բա՞ն մ'ըսիր...  
 — Ո՛չ, սիրելիս, քեզ մտիկ կ'ընեմ...  
 — Զապէ՛լ, անգամ մ'ալ պատմէ. բայց շնորհքով պատմէ. կը  
 խոստանանա՞ս:

— Սիրո՛վ, ի՛նչ բան, սիրելիս...  
 — Գիւղի կեանքդ: Նորէն պատմէ:  
 — Ո՛հ, ի՛նչ հարկ կայ, սիրելիս...  
 — Գի՛ցար, չէ՞...  
 — . . .

— Ի՞նչպէս ապրեցար Զարեհի հետ. ի՛նչպէս համբուրեցիր զայն.  
 Ի՛նչպէս սեղմեցիր զայն. քանի անգամ.  
 Ըսէ՛. կը հրամայեմ. հաճոյք կը զգամ...

— Արամս. Արամս...

Ու Զապէլի թախծոտ և թաց նայուածքը

— Ըսէ՛, քանի՞ անգամ...

Ու Զապէլ՝ հեծկտալով՝

— Արա՛մ, Արա՛մ...

Ու յանկարծ, գերազայն նուպայի մը մէջ՝  
 Արամ՝ բամբ՝

— Պոռնի՛կ, հասարակ կին... դռնի՛կ...  
 դաւաճա՛ն, ու մանուաւնդ պոռնի՛կ . . .

Ու կը նետուի Զապէլի կոկորդին, ու կը  
 սեղմէ զայն ուժգին, բազէի մը պէս՝ ծի-  
 ծեռնակին վրայ . . .

— Բա՛ց աչքերդ. ահա Արամ կը խեղդէ  
 պոռնիկը... բա՛ց» . . .

— Ար..

— Լո՛ւէ՛, անպիտան . . .

Ու կատաղի ցուլի մը շէտ, փրփուրը բերնին, Արամ կը վերցնէ  
 Զապէլի թոյլ մարմինը ու կը ցտակէ պատշգամէն վար:  
 Երկու զիականեր՝ մայթին անտարբերութեան վրայ:



Հ Օ Ր Ի Օ Ն

Դ Ա Ն ՈՒ Բ Ի Վ Ր Ա Յ

Օսմանեան պանքի դէպքին հետ առնչութիւն ունեցող կարգ մը իրադարձութիւններէ ետքը, զորս օր մը զուցէ պատմեմ, ստիպուեցայ հապճեպով հեռանալ Պոլսէն: Ռուսական ղեսպանատան քաղաք Ալի աղան, սուր ու ատրճանակ կախած, զիս և լուսահոգի եղբայրս, ղեսպանական պատիւներով տարաւ «Պուլկարիա» շոգենաւը, որ ճամբայ ելնելու վրայ էր: Սանդուխին ստորաք սպասող ոսթիկանները բարեի կեցան, իսկ մենք անոնց առջևէն անցանք խրոխտաբար, ինչպէս վայել էր... զիւրանագիտական մարմնոյ երկու կարիււր անդամներու:

Ինչերային փոթորկալից ճամբորդութենէ մը ետքը, առտուն կա նուէի հասանք Վառնա, ուր հայ կոմիտէի մը երկու ներկայացուցիչները արձանագրեցին մեր անուանները, ու քաղաք մտանք: Մեզմէ անցագիր ուզող չեղաւ: Արդէն՝ եթէ ուզէին ալ, չունէինք որ ցոյց տայինք: Աճապարանքով մեկնած՝ ինքնութեան ունէ թուղթ չկար քովերնիս: Հագիւ կոցած էինք Ալի աղային օձիքէն բռնելով՝ շոգենաւ հասնելի վերջին րոպէին:

Ինչ խառնիճաղանճ կեանք Վառնայի մէջ, Բանի մը օր անդին ասդին պտտելէ ու սթափելէ ետքը սկսայ աշխատակցիլ «Իրաւունք» եօթնային, զոր կը հրատարակէին հայերէն ու թուրքերէն լեզուներով: Յակոբ Պոնճուքեան և Գուրպէթեան Բայց, քանի մը ամիսէն, Հ. Յ. Ի. Պալքասեան կեդր. կոմիտէի ընդհ. քարտուղար նշանակուելով, սկսայ ողբացեալ Երուանդ Սրմաքէշխանլեանի հետ հրատարակել «Շարժում» լրագիրը, որուն մէջ Երուանդ՝ Պաղլուզի դէպքերու մասին շարք մը սարսուղ զեցիկ յօդուածներ գրեց: Իսկ ես յօդուածներս Գամբեր-Արշաւեր կը ստորագրէի եւ այս ծածկանունովս էր որ կը ճանչնային զիս Վառնայի հայերէն շատերը:

«Շարժում»ի կ'աշխատակցէին Հրանդ (Մեկոն կիւրճեան), որ մասնաւոր վարժարան բացած էր Վառնայի մէջ, Վահան Մանուէլեան, և մասնաւանդ Վարդօ: Վարդօ կամ այլ անունով Արվախի Իսակեան, և մանաւանդ Վարդ Պատրիկն էր: Կաւ պուլկարագէտ, ան «Շարժում»ի հոշակաւոր Վարդ Պատրիկն էր: Կաւ պուլկարագէտ, ան «Շարժում»ի մէջ, ի միջ այլոց կը հրատարակէր պուլկար մեծ յեղափոխական ու բանաստեղծ Բրիսթու Պօթիվի ոտանաւորներու թարգմանութիւնը: Ի հարկէ, շահեկան պիտի ըլլար գրել մանրամասն այդ անհետա-

ցած ընկերներու վրայ, ինչպէս նաև ի մասին յեղափոխական կարեւոր դէմքերու, որոնք Վառնայէն կ'անցնէին կ'երթային, ինչպէս Քրիստափոր, Ռաստոմ, Վահան Վարազ (Վառմեան) և ուրիշներ: Կ'արժէր նկարագրել նաև կեանքը մեր գաղթականներուն, որոնցմէ ամէնէն աղքատները խնդողած էին թուրքերէն մնացած փրփած զօրանոցի մը մէջ, ուր գիրենք կը խնամէր Միս Ֆրայյըր խարտիչագեղ հրեշտակը:

Բայց բոլոր ասոնք, որ ստուար հատոր մը կրնան լեցնել, ապագային թողով, զիտի պատմեմ դէպք մը, որ ինծի պատահած է այն պղտոր օրերուն և որ, թէև աննշան, գուցէ ունի իր տրամաթիք-գաւեշտական կողմեր:

\*  
\*  
\*

Վերջապէս ամէն բան վախճան մը ունենալով, օրին մէկը «Շարժում»ը յանձնեցի Վարդօին — արդէն նրուանողը շատոնց քաշուած էր — և որոշեցի վերադառնալ Պուքրէշ, ուսկից հեռացած էի տասնեակ մը տարիներէ ի վեր:

Գացի Ռուսճուք, բայց խնդիրը Դանուբը անցնելն էր առանց անցագրի: Պապեանին ղերասանական խումբը ճիշդ Ռուճանիա անցնելու վրայ էր: Ճամբորդի կերպարանք չունենալու և առանց անցագրի ձուրճով անցնելու համար, պայուսակս յանձնեցի Պապայեանի որ Պուքրէշ տանի: Իսկ ես, երկու օր Ռուսճուքի մէջ թափառելէ ու գեթին եղբրքը երկար պառոյտներ ընելէ կտքը, որոշեցի դիմաց անցնելու փորձը կատարել:

Վերջապէս, երրորդ օրը որոշուած գործադրեցի: Նաւամատոյցին մօտերը գտնուած ծխավաճառէն «Ատէվըրուլ» լրագիրը գնեցի և կարգալով շոգենաւ մտայ: Կէս ժամէն հասանք Ռամատան որ ձուրճովայի մօտ նաւամատոյց մըն է: Ճամբորդները սկսան իսկոյն դուրս ելնել: Խարչիկի պէս թխաղէմ ոստիկան մը կը քննէր անցագրերը: Երբ կարգը ինծի եկաւ, «Ատէվըրուլ»ը ձեռքս ու սիկառը բերանս առաջ ա՛ցնելու ուղեցի, ռումաներէն լեզուով բացատրելով ոստիկանին թէ պառոյտի համար Ռուսճուք գացած էի և թէ հիմա տուն կը վերադառնայի, Պուքրէշ: Արդարեւ խօսած մաքուր ռումաներէնս կրնար անցագրի տեղ բռնել: Դժբախտաբար ոստիկանը քաղաքս վաւօրէն խնդրեց որ ձուրճովայի նաւահանգիստի ոստիկանապետին ներկայանամ պահ մը: Համաձայնեցայ, ուրիշ ի՞նչ կրնայի ընել: Եւ կառք մը նստելով, ուղղուեցայ դէպի ձուրճովայի նաւամատոյցը: Տակաւ ինչէի հասած՝ երբ լսեցի խուլոտ ձայն մը որ կը պոռար.

— Ո՞վ է տեսնեմ, առանց թղթի պտտողը:

Ո՞րմէ իմացած էր գալս, հաւանօրէն Ռամատանի ոստիկանը աեղեկագրած էր հեռախօսով:

— Ես եմ, պարոն, ըսի, ի՞նչ կայ այդքան բարձր խօսելու:

Տեսնելով հագուած-սգուած երիտաստորդ մը որ ռումաներէն կը խօսէր, թեկերը իջան: Բայց դարձեալ հարցուց.

— Ձեր անցագիրը:

— Ի՞նչ անցագիր, Ռուսճուք քիչ մը պտտելու համար միթէ՞ անցագիր պէ՞տք է: Ես Պուզըշէն եմ, պ. ոստիկան, Սփայթար փողոցը թիւ 7 կը բնակիմ. հասկցա՞ր հիմա:

Եւ արդարեւ այդ փողոցը բնակած էինք տասը տարի առաջ:

Անուէս հարցուց.

Եթէ ռումանական ուէ անուէն մը տայի, գուցէ ազատէի, բայց ես իսկական անուէնս ասուի. մե՛ղք որ կոմիտէի անդամ ալ եղած էի.

— Ուրեմն հա՛յ էք.

Այո, ի՞նչ կայ:

— Ուսկէ՞ց անցաք Ռուսճուք.

— Ասկէց.

— Բայց ձեզի չտեսայ:

— Թող տեսնայիք, որո՞ւն է յանցանքը:

— Աւելորդ խօսքեր չընենք, պարոն: Առանց անցագրի չեմ թողուր. և ստիպուած եմ ձեզ Ռուսճուք վերադարձնել:

Շոգեհնաւը արդէն ճամբայ կ'ենէր:

Առանց պահ մը վարանելու, հրացանաւոր զինուոր մը կանչեց.

— Պարոնը շոգեհնաւ տար, ըստ.

Անհամ կատակ: Կէս ժամէն Ռուսճուքի նաւամատոյցն էինք:

Ճամբորդները սկսան պարպուել, քալելով երկար նեղ տախտակի մը վրայէն, որ նետուած էր շոգեհնաւէն մինչև քարափ.

Երկու պուլկար ոստիկաններ կը քննէին անցագրերը. երբ կարգը եկաւ ինձի, թող չտուէին որ դուրս ելնեմ: Եւ մնացի նեղ տախտակին վրայ. զիտելով թէ ի՞նչպէս ջուրը կը վազէ ոտքերուս տակէն, Ուրեմն ո՛չ անդին, ո՛չ ասդին: «Ատեմլուը» որ օգուտ մը չէր ունեցած, ջուրը նետեցի ու սկսայ խորհիլ կացութեանս վրայ: Եւ այդ տրամադրիք ու քիչ մըն ալ զաւեշտական դիրքին մէջ մէկ ժամու չափ մնացի: Մայիսի հրաշալի իրիկուն մըն էր և վերջալոյսի ճառագայթները կը փայլիլէին գետին ալեակներուն վրայ: Մե՛ղք որ ատանկ ընտանեկան տեսարաններու վրայ զմայելու առեկը չէր: Ո՛ւր պիտի գիշերէի: Եթէ տախտակին վրայ քունս տանէր և գետը ինձայի, կե՞ր պիտի ըլլայի ձուկերուն: Իսկ հետեւեալ օրը ո՞ւր պիտի ինձայի, կե՞ր պիտի ըլլայի ձուկերուն: Իսկ հետեւեալ օրը ո՞ւր պիտի ինձայի, կե՞ր պիտի ըլլայի ձուկերուն: Իսկ հետեւեալ օրը ո՞ւր պիտի ինձայի, կե՞ր պիտի ըլլայի ձուկերուն: Իսկ հետեւեալ օրը ո՞ւր պիտի ինձայի, կե՞ր պիտի ըլլայի ձուկերուն:

Նոյն պահուն, երկու հայ պատանիներ եկած էին պտոյտ ընելու նաւամատոյցին վրայ: Աստուած կը զրկէր զանոնք.

— Տղաք պոռացի անոնց. վաճառական պ. Ստեփանեանը կը ճանչնա՞ք:

— Կը ճանչնանք:

— Գացէք շուտով ըսէք որ նաւամատոյց գայ, ուր իրեն կը սպասէ պ. Գամեր-Արշաւիր:

Արդարեւ, քանի մը վայրկեանէն, հասաւ ընկեր Ստեփանեանը և, ոստիկաններէն մէկուն ականջին բան մը փսփսալով, դիւ զուրս հանեց, խնդալով կացութեանս վրայ:

Այն գիշեր շիտակը աղուոր ժամանակ անցուցինք: Բայց Պուք-րէշ երթալու խնդիրը... բաց կը մնար:

\* \* \*

Հետեւեալ առաւօտուն, նաւամատոյցի բարձրագիր սրճարանը նստած, սուրճի գաւաթը ձեռքս, զիմացի հիւրամերժ ափերը կը դիտէի կարօտով: Շոգեհնաւակը կ'երթար ու կու գար. իսկ իմ սրտիս իւղերը կը հալէին:

Բանի մը օր զեգերելէ ետքը, որոշեցի Սիլիստրէ երթալ ու անցնիլ Դանուբը Գալարաչի ճամբով:

Իրիկուն մը, նաւաթատոյցի սրճարանը նստած այս ծրագիրը կը յօրինէի, աչքս ձուրճովայի շոգեհնաւին, որ կը մօտենար: Քիչ մը վել ըլլ, հագուստը իւղոտ ու կաշիէ սև քասքէթ կրող մարդ մը զէմս անկուեցաւ:

— Ի՞նչ կը մտածէք, պարոն, ըսաւ. քանի մը օր է որ ձեզ կը դիտեմ շոգեհնաւէն ելած ատենս:

— Ո՞վ ես, խնդրեմ:

— Շոգեհնաւին մեքենավարն եմ:

— Շատ ուրախ եմ ճանչնալուս. բայց չեմ հասկնար թէ քու ի՞նչ փոյթդ է իմ մտածկոտութիւնս:

— Շատ ժամանակ չունիմ. իսկոյն ըսեմ որ եթէ կ'ուզէք զիմաց կրնամ անցնել ձեզի:

— Բայց ի՞նչ գիտես որ ես Ռումանիա անցնիլ կ'ուզեմ:

— Անցեալները տեսայ թէ ինչպէ՞ս ձուրճովայէն վերադարձուցին ձեզի:

— Ոստիկանը զորձ պիտի ունենայ հետս. ես Պուքրէշէն եմ:

— Շատ կարելի է, պարոն:

— Ուրեմն կրնա՞ս զիս ձուրճով անցնել:

— Ի՞նչ արկէ. մանաւանդ եթէ նուէր մ'ալ տաք:

— Որքա՞ն:

— Հինգ լէյ:

Սիրով համաձայնեցայ և նոյնիսկ զարմացայ որ այդքան քիչով կը գոհանար:

— Ի՞նչ ընելու եմ, հարցուցի անհամբեր:

— Շոգեհնաւ կը մտնէք և վարի սրահը կը նստիք: Տոմսակ առնելու չի մոռնաք: Երբոր զիմաց հասնիք չէք աճապարեր: Կը սպա-

սէք որ բոլոր ճամբորդները դուրս ելնեն: Փոքրիկ պատուհանէն աղ-  
ուոր մը կը գիտես կացուծիւնը. և հոր նաւամատոյցի զինուորն այ  
մեկնի, կամացուկ մը դուրս կը սպրդիք և քաղաք կը մնաք: Քիչ մը  
վեր, սթրատա Բորթաւսայի վրայ, ձախ կողմը, փոքր գինեւուն մը  
կայ. ես հոն կը սպասեմ և ձեր նուէրը հոն կու տաք:

Ճիշդ ըսածին պէս ըրի. և թէ և կասկած ունէի որ անիծեալ ոս-  
տիկանը, որուն տնակը շատ մօտիկ էր, զիս պիտի նշմարէր ու զարձ-  
եալ Ռուսճուք պիտի զրկէր, դուրս ելայ: Նաւամատոյցին վրայ ճանճ  
անգամ չկար: Կարծես նոր աւլուած էր: Քաղաք մտայ ու քանի մը  
վայրկեանէն հայսայ գինեւունը: Հոն էր մեքենավարս որ հինգ լէյը  
առաւ ու շարունակեց խմել աւելի մեծ եռանդով:

Երկար շունչ մը քաշեցի: Ի՞նչ գեղեցիկ փոքր քաղաք, եւրոպա-  
կան հովերով: Կ'արժէր պտոյտ մը ընել: Գացի շիտակ կեղրոնի պար-  
տէր որուն գագաթի ժամացոյցը ժամը 5 կը ցուցնէր:

Մէկ մ'ալ, վա՛յ չար սառանայ, Ռամատանի խարչիկ ոստիկանը  
դէմս չեխնէ: Երեսս անդին դարձուցի և ոստիկանը քովէս անցաւ ա-  
ռանց զիս ճանչնալու:

Բայց ուրախութիւնս շատ չի տեկց: Յանկարծ դէմս ելաւ զիս  
Ռուսճուք ճամբող ոստիկանը, թչնամիս: Ասիկա, բնականաբար, իսկոյն  
ճանչցաւ զիս և կեցողց:

— Ինչպէ՞ս անցար, պարոն:

— Մարդու պէս: Շիտակը աղուոր կը պահպանէք մեր երկրին  
սահմանագլուխը, ըսի ծաղրական:

— Եւ տակաւին կը համարձակիք... .

— Պ. ոտիկան, կտրեցի խօսքը. վերջին անգամ ըլլալով խոր-  
հուրդ կու տամ որ վերջ դնէք սա կոշտ կատակին: Չէ՛ թէ ուսմանացի  
մը, այլ նոյն իսկ յեաին օտարականը չէք կրնար երկրէն դուրս հա-  
նել առանց բարձրագոյն հրամանի:

— Ի՞նչ կ'ըսէք... .

— Օրէնք սորվեցէք: Եւ յետոյ գիտցէք որ ձեր վարմունքին  
հետեանքները շուտով պիտի կրէք, պ. ոստիկան.

Յանդուգն պատասխաններու հանդէպ, ոստիկանը սկսած էր քիչ  
մը քրահիլ: Փորձանքէ մը աղատիլը յարմարագոյն սեպեց. և ինձի  
դառնալով.

— Տօմսուլէ, ըսաւ, կը խնդրեմ որ անմիջապէս անհեռանաս,  
այլապէս, պատուոյս վրայ, նորէն Ռուսճուք կ'երթաս:

— Կաւ, լաւ, ըսի հեզնօրէն:

Բայց ա՛լ երկար չըրի, ու քովէն հեռանալուն պէս պանդոկ մը  
գացի, ճաշեցի ու պառկեցայ կանուխ կանուխ:

Հետեւեալ առաւօտուն, շոգեկառք նստայ և երկու ժամէն հա-  
սայ Պուքրէշ գոր այնքան տարիներէ ի վեր չէի տեսած: Խնդի պէս

հոս հոն վաղեցի, կարօտս առնելու և հին բարեկամներս տեսնելու համար: 1899 տարւոյ Մայիսի վերջերն էր ու սկսած էր Մօշի աւանդական տօնավաճառը:

Բայց ձուրճովայի ոստիկանէն չարաչար լուծեցի վրէժս, և անաթէ ինչպէս.

Այն տարին Ռուսմանիոյ մէջ տնտեսական տագնապ կը տիրէր, սաստիկ երայտութեան մը պատճառաւ: Բերքերը չորցեր էին, մանաւանդ մայրաքաղաքը չըջապատող գաւառներուն մէջ: Ասոր համար գործ գտնելն ալ դժուարացած էր: Քանի մը ամիս պարապ պատեիէ հտքը, օր մըն ալ «Ունիվէրսուլ»ի մէջ ծանուցում մը կարդացի: Յիշեալ օրաթերթը, որ այն ատեն ալ երկրիս ամէնէն տարածուածն էր, սրբագրիչի ու ֆրանսերէնէ թարգմանողի մը պէտք ունէր: Քննութեան ներկայացայ և յաջողեցայ: Բայց գործս տաղտկալի և յոգնեցուցիչ էր: Աղատելու ճարը նայելու էր: Պարագաները բարեբախտաբար օգնեցին ինծի: Նոյն ատենները գիւղացիներու պպատամբութիւն մը ծագեցաւ Պուլկարիա, շարժումին կեդրոնը ըլլալով Ռուսոսուքի գաւառը, կառավարութիւնը վրանին զօրք զրկած էր, բայց զինուորները, իրենք ալ գիւղացիներ, մերժած էին հրացան պարպել ապրտամբներու դէմ: Հեռագիրները շատ ծանր կը նկարագրէին կացութիւնը:

Զգացի որ ներկայացած էր առիթը ինքզինքս քիչ մը ցուցնելու և խմբագրութեան մէջ աւելի կարեւոր պաշտօն մը ձեռք բերելու, ապտելով միանգամայն սրբագրիչի գործէն:

Թերթիս տէր և տնօրէն մեծանուն Լուիճի Գացալլիանի առաջարկեցի որ զիս, իբրև մասնաւոր թղթակից, Ռուսոսուք զրկէ:

— Պիտի կարենա՞ս մէջէն ելնել, ըսաւ.

— Ամօթով չեմ մնար, պ. տնօրէն, երկիրը կը ճանչնամ ու բաւական պուլկարերէն ալ գիտեմ:

— Շատ լաւ. ուրեմն իսկոյն ճամբայ ել:

Ֆիլրաէթի կայարանը վաղեցի, դրպանս ունենալով ձուրճուվայի նաւահանգիստի ոստիկանութեանն ինչպէս յանձնարարական մը: «Ունիվէրսուլ»ի տնօրէնութիւնը կը ինչդէր ոստիկանապետէն որ թերթին խմբագիր պ. Մ. Ի ընծայէ բոլոր հարկ եղած դիւրութիւնները որպէսզի անիկա կարենայ գլուխ հանել իրեն յանձնուած պաշտօնը:

ձուրճովա հասնելուս պէս, գացի շիտակ ոստիկանութեան տնակը: Ոստիկանը գրասեղանին առջև նստած գիր կը գրէր: Գլուխը վերցնելուն պէս, քթին երկնցուցի յանձնարարականս, զոր ուշադրութեամբ կարդալէ հտքը, ոտքի ելաւ և աթոռ մը երկնցուց ինծի:

— Շատ լաւ, շատ լաւ, պ. խմբագիր, ձեր հրամանին աակն եմ, ըսաւ:



Ապա,

— Բայց կարծեմ ձեզի պիտի ճանչնամ, աւելցուց, շիկնելով:

— Վնաս չունի, ըսի, ձեր շնորհիւր մինչև Ռուսնուք պտոյտ մը  
ըրած եղայ:

Եւ երկուքս ալ մեծ ախորժակով խնդացինք:

Յետոյ, զիս շոգենաւ առաջնորդեց ու քօնեաք հրամցուց:

Այս եղաւ վրէժինդրութիւնս, վրէժներու ամէնէն անգուլթը:

Գանի մը օր Ռուսնուք երթեկեցի մինչև օր կացութիւնը հան-  
դարտեցաւ: Տեսակցութիւններ ու-  
նեցայ ապստամբութեան տեղի  
տուող պատճառներուն վրայ, իսկ  
պ. Մանթով անուն յարգելի անձ  
մը, որ հրամանատարն էր քաղա-  
քին, զիս պատցուց բանտերը, լեփ  
լեցուն գիւղացիներով:



Վ. Գ. ՄԵՆՏՏՈՒՏՃԵԱՆ  
(1906 ին)

Ամէն իրիկունժամը 4ի շոգենա-  
ւով Պուրբէշ կը դառնայի գրելու  
համար տեսածներս ու լսածներս:  
Միայն թէ հիմա՝ շոգենաւակին նեղ  
տախտակին վրայէն անցած առնես,  
պուրկար ոտախկաններն ալ կը բա-  
րեւէին ուսմէն լրագրողը Ինչ փո-  
փոխութիւն, տէր Սատուած:

Իսկ ձուրձովայի բարեկամը, ա-  
մէն առաւօտ երբ հօն կը հասնէի  
Դանուրէն անցնելու համար, զիս  
պատիւներով կ'ընդունէր և հիա-  
ցումը կը յայտնէր լրագրական ճար-  
պիկութեանս վրայ:

«Ունիվէրսուլ»ը մեծ յաջողութիւն ունեցաւ. ռեփորթաւներս կը  
կարդացուէին մեծ շահագրգռութեամբ: Ամօթով չի մնացի:

Տնօրէնն ալ գոհ մնաց: Իմ թղթակցի յաջողութիւնս յայտնու-  
թիւն մը եղաւ իրեն համար: Նոր սկսած էինք իրար ճանչնալ: Ամ-  
սականս ալ աւելցուց, ինչ որ տնօրէնի մը համար, շնորհակալութիւն  
սականս ալ աւելցուց, ինչ որ տնօրէնի մը համար, շնորհակալութիւն  
նուեցաւ մասնաւոր թղթակցի (trimis special) կարեոր գործը, որուն  
շնորհիւ, անկէց վերջը, այցելեցի շատ մը տեղեր թէ՛ երկրին մէջ և  
թէ՛ արտասահման:

Բայց, Դանուրը չանցնինք:

Վ. Գ. ՄԵՆՏՏՈՒՏՃԵԱՆ

# ՀԱՅԵՐՈՒ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ո Ւ Ր Ո Ւ Ա Գ Ի Ծ Մ Ը

Տեղական աւանդութեանց համաձայն արդէն 1062էն ի վեր կարմիր Ռուսիոյ մէջ, 20000ի չափ Հայեր կը գտնուէին և Թաթարներու հետ կը պատերազմէին: 1340ին Հայերը Լեհական իշխանութեան տակ անցան, պահելով իրենց նշանակը, որ կը կայանար զգեստներուն վրայ կրուած խաչէ մը, իբր խորհրդանիշ: 1641ին Վլատիսլաւ Գ. Լեհաց թագաւորը կը հաստատէր այդ սովորոյթը: Այս խաչի նշանակը կրող Հայերը իրենց ծագման վրայ կը պարծենային և կերպով մը խոտու աչքով կը նայէին միւս Հայոց վրայ, որ աւելի ուշ եկած էին:

Հայերը մինչև ժէ. դարուն վերջերը պահած են իրենց ազգային լեզուն: Յուշարձաններու և տապանաքարերու վրայի վերջին վերնագրերը կը հասնին մինչև 1686—1708: Լեհական լեզուաւ առջի մակագրութիւնները 1600ի միջոցին երևան ելած են:

Լեհաստանի Հայերուն թիւը աւելցած էր ի վերջոյ Հայաստանէն, Կրիկիայէն, Պարսկաստանէն, Անգրկովկասէն, Մոլտաւիայէն և վալաքիայէն գաղթող նոր Հայերու ժամանումովը:

Հայերը Լեհաստանի մէջ հաստատուած էին Լուցք, Պոտոկան. Կամենից կոչուած քաղաքը. ուր 1250ի միջոցին արդէն իրենց եկեղեցին ունէին, և ի Եարոսլաւ. որ Լեհահայոց եպիսկոպոսին աթոռանիստ քաղաքն էր մինչև 1625ի մեծ հրդեհը, և վերջապէս ի Լվով: Այս վերջինը հայկական գաղութին կեդրոնն դարձած էր, հասնելով արտաքոյ կարգի զարգացումի մը: Հոս հաստատուած էին մեծամեծ հայ վաճառականներ և արհեստաւորներ: Այս քաղքին մէջ ծաղկեցաւ հայկական մտաւորական կեանքը և հոս կը լուծուէին Հայոց ներքին կենցաղավարութեան պատկանող բոլոր խնդիրները:

Լեհ թագաւորները, ինչպէս նաև բարձրաստիճան անձինք նշմարելով Հայոց ասորիինակ գործունէութիւնը վաճառականութեան եւ արուեստներու մէջ, ձեռքերնէն եկածը բրին դիրենք աւելի ևս յանկուցանելու և իրենց երկրին կապելու համար, տալով Հայոց իրաւունքներ և առանձնաշնորհումներ: Հայոց ձեռքով Լեհաստանի մէջ շատ մը քաղաքներ և գաղթավայրեր հիմնուած են:

Լվով քաղաքը, շնորհիւ իր առանձնայառուկ դիրքին, արդէն

չատոնց հաղորդակցութեան կապ մը դարձած էր հիւսիսային արեւմտեան Եւրոպայի եւ Արեւելքի միջև: Ի սկզբանէ ձենովացիք եւ Վենետիկցիները կը ներածէին հոս իրենց ապրանքները Սև ծովու շրջավայրէն: Սոյն վաճառքները հոս կը կեդրոնացուէին եւ եւրոպական արտադրութիւններու հետ փոխանակուելով, դէպի Արեւելք կ'երթային:

Խրիմի Հայերը այս կերպով եղող առևտուրի վարժ ըլլալով, նմանապէս Լվով կը ներմուծէին իրենց վաճառքները եւ հոնկից դեռ աւելի հեռու դէպի Արևմուտք կ'արտածէին: Այս հայերէն մաս մը, հաստատուած ըլլալով Լվովի մէջ, հոն ի վաղուց գտնուող Հայերու հետ միասին առաջնակարգ դիրք մը բռնած էին, Արեւելքի հետ եղող արտածման եւ ներածման առևտուրի մէջ:

Վերջերը Գաֆֆայի անկումէն յետոյ, Վենետիկցիները իրենց գլխաւոր եւ վարիչ դերը կորսնցուցին, ուստի եւ Հայերը նոյներուն օեղը բռնելով, իրենց ձեռքը առին Արեւելքի հետ եղող ամբողջ առևտուրը, դեռ աւելի դէպի Արեւելք մղելով իրենց գործունէութեան կեդրոնը, Գաֆֆայէն մինչև Պոլիս, որով կ'ընդարձակուէր սոյն վաճառականութիւնը, ձգտելով մինչև Աստրախան, Կասպից ծովը, Պարսկաստան Տաճկաստան եւ Կովկաս:

Հայկական վաճառականութիւնը բարգաւաճած էր ճիշդ շնորհիւ այս միջացամաքային հանգամանքներուն: Հայերու միջոցով Լվով չափէ դուրս զարգացած էր միջին դարերու մէջ, հակառակ ուսուկան ազդեցութիւններուն Ժ. Ե. և Ժ. Զ. դարերուն՝ Լվովի ներքին կիցադակերպին մէջ Հայերը շատ աւելի մեծ դեր մը կը կատարէին քան Ռուսթէնները: Յովհաննէս Ալէմպէք Հայոց մասին հետեւեալ կերպով կը յայտնէ իր կարծիքը:

Երիտասարդները խելացի են, քաջարի եւ աշխատասէր մէջ արթնամիտ: Էրիկ մարդիկ գործունեայ են եւ լի սրազատութեամբ փոփոխակի յարաբերութեանց մէջ: Ծեբերը ուղղամիտ են եւ պարկեշտասուն եւ առևտուրի մէջ դիւրահամբոյր: Աղջիկները բարի են սակայն գողոց: Կանայք քիչ մը հասարակ եւ գեհնիկ, իսկ պառաւնեքու հետ կենակցիլը դժուարին:

Հայկական երիտասարդական թափն ու եռանդը, ինչպէս կ'ըսէր Ժիմորովիչ, միացած խորին նրբութեան մը հետ, կը բնորոշէր այս վաճառական մարդիկը, որոնք ամրապնդեցին կարաւանական ճամբան եւ հաստատեցին առևտրական առնչութեանց կանոնաւորութիւնը, հակառակ տիրող մեծամեծ վտանգներու: Լվովի Հայերը նշանաւոր կ'ընծայուէին ի մասնաւորի իրենց ուշագրաւ քաջութեամբը, զանազան իրերու ծանօթութեամբը, իրենց իսկայատուկ քաղցրաբարոյութեամբը եւ բոլորովին արեւելեան հիւրասիրութեամբը: Ասոնց վրայ պէտք է աւելցնել նոյններուն տարօրինակ եւ մեծաթաղանդ հանճարը առևտուրի մէջ իրենց քաջապինդ յարատեւութիւնը աշխատանքի մէջ եւ օրինակելի արագաշար-

ժուլթիւնը: Այս վսեմ յատկութիւնները Հայոց լաւ հուշակ և ընդհանուր բարի համարում մը տուին, բարեմասնութիւններ, զորս որեւէ ուրիշ արեւելեան ազգ մը չէ ունեցած: Վերջապէս դրի, իրաց և անձանց լաւագոյն ծանօթութիւնը ամէն Հայու հնարաւորութիւն կու տար թարգմանի. վաճառականի և մինչև իսկ դիւանագէտի դերը կաթարելու: Ինչպէս որ Լվով վաղաքը Լեհաստանը միացուցած է Արեւելքի և Եւրոպայի մի մասին հետ. ասանկ ալ Հայերը Լվով վաղաքը միացուցին Արեւելքի հետ:

Թէոտոսիայի անկումէն ետքը (1475ին), Հայերը այն չլթան եղած են, որ կցած է Լվովի տօնավաճառները Արեւելքի տարաշխարհիկ երկիրներուն տօնավաճառներուն հետ: Անոնք կաղմակերպեցին զաղթարեքերու առուտուրը, անոնք կաղմաւորեցին կարաւանական կանոնաւոր հաղորդակցութիւնը որ կը կառչէր ոչ միայն Լվով վաղաքին, այլ նաև Տանցիկի, Քրաքովիայի, Կոյունիոյ և Նուրէմպէրկի տօնավաճառներուն:

Այն ամէն ինչ զորս Լեհաստան Արեւելքէն կ'ընդունէր, ըլլայ լեզուագիտութեան, ըլլայ ձեռնարուեստի, ըլլայ մշակոյթի վերարեհար, Հայերու միջոցաւ և միջնորդութեամբ ներմուծուած էր. փոքր մաս մը միայն Յայներու, Պուլկարներու և Վալաքիացիներու ձեռք կը բերուէր:

Լվովի մէջ արհեստական շարք մը արտադրութիւններ հայկական կը կոչուէին և այս պատուաբեր կոչման տակ կը ճանչցուէին զանազան վաճառացուցակներու և առեւտրական արձանագրութեանց մէջ: Այնպիսի արտադրութիւններ, որ արեւելեան շքեղութեան և հնարդական կենդանի երեւկայութեան մը զորոյններն իրենց վրայ կը կրէին: Անոնց կարգէն կը սեպուին հրաշալի անձեռոցներ մեծարժէք կերպասներէ, արծաթով և նուրբ զարդերով պփնջուած պակագործութիւններ, ոսկերչական հիանալի ձեռագործներ, զրուագներով և յաճախ թանկազին քարերով շինուած զէնքեր: Հայերը ուրեմն ո՛չ թէ միայն վաճառականներ էին, այլև վարպետ արուեստագէտներ, որոնք առաջիններն եղած են Լվովի մէջ արեւելեան ճաշակով զանազան նիւթեր շինող, յարմարեցնելով զանոնք տեղական սովորութիւններուն և եւրոպական քաղաքակրթութեան ճաշակներուն և ժամանակին պահանջներուն:

Հայերը ոսկերչական արուեստի մէջ ալ առաջնակարգ դիրք մը բռնած էին: Ժէ. դարու վերջերը, երբ ոսկերչութիւնը մեծ ճգնաժամի մը մէջ էր, Հայերը կրկին բարձրացուցին անոր կարեւորութիւնը եւ նոյն արհեստի ճիւղին տալով արագ զարգացում մը: Անոնք իրենց ձեռքը առին ամբողջ ոսկերչութիւնը, որ թոյլ տուաւ երեւան հանելու իրենց ստեղծիչ հանճարը, արեւելեան ճաշակը և հնարաւորութեան յորդութիւնը: Անոնք ի մասնաւորի կոչուած էին պատրաստելու արքուն-

նական պալատին զգեստները, սարքելու զէնուզարդը և պաճուճանքները: Լեհաստանի հասարակական կեանքին մէջ Հայերը յաճախ բարձր դիրքեր գրաւած էին, ըլլայ իբրև արուեստական մասնագէտներ, ըլլայ իբրև խորհրդակալներ և ի մասնաւորի իբր անհաւասարելի թարգմաններ: Լվովի պէս քաղաքի մը մէջ, որ յիրաւի ճանապարհակիցք մը կրնայ համարուի Արեւմուտքի եւ Արեւելի բաղմաթիւ օտարականներ կը գտնուէին այլեայլ ազգերէ: Քաղաքապետութիւնը նոյննրուն ծառայութիւնը թարգմաններու միջոցով կազմակերպած էր, որոնց գլուխը կը կենար մին պետական պաշտօնեաներէն: Ժէ. դարուն մէջ թարգմանները գրեթէ միմիայն հայերն էին: Թարգմանը լայնածաւալ պաշտօններ ունէր, որովհետեւ անոնց կ'իյնար ո՛չ միայն օտարականաց ապահովութեան գործը, վաճառականութեան վրայ հսկելը, այլ նաև մինչև իսկ ընդհանուր քաղաքականութեամբ զբաղիլը: Պէտք էր որ թարգմանները զգոյշ կենային, որպէսզի առեւտրական գործառնութիւնները օրինաւորապէս և ըստ ստացեալ արտօնութեան գործադրուէին, պէտք էին հսկել անոնց վրայ որ վաճառականութեան քողին տակ լրտեսութեամբ կը զբաղէին: 1667ին թաղապետական մատակարարութեան և թարգմաններու դասակարգին ներկայացուցիչը եղող հայազգի Նիկողայոս Պատուէվիչի միջև կնքուած պայմանագրութեան մէջ, մանրամասնուած էին անոնց իրաւունքները և պարտականութիւնները, անոնք կերպով մը հրապարակի ճշմարիտ ուսուկանները կրնային նշմարուիլ:

Հայր Ալոիզիոս Բիտու 1668ին իր զարմանքը յայտնած էր այն դիւրութեան համար, որով Հայերը կ'ընտանեանային քիչ ժամանակի մէջ օտար լեզուներու հետ: Վերոյիշեալ հայրը ճանչցած ըլլալը կը պատմէ Ղաղարոս Աթանիովսքի անուամբ հայ մը, որ շնորհիւ իր ըրած յաճախ ճամբորդութեանց, արտաքոյ կարգի աշխարհագրական ծանօթութիւններ ունէր, այն աստիճանի, որ և ոչ մէկ աշխարհագիր կարող էր իրեն հետ մրցման ելլել, և նոյն պատմիչին եթէ հաւատանք, այդ հայը 72 լեզուներ գիտէր:

Լեհահայերը Ժ. դարէն սկսեալ իսկական ինքնօրինութիւն ստացած էին: Ո՛չ միայն լիուրի ազատութիւն կը վայելէին կրօնական պարտուց և արարողութեանց կառարման մէջ, այլ նաև ունէին ի պարտուց սեպհական դատարանները և դատաւորները և մէջերնին ծագող վէճերը իրենց դատարանները կը քննէին, նոյնիսկ այդ զէպքին երբ ամբաստանեալը միայն հայ ըլլար:

ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԳԸՐՄԸԶԵԱՆ

Լվով 1938

# Ս Ր Տ Ի Ա Ր Ջ Ա Գ Ա Ն Գ Ն Ե Ր

Չոյդ մը ցրտահար թռչնիկներու պէս՝ երկու խորշոմած տերեւներ, քով քովի, դեռ կը փարին մայր ծառի երերուն ճիւղին:

Երէկ բազմաթիւ էին անոնք. ժամ մը առաջ երեք հասո էին. զիտեն որ մինչև վաղ առաւօտ իրենք ալ պիտի թափին:

Քամին կապոյա թեւերով կը փաթթուէր ծառի մէջքին, թոթուելով զայն արմատէն, և երկու նախուն տերեւները կը զրկուէին կարօտագին:

Հիմա խորունկ կսկիծով կը խորհին անոնք թէ իրենցմէ ո՞ր մէկը պիտի ըլլայ տերեւը վերջին...

\*  
\*

Փափուկ է գեղեցկութիւնը եւ խուսափուկ:

Հոգեպարար նուագի թելն է վախ. վարդարուղիս այտեր՝ ժամ մը միայն կը տեւեն. բարեկամներ՝ շուտով կը մեկնին. կատարեալ ծաղիկը միայն պահիկ մը կ'օրօրուէ ջերմիկ արեւին մէջ:

Ամբան մահկանացու երազը՝ դաղթական թեւերով կը մեկնի թռչնիկ առ թռչնիկ, ծաղիկ առ ծաղիկ: Նուագի բիւրեղէ աշտարակը կը փլչի. յաղթանակող փողին կ'իջնայ գեղեցկութեան կարմիր չթնեբուն եւ ալպպաստրէ կուրծքին վրայ, և ճմլուած սիրաբ կը մոռնայ ցօղի մարգարիտները մանուշակի թերթերուն վրայ:

Հոգին կը մոռնայ այն կապոյտը քնքուշ՝ որ կը ժպտի արեւմարի ծիրանիին ու ծառերու զմրուխտին ընդմէջէն, Ապրիլեան վերջալոյսի մը պահուն, երբ անձրեւը կը մաղուի լոյսի ոսկիին դէմ եւ ծիածանը կը կամրջէ աշխարհը երկինքին հետ:

Փափուկ է գեղեցկութիւնը և խուսափուկ...

\*  
\*

Ծաղիկներ՝ քաղէ քանի դեռ ուժ ունիս, քանի կը հասնիս սալուսածիծաղ թարմութեան. վաղը անոնք պիտի թառամին:

Այս օրուան ցնծութիւնն է միայն ճշմարիտ. գալիքը տարտամ է. յետաձգումը զրկանք:

Տիեզերքի Աստուածաշունչին մէջ քերթուածներ կան եզական, կարօտ թերթող մատներու:

Կեանքի ովկիանոսի ծալքերուն մէջ անհամար գոհարներ՝ սուղակներու խուզարկութեան կը սպասեն:

Ի՞նչ գունավառ ծաղիկներ՝ բուրվառներո պէս կը մխան ըն-  
դունայն, ամայի տաճարներու մոռացութեան մէջ:

Այն հոգին, որ չունի սէր ու չի թրթռար գեղեցկութեան աստ-  
ղին դէմ, մեղաւոր է ու նման է ժանգոտ մագնիսի:

Ակնածանքով մեծարէ ժամանակն ու սէրը, որպէս մեկնելու  
պատրաստ մտերիմներ:

Ծաղիկներ հաւաքէ քանի դեռ կրնաս. հոգիիդ տունկը բա՛ց  
սիրոյ համոյրին, կեանքի մէկ հատիկ արեւին հանդէպ, քանի ուշ  
չէ դեռ...

\* \* \*

Գեղեցիկն այն է որ կու գայ յուշիկ ու լռիկ:

Առաւօտուն, երբ արևի ոսկի սկիհը կը լուսնայ ծիածանէ շուշ-  
փաներու ընդմէջէն, ոչ մէկ քշոց, ոչ մէկ ծնծղայ չ'աւետեր դայն:

Երբ նազելածեմ գիշերը կը խմէ լուսապաղպաջ բաժակը իրիկ-  
ուան, անհամար աստղեր երկինքի թաւշպատ դահլիճն ի վար կը  
պարեն լռելեայն:

Մետաքսահիւս խանձարուրով փաթթուած, անշուշտ կը պատկի  
լուսնկան լճի մեղեսիկ օրօրոցին մէջ ու կը նիրհէ առանց օրօրի:

Օդանուշներն որ գիշերին մէջ կը ցօղեն՝ ողբ չունին:

Ծաղիկներ կը բացուին առանց ծիծաղի:

Զիւնի փաթիլներ կը թափին առանց հեծկտուքի:

Եւ Յիսուս, մեծագոյն պարգևը երկինքի, եկաւ առանց թմրուելի...

\* \* \*

Մի յուզեր խաղաղ լճակը հոգիին:

Ի՞նչ փոյթ եթէ վշտի փղզմն է չոքած անոր յատակը. լիճն է  
խորունկ և հանգչած մրուրը չի կրնար պղտորել վճիտ երազը կեանքին:

Ժպտէ երկինքին ու թող աստղերու կայծը թափանցէ մինչեւ:  
յատակը սրտին, և անա զմրուխտէ մոմեր կը բարձրանան տիղմէն

վեր, շուշաններու բոցով պլպլուն:

Մի՛ յուզեր երազունակ լճակը հոգիին...

\* \* \*

Ես չեմ ատեր փուշը:

Եթէ ատելութեամբ, նախանձի ձեռք մը խոցէ զիս, իմ ամբոյն  
դէմքը ես լռիկ կը դարձնեմ, որոնելով նոր մտերմութիւն ու նոր սէր:

Իմ հոգիի տունկը հաղիւ ժամանակ ունի ճիւղ մը գեղեցկութիւն  
ծաղկելու. ան չի կրնար կենսական աւելը վատնել վրէժխնդրութեան

փուշեր սնուցանելու համար:

Կարճ է գարունը սրտին...

\* \* \*

Քանի դու չես կրնար խել այս առնելը իմ սրտէս, ո՛ւր է քու ուժդ, ո՛ւր է խայթդ, տառապանք:

Օրերը կը թռին մայրամուտի թռչուններուն հանգոյն, իրենց թեւերուն վրայ տանելով մէյմէկ կոտտանք քու խոցէդ եւ դու անդու կը տկարանաս: Մինչդեռ, Աստուած, որ արմատ նետած էր սրտիս մէկ անկիւնը, արագաբար կ'ուռճանայ և օրէ օր կը տիրէ հոգիիս ամբողջ պարտէզին...

ՎԱՀՐԱՄ ՍՕՅԵԱՆ

Նիւ Եօրֆ

ՎԱՀՐԱՄ ՍՕՅԵԱՆ, մեր նոր գրողներէն է. ծնած է 1900ին Կեյվէի Գրենըլար գիւղին մէջ: Իր ծննդավայրի նախակրթարանը աւարտելէ յետոյ՝ յանախած է Ասպպարի Կեդրոնական վարժարանը: Համալսարնային պատերազմի ընթացքին 1915 թուին ախորժուած է մինչեւ Տեր Զօրի անպատաները: Չի նազարեցնուիր, 1921ին, զգալիքով է Ամերիկա, եւ հաստատուած է Նիւ Եօրֆի մէջ, ուրկէ աշխատակցած է ու կ'աշխատակցի «Հայրենիք» ամսագրին, «Հայասանի Կոչնակ» ինչեւ «Բազմավեպ» ինչ: ՍօՅԵԱՆ իր առաջին բանաստեղծական հատորը լոյս ընծայած է 1931 թուին «Քիչ մը Երկինք» եւ 1939ին լոյս ընծայեց իր երկրորդ հատորը «Լոյս եւ Սուրբ», շեղճ պարզութամբ: Երկու գործերն ալ զնամաստուած են հայ մամուլին: Հ. Հ.





## ԻՆՁՈՒ ԳԵՐԻ ԵՆՔ ՈՒ ԱՆՅԱՅՐԵՆԻՔ

(Հ Է Ք Ե Ա Թ)

Եփրատի վերին դաշտանովիտներուն վրայ կ'իշխէր հայ իշխան մը: Անիկա մէկն էր Հայոց երկրի այն ասպետներէն, որոնց աչքերուն մէջ՝ արեւելքի իմաստութիւնը, ձիթենիներու հանդերձովը կ'աճէր:

Արուագեղ, բարձրահասակ և գթասիրտ: Երջանիկ էին ցեղերն ու տոհմերը, որոնք կը վայելէին ապահովութիւնը իր ազնուական մակահին: Սով, հիւանդութիւն և անարդար գործ չտեսնուեցաւ երբե՛ք եփրատական այս անկիւնը՝ որքան ատեն որ ապրեցաւ իշխանը:

Գարունը՝ բոժոժի թելերուն բարակովը, գազպիւնի պէս նիարդ առ նիարդ, կը ծորէր Եփրատի պսպղուն ու քաղցրահամ ջուրերուն, յեններուն ու հովիտներուն, դաշտերուն և մարգերուն վրայ: Գարունը՝ արբունքի հպարտութեամբը կը լեցնէր հողն ու ծիւրը, անուրջ ու գեղեցկութիւն կը նետէր առուակներու մէջ և ծաղկուն ծառերուն վրայ: ատոր համար էր որ Եփրատական թագաւորութեան սահմաններէն ներս՝ նշենիները բացառիկ ճերմակութեամբ ծաղիկ կը բանային. ձիթենիներու խորհուրդն ունէին ուռիները. խնձորենիները՝ պարիկներու մշտադուարթ հողիներու պէս, արև ու սէր կը բանէին. նռնենիները՝ հեռաւոր վայրերէն, իրենց երջանկութեան գինարբունքին կը կանչէին ասորիախառով խուճրերը գոյնզգոյն թիթեռնիկներուն:

Հայ ասպետը՝ իր երկրին չափ կախարդական աղջիկ մը ունէր: Անոր հասակը՝ Եփրատի եղէգներուն շիտակովը, Հովիտներուն մէջ՝ իր մարմնական կշռոյթին արուեստը պտտցնող հայկական նժոյգին պէս ձկուն: Տաւրոսի կոպերուն վրայ՝ իր անթերի գեղեցկութեան առասպելը փայփայող եղնիկին նման գրաւիչ աչքերով... Յորդածուփ մազերը՝ ուսերու երկու աղեղներէն դարձար կը ծորէին, ինչպէս մայիսը՝ անտառի զառթափէն: Արմենոյին խօսքը՝ Երևանի դեղձին պէս ջրուա էր...

\* \* \*

Մարդն ու աստուածները Եփրատական աշխարհին՝ նոյն առասպալին ետեւը, իրենց այժմանական գիշերները ապրող նորապսակ հարս ու փեսայի պէս էին: Մարդիկ բարի ու գեղեցիկ: Աստուածները հանձարեղ վարպետներ Ձեի ու Ոճի, որոնք մարդկային մտքին ու մորթին կատարելութենէն կը քաղէին իրենց աստուածեղէն անմահութիւնը:

թիւնը, անոնց հոգիներու ճառագայթումէն կը հիւսէին երկնային այն պալատները, որոնց մէջ պէտք է բնակէին:

Ժողովուրդի մէջ և ժողովուրդի համար՝ այս դերադնիւ ուղիէն քալեցին աստուածներն ու աստուածուհիները Եփրատական Աշխարհին: Սիրոյ այս խնամիութենէն է որ, հարսերը՝ լորերու պէս մանչեր կը ծնէին և Սասունի արեւածագին նման զրաւիչ աղջիկներ: Չկար արտ ու վարակ, ո՛չ ալ պղտորութիւնը սաղմ ու սերմի: Արուեստարոյր հո՛ղ, որուն՝ աստուածները կամեցեր էին ալ ամէնէն գեղեցիկ ու կատարեալ բաները:

Ամէնքը աղուոր էին, բայց Հայոց ասպետը, անոր կիսնն ու աղջիկը ամէնէն աղուորներն էին, այսպէս պէտք էր ըլլար իշխանական տո՛մը, Վասնդի, ան որ կ'իշխէ երկրիս վրայ՝ յաջորդն է իր աստուածրերուն, ու պէտք է որ ունենայ մարմնական ու հոգեկան կատարելութիւնը անոնց: Ասպետը, կայն ու աղջիկը, քերթուածի մը իմաստալից երեք տողերու պէս էին...:

Օրերը՝ անցան իրարու ետեւէն, դառիթափէն վար գլորուող քարերու նման: — Արմենոն՝ հասակ նետեց ու մեծցաւ:

Եղանակները՝ օրէնքին ճպտէն ծեծուած, դարձան արագ ու հե ի հե, ինչպէս իր փայտեղէն առանցքին շուրջ պտտող կարծառը: Արմենոն հասուեցաւ ծիրանի պէս, ստինքները՝ ելունդ ու բոռուցք չինեցին իր կուրծքին վրայ, աղջիկնութիւնն ու ամօթ նեօեցով անոր նայուածքին մէջ...:

Տարիները՝ լճակին երևոն ի վար նետուած խճաքարերուն նման ոստոսողով թռան, աղեղ ու տուտ շինելով: — Արմենոն արբունքի հասաւ, ինկաւ անուրջներուն մէջ, ջղայնացաւ ու ղայրացաւ, դժգոհ ու տրանջացող՝ ինքնահաւան ու եսասէր եղաւ, յագեցած պերճանքէն ու հարստութենէն՝ ատեց պալատի վայելքն ու հանգիստը. փնտռեց դժուարն ու անմարսելին, արժաւոցը ու հոգին հնհնցնող տազնապը: Վերջապէս՝ սիրոյ խեռ ճամբան, գտնել մէկը, սիրել զանիկա ու հպլի՛լ անոր զրկին մէջ...:

Աէրը պարուրեց Արմենոյի սիրտը, ինչպէս ամպը՝ բարձրակատար լեռը...:

\* \* \*

Կրակին վրայ բռնուած մոմլաթին պէս: Յաւին ճանկերուն մէջ տուայտող սրտին պէս՝ հալեցաւ Արմենոն: Անոր մարմինն արուեստը աղօթցաւ՝ երանգապնակին մէջ մոռցուած ու տժգոյն ներկին պէս: Հոգիին թեւացքը դադրեցաւ: Նմանեցաւ անթեւ արծիւին՝ որուն կտուցին ծայրէն ի գուր բարձրութիւններու տենչը կ'աւաղէ իր անցեալը...:

Ի տես իրենց աղջկան տուայտանքին՝ խռովեցան հայրն ու մայրը: Հասկցան որ Արմենոյի սրտին յատակը, սիրոյ դեը նստեր էր

էր, ու զանիկա փրկելու համար՝ պէտք էր սամուսնացնել Արմենոն: Ու ասպետին մուսնեակները, մասն քաղքէ քաղաք և զիւղէ գիւղ, հրաւիրեցին երկրին մէնէն գեղեցիկ երիտասարդները որ դան պալատ, անցնին իշխանին պարտէզին մէջէն, ուր՝ Գեղեցիկն Արմենոն, պատշգամին վրայ կեցած պիտի ընտրէր մէկը և անոր հետ պիտի ամուսնանար:

Եփրատական Աշխարհը ցնցուեցաւ, ծափեց ու ճչաց, երգեց ու զինովցաւ: Երկիրը կծկտեցաւ ու լայնցաւ, բարձրացաւ ու խորունկցաւ: Եփրատական թագաւորութեան երիտասարդները գեղեցիկ էին և անոնց թիւը շատ... Ո՛վ պիտի ընտրուէր, ո՛վ պիտի ըլլար բախտաւորը, որ պիտի դար արքայի մը անընկճելի հզօրանքովը, իր սիրոյ գահը դեռեցնէր Արմենոյի սրտին մէջ...:

Հեղեղի նման հոսեցաւ եփրատական երկրի երիտասարդութիւնը: Հովուները՝ իրենց հօտերը, լեռներու բնակարն ու մենութիւնը լքեցին, մշակները՝ մասն ու արօրը. այգեպանները՝ հնձանն ու որթատունկերը, արհեստաւորները՝ իրենց գործերն ու խանութները. զինուորականներն ու զինուորները՝ սաղմաղաշտն ու զէնքը, խոտվալից հողիներով վազեցի՛ն, վաղեցի՛ն, լեցուեցան պալատին պարտէզը՝ ինչպէս գետին ջուրը լճի մը կոնքին մէջ...:

Չայն չկայ: Անակնկալը կարկամեցուցեր է երիտասարդներուն սրտին տրոփը: Այտերուն վրայ՝ երակ չի խաղար: Թարթիչները՝ փայտեցեր ու կարծրացեր են: Իհրերը՝ սարդերէ ծծուած ճանճի մը զիակին նման անշարժ: Հէքեթիւն ջատուկը կարծես, իր մանկական գաւազանովը զարկեր է երիտասարդութիւնը: Պատշգամին վրայ երեւցաւ Արմենոն, իր տօնական օրերու զգեստները հագած, բայց նիհար ու տոգոյն: Անոր աջ ձեռքը, ձիալից մազերէն վեր՝ կը բարձրացնէր ոսկեխնձորը...:

Իշխանական պարտէզին հողը տքաց ոռոգելու ձանրութեանէն: Սիրտերը ճրճուացին իր ծխնիին վրայ դարձող հին դրան մը պէս: Պատշգամէն ծոր կու տար Արմենոյի սէրը, կը զինովցնէ՛ր, կը տառապեցնէր երիտասարդութիւնը:

Հաղարաւոր աչքեր՝ իրենց ծաղիկը բացին պատշգամը կեցող աղջկան վրայ, նայուածքնրը կառչեցան անոր՝ ինչպէս զնդասեղուած թիթեռնիկները կենդանարանական թանգարանի պատին...: Լուռութիւն: Վասնզի հողիներու խօսակցութեան պահն էր, խորհրդալից ու հէքեթաթային երջանկութեան մը ի խնդիր, ուր՝ անհաւատալին ու անակնկալը կը վազեն հարթ ճամբաներու երկայնքէն, վերածուելու համար զարմանահրաշ եղելութեան մը՝ քանդակին...:

Ճակատագիրը կը թռէր գլուխէ գլուխ և ուսէ ուս. ո՛ր թառիլ, ո՛ր երիտասարդին վրայ կը թռէր շարունակ, մերթ վարանոտ

և մերթ զիտակցօրէն, կը դառնար ու շրջան կ'ընէր, բայց յագնած կ'երթար հանգչելու պատշգամին վրայ:

Շնչատ ու դողուն՝ հոսեցաւ երիտասարդներու դողը. երկա՛ր ու անվե՛րջ, իրարու ետեէ, բոլորն ալ գեղեցիկ. ամէնքն ալ մարմնագեղ և հզօր դրաւելութեամբ: Պիտի անցնէին պատշգամին քովէն, նայէին Արմենոյին, մէկէն մինչև եօթ համրելու տեղութեամբ պիտի սպասէին: Արմենօն իր սէրն՝ ու հաւանութիւնը պիտի յայտնէր ձեռքի մէջ գտնուած սկեխնձորը նետելով սպասողին...:

Անցան երիտասարդները:

Սպասեցին: Աղաչեցին ու պաղատեցան, մարմրուն նայուածքներով անոր սէրը հայեցին:

Այսպէս եօթն օր, եօթը գիշեր:

Հատաւ երիտասարդներու հոսումը: Ասիկա՛ մարդկային սիրոյ հեղեղն էր, որ վաղե՛ց, ու վաղե՛ց: Վաղեց ու չորցաւ: Ճակատագիրը չգտաւ ընտրեալը: Ու ամօթէն կծկեցցու ու պղտկեցաւ պատշգամին վրայ:

Բայց՝ ո՞վ է այս մեկը, որ ասպետին պարտէլը չմտաւ, մնաց դուրսը Մմքեցաւ պատին ետեւը: Անհամարձակ մը անտարակոյս, որ կը սրօփա՛յ, ինչպէս ձմրան՝ փողոց նետուած կատուն:

Ճակատագիրը յանկարծ թեքը բացաւ ու թռաւ...: Մէկը կը փնտռէ, բաղդաւորը...: Սակայն չի գտներ նորէն...: Կը ցատկոտի ու կը բարկանայ, ամօթէն կը կարմրի ու կը դողայ՝ շիրիմներուն վրայ ծլած խոտին պէս: Անոր թեւերու թափայնարումէն՝ ծաղիկ ու տերեւ կը թափին պարտէլի քարացած լուսթեան վրայ: Պալատին ցուիքէն վեր՝ ամպի կտոր մը երեցաւ յեղակարծ, պատուուեցաւ ու ճեղքուեցաւ, շինեց բուռ և ագռաւ, կատու և գայլ: Հիմայ՝ մահ և կոտորած կայ երկնքի կապոյտ հրապարակին վրայ...: Պարտուողները՝ իրենց վէրքերու ցաւէն կու լային...:

Անձրեւի քանի մը կաթիլներ ինկան պարտէլին մէջ...:

Արմենօն՝ տագոյն էր ու օխուր: Ճակատագիրը՝ սրօնեղ ու կծկուած: Մինչ պափն տակը ապաստանած երիտասարդը՝ մտնեմ չմտնեմի վարանքով: Բայց սէ՛րը, սէ՛րը, քարերը՝ լեռ շինող և կաթիլը՝ լիճ ընող սէրը ցնցեց յուսահատ երիտասարդը, ինչպէս երկրաշարժը՝ երկիրը. ինչպէս շոգին՝ նաւը:

Երիտասարդը խրխլած տան մը պէս փլաւ ինքն իր վրայ, բայց սէրը՝ բռնեց զանիկա, ոռքի վրայ կեցուց, առաջ հրեց.

— Քայէ՛, Ասի՛թ:

— Չե՛մ կրնար, ոռքերս կը կթոտին ու կը դողան: Բիրխ մէջ՝ մեծ ու անհատնում գիշեր մը իր սաւանը փռեց, ճամբան չեմ տեսներ: Ո՛ւր է պարտէլը: Եւ ո՛ւր պատշգամը: Արմենօն հօն է... շնչեց երիտասարդը:

— Քայլէ՛, կը հրամայեմ քեզի:

— Գոնէ՛ օգնէ՛ ինձի, ո՛վ հրաշք, մինակս չեմ կրնար քայլել,  
բռնէ՛ թևէս, դաշտը՛ցուր սրաբիս դփրտուքը:

— Ես հեռո՞ք եմ միշտ, քայլէ՛, ըսաւ սէրը վճռաբար:

Սէրն ու երիտասարդը պարտէ՞ղը մօտան: Կեցան պատշգամին առ-  
ջեւ: Ասիթը գեղեցիկ էր: Ու սէրը հոգոր ու առնական:

— Մէկ, երկու, երեք...

Ճակատագիրը պատշգամէն թռաւ, ինչպէս հալածական լորը՝ ցո-  
րենի արօէն, թառեցաւ Ասիթի ուսին, մինչ Արմենոն՝ անոր կը նետէր  
ոսկեխնձորը...

Ընտրուած էր փեսացուն:

— Ասիթը՛, Ասիթը՛, հրնայ ապշահար՝ ամբոխը...

\*  
\*  
\*

Այս ղէպքը պատահեցաւ այն թուականներուն՝ երբ Գողգոթայի  
խաչէն, նոր կրօն մը կը սորսորէր, գառնուկի մը մոռութէն ծորող մայ-  
րական կաթին նման անմեղ...

Անիկա կը ծորէր մութ ու կախարդող մտքի մը պէս, անմահու-  
թեան խոստումներով և անղենական աշխարհի երանաւէտ ապրումնե-  
րով, կ'իջնէր Գողգոթայի կածաններէն, կը լեցնէր կրօնապարծ Պա-  
ղեսափինը, կը մտնէր Ասորիքը, կը ցածկէր Անտիոք ու Եղեսփա ու  
անշուղկ կը բարձրանար Եփրատական լեռները:

Օր մը, անխնամ մօրուքներով, գլուխնուն վրայ լուսպակ, \* եւ  
ուսերնուն՝ նափորա, տարօրինակ մարդիկ երեցան Եփրատական երկ-  
րին մէջ: Նիհար ու արեազարկ ղէմք ունէին անոնք, բայց՝ քնքուշ  
ու մեղրահամ նայուածք: Բարձր հասակ ու բոպիկ ոտքեր ունէին,  
սակայն գթութիւն կար անոնց արատաւնած բառերուն մէջ: Եկան  
կամք ու ես ընկճող զաղափարներու նման, հրեղէն երկվարներ սան-  
ձող հրաշածին հերոսներու պէս: Մարդատէր և ընտանի ամէնուն, զո-  
հարերութեան ուխտովը զինուած՝ քայլեցին սիրաբու սալայատակնե-  
րէն և հողիներու նրբանցքներէն. եկան իբրև կենսատու անձրև եւ  
պարտուած էութիւններու համար՝ իբրև յոյս ու հաւատք...

Անոնք տիրեցին օրտերուն, հոն ցանկով հրաշավէպ ու երա-  
նութիւն: Քրիստոնէութիւն: Քրիստոնէութիւնը՝ քաղցութեան ար-  
ուեսափին պերճութեամբը կը մտնէր տուները: Չիթենի ու խաղաղու-  
թիւն: Արքայութիւն կար երկնքի մէջ՝ բոլոր հաւատացեալ-  
ներու համար: Գողգոթան ու խաչը, Յիսուան ու Գեղարդը՝ նուր  
նուֆարներու նման կը ծաղկէին հողիներու մէջ, Աւետարանը իբ-  
րազնուութեան համբաւը կը կախէր Եփրատի քնարաւոր ուսնիններէն,  
ու Մարիամը՝ ոգեղէն աստուածուհի մը ինչպէս, կը փաթթուէր կի-  
ներուն սրտին...

Հին աստուածներ ու աստուածուհիներ կային, նորեր աւելցան: Սկսաւ քէն ու գզուրտուք: Եփրատական Աշխարհը եղաւ ըմ ու հրապարակ, որոնց վրայ՝ պայքարող աստուածները ցուցադրեցին իրենց ուժին յաւիտենականութիւնը, բզքտուած միսերու մէջ ու ջարդուած ոսկորներու քովնտի: Արգիլուեցաւ խնամութիւն: Հեթանոսը չէր կրնար այցելել քրիստոնեային, ու քրիստոնեան՝ ամօթ ու նախատինք կը համարէր բարե տալ հեթանոսին: Իշխանութիւնը հեթանոսներուն ձեռքն էր: Արմենօն հեթանոսի աղջիկ էր: Մունետիկները ի լուր աշխարհի յայտարարեր էին, թէ միայն հին կրօնքին հետեւող երիտասարդները կրնային զալ արքունի պարտէզը և մասնակցիլ փեսայական ընտրութեան: Որոշուած օրը, հաւաքուեցան հպարտ ու յաղթական երիտասարդները հեթանոս հաւատքին, եկան որպէս վիթ ու վարազ, անապատի առիւծ ու վագր, զգեսապարուած և հեթանոսի կարծր ու առնագեղ երգերով . . . :

Ասի<sup>օ</sup>թը հապա:

Անիկա՝ շառ բաներ լսեր էր Արմենոյի մասին: Իմացեր էր որ ազատամիտ աղջիկ մըն էր, վեհանձն ու քաղցրարարոյ, մանաւանդ քրիստոնեայ . . . , այսինքն՝ Յիսուսեան կրօնքին ոսկեղէն ջահը՝ կախուած հեթանոս տան առիքէն...: Ասի<sup>օ</sup>թը սիրեր էր Արմենօն, անոր սէրը՝ զինքը մղեր էր հեշտանքի մը քաղցրաւէտ վայելքին. նոյնիսկ մահուան տուրքովը, ասոր համար էր որ Ասի<sup>օ</sup>թը խառնուեցաւ հեթանոս երիտասարդներուն, և անոնց ընկերացաւ մինչև պարտէզին դուռը:

Սակայն մուտքին առջևը, վարանեցաւ Ասի<sup>օ</sup>թը, չիշխեց ներս մօնել ու պատին տակ մնաց կծկուած ու սրսփուէն, մինչև որ սէրը ցնցեց զանիկա, քշեց դէպի պարտէզն ու պատշգամբ . . . :

— Ես՝ ասիկա կ'ընտրեմ, այս վերջին եկողը, քանզի անոր մէջ՝ հոգիս իր յագուրդը պիտի գտնէ, և սէրս իր ցանկութիւնը. ըսպէ Արմենօն:

— Ասի<sup>օ</sup>թը, պոռաց ժողովուրդը:

— Այո՛, Ասի<sup>օ</sup>թը, պատասխանեց Արմենօն:

— Սա՛ քրիստոնեա՞ն, սա՛ պի՞ղծը:

— Ան՝ զոր սիրեցի:

— Արմինօ՛, հեթանոս ենք և հարազատ արիւնով, ու ծծեղ ենք ու զեղեցիկ, եկած ենք մեր երկրի չորս ծագերէն, քեզի համար եւ ասպեա հօրդ հրամանով. չես կրնար անարգել մեզ և հայրդ, ընտրէ՛ մկղմէ մէկը, ո՛վ որ ալ ըլլայ անիկա, մենք պիտի հպատակինք քեզի և աստուածներուն, միայն թէ հեթանոս ըլլայ, ճշացին երիտասարդները:

— Ո՛չ, չե՛մ կրնար, ես ընտրեցի ուղածս:

— Ասի<sup>օ</sup>թը, Արմինօ՛:

— Ասի՛թը, Ա ս ի թ ը, հնչեց Արմինյոյի ձայնը:

Չայրացաւ ժողովուրդը: Փոթորիկէն զարնուած անտառին պէս խռովեցաւ երիտասարդութիւնը, մինչ ասպետը ամօթահար ու նկուն, իր աղջիկը, պատշգամէն պալատը կը մացնէր, ամբողջ աստուածուհիներու օրհներգը հնչեցնելով՝ կը քարկոծէր դժբախտ Ասիթը . . . :

\*  
\*  
\*

Պատահարին առաջին գիշերը, բերդաւոր պալատին մէջ սպաննուեցան ասպետը, կինն ու աղջիկը:

Ժողովուրդը վառեց պալատը, քանդեց բերդը, արմատախիլ րբաւ պարտէզին ծառն ու բոյսը: Այսպիսով վերջացաւ եփրատական աշխարհի իշխանական տունը. . . : Պարտէզին մուտքը նայող աշտարակը միայն կանգուն մնաց, տխուր ու հմայաթափ՝ ինչպէս լինտի վրայ ցցուած մենաւորիկ ակռան . . . :

Աւանդութիւնը հետագայ դարերու ընթացքին, այդ որբուկ աշտարակին ծայրը, բազէի կերպարանքով իշխանուհի մը դրաւ, դառնացած ոգիի մը ցաւովը. . . : Գրիտոնեայ հաւատքը, անոր գոյութեան մէջ նետեց հրաշովէպի մը թանձր խորհուրդը, ըստ որում՝ ո՛վ որ եօթը գիշեր անքուն հսկէր Բազէ-իշխանուհիին վրայ՝ պիտի հասնէր երկրային իր ունէ փափաքին: Շատեր փորձեցին իրենց՝ բաղձը, բայց ոչ մէկը թողաց պահանջուած պայմանին:

Մեծ Հայաստանի թագաւորներէն մէկը, ջիղերը պրկեց, քարացուց կամքը և հսկեց եօթը գիշեր. . . :

Գիշերները լրացան, ու Բազէ իշխանուհին խօսեցաւ:

— Թագաւոր, ուզէ ինչ որ կը փափաքիս:

Հայոց արքան, զարմանահար աչքերով նայեցաւ բազէին, որ բոցարծարծ ու բռնկուն կրակի մը պէս էր այդ պահուն: Ծերմակ աշտարակը կերոնի նման կը վառէր, ու թռչունը՝ կը հալէ՛ր, ու լուսափայլ բոցին մէջէն կը բարձրանար գեղանի հասակը իշխանուհիին. . .

Գեղեցիկ էր անիկա՝ ինչպէս յաւերժահարս ու աստուածուհի: Անոր սէրը՝ զարկաւ թագաւորը, ինչպէս կայծակը՝ ընկուզեցնին: Սրբփաց ու զոդաց, հազիւ լսելի ձայնով շնչեց.

— Ի՛նչ կ'ուզեմ, իշխանուհի:

— Ո՛չ, ուրիշ բան մը ուզէ:

— Չե՛մ կրնար, ո՛վ գեղեցիկ:

— Չ'ըլլար, ես երկնային եմ:

— Եղի՛ր երկրային, սիրէ զիս, միասին ապրինք, ես պալատներ ու զանձ ունիմ:

Ես՝ կ'ատեմ պալատն ու գանձը: Աշտարակը՝ նախընտրելի է ինձի համար գանձէն ու պալատէն. . . ես՝ հոս իմ մեռելն ու շիրիմն ունիմ:

— Մեռե՛լ, շիրի՛մ...

— Այո՛, մեռել մը և անոր շիրիմը...

Այդ ժամանակ, Ասիթի գերեզմանէն ձայն մը ելաւ, կերկերուն<sup>2</sup> ու երկար.

— Արմինո՛, կը պոռար գերեզմանէն ելլող ձայնը:

— Ասի՛թ, պառասխանեց իշխանուհին:

Թագաւորը հարցուց.

— Որո՞ւ հետ կը խօսիք, իշխանուհի:

— Սիրականիս հետ, անիկա՝ զոր սիրեցի, ան՝ որ մեռաւ ինձի համար: Աշտարակէն եօթը կանգունաչափ հեռու է անոր գերեզմանը, բայց ան մէջս է, ես ղանկա կը բովանդակեմ ինչպէս ծիրանն իր կուտը, ինչպէս գանկը՝ տեսիլք . . . :

— Ուրեմն կը մերժե՞ս զիս:

— Մերժեցի, ըսաւ Արմինօն:

Թագաւորը զայրոյթէն՝ բռնեց Բաղէ-Իշխանուհիի մարմինը, տորեց ու տառապեցուց, ճմլեց ու փշրեց անոր գանկը: Մեռաւ Բաղէ-Իշխանուհին, անիծելով Թագաւորը և անոր ցեղը:

— Անիծեա՛լ ըլլաս, ո՛վ Թագաւոր, փլի՛ գահդ, և փոշիանայ իշխանութիւնդ, մինչև հազար տարի, հայրենիքդ իր Թագաւորութիւնը չունենայ, և ժողովուրդդ՝ իր հանգիստը . . . :

Անկէ յետոյ է որ տառապանքի ու գերութեան թանձր՝ զիշերը ինկաւ Արմինական աշտարակին վրայ, ու այս անէձքին իբր յուշարձան՝ կանգուն մնաց Աւսարակը՝ հնածոր ու տքուն . . . :

1939 Օգոստոս 3

Գալպալա

ՍՍՍ-ՎԱՆԻ

---

ՍՍՍ-ՎԱՆԻ, բուն անունով՝ Կարապետ Յովհաննեսեան, մեր ամեցնագեղեցիկ արձակ գրողներէն մին, ճնամ է Վանի Շասախ գաւառի Թաղ գիւղաբաղախի մէջ: Շաս կանուխ որբացած է հօրմէն:

Նախնական ուսումը առած է գիւղին նախակրթարանը եւ Աղբամարայ ժողովրդային դպրոցին մէջ: 1907ին աւակերտած է Վանի կեդրոնական վարժարանին, ուրկէ երկու տարիէն շրջանաւարտ եղած է: Օսմ. Սահմանադրութեան երկրորդ տարին (1909ին) 29 օր անընդհատ փախելով կարաւանին հետ՝ հասած է Տրապիզոն եւ անկէ անցած Պոլիս, ուսումը տարունակելու նպատակով:



1911ին, Ասապազարի Կեդրոնական վարժարանին առակերս կ'արձանագրուի եւ երկու տարիէն դպրոցական ընթացքը աւարտելով Գրականութեան եւ Գիտութեան պատկաւորի վկայականին կ'արժանանայ: Ուսուցչութիւնը եղած է ասպարեզը, իբր ուսուցիչ եւ սնորհն պատճօնավարած է Ասապազար, Պանսրմա, Արեւն, Տրամա եւ Գաւալլա:

1914ին, 3 ամիս հետեւած է Պոլսոյ պատերազմական վարժարանի ընթացքին: 1915ին կը բանտարկուի ու կ'ենթարկուի անլուր չարչարաններու, խոտանգումներու եւ անարգանքի, մասնորոն եղունգներուն սակ զնդասեղներ մխրենցիս եւ աքցանեցիս, չարչարանք տեսեց 24 ժամ. եղունգներէն երեք քաշեցին. անութիւն սակ սաք հաւկիթ դրին. 35 օրերու բանտարկութեանը միջոցին սասք անգամ *Քալախալի* սակ պատկեցուցին, իսկ գլխուն անքիւ փայտի եւ մտակի հարուածներ տուին: Ի՛նքն է Տօք. Լեփսիուսի մասնաճած ուսուցիչը (ծեծի սակ մեռնող). վերջապէս մահուան կը դատապարտուի, բայց հրաւճուով մը կ'ապրի, օրերով ուշաքափ կը մնայ բայց չի մեռնիր . . . :



1916—8 զտնուած է գերմանական Ամբաստաններու ե. գորագունդին մէջ: Պատերազմէն յետոյ հետեւած է գրականութեան, աշխատակցած է «Աշխատանք»-ին (Իգմիր), «Նոր Շարժում»-ին (Գահիրէ), «Նաւասարդ»-ին (Պուրէթ), «Հայրենիք» ամսագրին (Պոսթոն), «Հայաստանի Կոչնակ»-ին (Նիւ Եօրթ), «Ազգաբար»-ին (Պոլիս), «Նոր Օր»-ին (Արեւն), «Հորիզոն»-ին (Սելանիկ), «Յառաջ»-ին (Բարիզ), «Յուսաբեր»-ին (Գահիրէ) «Հրազդան»-ին (Արեւն) «Արեւել»-ին (Սելանիկ):

Առհասարակ մտակած է հայկական հեփեարներ եւ աւանդութիւններ: Հրատարակածուած երկերն են *Հայկական պարբերքներ*, *Վահագնածունդ*, *Անհատական*, *Ծամթեխ ծովն ինկաւ* եւ *Ճանչնանք մեր հայրենիքը* գործին *Վասպուրական մեր աշխարհ* հասորը: Ունի հրատարակութեան պատրաստ գրական եւ տեղեկագրական երկեր:

Ներկայիս սնորհնն է Գաւալլայի Ազգային վարժարանին:



## Ծ Ն Ո Ւ Ն Դ Ի Ի Ի Կ Ո Ւ Ն Ը

Ամէն անգամ որ կ'անցնէի քաղաքին ծառաւէտ ծաղկալից դարաստանէն, ճամբուն վրայ կը տեսնէի զանի: Այլևոր մաղերով ձերունի մըն էր, լաւ հագուած, ծխամորճը բերնին, նստած միեւնոյն տեղը, նստարանի մը վրայ, չըջապատուած ճնճղուկներէ:

Թռչունները այլևս կը ճանչնային զինքը ու չէին խրտչեր անկէ: Ոմանք ուսին վրայ թառած, ոմանք ծունկին վրայ իրենց կերը կը ստանային:

Ծերուներն գո՛ էր, զգոյշ շարժումներով՝ հացի պատառկներ կ'երկարէր օդին մէջ, թռչնիկները կու գային կը կացահարէին զանոնք: Պատահական անցորդներ՝ յաճախ, հետաքրքրութեամբ կանդ առած կը դիտէին հմայիչ այս տեսարանը, ճնճղուկներ կարծես ձերուներին պաշտպանութեան ապաւինած՝ չէին վախնար անոնցմէ:

Առաւօտները կու գար այս ձերուներն, և երկոյնին այն պահուն երբ թռչունները բռնելու, ինքն ալ կը վերադառնար երազկոտ՝ հանգիստ մը վայելելու:

Անցեր էին ամրան երկար ու տաք օրերը, անոնց յաջորդած էին աշնանամուտի խոնաւ իրիկուները: Երբեմնի կանաչ տերեւները հիմա դեղնած ու կարմրած սկսեր էին պար բռնել ուրիշ թւերուն մէջ:

Դարաստանին ճնճղուկները իրենց հանապազօրեայ սնունդը կը ստանային կանոնաւորաբար. անցորդներն ալ միշտ կը լսէին անոնց ճռուողիւնը, որ արեւմուտքի ժամբուն, երկնային օրհներգու համերգի մը սպաւորութիւնը կ'ընէր:

Անցեր էին նաև աշնանային զովաշուռնչ ու անձրևոտ երեկոները, ձիւնը փերթիկներով կ'իջնար երկրի վրայ. ճամբաները սառած էին ու անցորդները զգուշութեամբ կը քայլէին:

Ու ես տեսայ առաւօտ մը, կանուխ, այն ձերուներն, թռչնիկներովը չըջապատուած, զողողուռն ձեռքովը հացի պատառկներ կ'երկարէր անիկա օդին մէջ:

\*  
\*  
\*

Այն օրէն վերջ, ա՛լ եւս չտեսայ զանի դարաստանին մէջ, այն օրէն վերջ ո՛չ մէկ թռչուն տեսայ հոն, և ոչ մէկ ճռուողիւն լսեցի:

Օրեր ու ամիսներ անցեր էին անկէ ի վեր ու ես տղու մը պէս՝  
մոռցեր էի այս ամէնը:

Օր մը սակայն, գացած էի աղօթք մը մը մնջել իմ ննջեցեալներու  
գերեզմանին վրայ, և զուսուտ ծաղիկներով զարդարելու զայն:

Երբ ներս մտայ մեռելներու այդ աշխարհէն, տեսայ հոն հա-  
րիւրաւոր թռչուններ, որոնք կ'ոստոստէին, կը թռչտէին ու կ'երգէին:  
Անոնք այնքան շատ էին, այնքան շատ. անոնց երգը այնքան դի-  
թիչ, այնքան աստուածային:

Զարմացած՝ հարցուցի անցորդի մը այս ասորօրինակ երեւոյթին  
պատճառը. անիկա, ապշած՝ ինձի նայեցաւ ու զիս տգէտի մը տեղ  
դնելով՝ մերթ ժպտադէմ, մերթ արտասուալից աչքերով՝ այսպէս խօ-  
սեցաւ:

— « Ամիսներ, ամիսներ առաջ, ձիւնը փերթիկներով կ'իջ-  
նար երկրի վրայ. ճամբաները սառած էին և անցորդները զգուշու-  
թեամբ կը քալէին: Այդ օրը դադաղ մը կը մտնէր հոս. ո՛չ մէկ անձ,  
ոչ մէկ այր կամ կին, ոչ մէկ սգակիր կը հետեւէր անոր. բայց ի՞նչ որ  
հրաշք մը սեպուեցաւ այն երեւոյթն էր որ կը պարզուէր նոյն պա-  
հուն, հարիւրաւոր թռչուններ այդ դադաղին վրայ կծկտպծ, կարծես  
անոր կառչած կը մնային, և հարիւրաւորներ կը հետեւին անոնց:

« Այդ թռչունները, աղա՛ս, դադաղին հետ մնացին այստեղ ու  
չհեռացան: Եթէ քիչ մը առաջ երթաս ու դէպի աջ ուղղուիս պիտի  
տեսնես հողակոյտ մը առանց տապանաքարի, առանց անունի:

« Բայց հոն, եթէ շուրջը նայիս, պիտի տեսնես անթիւ անհամար  
բոյներ, որոնց մէջ թռչուններ կ'ոստոստեն ու կ'երգեն:

« Կ'ըսեն թէ հողակոյտին տակ հանգչող անձը, ձմրան օր մը  
գտնուած է քաղաքին դարաստանին մէջ. սառած, հացի փշրանքնե-  
րու մէջ տեղ... »:

ՄԱՍԻՍ Գ. ՄԱԼԱԹԵԱՆ

1939 Յուլիս 24, Անկիստ

Խմբ. Պատմութիւն ստորագրողը յայտնի դաստիարակ պ. Գալուստ  
Մալաթեանի որդին է, որ 1931ի գրական մրցման մէջ երկրորդ հանդի-  
սացաւ:



## Ծ Ն Ո Ւ Ն Դ Ի Ի Ի Կ Ո Ւ Ն Ը

Ամէն անգամ որ կ'անցնէի քաղաքին ծառաւէտ ծաղկալից դարաստանէն, ճամբուն վրայ կը տեսնէի զանի: Այլևոր մազերով ձերունի մըն էր, լաւ հագուած, ծխամորճը բերնին, նստած միեւնոյն տեղը, նստարանի մը վրայ, չըջապատուած ճնճղուկներէ:

Թռչունները այլևս կը ճանչնային զինքը ու չէին խրտչեր անկէ, ոմանք ուսին վրայ թառած, ոմանք ծունկին վրայ՝ իրենց կերը կը ստանային:

Ծերուներն գո՛չ էր, զգոյշ շարժումներով՝ հացի պաթառկիներ կ'երկարէր օդին մէջ, թռչնիկները կու գային կը կացահարէին զանոնք: Պատահական անցորդներ՝ յաճախ, հետաքրքրութեամբ կանդ առած կը դիտէին հմայիչ այս տեսարանը, ճնճղուկներ կարծես ձերուներին պաշտպանութեան ապաւինած՝ չէին վախնար անոնցմէ:

Առաւօտները կու գար այս ձերուներն, և երեկոյին այն պահուն երբ թռչունները բռնելու, ինքն ալ կը վերադառնար երազկոտ՝ հանգիստ մը վայելելու:

Անցեր էին ամրան երկար ու տաք օրերը, անոնց յաջորդած էին աչնանամուտի խոնաւ իրիկուները. երբեմնի կանաչ տերեւները հիմա դեղնած ու կարմրած սկսեր էին պար բռնել հովին թևերուն մէջ:

Դարաստանին ճնճղուկները իրենց հանապազօրեայ սնունդը կը ստանային կանոնաւորաբար. անցորդներն ալ միշտ կը լսէին անոնց ճռռողիւնը, որ արեւմուտքի ժամերուն, երկնային օրհներգու համերգի մը տպաւորութիւնը կ'ընէր:

Անցեր էին նաև աչնանային զովաչուենչ ու անձրևոտ երեկոները, ձիւնը փերթիկներով կ'իջնար հրկրի վրայ. ճամբաները սառած էին ու անցորդները զգուշութեամբ կը քայլէին:

Ու ես տեսայ առաւօտ մը, կանուխ, այն ձերուներն, թռչնիկներովը չըջապատուած, դողդոջուն ձեռքովը հացի պատառիկներ կ'երկարէր անիկա օդին մէջ:

\*  
\*  
\*

Այն օրէն վերջ, ա՛լ եւս չտեսայ զանի դարաստանին մէջ, այն օրէն վերջ ո՛չ մէկ թռչուն տեսայ հոն, և ոչ մէկ ճռռողիւն լսեցի:

Օրեր ու ամիսներ անցեր էին անկէ ի վեր ու ես տղու մը պէս՝  
մոռցեր էի այս ամէնը:

Օր մը սահայն, գացած էի աղօթք մը մրմնջել իմ ննջեցեալներու  
գերեզմանին վրայ, և գունաւոր ծաղիկներով զարդարելու զայն:

Երբ ներս մտայ մեռելներու այդ աշխարհէն, տեսայ հոն հա-  
րիւրաւոր թռչուններ, որոնք կ'ոստոտէին, կը թռչտէին ու կ'երգէին:  
Անոնք այնքա՛ն շատ էին, այնքա՛ն շատ. անոնց երգը այնքա՛ն դիւ-  
թիչ, այնքա՛ն աստուածային:

Զարմացած՝ հարցուցի անցորդի մը այս ասորիինակ երեւոյթին  
պատճառը. անիկա, ապշած՝ ինծի նայեցաւ ու զիս տգէտի մը տեղ  
դնելով՝ մերթ ժպտադէմ, մերթ արտասուելից աչքերով՝ այսպէս խօ-  
սեցաւ:

— « Ամիսներ, ամիսներ առաջ. ձիւնը փերթիկներով կ'իջ-  
նար երկրի վրայ. ճամբաները սառած էին և անցորդները զգուշու-  
թեամբ կը քայլէին: Այդ օրը դագաղ մը կը մտնէր հոս. ո՛չ մէկ անձ,  
ոչ մէկ այր կամ կին, ոչ մէկ սգակիր կը հետեւէր անոր. բայց ի՛նչ որ  
հրաջք մը սեպուեցաւ այն երեւոյթն էր որ կը պարզուէր նոյն պա-  
հուն, հարիւրաւոր թռչուններ այդ դագաղին վրայ կծկտպծ, կարծես  
անոր կառչած կը մնային, և հարիւրաւորներ կը հետեւին անոնց:

« Այդ թռչունները, տղա՛ս, դագաղին հետ մնացին այստեղ ու  
չհեռացան: Եթէ քիչ մը առաջ երթաս ու դէպի աջ ուղղուիս պիտի  
տեսնես հողակոյտ մը առանց տապանաքարի, առանց անունի:

« Բայց հոն, եթէ շուրջդ նայիս, պիտի տեսնես անթիւ անհամար  
բոյններ, որոնց մէջ թռչուններ կ'ոստոտեն ու կ'երգեն:

« Կ'ըսեն թէ հողակոյտին տակ հանգչող անձը, ձմրան օր մը  
գտնուած է քաղաքին դարաստանին մէջ. սառած, հացի փշրանքնե-  
րու մէջտեղ... »:

ՄԱՍԻՍ Գ. ՄԱԼԱԹԵԱՆ

1939 Յուլիս 24, Անկերս

Խմբ. Պատմութիւն ստրագրոյր յայտնի դասփարակ պ. Գալուս  
Մալաբեանի որդի Ե. որ 1931ի գրական մրցման մէջ երկրորդ հանդի-  
սացաւ:

## Ք Ե Ր Ք Ո Ւ Ք

Քերքուքը Իրաքի հնագոյն քաղաքներէն մին ըլլալով՝ իր ետին ունի հիւսուած անցեալի թանկարժէք պատմական յիշատակներ:

Հեթանոսական շրջաններուն նսե կուռ մաքառեց կռապաշտութեան դէմ և եղաւ ուխտանք քրիստոնէութեան՝ դուրս գալով յաղթական մինչև իսլամութեան ծագումը, երբ ժողովուրդին մէկ մասը մնաց հաւատարիմ իր ուխտին և ապրեցաւ քրիստոնեայ մինչև այսօր:

Հին կը զգանւի հնադարեան Կալմիր Եկեղեցի անուն աղօթատունը, որ կազմեց հիմնաքարը այդ շրջանի քրիստոնէութեան:

Կը պատմուի թէ Արպաք անուն Ասորի սպայ մը ուժեղ խրմբակներ կազմելով՝ ապստամբեցաւ պտորական կռաւարութեան դէմ և սխաւ տակաւ առ տակաւ տիրել կռաւարական հողերի:

Այդ առեկները Պաճերմայ քաղաքին կռաւարիչն էր ճերմայի Արպաք Պաճերմայի շրջակայքը գրաւելով՝ արգելք հանդիսացաւ ճերմայիին ասորական կռաւարութեան տուրք տալն: Հետեարար Մարտանապալ իշխանը ճերմայի պաշտօնանկ ըրաւ և անոր փոխարէն կռաւարիչ կարգեց Կընտու անուն անձը:

Արպաքի ասպատակութիւնները կատեցնելու և զինքը նուաճելու համար, Մարտանապալ Քերքուք քաղաքը շինեց (ն. Ք.) 800 թուին: Քաղաքը պատսպարեց բերդերով և անոր կռաւարիչ կարգելով Պուրդի Ասորի ազնուական ցեղերէն 100 հոգի բնակեցուց հոն՝ որոնց համար կռատուն մըն ալ շինեց: Այս շրջանին կը պաշտէին արև, առիւծ, կով, թռչուն, փայտ, ծառ, եւայլն:

Այն առեկները Քերքուք կը կոչուէր Սլոք կամ Քերք Սլոխ և որ ըստ մեր հայեցողութեան՝ մայր եկեղեցի, տաճար՝ կամ աթոռ կը նշանակէ: Վերլուծենք այդ բառերը՝ Քերք մօտ է անգլիերէն քիք բառին, որ եկեղեցի՝ աղօթատուն կը նշանակէ, մինչ Սլոք կամ Սլոխ մեր հայերէն գլուխ բառին: Անշուշտ ասիկա պարզ ենթադրեալ վերլուծում մըն է:

Մեծն Աղեքսանդրի մահուընէ ետք Ասորեստանի քաղաքները եղան բաժան բաժան փոխանորդներու միջև, և հետեարար Քերքուքը Սըլքոս փոխանորդին բաժինն եղաւ: Ան շատ ծաղկեցուց և ընդարձակեց զայն Դերեալիշին բերդը փլցուց և անոր տեղը աւելի բարձր բերդ մը և 65 աշտարակներ շինեց: Այդ բերդին հարաւային կողմը դուռ մը

բացաւ և կոչեց զայն Պապ-էյՄեյֆ և նոյնպէս անոր հիւսիսային կողմը  
դուռ մը բացաւ զոր անուանեց քաղաքապետին անունով՝ Պապ Տուրի:  
Քերքուք յառաջադիմեց և ծաղկեցաւ յոյժ մինչև 227 թուա-  
կանը, երբ ինկաւ պարսկական իշխանութեան տակ՝ Արտաշէր Յար-  
թիի կառավարութեանը յաղթելէ վերջ և որ մնաց մինչև իսլամու-  
թեան ծագումը:

Պանիրմայի մէջ քրիստոնէութիւնը քարածուեցաւ Մար Ատա-  
յիի և Մար Մարիի ջանքերով, Յարթիական կառավարութեան օրով:  
Այդ ժամանակ Պանիրմայի թագաւորն էր Էրտէպատ: Առաջին ան-  
գամ Մար (սուրբ) Ատաայ՝ ինքն անձամբ Պանիրման մտնելով սկսաւ  
քրիստոնէութիւնը քարոզել և ժողովուրդը ճշմարիտ հաւատքի բերե-  
լէ ետք Ուրֆա վերադարձաւ:

Իր աշակերտներէն մին՝ Մար Մարի զրկեց Պանիրմա որպէսզի  
իր առաքինութիւնը շարունակէ հոտ: Մար Մարի ճամբան Շահակերտ  
քաղաքը մտաւ՝ որուն թագաւորը շատ անգութ և անիրաւ էր: Այս  
թագաւորը ունէր միակ դուստր մը Էֆրաթիա անունով, որուն ոտ-  
քերը անդամալոյծ էին:

Երբ Մար Մարի իր աշակերտներով քաղաք կը մտնէր՝ ամբողջ  
բնակիչները դուրսը գտաւ. որոնք փութացած էին դաշտ զնալու և  
պաշտելու հոն գտնուող «Ատաանայ պարունակող նաւ» և կուռքե-  
րու համար մատաղ մատուցանելու: Վերջապէս Մար Մարի քաղաք  
մտաւ և թագաւորին դրան առջև կանգ առաւ և դուռը զարկաւ:  
Ներսէն Էֆրաթիա հարցուց, — «Դուն ո՞վ ես»: Մար Մարի պատաս-  
խանեց — «Ազջիկս մեզ համար դուռը բաց և ա՛ռ այս քիչ՝ մը ա-  
լիւրը և հաց չինէ, որովհետեւ հեռու տեղէ եկած ենք և քաղաքին  
մէջ հաց չկրցանք ձարել»: Նէ ըսաւ որ իր ոտքերը անդամալոյծ ըլ-  
լալով և իրմէ զառ տանը մէջ ուրիշ անձ մը չըլլալով՝ չի կրնար  
դուռը բանար, որովհետեւ ամէնքը գացեր էին աստուածներուն համար  
մատաղ կատարելու:

Մար Մարի աղջկան ողբալի վիճակին խղճալով՝ ըսաւ «Տեառն  
մերոյ Յիսուսի՝ Քրիստոսի անունով, ելի՛ր և քալէ՛»:

Աղջիկը անմիջապէս ոտքի ելաւ և բանալով դուռը՝ ներս հրամ-  
ցուց հրաշագործ այցելուները: Նէ ըսաւ անոնց «մեծապէս կը ցաւիմ  
որ պիտի չկրնամ գոհացում ալ ձեր փափաքին, որովհետեւ թագա-  
ւորին հրամանով այս երեք օրուան մէջ կրակ պիտի չվառուի, յան-  
ցաւորը կ'այրուի կրակի մէջ»: Մար Մարի անոր պատասխանեց և ը-  
ցաւորը կ'այրուի կրակի մէջ: Մար Մարի անոր վառել զքեզ», և ձեռքէն  
սաւ «Մի՛ վախնար, որեւէ մէկը պիտի չկրնայ վառել զքեզ», և ձեռքէն  
բռնելով տարաւ թոնիրին քով որ կրակ վառէ: Էֆրաթիա այլևս չմեր-  
ժոյց:

Պիտի  
Արտակ Ալպոյանեանի  
Գանիրէ — Մատարիս

Մինչ այդ, կառավարութեան պաշտօնեաները մուխ և ծուխ նըշմարելով քաղաքին մէջ՝ չորս կողմ հետազննեցին ճարելու համար վառուած կրակին վտայը և շատ չանցած երբ դռան որ թագաւորին տունէն կը բարձրանար ծուխը՝ անմիջապէս թագաւորին իմաց տուին:

Թագաւորը շտապեց դէպի իր պալատը և ներս մտաւ ու մեծ արմանք ու զարմանքով դիտեց իր էֆրատիա դուստրը որ ապաքինած՝ թոնիրին կողքին կեցած հաց կը թխէր և Մար Մարի ոտքի վրայ կանգնած հացի կը սպասէր:

Թագաւորը Մար Մարիին մօտեցաւ և հարցուց — «Դու ըն ո՞վ ես»: Ան պատասխանեց — «Կենդանի Աստուծոյ ծառան եմ»: Թագաւորը երբ դտաւ իր աղէկը կատարեալ առողջացած, հարցուց Մար Մարիին թէ երբ աստուածները չկրցան բուժել զայն՝ արդեօք ո՞վ բժշկեց: Ու յարեց թէ անոր բժշկութիւն տուողը՝ Յիսուս թագաւորն էր:

Այժմ թագաւորը աւելի հեռաքրքրուած՝ հարցուց թէ ո՞վ էր այդ Յիսուսը: Ի պատասխանի՝ Մար Մարի ըսաւ — «Կենդանի Աստուծոյ որդին է, ինքն է երկնքի և երկրի ստեղծողը»: Ասոր վրայ թագաւորը կ'ուզէ իմանալ թէ իրենց աստուածները ինչո՞ւ հիւանդներ չեն կրնար բուժել: Մար Մարին կը բացատրէ թէ անոնք ճշմարիտ աստուածներ չեն, այլ միայն մարդիկ խարելու և զանոնք Աստուծմէ հեռացնելու համար կուռքերու մէջ բնակող պարզ սատանաներ:

Այն ատեն թագաւորը զայրացաւ և Մար Մարիին ձեռքէն բռնեց ու տարաւ կռատունը, ուր հոծ ժողովուրդը հաւաքուած էր, և ըսաւ անոր — «Եթէ քու Աստուածը մեր աստուածներէն աւելի զօրաւոր և կարող է, մտի՛ր այս տաճարը և Աստուծոյ զօրութեամբը հրաշքդ ցոյց առեր, արտաքսէ սատանաները որպէսզի մենք տեսնենք թէ անոնք սատանաներ են, որպէսզի ձեր Աստուծոյն հաւատանք»:

Իսկոյն Մար Մարի Աստա անուն աշակերտներէն մին իր քովը կանչեց և ըսաւ, «Ներս գնա և խարեբայ սատանան իր ընկերներով դուրս վանէ կուռքերէն»:

Աստա ներս անցաւ և կուռքերուն մէջ բնակող սատանաներուն ըսաւ — «Յիսուս Գրիստոսի առաքեալը Մար Մարի կը հրամայէ ձեզ Տիրոջ զօրութեամբ որ անմիջապէս ձեր տգեղ կերպարանքով դուրս ելլէք և անգամ մըն ալ այս տեղ ոռքչկոխէք»:


Սատանաները առանց այլ և այլի ընդհուպ դուրս եկան անհաճելի ձևերով և անհետացան եթերին մէջ: Թագաւորը սոսկաց վախէն և Մար Մարիին ոտքերուն առջև իյնալով՝ ըսաւ, — «Ձեր Աստուած Յիսուսը մեծ է և իրմէ զառ ուրիշ Աստուած չկայ»: Այն ժամանակ Մար Մարի թագաւորին և ամբողջ ժողովուրդին բացատրեց քրիստոնէութիւնը և անոնցն պատակը, և ապա զանոնք քրիստոնեայ մկրտեց: Մար Մարի թագաւորին պալատին մէջ գտնուած թոնիրին տեղը և



կեղեցի մը շինեց և թոնիրն ալ վերածեց մկրտութեան աւազանի:

Մար Մարի Բերքուկ եկաւ և Եուսուֆ անուամբ անձին տունը իջեանեցաւ, որ հրաշագործութեամբ հաւատքի բերաւ և մկրտեց զանիկա որպէս քրիստոնեայ: Այդ ժամանակ Եուսուֆ կեղեցի մը կառոյց որ յորջորջուեցաւ Եուսուֆի վանք: Շատ հաւանական է որ Բերքուքի Գորիա կոչուած թաղին մէջ գտնուած աւերակ տաճարը այդ հնապատմական եկեղեցին է: Ակնյայտօրէն քրիստոնէութիւնը Բերքուքի մէջ համեմատական ծաւալներ դասաւ:

Մար Մարի դէպի Տարապըր քաղաքը գնաց և սակայն ուշ առն



ԲԵՐՔՈՒՔ—ԳՈՐԻԱ

հասնելով՝ ստիպուեցաւ քաղաքին դուրսը գիշերել: Առաւօտուն իր աշակերտը քաղաք ղրկեց հաց գնելու: Ատտա երբ շվերադարձաւ, Մարի իր աշակերտներով ստիպուեցաւ քաղաք երթալ և գինքը փնտռել: Բաղաքին մէջ դտան գինքը Ատըրին թագաւորին պալատին դիմաց դրան մը առջև նստած: Մար Մարիին աշակերտներէն մին՝ Անասիմէս մօտենալով անոր՝ հարցուց թէ ինչո՞ւ այդքան առնն հոտ նստած էր: Ատտա պատասխանեց թէ քաղաքին մէջ հաց չկար և իրեն կին մը ըսած էր որ իր ետեէն երթար և որ այդ տունը մտած եւ տակաւին դուրս ելած չէր: Այս խօսքին վրայ կինը դուրս եկաւ ու առաւ հաց բերաւ:

Մար Մարի հարցուց այդ կնոջը թէ հանդիպակաց պալատը որո՞ւնն էր: Կինը ըսաւ թէ թագաւորին կը պատկանէր: Նոյն պահուն թագաւորին դուստրը սպասաւորներու ուսերուն օժանդակութեամբ պատուէն դուրս եկաւ: Մար Մարի խղճալի վիճակի մէջ տեսնելով

զինքը, հարցուց սպասաւորներու անոր տկարութեան մասին: Անոնք պատմեցին թէ նէ շատոնց դաժան հիւանդութեան մը հառուածին պատճառաւ ենթարկուեր է այդ վիճակին: Մար Մարի խղճալով աղջկան վիճակին, դարձաւ անոր և ըսաւ — «Ո՛վ աղջիկ, նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով, ոտքի կանգնէ և քալէ»: Աննկարագրելի էր աղջկան ուրախութիւնը երբ միւս մի նակ սկսաւ քայիլ՝ բուժուած ըլլալով, և առ ի շնորհակալութիւն սուրբին ձեռքերը համբուրեց:

Թագաւորը որ այդ օր տունը կը գտնուէր՝ իր դուստրին բժըլկութեան լուրը անմիջապէս հաղորդուեցաւ իրեն: Մար Մարի ներս հրամցուեցաւ թագաւորին ներկայութեան: Թագաւորը հարցուց իրեն — «Ո՛վ ես դուն, Աստուած ես»: Մար Մարի պատասխանեց, — «Աստուծոյ ծառան եմ»: Թագաւորը ուզեց զիսնալ թէ ի՞նչ էր իր վարդապետութիւնը և ի՞նչ աստուածներ կը պաշտէր որ այնքան հրաշքներ գործելու կարողութիւնը ունէր: Ան յարեց թէ իրենք քրիստոնեայ են և Աստուծոյ որդւոյն Յիսուսի կ'երկրպագեն և իր անուամբ հրաշքներ կը գրծեն:

Քաղաքին մէջ գտնուած բոլոր հիւանդները Մար Մարի բժշկեց և ապա թագաւորը և բոլոր ժողովուրդը քրիստոնեայ եղան: Քրիստոնէական հաւատքը վառ պահելու համար, Մար Մարի Աստան թողուց այդ քաղաքին մէջ:

117—138 թուականներուն երբ Հռոմայեցիներուն կրօնական սեղմունքները քրիստոնեաներու հանդէպ տակաւին կը շարունակուէին բռուն կերպով, Հռոմայեցի կղերականներ սկսան դէպի Արևելք փախչիլ: Ասոնցմէ մին էր Տօքրիթիս, որ հասաւ մինչև Քերքուք և Շահկերտի վարդապետին հրամանով այդ քաղաքին առաջնորդ եղաւ: Մար Տօքրիթիս Քերքուքի մէջ հկեղեցի մը կառոյց:

\*  
\*  
\*

Կիրակի օր՝ 26 Օգոստոս 409ին մօտակալ զիւղերէն և քաղաքներէն 8940 քրիստոնեաներ դատարան բարուեցան: Քահանաները ձեռքերնին կապուած՝ խուցի մը մէջ բանտարկուեցան, իսկ միւս հաւատացեալները հարցաքնուեցան և Մեսիան չուրանալնուն պատճառաւ սրէ անցուեցան, ուրիշներ կրակին մէջ ողջ ողջ այրուեցան, ումանք ալ սղոցի յօշոտունքներուն տակ մեռան:

Այն ժամանակ Թահմաղկերտ հրամանատարին հեռ գտնուող քաղաքապետներէն մին մօտեցաւ քահանաներուն և հարցուց թէ ո՞վ էր իրենց պետը: Ամէնքն ալ լուռ կեցան:

Այդ պահուն քերքուքի մէջ գտնուող Տինտուի անունով որբ տղայ մը, քաջութեամբ մօտեցաւ վարդապետ-քահանաներուն և ըսաւ. «Ո՛վ մեր հայրեր, քաջալերուեցէք Տէրն մեր Յիսուս Քրիստոսով

և մի՛ վախնաք, թշնամիներնուդ պատասխանեցէք, հակառակ պարագային, Քերթուքի հովուութիւնը մեզի տուէք և այն ատեն ձեզ նեղողներուն մենք կը պատասխանենք և իրենց մեզի համար սահմանած չարչարանքներուն կը դիմանանք»:

Շահկերթի քահանաները ի մի հաւաքուելով տեղւոյն վրայ կ'որոշեն Տինտուիւնը Քերթուքի հովիւ կարգել: Ապա իրեն ըսին. — «Ո՛վ մանուկ, արժանի ես հովիւ կարգուելու, դուն եղիան և Դաւիթն եղար այս նեղ պարագային», և ձեռքերնին վրան դնելով՝ օրհնեցին զինքը, և իրենք ամէնքն ալ ջարդուեցան: Այդ ժամանակէն սկսեալ առաջնորդական մայր աթոռը Քերթուքի մէջ հաստատուեցաւ, ուր կը մնայ մինչև այսօր անասան:

\*  
\*  
\*

Ծիրին անուն կին մը հաց թխելու ատեն երբ կ'իմանայ որ քրիստոնեաները կը դարնուին, հացը մէկդի կը թողու, մէկ երեսան ուսին առած և միւսին ձեռքէն բռնած՝ կը փութայ դէպի զոհարանը: Ճամբան թէյթան տեղը՝ Թանձազկերտին պատահելով իր ձիուն պախուրձէն կը բռնէ և կ'աղաչէ որ ինքն ալ այդ սուրբերուն հետ զոհուի: Թանձազկերտ այդ կնոջ վրայ շատ զարմանալով կ'ըսէ, — «Ո՛վ կին, երախաներուդ խնայէ և այդ անպէտ խելքէդ վաղ եկուր»: Սակայն երբ կը տեսնէ թէ կարելի չէ զինքը իր դիտումէն ետ կեցնել՝ դահիճին կը հրամայէ որ այդ կինը և իր մեծ տղան զլխատէ: Հրամանը իսկոյն կը կատարուի: Պղտիկ տղան անմիջապէս կը նետուի անոնց զիակներուն վրան և ինքն ալ կը սպաննուի:

Այդ միջոցին Թանձազկերտ կը զարմանայ թէ ինչպէս ժողովուրդը միահամուռ ուրախութեամբ կը նահատակուի քրիստոնէութեան սիրոյն համար: Երբ այս բաները կ'անցնէին մտքէն՝ յանկարծ վեր նայեցաւ և տեսաւ զօրաւոր փայլուն լոյս մը, որ նահատակներուն վրայ կ'իջնէր և լոյսէ սանդուխներ որոնց մէկ ծայրը դէպի երկինք և միւսը դէպի վար երկարած, որոնց վրայէն մէկուն զլխին գեղեցիկ պսակ մը կը դնէր: Եւ հոն Յիսուս ամէն մէկուն զլխին գեղեցիկ պսակ մը կը դնէր: Թանձազկերտ անմիջապէս հաւատքի եկաւ և գործած մեղքերուն համար զղջաց և դառնօրէն լացաւ և ըսաւ, — «Ես ալ քրիստոնեայ եմ», և ապա եկեղեցի մտնելով մկրտուեցաւ:

Թանձազկերտ ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով ըսաւ. — «Ո՛վ Տէր Յիսուս, արդեօք այս սուրբերուն արիւնը թափելուս համար պիտի ներե՞ս ինձի. բայց ես գիտեմ որ անյիշաչար ես և կ'ուզես որ մեղաւորները զղջան և փրկուին: Ո՛հ, գործած անուիլի մեղքերուս համար կ'ողբամ, ո՛վ տէր, ո՛չ միայն աչքի արցունքովս՝ այլ և իմ արիւնովս այդ մեղքերը սրբելու պատրաստ եմ»: Եղծերտ թագաւորը Թանձազկերտին քրիստոնեայ ըլլալու լուրը

առնելով վերջին ծայր կը զայրանայ և Պաճերմայի քաղաքապետ Սօրինը կը զրկէ որ Բերքուքի քրիստոնեաները ջարդէ և ջանայ թանձազկերտը իր նոր հաւատքէն հրաժարեցնել:

Երբ Սօրին կը տեսնէ որ թանձազկերտ իր նոր հաւատքին հաստատուն կառչած կը մնայ, այն առհն կը սկսի չարչարել զայն և կը Եղճերտ թագաւորին:

Եղճերտ կը հրամայէ Սօրինին որ թանձազկերտը լաւ մը չարչարելէ վերջ՝ գլուխն ի վար խաչը հանէ: Սօրին բանտէն դուրս կը բերէ թանձազկերտը և կը հարցնէ թէ արդեօք հիմա ինք պատրաստ է նորէն արևը պաշտելու: Ան կը պատասխանէ թէ երբ արևէն աւելի թագաւորին հրամանագիրը կը ցուցնէ և կ'ըսէ թանձազկերտին՝ Սօրին՝ զի աւազակներու պէս պիտի խաչեմ»: Ի պատասխանի՝ թանձազկերտ կը պատասխանէ — «Ես կը փափաքեմ որ իմ աիրով, Յիսուսի պէս խաչէք զիս»:

Սօրին անմիջապէս հրամայեց որ թանձազկերտին մարմինը երկաթեայ սանտրով քերեն: Երբ Սօրին կը տեսնէ որ այս կարգի չարչարանքներով անգամ դարձի չեն կրնար բերել զինքը, իսկոյն Եղճերտ թագաւորին հրամանը կը կատարէ՝ ծառէ մը կախել տալով: Խաչուած թանձազկերտ աղօթեց և ըսաւ — «Ո՛վ Տէր Աստուած, յանցանքներուս ներէ, և մի զրկեր զիս քու արքայութենէդ, ո՛վ Տէր, հոգիս քեզ կը յանձնեմ» և մեռաւ:

Ահա այսպէս նահատակուեցաւ թանձազկերտ 25 Սեպտեմբեր 409 թուին և այս կրօնական պատերազմի մէջ իյնողներու թիւը 12000—15000 կը հաշուուի:


470 թուականներուն Բերքուքի Մար Մառն յիշեալ նահատակներուն զոհուած տեղւոյն վրայ վանք մը շինեց և յորջորջեց Մար կարմիր եկեղեցի կ'անուանեն և որ կը գտնուի Բերքուքի հիւսիսային կողմը մէկ մղոն հեռավորութեան վրայ: Ժամանակուայ ընթացքին, այս եկեղեցին հողին տակը կը թաղուի և սակայն նոյն տեղւոյն վրայ նոր շէնք մը կը կառուցուի:

Ի յիշատակ այդ պատմական նահատակութեան՝ ամէն տարի 25 Սեպտեմբերին մեծ հանդիսութեամբ պատարագ կը մատուցուի սոյն նուիրական եկեղեցւոյն մէջ ուր տեղացի քրիստոնեաներ հոծ բազմութեամբ կը փութան գնալ հոն աղօթելու և իրենց խորին յարգանքը բերելու նահատակներուն անիւններուն:

1937 թուին, առիթն ունեցայ Մար թանձազկերտ եկեղեցին այցելելու և նահատակներու անիւններուն խնկալից յարգանքս հատուցանելու:

\* \* \*

Քերքուք կ'իյնայ իրաքի հիւսիս արեւելեան կողմը և կը բաղ-  
կանայ երկու մասերէ Գորիա և Գալլ-ա: Գորիան նոր քաղաքն է,  
որ շինուած է հարթ հողի վրայ, իսկ Գալլ-ան հին քաղաքն է՝ որ  
կը գտնուի հսկայ և բարձր բլուրի մը վրայ: Գորիան Գալլ-ային  
միացնող քարաշէն կամուրջ մը կայ որ ի հնուց շինուած է: Ոմանք  
կ'ըսեն որ Գալլ-ան Արրաֆան է՝ Սուրբ Գիրքի մէջ յիշուած Արարատը:  
Քերքուք ունի այսօր շուրջ 200000 բնակչութիւն, առանց հաշ-  
ուելու մէջը շրջուն ցեղերը: Ժողովուրդը, որ մեծ մասամբ Բիւրա է՝



ՔԵՐՔՈՒՔ — ԳԱՂ-Ա

քրտախօս և թրքախօս է: Ան վաճառականական կեդրոնական դիրք  
ունի Բիւրախաանի շուկայի մէջ: Գլխաւոր արտադրութիւններն են.  
արմտիք, պաուղ, ոչխար, փայտ, հողագործական գործիքներ եւ այլն:  
Ջուրը լաւ է և կը ստացուի խողովակներու միջոցաւ, իսկ օդը բա-  
րեխառն բնոյթ ունի:

Քերքուքէն քանի մը մղոն անդին կը գտնուին Թարքալանի  
3500 տարուան աւերակները, ուրտեղի կատարուած պեղումները նոր  
պատմական յայտնութիւններ լոյս կ'ընծայեն Միթթանի թագաւորու-  
թեան շրջանին Միթթանի մշակոյթը հսկայաքայլ կը յառաջանար  
1500 թուին ն. Բ.:

Այդ պեղումներու շնորհիւ աւելի քան 3000 աղիւսա-տախտակ-  
ներ ճարուած են, որոնք Միթթանի թագաւորութեան պատմական  
պիտանի նշխարները կը կազմեն, Միթթանիք Հնդկա-եւրոպացիներ են,  
որոնք առենօք հարաւէն գաղթեցին այստեղ և տիրեցին պատկանեալ  
ժողովուրդներուն, ու ժամանակուան ընթացքին արգելք հանդիսա-

ցան ասորական ուժի յառաջխաղացումին: Չմոռնանք յիշելու որ Դանիէլ մարգարէին գերեզմանը Բերքուքի մէկ մզկիթին մէջ է:

Անգլիացիները գրաւեցին Բերքուքը 7 Մայիս 1918ին և սակայն լքեցին զայն նոյն ամսու 24ին մինչև Թրքո-անգլիական զինադադարը՝ 31 Հոկտեմբեր 1918, երբ վերջնականապէս ան դարձաւ որպէս անգլիական գրաւուած հող:

Բերքուքի մէջ կայ հսկայ Իրաք Նափթային Ընկերութիւն մը (Iraq Petroleum Company) սրուն առաջին հորը Բերքուքի մօտերը բացուեցաւ 1927ին և այսօր հորերու թիւը տակաւ առ տակաւ կ'աճի և արծաղորութիւնը զգալիօրէն կը շատնայ: Այս ընկերութիւնը կը պարփակէ կարգ մը խումբեր, որոնցմէ Տիար Գայուստ կիւլպէնկեան, և ընկերութեան 100ին 5ը իրեն կը պատկանի: Ընկերութիւնը ունի 1200 մղոն տարածութեան վրայ խողովակներ, 10 միլիոն անգլիական ոսկի արժողութեամբ, և որոնք երկու ճիւղերու կը բաժնուին, մէկը կ'երկարի դէպի Հայֆա իսկ միւսը Թրիփոլի: Այդ Իրաք-Միջերկրական խողովակներու գիծին պաշտօնական բացումը կաթարուեցաւ մեծ հանդիսութեամբ Բերքուքի մէջ 14 Յունուար 1935ին:

Յիշեալ ընկերութեան Բերքուքի մէջ հաստատուելով՝ Հայերու թիւը օրէ օր սկսաւ շատնալ և այսօր Բերքուքի մէջ կայ բարգաւաճ հայ գաղութ մը, շուրջ 160 տուն 900 անձերով՝ որոնց մեծագոյն մասը ընկերութեան մէջ կ'աշխատի: Իսկ մնացած մասը որպէս իրեն համար աշխատող՝ կը պարփակէ ինքնաշարժավար, կապալառու, խանութպան, դեղագործ, բժիշկ և այլ կարգի արհեստաւորներ: Ամէնքն ալ ունին բաւական բարեկեցիկ վիճակ:

Կայ հայ վարժարան մը, որ կը թուի հիմնուած ըլլալ 1927ին, մօտաւորապէս 120 երկսեռ աշակերտութեամբ: Եկեղեցին կը գտնուի վարժարանի շէնքին ներքը, և ցաւա՛ղի է ըսել որ տակաւին չունեցաւ գաղութը ազգապատկան շէնքեր բացառութիւն ըլլալով միայն գերեզմանատունը:

Նախ քան ընդհանուր պատերազմը, 120ական թուականներուն՝ Օսմանեան կառավարութեան իբր պաշտօնեայ՝ Հայեր ժամանակին կեսարիայէն, Էնկիւրիէն և այլ շրջաններէ եկած են Բերքուք և հոս քրիստոնեայ ընտանիքներու դստրերու հետ ամուսնանալով՝ այսօր անյայտ կը մնան. թէ և իրենց ներկայ ժառանգորդները սկսած են իրենց ինքնութեամբ հետաքրքրուիլ, և կը սիրեն պատմել թէ իրենց պապերը ժամանակին Հայեր եղած են:

ՎԱՐԴԱՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ



Հաւասարիմ եւ լաւ ծառայութեանց համար անգլիական կառավարութեան կողմէ վարձատրուած է Բրիտանական ընդհանուր ծառայութեան եւ յաղթութեան շքանշաններով (British General Service and Victory medals): Ունի բնօրինակ վկայականներ իրաքի Բարձր Գոմարտերէն, անգլիական ընկերութիւններէ, Է.Ն. Է.Ն.:

Ոչ կուսակցական: Ազգային սիրով վառ փրկած է շատ մը որբեր ու որբուհիներ իրաքի օջառներէն, որոնցմէ է Հրանդ Սաչեան՝ Զեյթունի չորս իշխաններու մէկ ընտանիքին անդամ:

1922ին Պարսալի ազգային վարժարանի Ուսումնական Խորհուրդի անդամ: 1934ին Պարսալի Թաղական Խորհուրդի անդամ, սակայն չհանդուրժելով անկանոնութեանց՝ 1937ին կը հրաժարի:

1925ին մեծ բափով կը հետեւի անգլիական գրականութեան, գրելով բազմազան յօդուածներ Պարսալի «Թայմզ»-ին մէջ Վօֆա Մընտի (Wox Mundi) այսինքն՝ «աշխարհի ձայն» ծածկանունին տակ: Իր բանասիրական եւ գաւեթական գրութիւնները խիստ շահեկան ըլլալով՝ կը գնահատուին մեծապէս եւ կը ստանայ «Միջագետքի Զուարթաբան» տիտղոսը:

Այս բերքէն զատ կ'աշխատակցի Լոնտոնի Massisին, Պոմպէյի Iran League Quarterlyին, Ռուսմանիոյ «Հայ Հանրագիտակ»-ին եւ «Գաղութահայ Տարեգիրք»-ին: Բարիքի «Հայ Բոյժ»-ին, «Հայաստանի Կոչնակ»-ին եւ սեփական բոլորակից Պոսթոնի Hairenik Weeklyին եւ Ռուսմանիոյ «Հայ Մամուլ»-ին: Իր շահեկան գրուածները կ'երեւան Բարիքի «Անահիտ»-ին, «Կեանք եւ Արուեստ»-ին եւ պ. Գաբաւանեանի «Գրպանի Տարեցոյց»-ներուն մէջ, ինչպէս նաեւ Լոնտոնի The Naff ամսագրին մէջ: Ասորագրած է շատ ամփոփ գրութիւն մը իրաքի Հայ արիւններու վրայ 20 ամեայ Յուշարձան 1918—1938 գիրքին մէջ: Ունի շատ մը գրութիւններ Լոս Անճէլոսի The Armenian Reporterին մէջ, Եւայլն, Եւայլն:

Գիտէ հայերէն, անգլիերէն, ֆրանսերէն, արաբերէն, իրաներէն, թուրքերէն, եւ Էսփերանթո ու քիչ մը գերմաներէն եւ հնդկերէն:

1929ին կ'ըլլայ հիմնադիր բաժանորդ աշխարհահռչակ անգլիերէն Encyclopaedia Britannica Համայնագիտարանին:

Իր սյազրած աշխատասիրութիւններն են.— 1. My Diary, 2. The Iraqi Hom Medicine, 3. Occult Sciences and Arts in Iraq, 4. A. Periplus in the Persian Gulf, 5. The Grass-Folk; or Notes on Pakhitaris. Իր անխալայներն են.— 1. Three Folks and Fifteen Tales of Iraq, illustrated (մեքենագրուած) 2. Short Historical Notes on Khuzistan, 3. Some Historical Notes on Shadi and Baghailah, 4. Ոսկեփնջիկ անգլիերէն նամակագրութեան, 5. Անգլո հայ առածանի, 6. An Historical Survey of the Armenians in Iraq. 7. Համառոտ ֆրանկանոսիւն անգլիերէն լեզուի, 8. Անգլիերէնի ուսուցիչը: Մամուլ տակ ունի The Oriental Polyglottic Guide: Պատրաստութեան մէջ ունի.— Յուշերու փունջեր, 2.



Ընթացիկ Անգլիերէն հայերէն գրպանի բառարան, 3. Ընթացիկ հայերէն Անգլիերէն գրպանի բառարան:

Այժմ քղրակցութեամբ կը հետեւի լրացուցիչ իրաւաբանութեան 3 ամեայ դասընթացի La Salle Extension University համալսարանը ի Շիֆակօ, որ յետ աւարտութեան պիտի ստանայ Պսակաւոր Օրէնից (LL. B.) տիտղոսը:

Հ. Հ.

## Դ Ա Շ Տ Ի Ա Ղ Բ Ի Ի Ր

Գիւղէն հեռու ծառապատ  
Չորակի մը մէջ լըռին,  
Ջուրը պաղուկ ու արժաք՝  
Կը մաներ ե՛րգ մը հետօին:

Օ՛ գիշերներն լուսնային,  
Լուսամարմին, մերկ ու պերն,  
Երկնի աստղերն կ'իյնային  
Մեր աղբիւրի գուռին մէջ:

Ու կը յորդէր ջուրը ջինջ,  
Եւ բուփերուն սակ անհետ  
Կը սողրսկէր, չունէր նինջ,  
Մութին մէջ թե՛լ մ'արփաւէտ:

Գիւղի աղբի՛ւրս մըքսանեղ.  
Անապատին մէջ թափուր,  
Այս պատուփիս բուժեղ դեղ՝  
Քու ծորակեղ քաս մը ջո՛ւր....:

## Գ Ի Ի Ղ Ի Ժ Ա Մ

Ես կարօտով եեզ կը յիշեմ յարածամ,  
Քե՛զ կ'որոնեմ ու չեմ գրսներ, գիւղի՛ ժամ:  
Հոս ժամուորներն չեն խոնարհիր Աստուծուն,  
Չեն ակնածիր. իրարու չեն սար ողջոյն:  
Ա՛յս ո՞ւր են քու լաչակաւոր, երկիւղած  
Մամիկներդ. մեր պապերը սրբազգած:  
Ջերդ արեւ հոս, անգարժ մութեր կը վառեն,  
Կարօն ունիմ ես քու դողդո՛ջ կանթեղին:  
Հոս խորք չըկայ, մակերես է ամէն ինչ,  
Կարծես չըկայ աստուածավախ սիրտ մը ջինջ:  
Մինչ գանգրդ հոն, կ'երգէր փառքդ պանծալի,  
Հոս զօղանջը մահե՛րգ մըն է զբխալի:

## Յ Ո Ր Ե Ա Ն Ի Ա Ր Տ Ե Ր

Ահա կանգներ եմ նորէն,  
Անմահ գիւղիս ցորեանի,  
Այեծըփուն, ծիրանի  
Արտերուն մեջ ոսկեղէն:

Արտերուն մեջ ոսկեղէն,  
Արեւին սակ հրամագ,  
Հրնձուորներ ժիր, ձեռնահաս,  
Արե՛ւ, արե՛ւ կը փաղեն:

Արեւ՛, արեւ՛ կը փաղեն,  
Լո՛յս կը սանին դեպի տուն,  
Ի՛նչ արդար շահ, օրհնութի՛ւն,  
Իրենց խոփէն, մանգաղէն:

\*  
\* \* \*

Բայց ո՛ւր են Տէր. ո՛ւր են Տէր,  
Ընդարձակ ծով ծիրանի  
Արտերը մեր ցորեանի.  
Ուր մեր կեանքը միշտ կ'անէր:

Կը բաշխէինք մենք բարի՛ք,  
Գիւղին, փաղին ամենուն,  
Կ'ըլլային զոհ ու ժրպատն՝  
Անթիւ, քրտուառ, հե՛զ մարդիկ:

Քու յոյս սանարդ ալ անմաս  
Չէր մընար մեր ալիւրէն,  
Զի կը շինուէր, յուսեղէն,  
Յիսուս որդիդ ու սուրբ մաս:

Մըռայլ խուցի՞ս մեջ օտար,  
Թէ արտերուս մեջ հասուն  
Կանգներ եմ ես երազուն,  
Ու կը խոկամ անդադար:

Օ. ԶԱՐՄՈՒՆԻ

ԶԱՐՄՈՒՆԻ Օ. — Կը կոչուի նաեւ Օննիկ Արամայիս Բանիկեան: Ծնած է Մալկարա, 1905 Յունուար 6ի Ս. Ծննդեան առաւօտուն: Իր մանկուրթիւնը անցուցած է Մալկարայի իսկապէս բանաստեղծական բնութեան մէջ: Գպրոցական տարիքը բեւակոխելուն մեկնած է Ռոսոսոյ եւ յանախած է «Ս. Յովհաննեան» վարժարանը: Ընդհանուր պատերազմին, երբ արձակուրդով Մալկարա իր ծնողքին հով կը գտնուէր, ընթացիկով տարագրուած է դէպի Տերձօր, եւ տեսած ու ապրած է ախորի բոլոր զրկանքներն ու չարչարանքները, տեսած է իր ցեղին անկարագրելի զուլումը: Հրաժարով վերադարձած է Հալէպ, ուր բռնուած է ծանօթ շարդին եւ մագ մնացած է որ նահատակուի:

Ախորէն վերադառնալէն յետոյ, իր ծննդավայրի «Մամիկոնեան» վարժարանին մէջ շարունակած է ուսումը եւ աւարտած է 1922ին: Իր ցոյց տուած յառաջդիմութեան եւ յաջողութեան համար անմիջապէս նոյն վարժարանին մէջ, հազիւ 17 տարեկան, նշանակուած է օգնական ուսուցիչ:

1922 Հոկտեմբեր ամսոյ վերջաւորութեան, Քեմալականներուն ձրգուելով Մալկարան, ստիպուած է Պուլկարիա ապաստանիլ: Մինչեւ 1928ը գանազան արհեստներու հետեւած է, առանց լիելու գրականութիւնը: 1929ին պատճօնի կոչուած է Ֆիլիպքի «Վարդանանց-Վառվառեան» վարժարանին մէջ, ուր պատճօնավարած է երեք տարի: 1932ին հրաւիրուած է Ռուսնուքի «Ս. Մեսրոպեան» վարժարանը, ուր կը պատճօնավարէ եօթը տարիք ի վեր:

Գրականութեամբ սկսած է զբաղիլ եւ ոտանաւորներ գրել իր դրպրոցական շրջանին: Իր տպագրուած առաջին բանաստեղծութիւնը եղած է *Իմ խեղճ աչեր* վերնագրով հերթուած մը, Վարդան Գեորգեանի Վառնայի մէջ հրատարակած «Հրագրան» թերթին մէջ, 1924 բուականին: Ասկէ յետոյ հետզհետէ սկսած է աշխատակցիլ Ֆիլիպքի «Հայաստան»-ին, Սոֆիայի «Արաբ»-ին, «Նոր Արաբ»-ին, «Ազատ Խօսք»-ին, «Ռազմիկ»-ին, «Մանիս»-ին, Տարեգիրքերու եւայլն:

Աշխատակցած է նաեւ ոտանաւորներով, պատմութեամբներով, եւ բրդրակցութիւններով Բարիզի «Յառաջ»-ին, Սելանիկի «Հորիզոն»-ին, Արեւնի «Նոր Օր»-ին, Կ. Պոլսոյ «Ազդարար»-ին, «Արեւելք»-ին եւ ուրիշ թերթերու, գանազան ծածկանուններով:

Իր հրատարակութիւններն են.— «Ծաղիկ կը փետտն» 1928, «Գործ երկնքի տակ» 1932, «Երգ Յաւերժական» 1926. «Անու» 1928: Բոլորն ալ բանաստեղծութիւններ:

# ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Մ Ի Ն Չ Ե Ի 1908)

Շարունակութիւն «Գաղթ. Տարեգիրքի» Ա. տարիէն

43. Ընթերցասիրաց Ընկերութիւն Սամաթիոյ (1857—...) Գում-  
Քարուի վերոյիշեալ համանուն ընկերութեան նմոյշին վրայ կազ-  
մուած: Տեղեկութիւն կը պակսի: Մանուց Ընկերութեան մէկ նոր  
անուանափոխութիւնը կ'ենթադրուի:

44. Երբայրասիրական Ընկերութիւն (1857—...) կը կազմուի  
Գում-Քարուի մէջ «Անճնուէր Ընկերութեան» օրինակին վրայ, թա-  
ղին մէջ չափահասներու ձրի դասախօսութիւն ընելու համար:

45. Իւսկիւսարի Ուսումնասէր Երիտասարդաց Վերձանութեան Թան-  
գարան (1857—...) Ժողովարան մը կամ ակումբ մը, որուն անդամ  
էին Գր. Օտեան, Մարտիրոս Միւհէնախեան, Մկրտիչ Աղաթոն, Յով-  
սէֆ Շիշմանեան (Մերենց) եւ այլն:

46. Ընթերցասիրաց Ընկերութիւն Խասգիւղի (1857—...) որուն  
հիմնադիր նախագահն էր Յովհաննէս Թիւյսիւզեան,

47. . . . . Ընկերութիւն\* (1857) նպատակն էր զարկ տալ  
մարդասիրական գործին: Հիմնուած է Սասգիւղի մէջ, Թաթերախումբ  
մը կը կազմակերպեն և ներկայացուցներ կու տան ազգ. վարժարա-  
նին մէջ: Բաւական յաջողութիւն կը գտնեն: 1860 Փետր. 26ին այս  
խումբը Բերա Նաումի իտալական թաթրոնին մէջ կու տայ չքեղներ-  
կայացում մը, առաջնորդութեամբ Գր. Էքզեանի: Սաղն էր Մոն-  
թիի «Արիստոգէմ»ը:

48. Բարիզի Հայկազեան վարժարանի օժանդակ ընկերութիւն (1857-  
1859) Բարիզի մէջ «Երից վարդապետաց» տեսչութեան տակ բացուած  
էր 1855ին Հայկազեան վարժարանը: Այս վարժարանին հոգը ստանձ-  
նելու համար 1857 Մարտ 29ին Գերագոյն ժողովը կը կազմէ Կ. Պոլ-  
սոյ մէջ խնամակալի ժողով մը որուն անդամ էին, Պետրոս ամիրա  
Խորասանճեան, Գրիգոր Աղաթոն, Կարապետ Երամեան, Մանուէլ Նէվ-

\*) Անանուն յիշուած ընկերութիւններու յիշատակութեան հանդի-  
պած եմ առանց անունի, գրաբնական պատճառներով կամ գրողներուն  
անփութութեան հետեւանօք, եւ ես չեմ կրցած դժբախտաբար ստուգել:

րնւզեան, Մարտիրոս Միւհէնտիսեան, Մկրտիչ Մոմճեան, Գրիգոր Օտեան և Յակոբ Սիրուհեան:

Այս մարմինը, մասնաւորապէս Խօրպսանճեան ամիրա անձնապէս, մեծ ջանք և զոհողութիւն ըրաւ վարժարանին համար, սակայն կարելի չեղաւ յարաճուն ծախքերուն դէմ դնել միակ անհատական միջոցներով: Ուստի խնամակալներու վերին հսկողութեան տակ կը կազմուէի նոյն մարմինը որուն նպատակն էր նպաստ հասցնել Բարիզի Հայկազեան վարժարանին:

Գերազոյն ժողովը 1857 Սեպտ. 24ին կը հաստատէ այս մարմինը և ամէն աջակցութիւն չի զլանար անոր բարգաւաճման համար, սակայն վարժարանը պարտքի տակ կը փակուի 1859ին:

Գրիգոր Օտեան որ այս ընկերութեան գլխաւոր հեղինակն էր Կ. Պոլսոյ մէջ հաստատուն երկրորդական վարժարան մը հիմնել նպատակ ընտրելով Բաժանորդական Ղնկերութիւն Հայոց նոր անունով կը փորձէ յարունակել այս ընկերութիւնը:

49. Հայկազեան Թատերական Ղնկերութիւն (1857 Դեկտ.—...) կը կազմուի Օրթաքիւղի մէջ, որուն նպատակն էր թատրոնի յատուկ շէնք մը ունենալ: Ընկերութեան հիմնադիրներն են Գարրիէլ Խուրեան շէնք մը ունենալ: Ընկերութեան հիմնադիրներն են Գարրիէլ Խուրեան, պաշտպան և երաժիշտուր ընկ. Գրիգոր Քէհրիպարճեան՝ Նախագահ, Ստեփան Իշլէմճեան՝ տեղակալ նախագահի, Թովմաս Յակոբեան, Մաստիկոս Իշլէմճեան՝ տեղակալ նախագահի, Յովհաննէս Տ.Մ. Նուկ Ծահինեան, Ստեփան Չալքեան գանձապետներ, Յովհաննէս Տ.Մ. Վանանդեցեան՝ ատենադպիր, Գրիգոր Տէյրիմէնճեան գործակալ, Սարգիս Տ. Մ. Վանանդեցեան:

50. . . . . Ղնկերութիւն (1857...) հաստատուած է Սկիւտար Ս. Կարապետի թաղին մէջ շէնք մը աղջկանց վարժարան մը հիմնելու՝ նպատակով: Գլխաւոր հիմնադիրն է Եազըճի Պօղոս աղա: Այս ընկերութիւնը 1858ին Չափի օրերէն սկսեալ՝ հեղեղեցիին մէջ պատարագի ժամանակ դաշնակ զարնելու ձեռնարկ կ'ընէ, սակայն քարոզիչ Մկրտիչ եպ. Մարաշի պատրիարքարան կը դիմէ և հրահանգ քարոզիչ Մկրտիչ եպ. Մարաշի պատրիարքարան կը գրուի թէ՛ ամենեւին չըլլար. ի կ'ուզէ: Պատրիարքարանին իրեն կը գրուի թէ՛ ամենեւին չըլլար. ի կ'ուզէ: Պատրիարքարանին իրեն կը գրուի թէ՛ ամենեւին չըլլար. ի կ'ուզէ: Պատրիարքարանին իրեն կը գրուի թէ՛ ամենեւին չըլլար. ի կ'ուզէ: Պատրիարքարանին իրեն կը գրուի թէ՛ ամենեւին չըլլար. ի կ'ուզէ:

51. . . . . Ղնկերութիւն (1857...) կազմուած է Արմենակ Հայկունիի նախաձեռնութեամբ, բաժանորդագրութեամբ թատերական ընկերութիւն մը, որ սակայն յաջողութիւն չէ ունեցած: Նոյն տարին իր այդ ընկերութեան գործ՝ կը հրատարակուի Մուսայի Մասեաց թատերական յարթաթաթերթը որ 1857 Սեպտ. 7էն մինչև 1858 Յունվար հազիւ կրցաւ ապրիլ:

52. Աղխասախրաց Ղնկերութիւն Միջագիւղի (1858 Սեպտ. 15—1865—...) կազմուած է Օրթաքէօյի աղքատներուն խնամարկութեան համար:

53. Բաժանորդական Ընկերութիւն Հայոց (1858 Նոյեմ. 32—1866) կը հիմնուի Գ. Օտեանի նախագահութեամբ, Սկիւտար Սէլամիյէի մէջ: Ընկերութեան անդամները 20 հոգի էին: Իրենց նպատակն էր նախ հաստատուն եկամուտ ապահովել և ապա բանալ դպրոց մը երկրորդական ուսմանց յատկացեալ, 25 մանչ և 25 աղջիկ վկայեալ աղքատներու ձրի դաստիարակութեան համար: Վարժարանը պիտի ըլլար գիշերօթիկ: Իսկ եթէ հասոյթները աւելի շատնային ուրիշ դպրոցներ ալ պիտի բանային: Այս նպատակով նախ հինգ տարի զրամ պիտի հաւաքէին: Ընկերութեան կանոնագիրը Հոգեւոր և Գերագոյն Ժողովներու կողմէ կը վաւերացուի և 1860 Յունվար 19ին Գէորգ Պատրիարք մասնաւոր կոնդակով մը հրաւէր կը կարգայ ժողովուրդին ձեռնտու ըլլալ այս ընկերութեան: Միեւնոյն ատեն պատրիարքը ասոր զլիսաւոր թաղերէն մէկ մէկ քահանայ կը նշանակէր ժողովուրդէն հանգանակութիւն ընելու համար: Այս ընկերութիւնը իրականին մէջ Բարիղի Հայկազեան վարժարանի նպատակով ընկերութեան շարունակութիւնն էր և վարժարանին փակուելէն յետոյ այս ձեւով կը շարունակուէր:

1866ին Բերայի մէջ կը բացուի Հայկազեան վարժարան մը գիշերօթիկ հաւանօրէն այս ընկերութեան ջանքերով, սակայն նոյնիւկ տարին չի կրնար բոլորել:

54. Հայկազեան Ընկերութիւն (1859 Յունուար 1—1864) հաստատուած Պէշիկթաշի մէջ «նախակրթական գրքեր ապելու և աժան օախելու» նպատակով: Այս ընկերութիւնը կազմուած էր «ի յիշատակ անմահ հոգւոյն, Յակոբ պատրիարք Նախանի, Պաղտասար պատուելի, Գրիգոր պատ. Փէշիմայձեանի, Նիկողոս Զօրայեանի, Տիկին Երանուհի Իէմէճեանի»: Ունի 28 «մշտնջենաւոր ըստանորդ» որոնց մէջ են Ալեքսան Խօրասանձեան (հիմնադիրը), Անդրանիկ պէյ կրճիկեան, Գառնիկ Յովակիմեան, Գրիգորիկ Կ. Պալեան, Յակոբ Ոսկան, Յակոբիկ Կ. Պալեան, Յարութիւն Մարգարեան, Յովհաննէս Յակոբեան, Նշան Հարենց, Ռուբէն Բիւրքճեան եւայլն: Գլխաւորապէս ստատուած է Մ. Գարագաշեանի դասագիրքերուն ապագրութեան: 10էն աւելի գիրքեր տպած է: «Բերական», «Պարտք Տգայոց», «Նախագիտելիք Մանկանց», «Թուագիտութիւն համառօտ», «Բերականական վերլուծութիւն», «Բերականութիւն», «Անգլութի Պետրոս», «Բարոյականք Պլուտարքայ» երկու հատոր: (Մտ. Արմ. 1863 թ. 189)

55. Բարեսիրական Ընկերութիւն (1850— . . . ) հաստատուած Պէշքօղ թաղին մէջ, հաւանօրէն կրթական նպատակով:

56. Ժողովրդական Ընկերութիւն (1859— . . . ) կը հաստատուի Պալատ թաղին մէջ, դպրոցական գործին զարկ տալու նպատակով: Իր ջանքերով վերաշինուած է Խորէնեան վարժարանը:

57 Ուսումնասիրաց Ընկերութիւն (1859— . . . .) կը հիմնուի Թօփ-  
գափուի մէջ և կը ստանձնէ Թաղին վարժարանին հոգը 1865ին այս  
ընկերութիւնը շինելու յաջողեցաւ Վարդուհեան աղջկներու վարժարանը:

58. Տպագրական Ընկերութիւն Հայոց (1859 Յունիս 1— . . . .)  
հրատարակչական ընկերութիւն մը որուն գործունէութիւնը միշտ  
անձանօթ կը մնայ:

59. Մուրաշեան եւ Ռափայիեան վարժարանի Սանուց Ընկերու  
քիւնը (1859— . . . .) կազմուած է նոյն վարժարանին նախկին սանուց  
նախաձեռնութեամբ, կրթական նպատակով և կարճատե կեանքով:  
Թ. Թէրզեան և այլք կարեւոր դեր կատարած են:

60 . . . . . (1860) Առաջին Հայ յեղափոխական մար-  
մինը կազմուած Միքայէլ Նալբանտեանի խորհուրդով և Թելադրու-  
թեամբ: Նալբանտեան 1859ին արտասահմանի մէջ կը ծանօթանայ  
ուսու յեղափոխական գործիչներու՝ Քակունիի, Հերցէնի, և ուրիշնե-  
րու հետ և կը դառնայ անոնց գործակից: Իրենց ծրագիրն էր սլաւ աղ-  
գերու աշտատգրութիւնը, ասոնցմէ ամէն մէկը պիտի ստանար ինք-  
նավարութիւն և ամէնքը միասին պիտի կազմէին Գաշակցական պե-  
տութիւն մը: Այս նպատակին հասնելու համար Աւստրիոյ, Թուրքիոյ  
և Բրուսիոյ սլաւ ժողովուրդները պիտի ապստամբէին: Նալբանտեան  
կը յաջողի համոզել որ Հայաստանն ալ այդ ինքնավար երկիրներէն  
մին ըլլայ: Այս նպատակով Կ. Պոլսոյ մէջ կը կազմէ այս մարմինը որ  
ունենը չենք գիտեր: Այս մարմինին պեան էր Մեղուի խմբա-  
գիր Յարութիւն Սվաճեան, Իսկ անդամներուն մէջ էին Ալեքսան Խօ-  
րասանճեան, Գէորգ Զարդարեան, Եղիա Տնտեսեան, Յ. Գոլանճեան,  
Մ. Փափաղեան, Ա. Համամճեան: Երագրուած էր Հայկական ապս-  
տամբութիւնը կիլիկիայէն սկսել: Այս նպատակով, 1862ին Տնտես-  
եան կը զրկուի Հաճըն իբր ուսուցիչ: Զէյթունի 1862ի ըմբոստու-  
թեան ալ մասնակից է այս մարմինը, որ դրամ և մարդ զրկած է  
Զէյթուն:

61. Ուսումնասենչ Ընկերութիւն (1869— . . . .) կը կազմուի Զմըշ-  
կածագեցի պանդուխտներու կողմէն իրենց ծննդավայրին քանի մը  
զիւղերուն մէջ դպրոցներ հաստատելու նպատակով:

62. Խնամակալուհի Տիկնանց Ընկերութիւն (1860— . . . .) կազմուած  
է ի նպաստ Ազգ. Հիւանդանոցի՝ կանանց կողմէ:

63. Աոսեան Ընկերութիւն (1860— . . . .) կազմուած ենիգարուի  
մէջ աղջկներու դաստիարակութեան նպատակու նպատակով: Սար-  
գիս պատրիարք 1861 Յունվար 25ին օրհնութեան կոնդակով մը կը  
հաստատէ ընկերութիւնը և անոր կանոնագիրը: Իր նպատակին չէ  
կրցած հասնել:

\*) Անձնուէր Ընկերութիւն կոչած են, սակայն սխալ է:

64. Թասերական Ընկերութիւն (1860— . . .) կազմուած Գում-  
Քառուի մէջ: Ընկերութիւնը խնդրամատոյց կ'ըլլայ պատրիարքար-  
նէն որպէսզի Գում-Քառուի Լուսաւորչեան աղջիկներու վարժարանին  
մէջ սրահը վարձքով իրեն տրուի, ներկայացուցներ տալու համար:  
Պատրիարքարանը կը մերժէ:

65. Համագրային Բարեգործական Ընկերութիւն (1860 Հոկտ. 30  
—1876?) հիմնուած է նպատակ ունենալով «ազգին որր, անտէր, չքա-  
ւոր տղաքը երկրագործութեան և արուեստներու զբաղեցնելու մի-  
ջոցները ի գործ դնել»: Իւրաքանչիւր անդամ կու տար արծին մէկ  
ոսկի Ընկերութեան հիմնադիրներն էին, Մկրտիչ Աղաթոն, Սերոբէ Ա-  
լիշան, Գրիգոր Աղաթոն, Յովսէփ Շիշմանեան, Սերոբէ Թագւորեան,  
Գրիգոր Օսեան, Մկրտիչ Պէշիքթաշեան (Ատենաղայի):

Անոնց զխաւոր նպատակն էր կիրիկիան զարգացնել: Հայ եւ  
կաթոլիկ զարգացած հայ երիտասարդները միացած էին այս նպատա-  
կին համար Այս ընկերութեան մէջ խօսած է Մ. Նալբանտեանց: Մեծ-  
կակ գումար մը հաւաքեցին և կաթոլիկ հայ մը, Տոքթ. Շիշմանեան  
— գրականութեան մէջ յետոյ Մերենց — կիրիկիա ղրկեցին ազարակ մը  
գնելու, և երկրագործական վարժարանի մը հիմնարկութեամբ՝ ըն-  
կերութեան նպատակը իրականացնելու համար: Հասուն՝ թէ կաթոլի-  
կութեան և թէ իր պատրիարքութեան շահերուն վտանգաւոր նկա-  
տելով կաթոլիկ հայ երիտասարդներու Հայերու հետ գործակցութիւնը,  
սկսաւ դաւել ու Բ. Գրան մատնելով Ընկերութիւնը՝ խափանեց անոր  
բարգաւաճումը: 1868ին Գրիգոր Աղաթոնի մահը զխաւորապէս պատ-  
ճառ եղած է այս ընկերութեան կազմալուծման:

1873ին դեռ կը յիշատակուի, իսկ 1876ին անոր քանի մը ան-  
դամները Արարատեան ընկերութեան նպատակով իրենց նախնական  
նպատակին ծառայելու փորձ մը կ'ընեն:

66. Արեւելեան Բարեար Ընկերութիւն (1861— . . . .) կազմուած  
Քիւրտիստանի առաջնորդ «հրաշագործ» Մկրտիչ վրդ. Տիգրանեանի  
նախաձեռնութեամբ, հաւանորէն քիւրտերը հայացնելու իր մտադ-  
րութեան օժանդակելու համար:

67. Արեւելեան Ընկերութիւն (1861) Թատերական նպատակով  
կազմուած է Բերայի մէջ: Նախաձեռնարկներն էին Առաքել Ալթուն  
Տիւրի եւրոպացիները: Յար Մերեմ Գուլի, Աղեքսանդր Մերեմ-Գուլի,  
Գրիգոր Սուրբաճեան և Գր. Յրէնկեան: Այս ընկերութիւնը Քաջի  
Գրիգոր Սուրբաճեանի վերածեց Արեւելեան Թատրոն անունով: Ընկերու-  
թեան հիմնադիրներն էին Ալթուն Տիւրբի եւրոպացիները, Գրիգոր Սուր-  
բաճեան, Մերեմ-Գուլի եւրոպացի: Թատրոնը վարձած էին հինգ տար-  
ուան համար: Թատրոնին բացման ներկայացումը տուին 1861 Դեկ-  
տեմբեր 14ին:

68. Երկրագործական Ընկերութիւն (1861—1863— . . .) կազմուած



Կեսարիոյ Էվէրէկ և Ֆէնէսէ զիւղերու բնակիչներէն: Հիմնադիրն է Կարպեա Փանոսեան, իսկ փոխ ատենապետը՝ Յարութիւն Հաճի Բէլէշեան, Ասենազպիրը՝ Եղիազար Մելիքեան և փոխ ատենադպիրը՝ Գէորգ Գլըճճեան: Ընկերութիւնը հինգ տարի պիտի աւելի: 1863ին ունէր 6—7 հարիւր անդամ, 5 դրուշ վճարումով: Իր նպատակն էր Էվէրէկի և Ֆէնէսի մօտերը հող գնելով երկրագործութիւնը մշակել և մասնաւորաբար մետաքսի և բամբակի բերքերուն աշխատիլ:

1863ին արդէն 150 հազար դրուշ հայթայթած և մետաքսի ու բամբակի մշակութեան վարկեր ըրած էր:

Ասկէ զատ ընկերութիւնը կը հետապնդէր արդի ֆօքթերաքիլիներուն նպատակը, վասնզի ընկերութեան հաշուոյն նպարտաճառի եւ ծխախոտի կրպակներ և սրճարան բացած էին որոնցմէ առետուր կ'ընէին: Նոյնպէս կու տար դրամի և նամակի առաքման, ինչպէս նաև ապրանքներու հայթայթման և աժան վաճառման համար զիւրութիւններ: Տարին անգամ մը ընկերութեան տարեգարծը կը տօնուէր: Խառ գիւղ, Գարա պղան, հացկերոյթով մը: (Կրպակ 1863 87 422)

69. Գրուքեան Կանանց Ընկերութիւն (1861—1863) Խառգիւղի Տիկնանց նախաձեռնութեամբ կազմուած թաղին աղքատներուն հոգածութեան համար:

70. Սրամեան Ընկերութիւն (1861 Փետր. 12— . . . ) «Կեսարիոյ մէջ աղջկանց վարժարան մը բանալու նպատակաւ»: Հիմնադիրներն են Մ. Մանուկ աղա Մանուկեան (ատենապետ), Գալուստ աղա Թախտապուրուհեան (Գանձապետ), Մատթէոս Ալվազեան (Ատենադպիր), Գրիգոր Բէլէկեան, Միքայէլ Ենովքեան, Յովհ. Կիւմիւշեան, Սարգիս Զամբէրթէնեան:

71. Հայրենասիրաց Սանուց Ընկերութիւն (1861— . . . ) Կ. Պոլսոյ մէջ կը գործէ: Նպատակը ծանօթ չէ: Կարելի է որ նոյն է նալպանտեանի կազմած ընկերութեան հետ:

72. Ընկերութիւն Հայ առակերսաց յԱրևուճի Բժեկական դպրոցի (1861— . . . ) որ երկրագործական ընկերութեան նմոյշին վրայ կազմուած է:

73. Տիկնանց Ընկերութիւն Պեթիկքաշի (1861) կը հաստատուի տեղւոյն դպրոցին իբր նպաստամատոյց:

74. Օգնական Ընկերութիւն (1861) կազմուած ի նպատակ Աղզ. Հիւանդանոցի, առանց երկար կեանք ունենալու: Կեդրոնը Բերա էր:

75. Ուսումնաստարած Ընկերութիւն . . . —1861) որ 1861ին իր անունը փոխած է և եղած է «Մատենադարան Ընկերութիւն»:

76. Մատենադարան Ընկերութիւն (1861— . . . ) անուանափոխութիւնն է Ուսումնաստարած ընկերութեան. կեդրոնատեղին էր Իմամ Ալի Խան:

77. Խաղաղասիրաց Ընկերութիւն (1862— . . . ) կը հիմնուի Սա-

մաթիոյ մէջ լուսաւորեալի և խաւարեալի վէճին վերջ տալու և երկու պայքարող կողմերուն միջև համերաշխութիւն գոյացնելու համար Ընկերութեան գործադիր ժողովին ասենապետն էր Գէորգ Խախմաճեան:

78. Վարժապետական Ընկերութիւն (1862—1872?) հաստատեալ Ա. Աղգ. վարժարաններու ուսուցման եղանակը բարեփոխելու և միօրինակ ընթացք մը տալու, Բ. Վարժապետներու վիճակին բարւոքման հոգ ասնելու նպատակով: Այս ընկերութեան կանոնագիրը 1864ին վաւերացուած է Խառն ժողովին կողմէ: Կարճ եղաւ ընկերութեան կեանքը: 1866ին վերակազմուեցաւ, բայց հազիւ քանի մը տարի տևեց:

79. Հայկական Ընկերութիւն Սամաթիոյ (1862 Մարտ 1 — . . . ) կը հաստատուի նպատակ դէնհնալով Սամաթիոյ մէջ կազմել Աղգ. ընկերական կեդրոն մը և զանազան ձեռնարկութեանց արդեամբ բարեգործութիւններ ընել:

80. Տանասեան Ընկերութիւն (1862—187?) հիմնուած Ֆէրի-գիւղի մէջ գիշերօթիկ վարժարան մը հաստատելու նպատակով: 1865ին կը տկարանայ և 1871ին կը վերակազմուի:

81. Երաժշտական Ընկերութիւն (1862 Մարտ —1863) կը կազմուի երաժշտական ճաշակը Հայոց մէջ տարածելու և աղջային երգեր հրատարակելու, նուագածոններ յառաջ բերելու, նաև Քնար Հայկական հանդէսը կանոնաւոր կերպիւ և տեսարակները ժամանակին հանելու նպատակաւ:

Իրականին մէջ 1861 Սեպտ. 1էն ի վեր Գարրիէլ Յ. Երանեանի և Նիկողոս Ա. Թաշճեանի կողմէ հրատարակուած «Քնար Հայկական» շաբաթաթերթին և արեւելեան բարբառին օժանդակելու համար կազմուած էր: Ընկերութեան հիմնադիր ժողովի անդամներուն մէջ կը տեսնենք ժամանակին նշանաւոր անձերը, ինչպէս Գ. Աղաթոն, Գ. Օտեան, Ն. Ռուսինեան, Գր. Խորտաճի և մեծահարուստ Յակոբ Կէրչեան: Ընկերութիւնը ունէր նաև յանձնաժողով մը որ հրատարակչի երգերու ընտրութիւնը և քննութիւնը ընելու պաշտօն ունէր: Ասոր անդամ էին Թորոս Նաղարեան, Մ. Մամուրեան, Մ. Պէշկիթաչեան, Յ. Ոսկան, Ս. Հէքիմեան, Ստեփանեան:

Քնար Հայկականի երաժշտական մասը կը վարեն Տիգրան Չուխաճեան և Գարրիէլ Երանեան, իսկ Երանեանի մահէն յետոյ Նիկողոս Քարճեան: Հազիւ մինչև 1863 կը շարունակուի թերթը և ընկերութիւնը:

82. Ուսումնասիրաց Ընկերութիւն Գուլ գաբուի (1862—....) նպատակը կը թուի ըլլալ կրթական: Ծանօթութիւններ կը պակսին<sup>(1)</sup>

83. Հայկական Ընկերութիւն (1862—1866) կազմուած Գուլգուլեան ճուղի հայ երիտասարդներուն կողմէ: Չորս տարի Ս. Լուսաւորչեան վարժարանի սրահին մէջ թատերական ներկայացումներ տուին:

*(1) ամսագր. և քարտէզ 1863թ. (Ստամբուլ, 1863 թ. 53)*

84. Պահապան Ընկերութիւն (1862) Ս. Փրկչեան Աղգ. Հիւանդանոցի հակողութեան համար կազմուած մարմին, որ Բերայի մէջ հիմնուած է:

85. Ազգասիրական եւ Բարեպաշտական Ընկերութիւն Հայոց (1862-1875—...) «ի նպատակս Գաթուղիկեայ Հայոց»: Գլխաւոր անդամները Ստեփան Բարսեղեան եւ Ա. Խուսէվէրտեան: 1875ին տակաւին կը գործէ:

86. Արտաւարդեան Ընկերութիւն (1863—1865) կազմուած է թատերական ներկայացումներ տալու նպատակով, գլխաւոր անդամներն եղած են Նիկանովը Իւսուլեքեան (յետոյ Եղիկ եպ. Ապահունի) (Ատենապետ), Արրահամ Այվազեան (Ատենադպիր), Գէորգ Այվազեան, Թազուր Նալեան (ղերասան), Ռուբէն Պարիկեան (յետոյ Տ. Աշոտ քն.), Մինասեան եւ Արմենակ Հայկունի: Յաջողած են քանի մը ներկայացումներ տալ:

87. Հայ Երիտասարդաց Ընկերութիւն (1863—1866) որ Արեւելեան թաւրոնին մէջ ներկայացումներ տուած է: Հիմնադիրներն էին Մադաթեան, Վարդովեան, Պէնկլեան, Օր. Եպրոս Կէօմրիւքեան, եւ տուած է ներկայացումներ 1864էն սկսեալ, առանց նիւթական յաջողութեան: 1864ին անոր կ'անդամակցի նաեւ Յովհաննէս Աճէմեան:

88. Սանուց Ընկերութիւն Ս. Թարգմանչաց վարժարանին (1864 Մարտ 24—1875) կը հիմնուի Օրթագիւղի մէջ, նպատակը ամէն Կիրակի դասախօսել պանդուխտներուն: Այս ընկերութիւնը նախաձեռողն է Արարեսեանին ու յետոյ Միացեալին: Ընկերութեան առաջին կազմակերպիչը եղած է ուսուցիչ Կարապետ ձիղմէճեան: Ընկերութեան ներքին Մկրտիչ ձանձմեան կը հովանաւորէր ընկերութիւնը: Ընկերուներէն Մկրտիչ ձանձմեան կը հովանաւորէր ընկերութիւնը: Ընկերութեան Մաթթէոս կաթողիկոս): 1865ին քօլէրան պահ մը կը քայքայէ, սակայն նորէն կը վերակազմուի եւ կը տեւէ մինչև 1875:

81. Անճնուէր Սանուց Ընկերութիւն (1864—...) կը կազմուի անճնուէր ընկերութեան նմոյշին վրայ եւ անոր սաներուն նախաձեռնութեամբ իրենց բնիկ գաւառներուն մէջ չափահասներու ուսման համար դասախօսութիւններ կազմակերպելու նպատակով:

|                            |             |
|----------------------------|-------------|
| Այլպէս Սըվազի մէջ կը գործէ | (1865—1871) |
| Սղերդի »                   | (1874—...)  |
| Տխարպէքիբի մէջ             | (1866—...)  |
| Կարինի »                   | (1869—...)  |
| Թոքատի գիւղերուն մէջ       | (1870—...)  |
| Պերէճիկի »                 | (1874—...)  |
| Եօզկատի »                  | (1876—...)  |

90. . . . . Ընկերութիւն (1864— . . . .) Սկիււարի մէջ կը հաստատուի, տեղւոյն վարժարանին ի նպաստ:
91. Մեսրոպեան Ընկերութիւն (1864— . . . .) կազմուած Բուժէլի Հիւսարի մէջ տեղւոյն վարժարանին օգնելու համար:
92. Տիկնաց Ընկերութիւն (1864) կազմուած է Գուժ. Գարուի մէջ թաղին աղջիկներու յառաջդիմութեանը նպաստելու համար:
93. Գպրոցասիրաց Սանուց (1864) ընկերութիւնը էյուլպի մէջ թանգարան մը հիմնած է:
94. . . . . Ընկերութիւն (1864) Ենիգիւղի մէջ կազմուած է տեղւոյն վարժարանին ի նպաստ:
95. Մամիկոնեան Ընկերութիւն (1864) էյուլպի մէջ կը կազմուի, տեղւոյն վարժարանին օժանդակելու համար:
96. . . . . Ընկերութիւն (1864) Բերայի մէջ կազմուած է «առեւտուր ընելու և հասոյթովը աղքատաց օգնելու» նպատակով:
97. Աղբասախնամ Ընկերութիւն (1864) Օրթագիւղի մէջ կազմուած, կանանց ձեռքով հիմնուած առաջին ընկերութիւնն է: Հիմնադիրներն են, Տիկիններ Ագապի Եուսուֆեան, Ալեմ Չայեան, Ալեմ Պայիկեան (տնօրէն), Աննիկ Ճանըմեան, Բուբուլ Երլազեան, Եղիսարէթ Եուսուֆեան (Գանձապետ), Էֆթիկ Սինանեան, Իսկուհի Գարրիէիան, Նազլը Վահան (Ատենապետ), Նեմզուր Պուլկուրեան, Նուենայ Կարմիրեան, Տիրուհի Փափազեան, Օր. Սրբուհի Վահանեան (օգնական ատենադպիր):
98. Օժանդակ Հայկեան Բարեխաւութեան Ընկերութիւնը (1866 Նոյեմբեր— . . . .) կազմուած է Լանկա, նպատակ, Ա. պատուել և պաշտպանել աղքին իրականապէս ծառայող լրագիրներ, Բ. Կ. Պոլսոյ դանազան թաղերը բարեկարգ ընթերցարաններ հաստատելու օգնել, Գ. Հրապարակաւ դասախօսութիւններ ընել և բարոյական և խրատական ճառեր խօսիլը ամէն շաբաթ սրբաւոր նպաստներով քաջակերել իսկ կրօնական վիճաբանութեան ամենեւին միջամտութիւն չընելը Յաջողած են ժամանակ մը գիշերային դասախօսութիւններ հաստատել: Ժամանակ մը այս ընկերութեան կեդրոնատեղին եղած է Հիսարտիպիի Մէզպուրեան վարժարանը:
99. Լուսաւորչեան Ընկերութիւն (1866—8. . . .), կազմուած է Երուսաղէմի միաբան Յակոբ վրդ. Չիլիկիրեանի նախաձեռնութեամբ եկեղեցւոյ բարեկարգութեան նպատակով: Ընկերութիւնը հրատարակեց գիրք մը — Պասկեր Հայաստանեաց Լուսաւորչական Ս. եկեղեցւոյ կեց գիրք մը — Պասկեր Հայաստանեաց Լուսաւորչական Ս. եկեղեցւոյ (1866) — և յայտարարութիւն մը (1868 Յունվարին): Գիրքը պաշտօնապէս արգիլուեցաւ պատրիարքարանի կողմէն վասնզի կը քարոզէր թէ Հայ եկեղեցին հեռացած է իր նախկին պարզութենէն, ուստի պէտք է «Լուսաւորչական զանգուածն ամէն օտար և եկամուտ խմորէ մաքէ յանաշարկէր խազին, յարգանքը վերցնել, ձէսերը և արարոբել»:

ղութիւնները կրճատել կամ մէկ քանիները ջնջել, չարականները սըր-  
բազրել, պատարագի արարողութիւնները և ընթերցումները կրճա-  
տել եւայլն:

«Այս ընկերութեան նպատակը՝ Հոովմէական, Բողոքական և կամ  
Յոյն եկեղեցւոյ հետ միանալ չէ, այլ՝ օտար եկեղեցիներէ յետուստ  
մուտ գտած շատ մը աւելորդ արարողութիւններ բուն մեր լուսաւոր-  
չական եկեղեցւոյն մէջէն վերցնելով՝ ազգային եկեղեցին իր հին պարզ  
վիճակին վերածել, հոգեւոր կամ եկեղեցական վարչութիւնը մարմնա-  
ւորէ կամ քաղաքականէն զառելով՝ ազգը այժմու հոգեւոր և մարմնա-  
ւորէն խառն, ինչ ըլլալն անյայտ կործանիչ վարչութեանն աղատել է»:

Իբր բողոքականամիտ ձեռնարկ բուռն ընդդիմութեան հանդի-  
պեցաւ. և երկար կեանք չունեցաւ վասնզի իր հիմնադիրը, զրամական  
գեղճուժով և վատթար վարքուբարքով ամբաստանուեցաւ և կարգա-  
ղուրկ եղաւ:

100. Ասիական Ընկերութիւն (1866—1868) դերասանական ընկե-  
րութիւն մը որուն նախաձեռնարկ եղած է Յակոբ Վարդուկեան: Ենթ-  
կայացումներ տուած է կէտիկ-փաշա և Սկիւտար:

101. Արամեան Ընկերութիւն (....1866—....) Սալմաթօմբուքի մէջ  
այս անունով ընկերութիւն մը կը գործէր որ նուիրաբուութիւն մը  
ըրած է Պալաթի ինտէնսան վարժարանին շինութեան:

102. Նորակազմ Ընկերութիւն (1866—68) թատերական ներկա-  
յացումներու համար կազմուած դերասաններու ընկերութիւն մը:  
Կազմած են Յ. Աճէմեան, Արուսեակ, Տիկ. Մ. Ծաղիկեան և Սարգիս  
Միրիճանեան:

103. Օրբագիւղի Բարեսէր Ընկերութիւնը (1867—1872) կազմուած  
էր նոյն թաղին մէջ գործող երկու թատերախումբերու միացումով:

Իր առաջին ներկայացումը կ'ըլլայ Թովմաս Պէռեանցի «Խաբ-  
ուած Ակնցի» կատակերգութիւնը: Յակոբ պէյ Պալիան ներկայ կը  
գանուի և խիստ կը հաւնի և իր ծախքով նեմցէ Պետրոսի շինել  
գուտայ «Թատերասիրաց» թատրոնը: Յ.յս խումբը սեփական թատ-  
րոն ունենալով՝ իր փայլը կ'աւելնայ և մեծ յաջողութիւն կը գանէ:  
Ինչ ժամանակէն կ'ուսենայ 700 ոսկի արժէքով հանդերձեղէն: 1870-

Ինչ Բերա Նաումի թատրոնին մէջ ալ ներկայացումներ կու տան:  
Ընկերութիւնը կը կազմալուծուի 1872ին: Այս ընկերութեան  
գլխաւոր աշխատասիրներէն մէկն էր Սեպուհ Էսկիճեան († 1904  
Մայիս 21):

104. Հայկական Գերասանական Ընկերութիւն (1867) որ իր առա-  
ջին ներկայացումը տուած է 1867 Փետր. 5ին կարճատե:

105. Ներսեսեան Ընկերութիւն (1867) կը հաստատուի Գնալը կղզիի  
մէջ ի նպատակ տեղւոյն վարժարանին: Շինած է զպրոցին համար քանի

մը կալուածներ կղզիին մէջ: Գլխաւոր անդամն էր Շալճը Մանաս ա-  
նուն կաթողիկ մը:

106. Նպաստամատոյց Ընկերութիւն Փրկչեան վարժարանի (1867)  
կը կազմուի Գուժ-Գարուի մէջ նախաձեռնութեամբ Տոքթ. Գալուստ-  
եանի. նպատակ Ս. Փրկչի վարժարանին աղայոց գրեւական պիտոյքը  
հայթայթել:

107. Սեներեքիմեան Օթանղակ Ընկերութիւն Սեբասիոյ (1868) ո-  
րուն նպատակն էր նպաստել Սեբասիոյ վարժարաններուն և գիշե-  
րօթիկ վարժարան մը բանալ: Սեներեքիմեանի կ, Պոլսոյ ճիւղն է  
հաւանօրէն որ կը վերակազմուի:

108. Իսկուսարի Ս. Խաչ քաղի Ընթերցասիրաց Ընկերութիւն (1868-  
1872) կազմուած է անդ և հրատարակած քանի մը գիրքեր, ինչպէս  
Գուրեանի «Տաղք և թատերգութիւնք» (1872): 1871ին հիմնուած է  
նաև լսարան, ուր կատարուած են շահեկան բանախօսութիւններ:

109. Ս. Էջմիածնական Ընկերութիւն (1868) դպրոցի նպաստող ըն-  
կերութիւն մը: Մանրամասնութիւնք կը պահսին: (4)

110. Խնամակալուհի Տիկնաց Ընկերութիւն (1869) Խասգիւղի,  
կրթական նպատակով, թերեւ աղջիկներու վարժարանին համար:

111. Խնամակալաց Ընկերութիւն (1869) Խասգիւղի Ներսէսեան  
վարժարանի ի նպաստ կազմուած:

112. Մետրոպեան Ընկերութիւն (1869) Եէնի-Գարուի մէջ կը յիշ-  
ուի այս թուականով: Նպատակը և կեանքը անձանօթ:

113. Լեւոնեան Ընկերութիւն (1880—....) Թօփ-Գարուի համանուն  
վարժարանին ի նպաստ: Հիմնադիրներն են. Պետրոս Թաւչանճեան  
(Ատենապետ), Գ. Արծրունի (Ատենադպիր) և Լալայն: 1868ին Մկրտիչ  
Նշաստանեան 3.000 զրուշ հանգանակելով Թօփ-Գարուի մէջ կը բա-  
նայ աղջիկներու «Վարդանոյշ» վարժարանը: 1870ին հաւանօրէն այս  
ընկերութիւնը կը նպաստէ այս վարժարանին որ 1873ին կը դանուէր  
Մ. Նշաստանեանի մասնաւոր տեսչութեան տակ՝ անկախ Թաղ. Խոր-  
հուրդի իրաւասութենէն և ընկերութիւնը կը հոգար ծախսերը: Ընկե-  
րութեան անդամներէն Գրիգոր Մկրեան անձնուիրաբար ֆրանսերէն  
կը դասախօսէ և տնօրէնութիւնը կը վարէ: Տիկին մը 20 ոսկի կը  
նուիրէ վարժարանին և կը խոստանայ կտակ մըն ալ ընել: Այս առ-  
թիւ վարժարանին անունը ի պատիւ այս կնոջ Տիրուհեան ընելու ո-  
րոշում կը տրուի և 1874ին՝ հակառակ Ուսումնական Խորհուրդի ընդ-  
դիմութեան արդէն կը փոխուի անունը, թէև ոչ-տեւականապէս:

114. Գարոցասիրաց Ընկերութիւնը (1870 Մայիս 1—1878) հիմնուած  
նախապէս դպրոցներու գիրք, թուղթ հայթայթելու նպատակով, սա-  
կայն 1877ին Արարատեանի օրինակին հետեւելով Հայաստանի մէջ  
վարժարաններ բանալ որոշեցին: Հիմնադիրներն են Կալաթա-Սարայի  
կայսր. լիսէի (բացուած 1868 Օգոստ. 1) անդամնիկ աշակերտները, ինչ-

88 (1) ԳԵՄԻՍԹՆՍՆ ՊԶ ԳՆՄԱՆԱԿ Ի: 1869թ. վերադարձա-  
թիւնայով 1869 (Գաւշ Թրաղի Մ. 419):

պէս Յակոբ Պոյաճեան, Յովսէփ Եղևուքեան, Յար. Արսլանեան, Եր. Թնկերեան, Մանուկեանններ, Յովհ. Թորոսեան և Կարապետ Սվաճեան: Իրենց պռաջին վարժարանը եղաւ Լիճքի (Մուշ) նախակրթարանը: Յետոյ ընկերութիւնը յաջողեցաւ բանալ դպրոցներ Մուշի և Ալաշկերտի շրջաններուն մէջ: Իր կրթական տեսուչն էր Մկրտիչ Սարժեան: 1 Սեպտ. 1878ին միացաւ Արեւելեան Ընկերութեան հետ:

115. Սահակեան Թասերակեան Ընկերութիւն (1870 Մարտ 12—....) Սամաթիոյ մէջ կը կազմուի և 15 Մարտին կը ներկայացնէ «Մեծն Ներսէս» ողբերգութիւնը: (Գրաւթ. օրացոյց. Վ. 527. 4533)

116. Գործասէր Ընկերութիւնը (1870—....) կը հաստատուի: Հիմնադիրները Յար. Զինճիրճեան, Աւետիս Սուրէնեան, Յար. Թաշճեան: 1871 Օգոստ. 11ին այս ընկերութիւնը կը հրատարակէ Արարատ լրագիրը (1869ին հաստատուած) մինչև 1872 Յունիս 13, Գանի մը գիրքերու հրատարակութեան ալ նպաստած է, ինչպէս Խ. Յ. Պէրպէրեանի թարգմանած Լամբնէի Բանկ հաւաքացիոյ ուրու՞քը որ էր «Գործասէր Ընկերութեան գործ առաջին» (1871):

117. Ա. Բ. Գ. ի Բարեկամ Ընկերութիւն (1870) հիմնուած էր Սամաթիոյ Ընկերութեան հասոյթին երկու երրորդը Ագապեան վարժարանին և մէկ երրորդը Սամաթիոյ մէջ ընթերցարան բանալու պիտի գործառնէին: 1871ին հաստատած է լսարան մը ևս:

118. Սանդիսեան Ընկերութիւն (1870) վանեցի ազգայիններու կողմէ հիմնուած է վասպուրականի կրթութեան նպատակու համար: 1871ին բացած է վանայ Սանդիսեան վարժարանը: 1883ին տակաւին կը շարունակուէր:

119. Պարոյրեան Ընկերութիւն (1870) կը կազմուի Գասըմ-փաշայի դպրոցին ի նպաստ:

120. Նուպար-Շահնազարեան Սանուց Ընկերութիւն (1870) որ հաւանորէն դպրոցական ընկերութիւն մըն էր վարժարանին մէջ կազմուած դպրոցին մէկ պէտքը լրացնելու համար: Տեղեկութիւններ կը պակսին:

121. Կամաւոր Ընկերութիւն (1870—1871) Դերասաններ կազմած են Մաղաքեանի գլխաւորութեամբ և մասնակցութեամբ Զէրազի. Աղամեանի, Աճէմեանի, Պասմաճեանի, Արուսեակի և Աղաւնի Փափագեանի: Մէկ տարի կեանք ունեցած է:

123. Գրասիրաց Ընկերութիւն (1871) հիմնեալ ի Խասդիւզ «հրատարակութեանց նպատակով»: Քիչ արգիւնաւոր:

124. Վարդանեան Ընկերութիւն (1871 Սեպտ. 1—1874) հաստատուեալ Շահնազարեան վարժարանի աշակերտներէն, նպատակ ունենալով եւս Զահնազարեան վարժարանի աշակերտացնել: Հաւանորէն ձեռնարկէր մէջ դաստիարակութիւնը ընդհանրացնել: Հաւանորէն ձեռնարկէր Նուպար Շահնազարեան Սանուց ընկերութիւնն է:

125. Վարդան Մամիկոնեան Ընկերութիւն (1871) Ալթը Մէրմէրի դպրոցին ի նպաստ կազմուած է:

126. Ընթերցասիրաց Ընկերութիւն (1872 Յունվար) Եէնի-Գարու ի մէջ հիմնուած դպրոցի սաներուն գրեհնական պիտոյք հայթայթելու համար:

127. Աղբասաց Ընկերութիւն (1872—...) Սկիւտար Եէնի-Մահալէի մէջ կազմուած վարժարանին պղքատ սաներուն դպրոցական պիտոյք մատակարարելու նպատակով:

128. Օթանդակ Ընկերութիւն Արապկիի Վարժարանից (1872 Սեպ—...) կազմուած Կ. Պոլսեանակ Արարկիբցիներէ իրենց ծննդավայրին վարժարանին ի նպաստ:

129. Արեակունեաց Ընկերութիւն (1872) կազմուած ի նպաստ Տօլապ Տէրէի վարժարանին, նախաձեռնութեամբ Յակոբ Աճառեանի: Այս ընկերութիւնը շինած է Տօլապ Տէրէի վարժարանը՝ հանգանակութեամբ: Յ. Աճառեան կարեւոր փոխատուութիւն մը ըրած է և Սարգիս պէյ Պալեան 150 լիրայի նուիրատուութիւն մը: Տօլապ Տէրէի վարժարանը հիմնուած էր 1857ին:

130. Խրախոյս Ընկերութիւն Ագապեան Վարժարանի (1873) կազմուած է պաշտպանելու համար Փանոսեանը՝ Օզսէն Խօճասարեանի յարձակումներուն դէմ՝ և վարժարանին յարատեւութիւնը ապահովելու համար:

131. Բախսանուէր Ընկերութիւն (1873 Ապրիլ 1—1878) կը կազմուի 6 տարի պայմանաժամով, Հիմնադիրներն են կարապետ Փանոսեան՝ ընդհ. տնօրէն, Սարգիս Մարտիրոսեան, ոսկերիչ և Միհրան Տատուրեան՝ վաճառական. զանձապետք, Գէորգ Շէօհլեան՝ համարակալ, կարապետ Սարաճեան՝ ժամագործ և Մկրտիչ Յովհաննէսեան՝ պէյադճի՝ հաւաքիչք:

Ընկերութեան նպատակն էր.

Ա. Օսմ. Իսլամէյի երկաթուղեաց արժեստմսերէն գնել.

Բ. Ներքին վիճակահանութիւն կատարել.

Գ. Յիշեալ արժեստմսերու թիւերէն բաղխատումս (բրոմէս) առնել:

Բաժինները 500 էին և ախական կէս ոսկի: 1878ին տակաւին

կը շարունակուէր, ինչ որ կը հաստատէ թէ լրացուցած է իր պայմանաժամը:

ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՃԵԱՆ

(Շարունակելի)





լորովին: Չէ՞ որ մէկու մը կեանքը ո՛րքէ կերպով ջնջելով, կրկին սպանութիւն մը գործած կ'ըլլայ մարդ:

Արդէն շատ է թիւը ա՛յն բժիշկներուն՝ որոնք մահուան պատիժի դէմ են: Պէտք է որ մարդկութիւնը օգտուի դատապարտուածներէն՝ զանոնք աշխատցնելով, բայց բնա՛ւ երբեք մահապատիժ:

ՏՈՔ.Ն. ԱԼԼԱՀՎԵՐՏԻ ՈՐԴԻ

Բարիք

ՀՆԱԽՈՍԱԿԱՆ

## ԵՐԴՈՒՄԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Երզումը ծանօթ է հնագոյն դարերէն ի վեր:

Քրիստոնէութիւնը ջանաց սահմանափելի զայն: Օտարներէն՝ Յովհաննէս Ոսկերեբան, իսկ հայերէն՝ Յովհաննէս Մանդակունին, հակառակ կը ճառեն երզումին դէմ: Մանդակունին գրեց նաև ամբողջ ճառ մը «վասն չար սովորութեան երզման» վերնագրով:

Երզումը կրնանք բաժնել երկու մասերու: Սովորական՝ որ ասորիկ գասակարգին կողմէ կը կիրարկուէր առօրեայ խօսակցութեան մէջ, ու պաեսօնիպանը՝ որ օեղի կ'ունենար կարեւոր զիպուածներու մէջ ամենայն լրջութեամբ ու միշտ հրապարակաւ: Այս երկու ձեերը իրարմէ կը զանազանուէին ու հարկ է ինձ անջատարար գրել անոնց մասին:

Սովորական երզումը կրնանք անուանել «Անկանոն երզում» իսկ երկրորդ տեսակը՝ կամ պաշտօնական երզումը՝ «Օրինական երզում»:

ԱՆԿԱՆՈՆ ԵՐԴՈՒՄԻ հինէն ի վեր սովորութիւն դարձած էր Հայոց մօտ, որոնք շատ դիւրաւ սուտ կամ իրաւ երզումներ կ'ընէին իրարու միջև: Մանդակունին կ'աւանդէ թէ, խօսքէն առաջ երզումը կ'իջնէր ամէնուն բերնէն. իսկ «ցոփոգիք և աղօթեցարանք» կ'աւելցնէ Մանդակունին, իրենց ըսելիքը դեռ չխորհած երզումը պատրաստ ունէին իրենց լեզուին ծայրը: (Տե՛ս Յ. Մանդակունիի «Ճառք» 114):

Սուտ երզումը այնքան տարածուած էր Հայոց մէջ որ նոյնիսկ քաղք իրենց խաղերուն յաջողութիւնը կամ անյաջողութիւնը երզումներով կը հաստատէին: Կամ վաճառականները իրենց արդարութիւնը հաստատելու համար յաճախ երզումի կը դիմէին, կ'ըսէ Մանդակունին, (Տե՛ս Յ. Մանդակունիի «Ճառք» 115):

Այս կարգի երզումները բնդհանրապէս կը կատարուէին Արեգակին, Լուսինին և Աստղերու անունով, որոնք Հայոց Հեթանոսական



Մանդակունին ու Շնորհալին իրենց զրութիւններուն մէջ մաս-  
նաւոր ներողամիտ կ'երեւին օրինական երդումին:

Շնորհալին իր «ընդհանրական»ին մէջ կ'ըսէ. —

«Մի' եղիցի Ձեզ յօժարութեամբ դիմել յերգումնս... առանց մե-  
ծագոյն հարկի»: (Տե՛ս «Թուղթ ընդհանրական» էջ 192):

Մխիթար Գոշ կ'ընդունի օրինական երդումը, պայմանաւ որ դա-  
տաւորը հրամայէ զայն, (Տե՛ս «Գատասնագիրք» էջ 46):

Զաքարիա եպ. Ծործորեցին միշտ կ'արդարացնէ դատաստանական  
երդումը, զոր համաձայն ալ կը գտնէ Ս. Գրոց հոգիին: Իր «Թուղթ»ին  
մէջ որոշապէս կ'ըսէ. —

«Զի ուրիշ է երդումն ուտել անձամբ վասն միոյ փողոյ և սուտ,  
և ուրիշ է երդումն տալ առաջնորդաց և և դասաւորաց՝ վասն ճմար՝  
«տութեան հաւատարոյ»:

Գրիգոր Տաթեւացին ևս երդումը կը թոյլատրէր, բայց միայն  
անհատներուն առջև:

Երդումի ձեւերը Հայոց մէջ այլևայլ դարերու ընթացքին տար-  
բեր տարբեր կը ներկայանան, ու հարկ է մի քիչ ծանրանալ այս հար-  
ցին վրայ:

Հին Հայոց մէջ օրինական երդումները կրնային տեղի ունենալ  
երբ ծանր խնդիրներ կը ներկայանային, այլապէս միշտ հակասութիւն  
կար երդումին դէմ: Ծանր ու կարեւոր խնդիրներ կամ պարագաներ  
կը համարուէին հետեւեալները.

Ա. Կենցաղական խնդիրներ, այսինքն, երբ առեւտրական ու  
կալուածական խնդիրներ կային, և կամ հարստահարումի ու զեղծումի  
խնդիրներ պիտի քննուէին: Երդումը հոս ընդունելի էր, բայց ըստ Մխի-  
թար Գօշին ու Ծործորեցիին, ա՛յն առանձին միայն՝ երբ վկայ չէր գտնուէր:

Բ. Քրեակոմ յանցանքներ, այսինքն, զողութիւն, շտութիւն,  
սպանութիւն, ու ատաղակութիւն ու նման յանցանքները փաս-  
տելու համար եղած երդումը: Վերոյիշեալ յանցանքները ծանր պա-  
տիժներով կը փոխարինուէին:

Գ. Կրօնքի հանդեպ հաւատարմութիւն, այսինքն, անձի մը հա-  
ւատքը ապացուցանելու համար, և կամ եկեղեցւոյ պաշտպանութեան  
համար: Այսպիսի պարագայ մը ստեղծուած էր միհրներսէհի առ Հայոց  
գրած նամակին առիթով, երբ կրօնափոխական առաջարկը շատագով-  
ուած կամ պարտադրուած էր Աւարայրի զիւրացնամարտի նախօր-  
եակներուն:

Ըստ Եղիշէի, Հայերը ընդարձակ թուղթով մը պատուական պա-  
տասխան մը տուին Պարսից, ու ամբողջութեամբ՝ կաթողիկոս, եպիս-  
կոպոսներ, նախարարներ եւայլն «անսուտ երգմամբ եղին վկայու-  
թիւն կենօք և մահու ի նմին կալ հաստատուն»: Ու երբ հայ նա-  
խարարները ստիպուեցան Պարսից դուռը բրթալ, անոնք կրկին եր-



քական ամենչքեղ առիթն էր պաշտօնական երդումին համար Այսպիսի երդում մը Ազգը պարտաւոր էր տալ թագաւորին:

Այսպիսի պարագայ մը կ'աւանդէ մեզ Կիրակոս Գանձակեցին իր պաթմոսթեան մէջ, երբ կը նկարագրէ Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ու հայ իշխաններուն տուած երդումը Գագիկ Բ. թագաւորին օժման օրը:

Պէտք է գիտնանք սակայն, թէ Ռուբինեան թագաւորութեան ընթացքին, թագաւորը պարտաւոր էր երդում տալ ազգին, ու ոչ ազգը թագաւորին:

Վերոյիշեալ այս եօթը գլխաւոր պարագաները ծանրակշիռ խընդիրներ կը համարուէին ու զանոնք երդումներով գործադրելը պարտաւորիչ էր հին Հայոց մօտ:

Երդումներ կրնային տեղի ունենալ նաև, տարբեր կրօնքի պատկանողներուն միջև, երբ իւրաքանչիւր կողմ իրաւունք ունէր իր սեփական օրէնքներուն հետեւելու: Իսկ երբ երկու կողմերը Քրիստոնեայ էին, հետեւեալ պայմանները պէտք էին նկատի ունենալ՝ ըստ Մխիթար Գօշի.—

1. Երդում տալու համար, հարկ էր 25 տարեկանէն վար չըլլալ
2. Ծերերը և հիւանդները պէտք չէին երդում տալ:
3. Ապշխարողները չէին կրնար երդում տալ:
4. Հաւատարիմ կիներէն ընդհանրապէս երդում չէր պահանջուեր:
5. Անպարկեշտ կամ պառաւ և կամ ծնանելու մօտ եղող կիները չէին կրնար երդում տալ:
6. Մաքաւորները, արբեցողները ու մեղաւորները չէին կրնար երդում տալ, որքան ժամանակ որ այդպէս կը մնային:
7. Երդում կրնային տալ բոլոր մերձաւոր ազգականները ու բարեկամները:

Յովհ. Մանդակունիի շրջանին, երդում ընելու իրաւունքը չարախօսին կը պատկանէր, իսկ Մխիթար Գոշի շրջանին՝ այս կանոնը փոխուած էր:

Երդումը նախապէս կը կատարէին ընդհանրապէս եկեղեցիին մէջ բայց յետոյ դաժաստանական երդումը կրնար տարբեր վայրերու մէջ ալ տրուիլ, ինչպէս Ատեանին մէջ, ու երբեմն ալ, ուր որ հարկը կամ պէտքը կը նպահանջէր:

Երդումը կրնար արժուներին մէջ ալ տրուիլ, ինչպէս որ Հայոց Արշակ թագաւորը տուած էր Պարսից Շապուհ թագաւորին: Երդումը կրնար պատերազմի դաշտին մէջ ալ տրուիլ, ինչպէս որ Մուշեղ Մակրնար պատերազմի դաշտին մէջ ալ տրուիլ, ինչպէս որ Պապ թագաւորին՝ միկոնեան սպարապետը տուած էր կաթողիկոսին ու Պապ թագաւորին: Նպատ լեբան վրայ: Երդումը կրնար նաև ճամբաներու մէջ ալ տրուիլ, ինչպէս որ Վարդանանք իրարու տուած էին երբ Պարսկաստանէն կը ինչպէս որ Վարդանանք իրարու տուած էին երբ Պարսկաստանէն կը վերադառնային ու ամէն ոք իր տեղը պիտի մեկնէր: Երդումը կրնար

տան կամ ապարանքի մէջ ալ տրուել, ինչպէս որ դաւաճան վասակ Մարգրպանը տուած էր հայ ուխտապահ նախարարներուն իր սեփական ապարանքին մէջ՝ ըստ պատմիչին:

Մխիթար Գոշ կ'արդիւէ թեթեւ պարագաներու տակ տրուած երդումը, զոր օրինակ, 10 տարեկան տղու մը համար երդում տալը արգիւրուած էր, ու եթէ այդպիսի պարագայ մը ստեղծուէր դատարանին մէջ, փոքր տղայոց երդումը առանց պահանջելու կրնային դատը շարունակել, («Դատաստանագիրք» էջ 53):

Երդումները ընդհանրապէս տեղի կ'ունենային հետեւեալ սրբութիւններու անունով.—

- ա. Կաթողիկոսին կամ թագաւորին Աջին վրայ,
- բ. Աւետարանի վրայ,
- գ. Մասնաւոր ուխտի կամ երդման Աւետարանի վրայ.
- դ. Աւետարանին զօրութեան վրայ,
- ե. Խաչին վրայ,
- զ. Աւետարանին ու խաչին վրայ,
- է. Աստուծոյ անուան վրայ,
- ը. Եկեղեցւոյ անուան վրայ,
- բ. Անիին «հազար ու մի» եկեղեցիներու վրայ, ու պատարագի բաժակին (սկիհ) վրայ:

Կրնայի իւրաքանչիւրին վրայ պատմութենէն օրինակներ բերել, եթէ նպատակ ունենայի նիւթը իր լման սահմաններովը պարզել, բայց առ այժմ աւելորդ կը համարեմ:

Երդումը ունէր իր արարողական որոշ ձևերը: Կրօնքի հաւատարմութեան համար եղած երդումները ունէին իրենց յարմար ատարմութեան համար եղած երդումները: Դրանք էին ըստելի:

Դրանք երդումէ առաջ պէտք էին ըստելի: Երդումի պահուն սրբութիւններուն (մանաւանդ խաչին ու Աւետարանին) առջև եկրպագութիւն տեղի կ'ունենար, որմէ վերջ զատարանին կը համբուրէին:

Ղ. Փարպեցիին կ'աւանդէ թէ երբ վարդան ու միւս նախարարները պաշտօնական երդում պիտի տային՝ նախ Աւետարանը համբուրէին: Իսկ Փաւստոս իր պատմութեան մէջ կ'աւանդէ թէ Մուշեղ բուրձնի: Իսկ Փաւստոս իր պատմութեան մէջ կ'աւանդէ թէ Մուշեղ բուրձնի: Իսկ Փաւստոս իր պատմութեան մէջ կ'աւանդէ թէ Մուշեղ բուրձնի: Իսկ Փաւստոս իր պատմութեան մէջ կ'աւանդէ թէ Մուշեղ բուրձնի:

Մամիկոնեան Պապ արքային աջը համբուրելէն առաջ՝ երկրպագած էր անոր առջև:

Իսկ երդում ընելու համար եկեղեցի մտնելու պահուն՝ անոր օձեւալ որմերը կը համբուրէին:

Նոյնը տեղի ունեցած էր Արծրունեաց Տիկին Մարիամին կողմէ, որ Ս. Կարապետ սրբազանը մտնելով «համբուրեց զորմ տաճարին»:

Կ'ըսէ Յով. Մամիկոնեան: Սրբութիւնները համբուրելէն վերջ, ձեռքերը կը հանգչեցնէին անոր վրայ ու կ'արտասանէին երդման բանաձևը:

Սրբութիւնները համբուրելէն վերջ, ձեռքերը կը հանգչեցնէին անոր վրայ ու կ'արտասանէին երդման բանաձևը:

Ձեռքերու հպում տեղի չէր կրնար ունենալ երբ Աստուծոյ վրայ և կամ Անիին «հաղար ու մի եկեղեցիներուն» վրայ երդում տեղի ունենար: Այս պարագաներուն, սակայն, սովոր էին ձեռքերը դէպի երկինք վերցնել ու այնպէս երդում ընել:

Հոս կ'արժէ բացատրել երդումներու քանի մը բանաձևերը: Անոնցմէ պիտի յիշեմ Ալիսարհիկ, կրօնական ու Ատենական ձևերը: Ալիսարհիկ երդման ամենահին ձևն է Մուշեղ Մամիկոնեանին Պապ Թադաւորին առջև արտասանած հետեւեալ բառերը.—

«Կեցից և մեռայց ի վերայ քո՝ որպէս նախնիքն իմ ի վերայ «նախնեացն» քոց, որպէս հայրն իմ ի վերայ հօրն քո Արշակայ, այնպէս և ես ի վերայ քո, բայց միայն չարախօսացն ունկն մի դնեցես»: (Փաւստոս Բիւզանդ Ն. դ.):

Կրօնական երդման քանի մը բանաձևեր կան, որոնցմէ միայն պիտի յիշեմ Վահանեանց զործածած բանաձևը՝ ըստ Ղ. Փարպեցիին.—

«Որ խոստովանեսցի զհաւատս դայս՝ զոր փրկիչն ամենեցուն եւ տէր Յիսուս Քրիստոս վարդապետեալ զրեաց ի սմա, և Որդի մարդոյ «խոստովանեալ դարձի զնա առաջի Հօր իւրոյ, ժառանգեցուցանել «նմա զերկնից բարութիւնս: Եւ որ ոք խոստորեալ ուրացի ի հաւատոյս յայսմանէ, և նենգեալ ստեցէ Աւետարանիս երդման, և Որդի մարդոյ ուրացեալ զնա ի խաւարն արտաքին՝ որ լալ աչացն է եւ «կրճել ատամանց»:

Ատենական երդման ձևերը երկու մասերու կը բաժնուին. Ա. «խոստովանութեան», և Բ. «ուրացութեան»:

ա. «խոստովանութեան» երդումին առիթով ընդհանրապէս հետեւեալ հաստատական բառերը կ'արտասանէին.—

«Գիտէ Աստուած, և խաչս և Աւետարանս վկայ է սրտիս՝ զի «այնպէս է որպէս ասեմ և ոչ ստեմ»:

կամ,

«Փառք սոցա և զօրութիւն զի ճշմարիտ ասեմ զոր ասեմ, և ոչ ստեմ», (Մխիթար Գոշ «Դատաստանագիրք» էջ 54):

բ. «Ուրացութեան» առիթով երդում ընողը իր վկայած դէպքին կամ խօսքին ստուգութեան համար պայման կը ցուցնէր հակառակ պարագային Քրիստոնեայ չհամարուելու: Ահաւասիկ օրինակ մը.—

«Քրիստոնեայ ոչ եմ՝ եթէ չիցէ այդ այդպէս», («Դատաստանագիրք» էջ 54):

Երդումները միշտ այսպէս բերանացի չէին արուեր: Շատ ծանրակշիռ դէպքերու առթիւ բերնով արտասանուածը զբաւոր ալ կը կը արուէր, որպէսզի ան մնար անուրանալի վկայութիւն մը: Այսկը արուէր, որպէսզի ան մնար անուրանալի վկայութիւն մը: Այսկը պիտի գրաւոր երդումները կը կոչուէին «Գիր» կամ «յետկար երդման»: պիտի գրաւոր երդումները կը կոչուէին «Գիր» կամ «յետկար երդման»: պիտի գրաւոր երդումները կը կոչուէին «Գիր» կամ «յետկար երդման»: ըսուածը լարով մը կը կապէին Աւետարանին հետ ու «Գիր երդման» ըսուածը լարով մը կը կապէին Աւետարանին հետ ու այնպէս կու տային եթէ խնդիրը շատ լուրջ էր:



Այսպէս ըրած էր Սիւնեաց Վասակ իշխանը, ըստ Եղիշէի, երբ իր այս գործով փափաքեցաւ նախարարներուն առջև երդում տալ թէ յար պիտի շարունակէր հայկական շահերուն: Նմանապէս Աշոտ Երկաթ թագաւորը ու իր աները զրաւոր երդում ըրած էին, ըստ Յովհաննէս կաթողիկոսին:

Գրաւոր երդում տուած էր նոյնպէս Սմբատ սպարապետը ի նըպատ Ատրնեբսիին: Նոյնը ըրած էր Աշոտ Արծրունին Հասան իշխանը արձակելու համար: Նոյնը պատահած էր Գեղարքունեաց Վասակ իշխանին ու Աշոտ թագաւորին միջև արուած երդումին առիթով: Իսկ երբ Գագիկ Բ. Անի մայրաքաղաքէն պիտի բաժնուէր, հայ իշխանները «Երդման գիր» տուած էին, կ'ըսէ Մ. Ուռհայեցին:

Երդումները գրուելէ վերջ, պաշտօնապէս կը կնքուէին, ինչպիսին ըրած էր Վասակ մարզպանը՝ ըստ Եղիշէին, ու Վարդանանք՝ ըստ Փարպեցիին, որ կ'ըսէ թէ կնքուած էր «նախարարաց մատանեօք»:

Գրուած այն երդումները, որոնք արուած էին Արասին կողմէ Ատրնեբսիին, ու Աշոտին կողմէ Սահակին՝ «կնքուած երդման յետկարներ» էին, կ'ըսէ Յովհաննէս կաթողիկոս:

Անգիր երդումները ընդհանրապէս կը կնքուէին Աւետարանին վրայ, այսինքն մատենանին լուսանցքներուն վրայ գրոշմները կը շարէին իրարու մօտ: Այսպէս կնքուած ավետարանը վկայ կը մնար՝ պաշտօնական՝ բայց անգիր երդման:

Պաշտօնական երդումներու ընթացքին միջնորդներ կ'ըլլային՝ կաթողիկոսը կամ եպիսկոպոսները ու երէցները, անշուշտ ոչ ամէնքը միասին, այլ խնդրոյն կարեւորութեան համաձայն իւրաքանչիւր ատիճանաւոր կրնար միջամտել:

Ու այս ձեւով, Մուշեղ՝ Պապ թագաւորին տուած երդումին մէջ իբր միջնորդ ունէր Մեծն Ներսէս կաթողիկոսը: Վարդանանք Յազկերտի արքունիքը մեկնելէ առաջ երդում ըրին Յովսէփ կաթողիկոսին առաջև: Արաս սպարապետին ու Ատրնեբսի իշխանին միջև տեղի ունեցած երդումին միջնորդն էր Գէորգ կաթողիկոսը, որ նոյնպէս միջնորդն էր Աշոտ Արծրունիին ու Հասան իշխանին միջև արուած պաշտօնական երդումին:

Նոյնպէս Անիին իշխանները Գագիկ արքային երդմազիր տուած էին Պեթրոս Գետադարձ կաթողիկոսին միջնորդութեամբ:

Եպիսկոպոսներու ու երէցներու կողմէ կիրարկուած միջնորդութեան բազում օրինակներ ալ կան:

Այսպիսի կարեւոր պաշտօնները, հին հայերը եկեղեցականներուն կը վստահէին հետեւեալ պատճառներով.

Ժ. Գարէն առաջ, Հայաստանի մէջ գոյութիւն չունէր Բաղաժ. Գարէն առաջ, Հայաստանի մէջ գոյութիւն մը, ոչ ալ յատուկ Օրինազիրք, քական Ատենական կազմակերպութիւն մը, ոչ ալ յատուկ Օրինազիրք, ինչպէս գոյութիւն ունէր Բիւղանդիոսի մէջ: Ասոր փոխարէն գոյու-

Թիւն ունէին միայն եկեղեցական կանոններ, որոնց մէջ բովանդակուած էին նաև դատաստանական շատ մը խնդիրներ, որոնց վրայ յենուելով Մխիթար Գոշ պատրաստած էր իր արժէքաւոր գործը: Հայոց մէջ Օրինադիրքերու պահասը արդիւնք էր Աշխարհականատեաններու ու դատաւորներու չգոյութեան: Հայաստանի մէջ այս պաշտօնը մինչև Միջին դար յանձնուած էր եկեղեցական ու կրօնական Ատեաններուն, որով դատաստանական իրաւունքը կը մնար հայ կղերին սեփական իրաւունք մը: Մխիթար Գոշի օրով այս իրաւունքը դարձեալ կը կիրարկուէր հայ կղերականութեան երեք գլխաւոր աստիճանաւորներուն կողմէ (կաթողիկոս, եպիսկոպոս ու երէց), որոնց հետ աշխարհականներ ալ կը բազմէին: Ատեանին մէջ եպիսկոպոսը առաջին դատաւորն էր, իսկ կաթողիկոսը գլուխ էր ամենայն դատաւորաց: Պէտք ենք գիտնալ թէ հայ կղերականները ընդհանրապէս գիտութեամբ ալ բարձր էին հին ատեն:

Այս է գլխաւոր պատճառը որ կաթողիկոսը հայ թագաւորէն ալ բարձր գերիշխանութիւն մը ունէր մեր աղբիւն մէջ, որմէ յաճախ կ'ակնածէին նախարարները նոյն իսկ թագաւորները:

Արեւմուտքին անձանօթ էր կրօնապետի մը այսպիսի բարձր ու համազգային հանգամանքը:

Հայոց թագաւորները նոյն իսկ արժօնութեամբ միայն կրնային ներկայանալ կաթողիկոսին պալատը, իսկ կաթողիկոսը առանց հրամանի ու փափաքած ժամանակը խրոխտաբար կը մտնէր Արքունի պալատը, ու առանց արժօնութեան կը բազմէր արքային առջև: Թագաւորը կաթողիկոսին առջև կրնար բազմիլ այս վերջնոյս հրամանովը միայն:

Միայն թէ պատժական գործերը, որ անպատեհ կը համարուէին եկեղեցականներուն համար, կաթողիկոսին հրամանաւ կը յանձնուէր իւրաքանչիւր գաւառի աշխարհական իշխաններուն: (Տե՛ս Հ. Վ. Հացոունի «Ներդրումն հին Հայոց մէջ» էջ 81):

Կաթողիկոսին բարձր հանգամանքը կրնամ պարզել մէկ երկու օրինակներով:

Երբ Աշոտ Արծրունին դրժած էր Յովհաննէս կաթողիկոսին (պատմաբան) տուած մէկ խոստումը՝ Հասան իշխանը ազատ արձակելուն մէջ, կաթողիկոսը պաշտօնապէս բանադրեց արքան ու քովէն հեռացաւ անգամ մ'ալ երեսը չտեսնելու պայմանաւ: Յաջորդ տարին իսկ Աշոտ արքան մեռաւ:

Նոյն կաթողիկոսին օրով, երբ Աշոտ Երկաթ Բագրատունի թագաւորը՝ Վասակ իշխանին համար տուած իր մէկ երդումը զրոյսելով գինքը կայանաւորած էր կայանան ամրոցին մէջ, իսկոյն կատղած առիւծի մը նման թագաւորին առջև անկուեցաւ Մեծն Յովհաննէս պատմաբան կաթողիկոսը, ու ըստ իր իսկ բռնեցուն՝ «սասակագոյն բան

այանդիմանութեան, ի վերայ ածեալ թագաւորին, պաշարեցի զնա «կշտամբութեամբ մեծաւ՝ վասն առելոյ ուխտին երզման» (Պատմ. ԾԹ).

Ու Աշոտ երկաթ թագաւորը մոմի մը պէս կակուղցաւ կաթողիկոսին առջև: (Հ. Վ. Հացունի՝ «Երզումն հին Հայոց մէջ» էջ 95):

Սուտ երզումներու հանդէպ հին Հայերը շատ խիստ էին, Հին Հռոմէական օրէնքով մահուամբ կը պատժուէին սուտ երզում ընողները:

Յաճախ պատումին մէջ, սուտ երզում ընողներուն մասին կը կարդանք հետեւեալ տողերը.

«Զորս բանտիւք եւ երկաթի կապանօք և պէսպէս տանջանօք «խոշտանգեն և մահ ի վերայ ածեն»: Ուրեմն հինգերորդ դարէն ի վեր Հայոց մէջ սուտ երզումները ծանր յանցանքներ կը նկատուէին:

Երզմնադանութիւնն ալ թէպէտեւ պժգալի կը նկատուէր Հայոց մէջ: Բայց քաղաքական պատճառներով այս թերութիւնը, որոշ ժամանակի մը համար, բաւական ծաւալած էր Հայոց մէջ, զոր կրնանք հետեւեալ կերպով բացատրել

Երբ Հայաստան իր քաղաքական անկախութիւնը կորսնցնելով (Արշակունեաց գահին անկումով) ենթարկուեցաւ օտար պետերուն ու մանաւանդ ոչ-քրիստոնեայ բռնապետներուն, երկու տիրապետող կողմանաւոր մէկը որ նպաստաւոր քաղաքականութիւն կը վարէր Հայոց նկատմամբ, Հայերը անոր հետ կը կապուէին նիզակակցական կապերով, որոնց ընթացքին երզումները անպակաս կ'ըլլային:

Այսպիսի երզումներուն յաճախական խզումները պատճառ կ'ըլլային երզմնադրուածներու բազմանայուն, ու այս ախտը աւելի Արարացի ոստիկանները տարածեցին Հայոց մէջ. Այս ոստիկանները սուտ երզումով միայն կրնային նուաճել հայ իշխանները, որմէ վերջ յաճախ երզմնադրուած կ'ըլլային կալանաւորելով կամ սպաննելով մեր զաւանդական հայ նախարարները ու անոնց սերունդը: Այսպիսի պատուական հայ նախարարները ու անոնց սերունդը: Այսպիսի պաշտուական հայ նախարարները ու անոնց սերունդը: Այսպիսի պաշտուական հայ նախարարները ու անոնց սերունդը: Այսպիսի պաշտուական հայ նախարարները ու անոնց սերունդը: Այսպիսի պաշտուական հայ նախարարները ու անոնց սերունդը:

Սակայն ասոր դէմ կը բորբոքի Ներսէս Ծնորային, իր «ընդհանրական»ին մէջ երբ կ'ըսէ. — «Մի՛ ոք մեղիցէ զանթողի յանցանս՝ «ուրանալով զերզմունս և երզմնադանց լինելով»: Ու մեզ կը պատուիրէ ոչ միայն ուխտապահ ըլլալ առ հաւատակիցս, «այլ և առ այլ ուրիշ ոչ միայն ուխտապահ ըլլալ առ հաւատակիցս», «այլ և առ այլ ուրիշ ոչ միայն ուխտապահ ըլլալ առ հաւատակիցս»: (Տե՛ս «Թուղթ Ընդհանրական — 192—194):

Ծանր պարազաներու մէջ երզմնադրուածները մեծ պատիժներով կը հարածուէին ու կրնամ օրինակ մը ալ Հայոց պատմութեանէն

Երբ վարդապետները Պարսկաստանէն վերադառնալէն վերջ գիշեր մը յանկարծ Հայ եպիսկոպոսները աւետարան ի ձեռին մասն Մեծ

Սպարապետ Վարդանին բնակարանը ու պահանջեցին որ առաջքը առնէր Վասակին ու մոգերու ի գործ դրած անկարգութիւններուն, Մամիկոնեան առիւծը ու ներկայ միւս իշխանները՝ ոգեւորուած Աւետարանի սիրով, կրկին ու կրկին ուխտեցին պաշտպանն հանդիսանալու Հայաստանեայց իկեղեցւոյ ու արգիլելու Պարսկական խժոճութիւնները։ Հոն գտնուող նախարարներէն մին՝ որ Զանդավան կը կոչուէր (ու որ նախապէս իրենց ուխտակից էր), յանկարծ ընդվզելով ինքզինքը երզնազանց ցոյց տուաւ։ Այս ուխտադրուած իսկոյն տեղւոյն վրայ քարկոծուելով սպաննուեցաւ։ (Զանդավանին անունը մեզ կ'աւանդէ Փարպեցին, իսկ դէպքը կը պատմէ Եղիշէն)։

Բարեմիտ մարդիկ երբեմն ջերմ կրօնասիրութենէ մղուած անխորհուրդ երզումներ կ'ընէին, որոնց պահպանութիւնը շատ անգամներ անկարելի կ'ըլլար։ Այսպիսիները, «Երզնասխալ» կ'ըսուէին, որոնց դէմ խիստ էր Զաք. Մործորեցին։ Բայց հայ եկեղեցին որ միշտ զթութիւն ցոյց կու տայ մարդկային տկարութեանց հանդէպ, երզնասըխալներուն ներողամիտ կ'ըլլար յաճախ, որոնց փրկութեան համար գրուած էր Մաշտոցին հետեւեալ կանոնը, զոր հայ քահանան երզնահարին վրայ կը կարդար.—

«Աստուած՝ որ զմարդոյ բնութիւնս փոփոխական և տկար զիրքս, և և զառի մաճութենէ մերմէ խորհուրդս ճշմարտապէս ճանաչեա՛ զառ զի խարէութեանց մերոց եղեալս, որ անոխակալդ ես, արժանաւորեա՛ թողութիւն՝ որք յանդգնեցան յերզումն շաղախիլ վասնդի զու միւսայն գիտես զզաղտնիս սրտից մերոց։ Խնդրեմք ի քէն՝ թողութիւն ասոցա և մեզ գտանել քո անճառելի բարերարութեամբդ։ Բանդի աւերնեալ է անուն քոյ և փառաւորեալ թագաւորութիւն՝ Հաւր եւ Որդւոյ և Հոգւոյ սրբոյ՝ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն»։

Այս մաղթանքէն վերջ հայ հաւատացեալը իր երզումէն ազատած կը համարուէր։

Կրօնաբոյր ու մաքուր կենցաղի այսպիսի խիստ օրէնքները ոչ միայն Հայոց մօտ այլ նաև օտարներու քով նշմարուած է։

Հրեաները երզնապահութեան մէջ Հայոց չափ խիստ էին։ Երբ երզում պիտի աային, անոնք սովորութիւն ունէին որթ մը երկու մասերու բաժնել ու անոնց մէջէն անցնիլ։ Այս սպառնալիքի ցոյց մըն էր համանման մահուան անոր՝ որ երզնադրուած կը լինէր, (Երեմիա Դ. 18)։

Ասորիները ու Պարսիկները հեռու էին Հայոց ու Հրէից կրօնական այսպիսի խիստ խղճատութենէն։ Սելւեկեաններու օրով երզնադրութեան շատ օրինակներ կան պատմութեան մէջ։ Իսկ Պարսից քով երզում դրժելը շատ սովորական արարք մըն էր։

Հին Հելլէներն ալ շատ չէին զանազանուեր Ասորիներէն ու Պարսիկներէն։ Ասոնք աւելի տեսականօրէն կը ճանչնային հաւատարմու-

Թիւնը քան՝ գործնականապէս: Աղամիմնոն անգամ կը գանգատէր Տրովադացիներու Աքայեցիներու դէմ ցոյց տուած երդմնազանցութիւնները ու կ'ըսէր թէ Արամազդ վրէժ պիտի լուծէր իրենցմէ, («Իլիական» Դ. 157—168):

Յոյն կիներու տուած երդումները «ջուրին վրայ գրուած» կը համարուէին, բայց ամենաերդմնադրուածներն էին Սպարտացիները:

Այս պատճառաւ, Յոյն իմաստասէրները աստուածներուն հասած անարգանքներուն առաջըր առնելու համար, աննշան վկաներու, այսինքն՝ բոյսերու և անասուններուն վրայ երդումներ հնարեցին: Այսպէս Չենոն, երդում ըրած էր բոյսի մը վրայ, Սոկրատ երդում ըրած էր շան մը ու Սօսիին վրայ, իսկ Աթենացի կախարդ Լամպոնը՝ երդում ըրած էր սագի մը վրայ\*:

Հռովմայեցիք սակայն, Հայոց ու Հրեաներունման հաւատարիմ էին արուած երդումներուն հանդէպ: Կիկերոն կ'ըսէր թէ երդումը ոչ թէ Աստուածներու բարկութեան, այլ արդարութեան և վստահութեան կը վերաբերի: Կիկերոնէ առաջ Հռովմայեցիք այն համոզումը ունէին թէ աստուածները վրէժխնդիր էին երդմնադրուածներուն դէմ, ու կը վարձաբերէին երդմնապահները:

Հնադարեան Հայ պատուական ազգը իր դասական անցեալով, կրօնաբոյր կենցաղով ու արժէքաւոր պատմութեամբ, կրնայ մրցիլ Արեւմուտքի և Արեւելքի շատ մը ընթրուած ազգերու հետ:

Եթէ մանրամասնօրէն ու գիտականօրէն զբաղինք և ուսումնասիրենք Հայոց պատմութիւնը, միշտ պիտի հանդիպինք հայ անցեալին այն փառաւոր ու եղակի վստմութիւններուն, որոնց կարօտը կը զգանք այսօր տներկրայօրէն:

Պէտք ենք գիտնալ սակայն, որ Հայաստանեայց եկեղեցին՝ հայ կական փառաւոր անցեալէն մեզի փոխանցուած եղակի գանձերէն մէկն է:

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

Նիկոսիա (Կիպրոս), 1939

\*) St' u Daremberg et Saglio. Diction des Antiquités Greco et Romaines № 769 եւ 169—170:

# ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐ

## Կ. ՊՈԼՍՈՅ Մ Է Զ

Հին Բիւզանդիան (Կ. Պոլիս) եռանկիւնաձև դիրք մը ունէր, զոր պահած է ցարգ:

Այս եռանկիւնը չրջապատուած էր բարձրաբերձ ու հաստաբետ պարիսպներով և ընդհանրապէս քառակուսի աշտարակներով կամ բուրգերով, որոնց մեծ մասն ու ոմանց մնացած մասին հետքերը կը մնան այսօր ալ, իրենց նախկին յիշատակներով, երբեմն ամբողջական կամ թէ կիսաքանդ արձանագրութիւններով և այլովքն հանդերձ: Եռանկիւնս կաղմած են.

Ա. Մարմարայի ծովին՝ արդի Սարայ-Բուռնուի ծայրէն, — ուր երբեմն կը բարձրանար Բիւզանդական կայսրութեան Մեծ պալատը, — մինչև Սամաթիոյ մերձակայ «Մէրմէր-քուլէ» կոչուած մարմարեայ վեցանկիւն աշտարակը, ամբողջովին ծովեղերք:

Բ. Մէրմէր-քուլէէն մինչև Ոսկեղջիւր տարածուող ցամաքամասն ամբողջ, ուր կը պարփակէ Եէփ-քուլէ, Սիլիվրի-քափու, Մէվլախանէ-քափու, Թօփ-քափու, Էտիրնէ-քափու, Թէքիր-սարայ, Էյրի-քափու, և Բլաքերնեաց պալատ, — ուր փոխադրուած է յետոյ Բիւզանդացոց կայսերական պալատը, այսօրուան ուխտատեղի, իր Լուսադրի՛րին (այագմա) պատճառաւ:

Գ. Ոսկեղջիւրի վրայ՝ Այվան Սարայ քափու, Պալաթ Յէնէր, Այիա քափու կրկին կամուրջներ, Սիրքէճի, և Սարայ-Բուռնու:

Բիւզանդիոնի մեծ պարիսպներուն առաջին հիմը դրուած է հին-գերորդ դարու կիսուն, Թէոտոս Բ. կայսեր կողմէ:

Մէրմէր-քուլէի ու Եէտի-քուլէի միջև, երկաթուղիի գծին արեւմուտք դարձած տեղը, ԼԵՒՈՆԻ և ԿՈՍՏԱՆՒԻՆԻ անունները կրող աշտարակ մը կայ, վրան մարմարեայ արձանագրութեամբ և այս երկու անուններու յիշատակութեամբ, իբրև կանգնողի աշտարակիս:

Ուրիշ արձանագրութիւնմը, որ Մէվլէվլի-խանէն կամ Մէվլախանէ-քափուի հարաւային աշտարակին վրայ դրուած է, միայն Կոստանդինի անունը կը յիշատակէ իբր հիմնադրի:

Իսկ Էյրի-քափուէն (հինն Քարիսիաս) անդին՝ դէպի Այվան-սարայ՝ Անեմայի անունը կրող բուրգն ու բանտը կայ:

Այս տեղի պարիսպները՝ ներսէն ու դուրսէն՝ երկու կարգ են, ամենի աշտարակներով:

Պարիսացիներու այս մասը կը կոչուէ՝ ԼԵՒՈՆԻ ՊԱՐԻՍՊ, և ունի հինգ բուրգ, որոնց զիրքէն՝ այս խումբը՝ Յոյներու կողմէ կը կոչուի նաև «Պենդապուրգիտն»:

ԼԵՒՈՆԻ անունը տրուած է ասոնց, որովհետև ԼԵՈՆ կայսեր կողմէ շինուած են:

Պարիսացիներու դրսի մասը՝ վերէն վար՝ կառուցուած է Հերակլ Ա. կայսեր կողմէ (610—641):

Հերակլ, որ ծագումով Հայ էր, 626ին մեծ ջարդ մը տուաւ հոս իր մայրաքաղաքը պաշարող Աւարներու, որոնք Հերակլի դէմ դաշնակցած էին Պարսից Խոսրով Բ. Թագաւորին հետ:

\* \* \*

Բայց ո՞վ են վերոյիշեալ անուններու տէրերը: Բիւզանդական պատմութեան մէջ շատ ծանօթ անձեր են անոնք:

Մին համրաւաւոր ԼԵՒՈՆ ՀԱՅԿԱՍՏՆ\* կայսրն է, որ Բիւզանդական գահին վրայ բազմած է 813էն մինչև 820, և որ ծանօթ է նաև «ԼԵՒՈՆ ԳԱՆՈՆՈՎ ԱՍՈՐ ԵՐԿՐՈՐԳ ԿԻՆՆ ԹԵՈՊՈՍԻԱ, ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒՆ» անունով: Ասոր երկրորդ կինը ԹԵՈՊՈՍԻԱ, Բիւզանդական ծառայու- թեան մէջ անուանի՝ Արշաւիր Կամսարական պատրիկին դուստրն էր:

Առաջին և երկրորդ արձանագրութեանց մէջ յիշուած ԿՈՍՏԱՆՊՈՒՆՆՈՒՆ ուրիշ մէկը չէ, այլ ԼԵՒՈՆ Հայկազնի որդւոյն՝ Սմբատի յունացած անունը կրող անձը, — այսպէս Սմբատ-Կոստանդին:

Սմբատ՝ ԼԵՒՈՆ Հայկազնի գահակից եղած է 813—820, նոյնքան ժամանակ՝ որքան որ փայլած է ԼԵՒՈՆԻ աստղը:

Ազգակցութեան այս կապը տեսնել նաև «Հայկական Ընդհանուր Դրամագիտութեան» գործին մէջ՝ երես 76, և նոյն երկասիրու- թեան մէջ՝ Բիւզանդական Հայ Կայսրերու Ցուցակը, երես 78 (Վենետիկ) 1936):

Կ. Յ. ԲԱՍՄԱՃԵԱՆ

Պարիս 1939



\*) Եւրոպացի՝ «Léon L'Arménien» անունով կը նանչնան զայն:

# ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ԴԷՄՔԸ Ը Ս Տ Դ Ր Ա Մ Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն

Մեծն Տիգրան եզակի անձնաւորութիւն մըն է Հայոց պատմութեան մէջ:

Անակնկալօրէն երեւալով պատմութեան թատերաբեմին վրայ, բնութեան ծոցին մէջ թրծուած փոթորիկի մը նման, գրոհ տուաւ իր բանակներով Այրարատեան աշխարհէն դէպի չորս ծագերը՝ Կովկասեան ձիւնապատ լեռները, Սուրբոյ կիղիչ անապատները և մեծափարթամ ոստանները, Կապադովկիոյ շէն յունական քաղաքները և Պարթևաստանի անծանօթ խորքերը, միաժամանակ դժելով նաև իր լայնատարած թագաւորութեան սահմանները:

Յանդուգն ծրագիրներ յղացող և տարերային թափով զանոնք գործադրելու նկրտող այս մեծ ինքնակալի երեւոյթը առեղծուած մը կարելի է համարել, որովհետև իրեն ծնունդ տուող և իր ծրագիրներուն կռուան եղող ազգը շատ փոքր և աննկատելի եզած էր մինչև իր օրերը\*:

Եւ իսկապէս, չնորհիւ անոր, հայ ազգը հանդիսաւոր կերպով մուտք գործեց միջազգային պատմութեան մէջ, արժանի տեղ մը գրաւելու համար հոն:

Շատ բան կը պարտինք իրեն, ինչպէս նաև իր շուրջիներուն, որոնց անուները թէև չեն հասած մեզի, բայց անկասկած անոնք իր վստահելի և անգին գործակիցները եղան:

Ժամանակակից հայ պատմիչներ գոյութիւն չունին և եթէ գոյութիւն ալ ունեցած են իրենց գործերը յաւիտեան կորսուած են:

Տիգրանի մասին մեր տեղեկութիւնները կը քաղենք Հռովմէացի, Յոյն և Հրեայ պատմիչներէ:

Մեր խորհրդաւոր պատմիչ Մ. Խորենացին, ապրած է անկէ հինգ կամ եօթը դար յետոյ և անչոր է անոր պատմութիւնը ընելու փորձին մէջ:

Ըստ Սօրաբոնի վկայութեան, Մեղրողոս Սկեպտացին որ փառաւոր ընդունելութիւն գտած էր հայ արքունիքին մէջ, գրեց Տիգ-

\*) Գեթ պարսկական եւ Մակեդոնական տիրապետութեան ընթացքին:





տենք նոյն կայսրին արձանին կը համողութիւնք որ յար և նման են իրարու:

Այնպէս որ վարժ զրամագէտ մը, առաջին ակնարկով, առանց զրամին խորագիրը կարգալու, կրնայ որոշել զրամին որո՞ւ պատկանիլը, միայն պատկերէն դատելով:

Ուշագրտու է որ Հուովմէական փողերանոցէն անյաջող գործեր շատ քիչ դուրս ելած են, բայց այս կատարեալ գրութիւնը տեւեց մինչև Գ. դարու վերջերը, որմէ ետք կը սկսի դասական արուեստի անկումը:

Տիգրանի զրամները շինուած են՝ երկու տեսակ մետաղէ՝ արծաթէ և անագապղինձէ:

Իր դիմանկարը քննելու համար պէտք է ձեռք առնել անոր չորեքադրամը (tétradrache), որ չորս զրամներու միութիւնը ըլլալով, խոշոր և ուշադրութեան արժանի է:

Դրամին երկրորդ կողմը նման է Անտիոքի մէկ զրամին, այսինքն, Անտիոքի քրաղղը\* նստած, ձեռքը արմաւինիէ տերեւ մը, իսկ ոտքին տակը Որոնդէս գետը՝ լողացող մարդու ձևով:

Անտիոքի խորհրդանշին գոյութիւնը փաստ է թէ այս արծաթէ զրամները սկսան արուել Մակեդոնի մէջ, Սուրիան նուաճելէ յետոյ (83 ն. Ք.):

Բայց շատ հաւանական է նաև որ Տիգրանակերտը շինուելէ եւ Բարեզարդուելէ ետք (77 ն. Ք.) փողերանոցը փոխադրուեցաւ, բայց զրամներու ընդունուած ձևը միեւնոյնը մնաց:

Կարելի է նոյնպէս վստահութեամբ ըսել թէ՛ առաջին զրամահատ վարպետները Յոյներ էին, բան մը որ կարելի է հետեւցնել արուեստի նրբութենէն, գրերու գեղեցկութենէն և այլևայլ հանգամանքներէն — յատուկ յունական զրամներու:

Տիգրանի թագաւորութիւնը տեւեց 40 տարի (94—54): Իսկ Սուրիոյ տիրապետութիւնը 17 տարի (83—66):

Ուրեմն 17 տարուան ժամանակաշրջանի մը ընթացքին տպուեցան վերոյիշեալ ձևով զրամները, որոնցմէ գտնուած են շատ մը նրմուշներ և կը պահուին զանազան թանգարաններու և անձնական հաւաքածոներու մէջ:

Տիգրանի շատ մը զրամները աչքէ անցուցած և համեմատած եմ իրարու, նկրտելով իր իսկական դիմագիծը կամ դիմանկարը արտայայտող հարազատ զրամը զանալու խոր փափաքով:

Անշուշտ զրամագործ վարպետները, որոնց թիւը և անունները

\*) La fameuse statue de Tyché assise sur les bords de l'Oronte exécutée par l'élève de Lysippe, Eutychidès. IV դարու վերջին տարիներ Գ. Ա.)

մեզի անծանօթ են հիմա, ջանացած են իր բուն պատկերը ներկայացնելի դրամին վրայ. այս կասկածէ դուրս է:

Բայց համեմատութիւններու արդիւնքը շատ յուսադրիչ եղած չէ, որովհետեւ մեծ զանազանութիւններ և օարբերութիւններ գտայ դէմքերուն մէջ: Մինչև իսկ գոյութիւն ունին բոլորովին արուեստէ զուրկ գործեր, որոնք անկասկած աւրուպայ կնքոցներու տակէն ելած են և կամ թէ հասարակ, օաղանդէ զուրկ արհեստաւորներու ձեռքէն:

Բայց այս զանազանութիւնները երբեք չեն կրնար համոզել թէ Տիգրանի բուն նկարը կրող դրամներ չկան:

Անկասկած կան, որովհետեւ ինչպէս ըսի, այդ արուեստին և օրուայ պահանջն էր և վերջապէս Տիգրան երեակայական անձ մը չէր որ արուեստագէտին մնար անոր կերպարանքը երկնելու գործը, ինչ որ արուեստագէտին մնար անոր կերպարանքը երկնեցին Զևսը, Ապոլոնը, Ափրոդիտէն պէս որ հին անդրիագործները երկնեցին Զևսը, Ապոլոնը, Ափրոդիտէն եւայլն, սպնձարձակ, իրենց վառ երեակայութեան ասպարէզ տալով:

Հիմա կը մնայ պիտանին անպիտանէն զատելու գործը: Անցեալ տարուան «Գաղութահայ Տարեգիրք»-ին մէջ հայկական դրամներու վերաբերեալ իմ յօդուածիս հետ զետեղեցի նաև Տիգրանի դրամներէն, գեղեցիկ օրինակի մը պատկերը — Սօֆիայի պետական թանգարանէն (զոր քիչէի վերածուած ատեն քիչ մը մեծցուած էր): Նոյնը կը դնեմ նաև հոս (պակետի թիւ 1), վրայի զիմանկարը շատ



Թիւ 1

գեղեցիկ և նուրբ է, կրնայ համարուիլ գեղարուեստական գործ, բայց Տիգրանի գիծերը շատ նրբացուած ազնուացուած են, բան մը որ չի համապատասխաներ իր հոգեկան խառնուածքին՝ խրոխտ, յանդուգն, վճռական:

Կ'երևի քանդակագործ արուեստագէտը ճիշտ մը ըրած է Տիգրանը վերացնելու և անոր գծերը նրբացնելու և ազնուացնելու, այդպէսով հայկական տիպարէն ալ հեռացած է:

Կը դնեմ նաև Տիգրանի ուրիշ մէկ դրամին պատկերը Բարիդի

Bibliothèque National-ի ճոխ հաւաքածոյէն առնուած (թիւ 2):

Պատկերը ինքնին կը խօսի, և կը կարծեմ թէ ուղիղ ճամբու վրայ եմ:

Հոս տիպարը հայկական է, քիթը և աչքը բնորոշիչ են, արտա-



Թիւ 2

յայտութիւնը աղիւցիկ և ընդհանուր առմամբ դէմքը հարազատ կը թուի:

Ահա Տիգրան մըն ալ (թիւ 3, Բասմաջեանի Հայկ. Ընդհ. Դրամագիտ. առնուած) աւելի խիստ մինչեւ իսկ վայրագ արտայայտութեամբ որ մեր թիւ 1 պատկերին ներհակ տիպար մը կը ներկայացնէ: Իսկ Տիգրան թիւ 4 մեղկ և պառաւական տիպ մըն է միայն և որքան հակասական նախկիններուն:

Ինչպէս յայտնի եղաւ, դէմքերը միօրինակ չեն, և այս երեւոյթը թերութիւն մըն է պատկերազրական (iconographie) տեսակէտէ:

Բայց ես հակամէտ եմ միջին ճամբէն ընթանալ և ընդունիլ թիւ



Թիւ 3

Թիւ 4

2 նկարը իբրև իսկական որ ճամադրութիւն մըն է հայկական տիպարի, պատկերազոյթեան և չքեղութեան:

Անոր մեծցուած ձևին մէջ (թիւ 5) կ'ուզեմ տեսնել և Մեծն

Տիգրանի կորուսեալ փառաւոր արձանը, որովհետեւ շատ անգամներ յունական դրամներու վրայ երեւցող դէմքերը և կամ կիսանդրիները հռչակաւոր արձաններու մանրանկարներն են:

Չեմ կարծեր որ խնդրին վերջնական լուծում մ'ը տուած ըլլամ,



Թիւ 5

բայց դրամագիտութեան հետեւելով խնդրին եզրակացութիւնը այս ճամբէն կ'ընթանայ:

Հիմա, քանի մը խօսք ալ մեր մէջ ընդհանրացած Տիգրանի պատկերներուն մասին:

Ս. Ղազարի Մխիթարեան միաբանութեան տպարանէն ելած դանազան հայկական պատմութիւնները զարդարուած են Տիգրանի նկարով, որուն տակ երբեմն գրուած է դրամէ մը մեծցուած ըլլալը\*:

Այդ պատկերը որ շատ ընդհանրացած է, դրամին հետեւողակա-

\*) Տես Հ. Սահակ Տեր Մովսէսեանի Հայոց Պատմութիւն 232րդ էջը:

նութեամբ գծուած է, տեսքը փառաւոր և իրականութեան մօտ է, բայց բուն Տիգրանը չէ՛:

Խոյրն ալ, թէև կը նմանի, բայց որոշ տարբերութիւններ ունի, Այրարատեան աշխարհի բնիկ հայ թագաւորաց խոյրէն:

Չենք կրնար աւելի խստապահանջ ըլլալ նկարիչին հանդէպ որ շատ կարելի է հնարաւորութիւն չէ ունեցած Տիգրանի դրամներուն շատ մը օրինակներուն համեմատութիւնը ընել:

Իսկ գալով Տիգրանի դրամներու գծագրուած պատկերներուն, որոնք մուտք գտած են լուրջ պատմական գործերու մէջ՝, ցաւալի պարագայի մը պէտք է վերագրել, որովհետև այնչս փ անճոռնի և յտզիտօրէն գծուած են որ մինակ արհամարանք կ'ազդեն և ղուրկ են ունէ արժէքէ:

Ի տես այս գեղեցիկ դրամներուն, որոնք 2000 տարիները արհամարհելով անեղծ հասած են մեղի, իրր հարազատ նշխարներ անցեալի փառքէն, պէտք է այլևս զիտական գործերէ ղուրս վտարել երկնուած պատկերները և մանաւանդ անփորձ ձեռքերէ գծուած դրամները:

Ա. ԲԵՕԹԷՆԷՃԵԱՆ

Շուկեն, 1939



\*) Տե՛ս Պատմութիւններ Հ. Սահակ Տէր Մովսէսեանի էջ 281, Գեորգ Մեհրոպի էջ 229:

## Տ Ի Կ Ն Ա Ն Յ Տ Ի Կ Ի Ն Շ Ո Ւ Շ Ի Կ

Իշխանազնունդին ՇՈՒՇԻԿ կամ ՇՈՒՇՈՒՆ, զոր ազգային յիշատակարաններ «ՏԻԿՆԱՆՅ ՏԻԿԻՆ» պատուանունով<sup>1</sup> մեղ կը ներկայացնեն, մայրն էր՝ մեծանուն քաջ զորապետ ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ նահատակին և մեծ մայրը՝ ԺԱ. դարու նշանաւոր գիտուն ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ<sup>2</sup>:

Մտաղ հասակէն առաքինի կենցաղավարութեամբ սնած ու մեծացած, Տիկնանց Տիկին Շուշիկը իր անդուզական ամուսին Գրիգոր Համգէի հետ հեղինակ կը հանդիսանայ բարեգործական և մարզասիրական ա՛յնպիսի կարեւոր գործերու, որոնք մինչև իրենց ատենը դեռ գոյութիւն չունէին Հայաստանի մէջ:

Գրիգոր Մաղիսարոս, իր հորեղբոր Վահրամ Պահլաւունի եղբրական մահուանը առթիւ շարադրած ողբերգու խիստ սրտառուչ մէկ նամակին մէջ յոյժ դրուատալից խօսքերով կը յիշատակէ իր մամիկն ու հաւը և կը գրէ<sup>3</sup>.

«Քանզի մինչև ընդ նոսա ո՛չ վանս այսպիսի և մայրաքաղաքս, ո՛չ ուսումնասիրութիւնս և ո՛չ ազատութիւնս քահանայական, և ո՛չ շինութիւնս եկեղեցեաց, քանզի սոքա արժարծեցիկն զկարգ և զօրէնսդրութիւն Մեծն Սահակայ և վանս՝ անորագոյնս շինեալ բազումս, և զաւերեալսն նորոգեալ և այս՝ «անթիւս Սոցա ո՛չ էր այլ ինչ, երբ ո՛չ՝ գնել զգերեալսն, ազատել «գրանարկեալսն, կերակրել զբաղեալսն, արուցանել զմարտաբանսն, ուսուցանել զմանկունս, սնուցանել զօրքս, օրեւան լինել «այրեաց, զըմբռեալսն ի ձեռաց հօգրաց կորելի, իւրովին ձեռօք «իսկ կերակրել զաղբասս եւ զհրօնաւորս, ամուսնացուցանել զօրքս

1) «ՇԻՐԱԿ» Հ. Ղ. Ալիւսանի էջ 52, 53, 148:

2) «ԳՐ. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՂԹԵՐԸ», Կ. Կոստանեանց, Աղետանդրապոլ 1910, էջ ԺԵ եւ ԻԳ—ԻԷ:

3) «ԳՐ. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ» բուրք ԺԱ. Կ. Կոստանեանց էջ 41—43:  
ՉԱՄՉԵԱՆ՝ ՊԱՏՄ. ՀԱՅՈՅ Հասար Բ. էջ 939: Եւ «ՀՆԱԽՍՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Հ. Ղ. Ինքիեան Հասար Գ. էջ 202:

«ընդ միմեանս: Ո՞րք վախճանէր: և ոչ անոր ընթացեալք յու-  
«ղարկաւորք լինէին գնացելոյն և մխիթար մնացելոցն, ո՞րք  
«պարտապան, երթեալ առ նոսա և ոչ հատուցանէին, կամ տըրտ-  
«մեալ և անմխիթար ելանէր յարկաց նոցա, կամ հիւանդ ո՞ր  
«գորս ոչ տեսանէին կամ տեսնել զորս ոչ ժողվէին»:

Այս տողերը ապացոյց են, թէ ո՞ր տատիճան գթոտ սիրտ ունէին  
Գրիգոր Համզէ և Տիկին Շուշիկ. թէ ո՞րչափ անձնուէր էին տնան-  
կին, հիւանդին, որբին ու տառապեալին:

Գրիգոր Համզէ երիտասարդ տարիքի մէջ 982 թուին վաղամեռ  
կ'ըլլայ<sup>1</sup>: Տիկին Շուշիկ երեսուն տարեկան ծաղիկ հասակին այրի մնա-  
լով, ա՛լ աւելի մեծ թափով ու եռանդով հոգեկին կը փարի գթութեան  
սուրբ գործին, զոր սկսած էր իր սիրազօղ ամուսինին հետ և կը շա-  
րունակէ մինչև իր ալեորիլը:

Պարզ է՝ զի վանքեր, եկեղեցիներ շինողը, գերիներ դնող-աղա-  
տողը, որբեր դաստիարակողը, հիւանդներու խնամածու եղողը, հար-  
կաւ մասնաւոր օթեաններ ալ պատրաստած էր անոնց համար, ինչ-  
պէս նաև ապաստարաններ, որոնց մասին Գրիգոր Մազիսարոս թէեւ  
բացայայտ բան մը չգրէր, բայց դժուար չէ մակարբերել, քանի որ  
Բաղրաբաններու բարգաւաճ ակրութեան մէջ կ'ապրէր Տիկին Շու-  
շիկ, հոն՝ ուր արուեստ և գիտութիւն հսկայաքայլ կը յառաջադիմէին:

Սանահնի հոչակաւոր վանքը, որ Գրիգոր Մազիսարոս մասնաւոր  
ՃԵՄԱՐԱՆ հաստատած դասախօսութիւններ կ'ընէր<sup>2</sup>). կային առանձին  
տեղեր գթութեան կարօտ եղողներու համար, հոն կար նաև դարմա-  
նատուն, որովհետև հին վանքերու գաւելթները, ինչպէս կը գրէ Իսա-  
հակ Յարութիւնեան իր «ՍԱՆԱՀԻՆ» անուն աշխատութեան մէջ<sup>3</sup>,  
«Առ հասարակ քնդարձակ լինելով, ծառայում էին նախնական ժամա-  
«նակներում, նաեւ իբրեւ քնդհանուր սեղանատուն բոլոր հաւա-  
«ացեալներու համար, որովհետեւ վանքեր նաեւ բարեգործական  
«ու մարդասիրական հաստատութիւններ լինելով՝ կերակրում էին  
«ժողովուրդի աղքատ դասակարգին, դարմանում էին հիւանդներին,  
«խնամում էին այրիներին ու որբերին եւ դրանց զաւակներին ու-  
«սում տալիս»:

Ուրեմն կարելի չէ՞ միթէ ենթադրել, որ Տիկին Շուշիկ Սանահնի  
վանքի գաւելթին մէջն էր, որ կ'երթար կատարել Գթութեան Գոյրի  
իր նուիրական գերը, այն տեղ անձամբ անձին իր խնամքները տալու  
հիւանդին և տառապեալին:

1) «ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՅՔ ԻԻՆ» Հ. Ղ. Ալիւանի, էջ 12:

2) «ԳՐ. ՄԱԳԻՍՏՐՈՍ» Կ. Կոստանեանց, էջ 1, Ե:


3) «ՍԱՆԱՀԻՆ» Իս. Յարութիւնեանի, Թիֆլիս 1898 էջ 10—11:



Եւ այսպէս՝ նէ հետեոյ կ'ըլլար իրեն ժամանակակից շայն իրմէ կէս դար առաջ վախճանած ԽՈՍՐՈՎԱՆՈՅՑ Թագունիին, որ իր Թագաւորին՝ ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾԻ հետ կը հսկէր շարունակ հինգ հիւանդներու և ուրուկներու սնարը:

Տիկին Շուշիկ, դատելով Գր. Մագիստրոսի անոր յիշատակին նուիրած վսեմ ատղերէն, կը համարձակուի ըսել, թէ Սանահին վանքի դարմանատունին խնամակալուհին էր, միակ պաշտպանը, որով անկասկած կարգած էր հոն բժշկներ կամ բժշկութենէ հասկցող պաշտօնեաներ, որոնք հարկ եղածը չէին խնայեր յօգուտ Տիկին Շուշիկի գթառատ ողորմածութեանը դիմող ամենակերպ թշուառներու:

ԺԱ. դարուն մէջ բժշկական արուեստին ներհմուտներ պակաս չէին Հայաստանի մէջ, Տիկին Շուշիկի թոռը՝ Գրիգոր Մագիստրոս իր ունեցած հոծ հմտութեանը հետ, նաև յա՛տ տեղեակ էր բժշկական գիտութեան, ինչպէս յայտնած եմ 1890ին<sup>1</sup>, և ինչպէս կա-



րելի է հետեցնել անոր մէկ երկու նամակներէն որոնք կատարեալ դասեր են բժշկականութեան<sup>2</sup>:

Ըստ այսմ ՏԻԿԻՆԱՆՅ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԻԿ իր անունովն ու բարեգործական ձեռնարկներով ժԱ. դարու հայ բժշկական պատմութեան մէկ էջը կը պծնաղարդէ:

Այս անուանի Հայունհին մեծ քաջերու մայր, Հայ զիտնականներու Մեծ-Մայր ըլլալով կ'ապրի մինչև խոր ծերութիւն և իր բեղմնաւոր կեանքը կը կնքէ 1036-1040 թուականներուն գրեթէ ութսունամեայ<sup>3</sup>, և որ կեանքը կը կնքէ 1036-1040 թուականներուն գրեթէ ութսունամեայ<sup>3</sup>,

իր անունը ա՛ջինջ կը պահեն Հայաստանի մէջ եղած հին արձանագրութիւններ<sup>4</sup>: «ՏԻԿԻՆԱՆՅ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԻԿ» անունը անեղծ կը կարգացողի դեռ այսօր Հայաստանի հին վանքերու ու տաճարներու ՏՈՒԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ ճակատը<sup>5</sup>:

Յ. Գ. Արսապուր արգիլուած է. եւ այս արգելք այն պատճառաւ, որովհետեւ վերջերս պատահեցաւ ինձ տեսնալ, որ Մխիթար Հեռացի բժեկապետին վրայ գրած քնդարձակ ուսումնասիրութեան նոյնութեամբ օտար լեզուի քարգմանուած, կը կրէր ուրիշ մը ստեղծութիւնը:

Տ. Վ. Յ. Թ.

- 1) «ԱՐՆԻԵԼԻՔ» Կ. Պոլսոյ թիւ 1929, 3 Յուլիս 1890:  
2) «ԳՐ. ՄԱԳԻՍՏՐՈՍ» Կ. Կոստանեանց էջ 110—116:  
3) «ԱՆԴ» էջ ԺԹ:  
4) «ՇԻՐԱԿ» Հ. Ղ. Ալիբանի էջ 52—53:  
5) «ԱՆԴ» էջ 148:

ՀԻՆ ՀԱՅ ԱԻԵԼՈՐԴԱՊՈՇՏՈՒԹԻԻՆՆԵՐ ԵԶՆԿԱՅ ՔՈՎ

Անհաւատալիօրէն շատ են մարդկային աւելորդապաշտութիւններն ու սնապաշտ հաւատալիքները: Ամէն դարու և ժողովուրդի մէջ ալ կը գտնուին անոնք, աւելի կամ պակաս: Զարմանալի, բայց հաստատուած իրողութիւն մըն է որ աշխարհի մեծագոյն ուստանները՝ մեծագոյն կենդրոններն են աւելորդապաշտութիւններու: «Աշխարհի վրայ չկայ քաղաք մը», կը գրէ պրոֆեսոր Ֆրանց Սպիրագոյ (Beispiel = Sammlung, Lingen 1926, էջ 272) «որ ա՛յնքան աւելորդապաշտ ըլլայ, ինչպէս Պարիս քաղաքն է»: Այդ քաղաքին մէջ 1900ին կային 2000 թուղթ բացող կիներ, 100ի չափ ձեռնահամաներ, 100ի մօտ երազ մեկնողներ: Ասոնք ասկաւին պաշտօնապէս ճանչցուածներն էին, անպաշտօններու թիւն ու համարը չկար, որոնք մէկ մեկնութեան փոխարէն 10—20 ֆրանք կը շորթէին միամիտ սնապաշտներէն: Տարբեր չէ՛ պարագան ուրիշ ուստաններու մէջ ալ: Առածը կ'ըսէ. «Երբ հաստքը դռնէն դուրս կ'ելլէ՝ սնապաշտութիւնը պատուհանէն ներս կը սողոսկի»:

Ամենաշատ տարածուած սնապաշտութիւններէն յիշենք 13 թիւր, որ դժբախտ թիւ կը համարուի, Ուրբաթ օրը իբր ճամբորդութեան ու գործի անյաջողութեան օր, պայտը՝ իբր բախտաբեր, եւն:

Եւրոպայի մէջ շատ տարածուած են կիլու թաշուհի մասին եղած աւելորդապաշտութիւնները, ինչպէս նաև սապասողնի հանդիպումի հետ կապուած սնապաշտութիւններ: Յունաց ըով տարածուած անմիտ սնապաշտութիւն մըն է ճամբան եկեղեցականի մը հանդիպումին կապել վերահաս դժբախտութիւն մը: Բուլկարներու մէկ աւելորդապաշտական սովորութիւնն է «Մարտինիցա»ն, այսինքն ժապաւիհադարձ փնջիկ մը կամ հմայիկ մը դանազան իրեղէններու, զոր մարտին խախտութիւնները կը ծախեն ու մարդիկ իրարու նուէր կը զրկեն՝ իբր միջոց արեւահարութեան դէմ, զոր պէտք է վզէն կամ կուրծքէն կախել:

Հին Հայոց աւելորդապաշտութեան մասին դաղափար մը կու տայ եզնիկ Կողբացից՝ իր «Եղծ Աղանդոց» անունով ոսկեղինիկ գրութեան մէջ: Կը թուենք հօս իրենց մեկնութիւններովը միասին:

\* Եզնիկ Կողբացի Ե. դարու հայ եկեղեցական հեղինակ մըն է, հաւանօրէն Եպիսկոպոսական ասիեանով: Իրմէ ունիմք ծաւալով փոքր բայց լեզուի եւ ոճի կողմէ անմասն գրուրիւն մը, որ «Եղծ Աղանդոց» յորջորջուած է: Նիւրքն է քրիստոնէական կրօնի շատագովուրիւն: Սուրբուած չէ քէ Եզնիկի այս գործը իմեցագիր հեղինակուրիւն է քէ ազատ քարգմանուրիւն կամ աշխատասիրուրիւն:

1. «Ակն խաղալ» (Եղծ Աղանդոց, Վենետիկ 1826, էջ 175), այսինքն՝ աչքի խաղալը, որ ըստ հայ ժողովուրդի կարծիքին՝ «նոր մէկը կամ ծանօթ անձ մը կրկին անգամ տեսնելու նշանակ է»:

2. «Յորժամ յերանս կամ յայլ անդամս միս խաղայցէ» (Անդ՝ էջ 176), այն է՝ «երբոր երանքի և կամ ուրիշ անդամներու միտը շարժի»՝ կը նշանակէ թէ այն անձը կ'ամ «ձի պիտի նստի» կ'ամ «աղնիւ զգեստ պիտի հագնի», կ'ամ «սիրելւոյն պիտի հանդիպի» եւ կ'ամ... «ծեծ պիտի ուտէ»:

3. «Յորժամ ոտն կծիցէ» (Անդ), ոտքի կծիլը, որ «ճամբորդելու կամ անձրև գալու» նշանակ է:

4. «Զեռն կծիլ» (Անդ), ձեռքի կծիլը կամ քերուելը, որ «բան մը առնուլ կամ տալ» կը նշանակէ:

5. «Փնչել» (Անդ) այսինքն՝ փռնգտալ, որ կ'ամ սատանայի (Անդ՝ էջ 176) և կ'ամ հրեշտակի (Անդ՝ էջ 177) ազդեցութեան կը վերագրուի:

6. «Լեզուին կծել» (Անդ), լեզուին կծիլը:

7. «Ունկան հարկանել» (Անդ), ականջին դռնչելը:

8. «Ըմբանին կծել» (Անդ), կոկորդին կծելը, որոնք հայ ժողովուրդի գաղափարով սատանայի ազդեցութեամբ յառաջ եկած բաներ են:

9. «Յօրանջել» (Անդ):

10. «Զգեւլ» (Անդ), որոնք նոյնպէս զիւային ազդեցութիւններ կը համարուին:

11. «Յողւոց հանել» (Անդ՝ էջ 177), այսինքն՝ հառաչել, ախու-

վախ բներ, որ սատանայի գործ կամ ազդեցութիւն կը կարծուի: Եւ վերջապէս՝ 12. և 13. «Թալանալ» և «ցնորել» (Անդ՝ էջ 179-80), թոյնալ ու խելքը կորսնցնել՝ մեր ժողովուրդի կարծիքով զիւային ազդեցութիւն կ'ենթադրեն:

Ատոնց կարգէն է նաև երազատեսութիւնը (Անդ՝ էջ 177—79):

Մեր սքանչելի հեղինակը — Եղնիկ — կը ջանայ հող հայ ժողովուրդի թիւը կարծիքն ու սնապաշտական զաղափարները ջրել, հավուրդի թիւը կարծիքն ու սնապաշտական զաղափարները ջրել, հավուրդի թիւը կարծիքն ու սնապաշտական զաղափարները ջրել, հավուրդի թիւը կարծիքն ու սնապաշտական զաղափարները ջրել, հավուրդի թիւը կարծիքն ու սնապաշտական զաղափարները ջրել, հավուրդի թիւը կարծիքն ու սնապաշտական զաղափարները ջրել:

Հ. Ե. ՊՕՂՈՍԵԱՆ

Ձ Ա Յ Ն Մ Ը Ա Ն Դ Ե Ն Է Ն

Ա. ռ. պ. շ

Մեկնամ մահուան մոլորակէն անհասցե,  
Դեպ ասդերն որ կը կորսուին. կը ծընին  
Արեւներու հուր նայուածքին սակ հրգօր,  
Կը հասնիմ տեղ մ'որ անծանօթ է ինծի...

Ու արդ. ընկեր, կը զրեմ քեզ Անդեհէն,  
Աստղային գեղածիծաղ տղերով.  
Ու հրաւէկ գիրով, հեռո՛ւ դագաղէն...  
Զի այստեղ եւս ես կը մնամ ինքնակալ...

Միջոցին մէջ Աստուած անա կը պարէ  
Մեծ կեռոյթով մ'որուն աչքերս են անվարձ,  
Պար մ'ահաւոր՝ մոլորակէ մոլորակ,  
Ու իր զծած անմասչելի յայտագրով:

'Լ հա ուրիշ պար մ'այեծուփի եւ սժգոյն.  
Պարն է այդ ձեռք ձեռքի՝ Կեանքին ու Մահուան.  
Տղանակով մը հնչուած երկինքէն.  
Եւ ի՛նչ տեսիլ. իբր եղբայր կը բաժնուին:

Բայց քեզն ու Սուսն համարձակիլ չեն կրնար  
Անդեհական այս պարին մէջը մտնել,  
Որովհետեւ պիտի ընդ միտս պատճուին  
Ու արարչին խարոյկին վրայ պիտի՝ այրին...

... Բայց դու հեծիր նառագայթի մը վրայ  
Ու հապենպէ արժանելու դեպ ինծի,  
Այն նամբայէն ասդերը գոր կը գծեն  
Եւ գոր աւխարհ պիտի՝ չի կրնայ՝ երագել...

Մի վախճար քե կը մոլորիս դու յանկարծ.  
Հարցապնդէ թռիչքիդ մէջ՝ լուսիններն,  
Ու Աստղծողին ոտանաւոր մը գրէ  
Սա մեր խարխուլ ու գեղնափայտ երկիրէն...

Քաղցր բոյրեր եղելինի ու խունկի . . .  
 Կը սօսսափեն հեգամուռնչ սերելներն  
 Ու ծաղիկներն համբոյր կու սան իրարու . . .  
 'ւ ես կ'ունկնդրեմ ասուածային լուրքիւնն:  
 Ամենուրեք հանդարտութիւն մը խորին.  
 Կը նիրհէ լեռն ինչպէս լուսինն ամպին սակ.  
 Կը սարածուի անշարժութիւն մը բեղուն,  
 Որուն կողերն են լի գանձով մ'անձանօր:  
 Կը սաղմոսեն, ցած, աղբիւրներ ներդաճակ,  
 Բրլուրներուն սեւ ոսքերուն սակ մռայլ.  
 Ու ասղիկներն — բոյրերն այս մեր գեղեցիկ—  
 Ստուերներու սակ բարեպաճես կը հծծեն:  
 Ու լուրքիւնն հետքոհեճէ կը մեծնայ . . .  
 Կը ծնրադրեն եղելինները խոնարհ,  
 Յոգնած՝ անձայն՝ կը բռնչքին բռնուներն  
 Ու կ'անհետին գիշերին մեջ սրտագին:  
 Մերք կը լսեմ հպուռներու մեղեդին  
 Որ հառաչանք մըն է կարծես կրակիծի,  
 Եւ որ մութին մեջ կը սահի ու կ'ըլլայ  
 Դաճակութիւն մը երջանիկ ու զոդրիկ:  
 Բայց վերք՝ սուրբ կապոյտին վրայ անձայր,  
 Ես կը կարդամ ողբերգութիւն մ'անձանօր,  
 Ուր լուրքեան աղմուկին մեջ՝ վեհօրէն՝  
 Կը ծրնանի Հրաւեր մեծ, երկնային . . .

Թարգմ. Յ. Ա. Հ.

ԻՕԱՆ ՕԼԹԷԱՆՈՒ

ԻՕԱՆ ՕԼԹԷԱՆՈՒ, ծնած է Փոքոչ  
 (Փիարա Նեանց) 1900ին: Համես ընս-  
 նիքի գաւակ, նախնական կրթութենէն  
 վերջ՝ ինքնագարգացումով կը հասնի նա-  
 խանձելի բարձրութեան մը: Իր երեւակա-  
 յութիւնը մեծապէս ազդուած է իր ծննդա-  
 վայրի Պիգազ լեռներու եւ Պիսրիցա գե-  
 տին խորհրդաւորութենէն:

Խոսսմնայից ոյժ մը՝ ուռմէն գրականու-  
 րեան համար:



## ԱՆՏԻՊ ԷՁԵՐ ԶՈՒՂԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԻՑ

Նոր Զուղայի ժողովրդական բանահիւսութեանց սիրային անտիպ երգերի մի ցայտուն նմուշ է «Անճահական Վարդ» խորագրով աղբոր առաջին անգամ հանդիպեցինք 1756 թուականին գրւած մի հին ձեռագիր տաղթանում: Քնարական այդ երգն իր ամբողջական կառուցուածքով ունի աւելի շուտ աշուղական երանգ և թւում է մեղ, որ աշուղ Ամիր օղու քնարին է պատկանում: Դա իր հիւսւածքով պարզ և անարեւատ, բայց զգացմունքով լի, պատկերաւոր և անկեղծ դրոշմ ունեցող գողթրիկ մի երգ է, որի մէջ ժողովրդական երգիչը բաց է անում իր սիրան ու հոգին և Չերմագին, սիրաղեղ չգացումներով երգում իր անբիծ ու մաքուր սէրը և միաժամանակ արեւելեան գունեղ ոճով, պատկերաւոր համեմատութիւններով գծագրում իր «աղիդ» ետրի գեղեցկութիւնը: Դա մի հայուն է՝ նազելի շարժ ու ձեւերով և հայկական տարազով: Այդ տեսակէտից էլ երգն ունի ո՛չ միայն գեղարուեստական, այլ աղբագրական արժէք:

Երգիչն իր սիրուհուն պատկերաւոր և նկարագրեղ լեզուով է զբւաւում, որովհետեւ նա ո՛չ միայն «սիրոյ հրեշտակն է», այլև «լուսնեակ-արեգակ», «Վարդ-մանուշակ»: Բայց չկարծէք, թէ դա երազային գեղեցկութիւն է: Իրական, չքնաղ մի էակ է նա, որի գեղեցկութիւնից սքանչաքան երգիչն երգում է նրա «նայտուն նկար» երեսը, «վարդափայլ թշերը», կարմիր-բարակ պոռնները», որոնք նման են վարդի թերթերի: Երգում է «գանա-դանա մարգարիտ» առաջները որոնք «ճերմակ սաղափ ակնի պէս» շարուած են նրա բերանում: Երգում է նա «ոսկիփնջան» աչքերը, որոնք «քաղցրահայտաց» նայուածքով հանում են երգչի հոգին: Ապա նրա «բարակ-շարակ» ունքերը, որոնք զծուած են նուրբ վրձինով: Երգում է նոյնպէս նրա քաղցրածիծաղ ժպիտը, անուշիկ լեզուն, «չէկ փունջ մազերը», «փափուկ կունները», լուսաթաթախ» ձեռները, «գերմակ փափուկ» ուքերը: Գեղեցիկ է և ետրի զգեստը. նա հազել է «մախմաա չինդար», վղից կախուած են շարան-շարան ոսկիներ, իսկ մառները զարդարում են «սալմազ-եաղութ» մատանիներ: Առհասարակ, երգչի անկեղծ մաքուր զգացումը և պատկերաւորութիւնը ներդաշնակում են միմիանց ցայտուն դժերով ու գոյներով: Շեշտենք և այն, որ երգը կրում է իր միջավայրի դրոշմը. խճողւած է իրաներէն բառերով: Ահա այդ սիրերգը:

1.

Դու քաղցր, անոյշ ու զւարթ  
Սիրոյ հրեշտակ աս (ես), ազի՛գ,  
Ունիս նաշխուն կերպարանք.  
Վարդ-մանուշակ աս ազի՛գ:

2.

Դու գառ փերած<sup>1</sup> ամ դեմնովդ  
Մեղաբարած<sup>2</sup> աս, ազի՛գ,  
Քոյրած նորահարսի պէս  
Շաս զարդարած աս, ազի՛գ:

3.

Ոսկեփայլ<sup>3</sup> կերպարանովդ  
Լուսնեակ, արեգակ ազի՛գ.  
Նոր նշանած քո փեսայիդ  
Դու քագ ու պսակ աս, ազի՛գ:

4.

Այ խանուս-խարուն աղջիկ,  
Զառած. զարդարած ազի՛գ.  
Ի՞նչ նազելի դեմք ունես՝  
Դու ոսկուով շինած աս, ազի՛գ:

5.

Հրեշտակի պէս նաշխուն աս  
Զառ փերած դեմնովդ ազի՛գ.  
Լուսնեակի պէս փայլում աս  
Բլօլ<sup>3</sup> աչք ունեցովդ. ազի՛գ:

6.

Նաշխուն նկար երեսով.  
Շաս գեղեցիկ աս, ազի՛գ.  
Անմահական վարդի պէս  
Քարցր, անուշիկ աս, ազի՛գ:

7.

Քո մարմար դեղուշ<sup>4</sup> դեմքից  
Հէլեան եմ մնացել ազի՛գ.  
Միտս անոյշ արբի<sup>5</sup> նման,  
Անուշ բուրում աս, ազի՛գ:

8.

Այդ սլաքան<sup>6</sup> երեսփոյ,  
Լոյս է քափանցել ազի՛գ.  
Շողոզդափայլ ասդերով  
Արեւ նանանչում, ազի՛գ:

9.

Վարդափայլուն քերով  
Քարցրահոտ նարդոս աս, ազի՛գ,  
Լուսնաւաղաղ նակասով  
Երկնային լոյս աս, ազի՛գ:

10.

Կարմիր բարակ պոսոցներդ  
Վարդի քերքեր ան, ազի՛գ.  
Դու<sup>7</sup> անոյշ հոտովս  
Հոգիս զմայլել աս, ազի՛գ:

11.

Դանա<sup>8</sup>-դանա մարգարիտ  
Էն քո ասամներդ, ազի՛գ.  
Ճերմակ սաղաթ ակնի պէս  
Բերանիդ շարած ան, ազի՛գ:

12.

Ոսկեմնջան<sup>9</sup> աչքերով  
Երբ նայում աս ինձ, ազի՛գ,  
Քաղցրահայեաց նայուածքով,  
Հոգիս վառում աս, ազի՛գ:

13.

Բարակ-շարակ<sup>10</sup> ունեցերով  
Իմ նազում խարուն աղջիկ,  
Քաղցրածիծաղ ժպիտովդ  
Մտիս ցնծութիւն աս, ազի՛գ:

14.

Բլբլի պէս չաչա կսաս,  
Անուշիկ լեզուովդ ազի՛գ.  
Հէշա ու միտս շուտ կսաս<sup>11</sup>  
Զանգակի ձիւնովդ. ազի՛գ:

15.

Մտումդ սեր աս վառման  
Ո՞նց մեղր ու կարագ ազի՛գ.  
Ծոցիդ վերայ ծողկել ան  
Վարդ, ասաման ու նարգիկ:

16.

Այդ ձիւնփայլ ձմերդ  
Քաղ աս ու բաղշա, ազի՛գ.  
Զուխս<sup>12</sup> շուխս ներմակ նուան պէս  
Ծոցումդ կախւած ան, ազի՛գ:

17.

Քո շէկ փունց մագերդ  
Գասայ<sup>13</sup> ծամ արած, ազի՛գ.  
Ջառով ծամ ա կղներդ  
Ոսկւով փուլաֆած<sup>14</sup> ազի՛գ:

18.

Էդ քո փափուկ կոներդ  
ձերմակ կիսաբաց, ազի՛գ.  
Քուլայ-ֆուլայ բամպակ ան  
Հեզույս սրաբաց ազի՛գ:

19.

Լուսաբարախ ձեռներդ  
Մոջան ֆարբարով, ազի՛գ.  
Չարխը<sup>15</sup> ֆաւած մասներդ  
Նաշխած դալամով<sup>16</sup> ազի՛գ:

20.

Գերմակ<sup>17</sup> փափուկ ոսներդ  
Երծաք խալխալով<sup>18</sup> ազի՛գ.  
Նազու-նազու շարժում աս  
Ծանր դադամով<sup>19</sup> ազի՛գ:

21.

Ջառ Բնարսի<sup>20</sup> լաչիկդ  
Մախմուռ<sup>21</sup> չինդարով ազի՛գ.  
Ջինն ու Եախեհ սարե սար  
Հաշի ա բուչմեքով<sup>22</sup>, ազի՛գ:

22.

Շարան-շարան ոսկինքիդ  
Վզիդ կախ սաւ, ազի՛գ.  
Ալմագ-Եադուի մասանքիդ  
Մասներդ շարած, ազի՛գ:

23.

Երծաք քաւ ֆամարդ  
Քա միջկիդ կապած, ազի՛գ.  
Մեհն դուճիդ ոսկեպաս  
Ծոցիդ նեխարած, ազի՛գ:

24.

Շա՛ս սիրուն աս խանում ջա՛ն,  
Վարդ անուշիկ աս, ազի՛գ.  
Դու երկնային դրախտի  
Շուշան ծաղիկ աս, ազի՛գ:

*Նոր-Ջուզայի ժողովրդական ստեղծագործութիւններից մեր գրական արխիւում ունինք նաև մի այլ անտիպ երգ, որ նոյնպէս սիրոյ շուրջ է անդրադառնում: Դա «Բոյից ֆեշիդայ ես» խորագրով անտիպ երգն է, որն արտագրեցինք 1740 թուականին գրած մի հին ձեռագիր տաղարանից: Արևելեան վառ զգացումներով տողորւած մի սիրերգ է դա, որի մէջ պատկերանում է ժողովրդական երգչի ներքին աշխարհը, հոգեկան զեղումներն ու յոյզերը: Երգը հիւտուած է արևելեան վառ երանդներով և ունի անպաճոյճ, պարզ, բայց պատկերաւոր կառուցուածք: Ահա այդ երգի ամբողջական պատկերը ևս.*

Բոյից<sup>1</sup> ֆեշիդայ<sup>2</sup> ես, շա՛ս սիրուն շու՛ս ես,  
ձամբայ գնում տեղդ, խիտ ֆեզ կը կոսրասես,  
Նեղ տեղ ամ ես ընկել, քող գաս ինձ ազասես:

Շա՛ս զարդարած ես դու,  
Ոսկւով շինած ես դու,  
Ջունայիր ես անգին,  
Միմախարած ես դու:

Փայլում ա պասկերդ. վառ ա շուխս մոմերդ.  
Խաղում ա խալերդ, բիւլբիւլի քեւերդ,  
Բաց դաճասեդ տեսնեմ ալմագ մաշարներդ:



Շատ զարդարած ես դու,  
Ոսկւով շինած ես դու,  
Ջուհայիր ես անգին,  
Մինաֆարած ես դու:

Սուրայի գեարդանդ հինգ, վեց, եօթն բանդ ա,  
Գիւլ գիւլ դուս գայ խօսքերդ, ողջ շաֆար ու զանդ ա,  
Ուր երթում ես, ինձ տուր նոֆար, դուլամդ ամ:

Շառ զարդարած ես դու,  
Ոսկւով շինած ես դու,  
Ջուհայիր ես անգին,  
Մինաֆարած ես դու:

Այնախանայ շինեմ, գաս դավերն նսես,  
Քառն կանդրեմ շողամ, գլուխ վեր բերեմ քեզ,  
Երբ լեզուս բլորի, ինձի դաշաբ շանես:

Բարակ շաֆար անկոն  
Ոսկւով շինած ես դու,  
Ջուհայիր ես անգին,  
Մինաֆարած ես դու:

*Երգն ունի դիւրեկան եղանակ և մինչև օրս էլ երգուում է Նոր-  
Ջուզայի հայ ժողովրդի յրթների վրայ:*

2 Մարտ 1938

Նոր-Ջուզայ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԲՍ.Ռ.ԱՐԱՆ. — <sup>1</sup>Ձառ փչրած = զառով պատած: <sup>2</sup>Մինաֆարած =  
կերտած: <sup>3</sup>Բլօլ = բիւրեղ: <sup>4</sup>Դեղլուշ = դեղնորակ: <sup>5</sup>Աթր = անուշահոտ:  
<sup>6</sup>Կլւլլան = փայլուն: <sup>7</sup>Դոր = ինչպէս: <sup>8</sup>Դանտ = հասիկ: <sup>9</sup>Ոսկեֆնջան  
= ոսկեբաժակ: <sup>10</sup>Շարակ = նուրբ: <sup>11</sup>Ջուշ տալ = լուզել: <sup>12</sup>Ջուխա = զոյգ:  
<sup>13</sup>Դաստայ = փուխ: <sup>14</sup>Փուլաջած = մանր կլոր եւ սափակ զարդարանք:  
<sup>15</sup>Ջարխ = անիւ: <sup>16</sup>Ղալամ = գրիչ: <sup>17</sup>Դարար = սար: <sup>18</sup>Դերմակ = մանր:  
<sup>19</sup>Պարխալ = ոսփի օղ: <sup>20</sup>Ղաղամ = ֆայլ: <sup>21</sup>Բնար = Հնդիկների սրբավայր  
Գանգես գետի վրայ: <sup>22</sup>Մախմուր = բալիւ: <sup>23</sup>Հաշիւ = լուսանցք: <sup>24</sup>Բուզ-  
Դէթ = ժապաւիքնաձեւ գործած զառ: <sup>25</sup>Ղուֆլ = կողպէք: <sup>26</sup>Նխարած =  
նետրս արած: <sup>27</sup>Բօյ = հասակ: <sup>28</sup>Մաջար = վանդակապաշտ: <sup>29</sup>Սուրայի = սափոր:  
հար: <sup>30</sup>Ղաֆաս = վանդակ: <sup>31</sup>Մաջար = վանդակապաշտ: <sup>32</sup>Սուրայի = սափոր:  
Գեարդան = պարանոց: <sup>33</sup>Բանդ — կապ: <sup>34</sup>Նօթար = ծառայ, սպասաւոր:  
Ղուլամ — գերի: <sup>35</sup>Այնախանայ — հայելաձուլ: <sup>36</sup>Գոս — գաս: <sup>37</sup>Դավեր —  
ամենից վերել: <sup>38</sup>Կանդրեմ — կանգնեմ: <sup>39</sup>Թլորել — կակազել:

## ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Առողջ ապրելու համար պէտք է վարել բնականոն կեանք մը: Բայց յաճախ մեր կեանքի պայմանները այնպէս մը կը դասաւորուին, որ ստիպուած կ'ըլլանք շեղումներ ընել: Շատ անգամ ալ անակնկալ և բացառիկ պարագաներ կու գան խանգարել, հակառակ մեր կամքին, մեր կենցաղի պայմանները:

Ամէն ապրող էակի կազմաւորումը այնպէս մը դասաւորուած է, որ բնականոն կեանքի մը համար ունի իր մասնաւոր պայմաններն ու պէտքերը, ու եթէ յարգուին այդ պայմանները և լրացուին պէտքերը՝ կեանքը իր շրջանը կը բոլորէ կանոնաւոր կերպով, առանց խանգարման և առանց պատահարներու:

Կեանքի այս պայմաններն ու պէտքերը ամէն էակի համար նման չեն: Կենդանական աշխարհի մէջ ամէն դասակարգ կեանքի տարբեր պայմաններ ու պէտքեր ունի:

Անասուն էակները իրենց կեանքի պայմանները զիտեն բնազդով: Առաւելապէս բնազդն է որ անոնց ցոյց կու տայ առողջ ապրելու միջոցները և նոյնպէս բնազդով է որ անոնք կը գոհացնեն իրենց պէտքերը:

Անասուններու քանի մը դասակարգները, ինչպէս ստնաւորները և թռչունները, իրենց ձագերը որոշ ժամանակ մը կը խնամեն, մինչև որ անոնք ի վիճակի ըլլան իրենք հայթայթել իրենց պէտքերը: Ասոնց ծնողքը որոշ չափով կը սորվեցնեն իրենց ձագերուն կեանքի պէտքերը հոգալու միջոցները: Բայց անդին կան անհամար ապրող էակներ, որոնք իրենց կեանք ստացած առաջին պահէն իսկ ստիպուած են կեանքի պայքարը առանձինն մղել, անոնք իրենց ծնողքի զոյրութիւնը անգամ կ'անդիտանան: Սակայն իրենց կեանքի առաջին պահէն իսկ բնազդով, անոնք միջոցներ կը դառնն իրենց կեանքի պէտքերը գոհացնելու:

Մարդու պարագան բոլորովին տարբեր է շատ մը կէտերու մէջ: Գիտակցութիւնը կարծես ըմպողցած է անոնց բնազդը: Եւ որպէսզի մարդս կարենայ ապրիլ բնականոն կեանք մը, պէտք ունի շարք մը ծանօթութիւններու:

Ծնողք մը ստիպուած է երկար տարիներ զիեցնել իր տղան ու անոր կեանքին ուղղութիւն տալ: Անխնամ զիեցում մը և սխալ ուղղութիւն մը պատճառ կը դառնան տղուն կեանքի առաջին աստիճան-



Ամենավերջի ամիսին օգտակար են կարձ և չյոգնեցնող պտոյտները: Նախընտրելի է այս միջոցը կարելի եղածին չափ հանգիստ անցնել: Երբ ծննդաբերութիւնը կը մօտենայ՝ ստինքը պէտք է մաքրել ալքօլով, որպէսզի յետոյ, կաթ առւած ատեն չհեղձուտի:

Տղան ծնած ատեն պէտք պիտի ունենայ շարք մը բաներու, պէտք է հոգալ զանոնք կանխօրոք:

ԾՆՆԵԼԷ ՅՅՏՈՅ.— Երեխան ծնելէ յետոյ մայրը պէտք է տասը օր անկողին մնայ:

Եթէ կ'ուզէք առողջ մեծցնել ձեր տղաքը, զանոնք դիւրացնէք ձեր կաթով, այնուհետեւ այս դիւրացման միջոցը պարզ և խնայողական է: Մօր կաթը տարւոյն ամէն եղանակներուն ալ լաւ է և ունի աղուն համար անհրաժեշտ տաքութիւնը ամէն ատեն:

Ծննդեան առաջին երեք օրերը տղուն պէտք է տալ միայն ջուր: Զուրը նախ կ'եռացուի և մէջը քիչ մը շաքար կը դրուի: Տղուն պէտք է տալ այս ջուրէն, գաղջ վիճակի մէջ, իւրաքանչիւր 2 ժամը 4—5 սուրճի դգար:

Մօրը կաթը ծնելէն քանի մը օր յետոյ կու գայ, ևաւ է ծննդեան 2-րդ և 3-րդ օրերը քանի մը վայրկեան մերթ ընդ մերթ ծիծը երախային բերանը տալ, ասիկա կը նպաստէ կաթին գալուն: Երեխային կաթ տալու է որոշեալ ժամերուն միայն, երբ կաթի ատեն քնացած է, պէտք է արթնցնել:

Առաջին շաբաթը կաթի ծծումը իւրաքանչիւր անգամուն կը տեէ 10—15 վայրկեան, ընդհանրապէս մէկ ստինքը կը բաւարարէ մէկ անգամուն, յաջորդ անգամ տալ միւս ստինքը: Կաթ տալ երկուկէս ժամուան ընդմիջումով: Կաթէն զատ պէտք չէ տալ ուրիշ որեւէ բան, խմելիք, ուտելիք կամ ծծելիք:

Միշտ կաթէն յետոյ տղան դնել օրօրոց:

Երկրորդ և երրորդ շաբաթներուն ալ շարունակել նոյնը՝ հետդհետէ կաթի չափը շաքցնելով: Այս ընթացքին արդէն մօր կաթը կ'առատանայ Եթէ մէկ ստինքը չբաւէ՝ միւսէն ալ տալ: Օրական տալ 8 անգամ կաթ՝ շեւկէս ժամը անգամ մը, ևաւ է գիշերը կաթ տալ չվարժեցնել:

Չորրորդ շաբաթը կաթ տալ օրը 7 անգամ (3 ժամը անգամ մը): Ամիս մը աւելի յետոյ իջեցնել օրը 6 անգամի (3ուկէս ժամը անգամ մը): Բայց կաթին քանակը հետզհետէ աւելցնել: Այսպէս շարունակել մինչև կաթէ կտրելը:

Եթէ մօր կաթը 3—4 ամիս յետոյ անբաւական գայ, պակասը լրացնել ուրիշ կաթով, բայց որոշ ժամուն մայրը պէտք է ծիծ տայ և անկէ անմիջապէս յետոյ՝ յաւելուածական կաթը: Դուրսէն տրուած կաթը պէտք անսպաման նախապէս եռացնել և գաղջ վիճակի մէջ տալ:



չէ որ մայրերը երեսխաները իրենց անկողինը առնեն: Պէտք է տղան ազատ թողուլ օրրոցին մէջ և վրան շատ ծանրութիւն չձգել: Ազատ թողուած երեսխան կը պառկի բնազդին հետեւելով և լաւ կը քնանայ:

Տղուն հանգիստ քուն պարզեւելու համար պէտք է ամէն կանխահոգութիւնը ընել: Օրրոցին պէտք չէ թողուլ որ մօտենան ճանճ, մփեղ, մլուկ կամ լու:

Նոյնպէս պէտք է մաքուր պահել տղուն մարմինը: Նորածինին մարմինը կը մաքրուի սրբելով: Չուրը եռացնելէ յետոյ թողուլ որ դաղջ ըլլայ: այնուհետեւ բամպակը այս ջուրը թաթխելով սրբեցէք բոլոր մարմինը: Ուշադրութիւն ըրէք աչքերուն, իւրաքանչիւր աչք նոր բամպակով առանձին մաքրեցէք: Այնուհետեւ կը սկսուի լողանքը: Լողանքի ջուրը պէտք է ունենայ 36 աստիճան (հարիւրամասնեայ) քաջութիւն, տղան ջուրին մէջ թողելու է 3—5 վայրկեան, այնուհետեւ լաւ մը շորցնելու է և կաթը թալէ յետոյ պառկեցնելու: Լողանքը կ'ըլլայ ամէն օր:

Պէտք է լաւ ուշադրութիւն դարձնել, որ հիւժմախար ժառանգական չէ, հիւժմախար ծնողաց տղաք առողջ կը ծնին, բայց կրնան շուտով վարակուիլ իրենց ծնողէն, ուստի պէտք է անպայման զանոնք պահուածել քոֆախտի դէմ:

Ֆրանկախար ժառանգական է, տղան կը քաշէ իր ծնողաց մեղքը: Սակայն երբ ֆրանկախարները սլայ պիտի ունեան, պէտք է անպայման ներարկումներու շարքի մը ենթարկուիլ, ասիկա որոշ չափով կը փրկէ երեսխան Ֆ անկախտի աւերէն:

Յզուրեքէն առաջ բուժել ջերմամիզութիւնը, հակառակ պարագային տղան կրնայ կոյր ծնիլ:

ԻՆՏՊՊԵՍ ԿԱԹԷ ԿՏՐԵԼ.— Ընդհանրապէս 7րդ ամիսէն կը սկսին բուսնիլ տղուն ակուաները, նախ առջևի վարիները և ապա վերինները: Մէկ տարեկան երեսխան կ'ունենայ առջևի վերի և վարի 4-ական ակուաները, 16 ամսուան եղած ատեն կ'ունենայ 4 աղօրիք ալ: Ակուաներու աչքառու ուշադուժը նշան է երեսխային աճման խանդարումին:

Ուրեմն, բնութիւնը ինքն իսկ կ'ըսէ թէ 7—8 ամսուան երեսխան կաթէն քարբեր սնունդ ալ կրնայ ստանալ:

Երեսխան պէտք է կաթէ կորել հեղհետէ, սննդաւորումի յանկարծական փոփոխութիւնը կրնայ սպառնալ առողջութեան: Հետզհետէ պէտք է օրական ստինքի թիւը զեղչել և կաթէն քարբեր սնունդի չափը համեմատական չափով աւելցնել, այնպէս որ ժամանակի ընթացքին տղան ինքնին այլևս ստինքը մերժէ և մօրկաթէն հրաժարի:

Ակուայ բուսնելու ատեն երեսխային կաղձաւորումին մէջ տրոգէն իսկ վրդովում մը կ'ըլլայ: կաթէ կտրելը պէտք չէ այդ միջոցին զուգադիպեցնել:

Մօր կաթը մինչև 12 ամսուան երեխային լիուլի բաւարարութիւն կու տայ: Պէտք չէ անպարել աղան կաթէ կարելու համար:

Տղան 8 ամսուան եղած ատեն օրական մէկ ստինքին տեղ կը արուի կերակուր (կաթի մէջ՝ փուռած քիչ մը ալիւր՝ վրան աւելցնելով քիչ մը շաքար ու կարագ), ամիս մը յետոյ կը արուի օրական 2 անգամ կերակուր, աւելի յետոյ 3 անգամ կերակուր և 3 անգամ կաթ: Երբ տարեկան մը ըլլայ՝ օրական 4 անգամ կերակուր և միայն գիշերուան քունէն առաջ ստինքով մէկ անգամ կաթ: Այսպէս քանի մը ամիս ալ կը շարունակուի և այնուհետև ինքնին արդէն կաթէն կտրուած կ'ըլլայ:

Երբեմն երեխաներ յամառօրէն կառչած կը մնան ստինքին եւ երբ կաթ չարուի՝ անընդհատ կու լան: Այս պարագային ստինքը պտտելու է թթու հեղուկով մը, աղան այս կերպով ինքնին կը թողու ստինքը:

Իբր կերակուր հետզհետէ կարելի է տալ կաթով ձաւար, կամ բրինձ, ֆոսֆատին, ֆարինլաքթէ, թարիոքա, պիւսքիւրի թացան եւայլ, իսկ իրիկունները կարելի է տալ նաեւ կաթով բանջարեղէնի բիւրէ:

Մայրերուն համար ալ լաւ է աստիճանական կաթէ կտրելը, որովհետև իրենց կաթն ալ աստիճանաբար կը նուազի և կաթէ բոլորովին կտրած ատեննին իրենց կաթն ալ գրեթէ կը չորնայ:

Կաթէ կտրուած տղուն սննդականոնը պէտք ըլլայ, միշտ կաթ, խաշած կերակուրներ, հացաթան, ապուր, բանջարեղէնի բիւրէ, կարկանդակ: Լաւ մարտողութիւն ունեցողներուն կարելի է տալ օրական հաւկիթ մը: Երեք տարին լրացնելէ առաջ պէտք չէ միս տալ, անկէ հաւկիթ մը: Երեք տարին (ուղեղ խաշած ձուկ, վառեակ, հորթ) յետոյ ալ սկսիլ ձերմակ միսերէն (ուղեղ խաշած ձուկ, վառեակ, հորթ) և այն ալ օրական մէկ անգամ՝ կէսօրին: Իբր ըմպելի տալ միայն շուր:

ՏՂՈՒՆ ՈՏՔԻ ԵՒ ԵԼԻԵԼԸ. — Երեխան 3—4 ամսուան եղած ատեն, զերեկը արթուն եղած ատեն լաւ է ազատ թողուլ սենեակին մէջ: Ան հետզհետէ կը սկսի տեղափոխուիլ սողալով, յետոյ կը նստի, կ'աշխատի ինքնին ոտքի ելլել և օր մըն ալ քայլ փոխել:

Ընդհանրապէս երեխան մէկ տարեկան ըլլալէ առաջ չի քայլեր, Ընդհանրապէս երեխան մէկ տարեկան ըլլալէ առաջ չի քայլեր, Ընդհանրապէս երեխան մէկ տարեկան ըլլալէ առաջ չի քայլեր, Ընդհանրապէս երեխան մէկ տարեկան ըլլալէ առաջ չի քայլեր, Ընդհանրապէս երեխան մէկ տարեկան ըլլալէ առաջ չի քայլեր:

Ընդունակութիւնը ամէնէն աւելի սնունդէն կախում ունի. մօրը ստինքէն սնանող երեխան, զիտուած է որ, աւելի շուտ քայլել կը սկսի: Տղան բռնի ոտքի կեցնելը կամ քայլեցնելը վտանգաւոր է, կրնայ անոր սրունքի ոսկորներուն կորացումին պատճառ դառնալ:

Տղան բռնի ոտքի կեցնելը կորացումին պատճառ դառնալ: Ընդունակութիւնը կը խանգարուի, անոր բնականոն Երբ տղուն սննդառութիւնը կը խանգարուի, անոր բնականոն

աճուճն ալ տեղի չ'ուեննար և հետեաբար անոր շարժելու կարողութիւնը կը տկարանայ, ուրեմն հարկ է նախ կանոնաւորել սննդառութիւնը:

Թերի սննդառութիւն մը կրնայ պատճառ դառնալ ոսկրաթեքուժեան, կը տկարանայ աղուն ջղային գրութիւնը, կը կակուղնան ոսկորները և կը չարափոխուի կմախքը: Սակրաթեք երեխան ուշ կը քալէ:

Եթէ կ'ուղէք որ ձեր երեխան շուտով ոտքի ելլէ և լաւ քալէ, առէք անոր ոսկորները զարգացնող սնունդ, որովհետեւ ոսկորներն են որ զայն կանգուն պիտի պահեն: Ծառեր, իբր թէ իրենց երեխաները քալելու վարժեցնելու և անոնց իյնալը արգիլելու համար, կը գործածեն անցանիւ, սահնակ, սայլիկ եւայլն, ասոնք աւելի վնասակար են քան թէ օգտակար:

Բայց բաւական չէ որ տղան քայլի դիտնայ, պէտք է ան լաւ քալել սորվի: Ծառ աղաքներ քալելու մէջ ակտաւոր սովորութիւններ կ'առնեն, ոտքերնուն մէկը մէջը կը տանին, ծուռ կը կոխեն, կոշիկի մէկ կողմի վրայ կը կոխեն եւայլն: Եթէ ուշադրութիւն չգործուի՝ կը հիննան այս սովորութիւնները և մարմինը կը տղեղցնեն: Ծնողքը ուրեմն պէտք է հսկէ և սխալ շարժումները ուղղել տայ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ծնողներու ամէնէն մեծ պարտականութիւնն է իրենց աղաքը վարժեցնել ճշտապահութեան: Կերակուրները պէտք է տալ որոշ ժամերուն միայն: Քունը բնականոն զարգացումին անհրաժեշտ պայմաններէն մէկն է, որոշ ժամուն պէտք է աղան մանէ անկողին և որոշ ժամուն ալ արթննայ: Առողջ ու կուշտ տղան անկողին մտածին պէս կը քնանայ անծակ կերպով և որոշ անհրաժեշտ քունը առնել յետոյ կ'արթննայ, զիչերը անկողինին մէջ չի տապալակիր:

Պէտք է զգուշանալ փոքր աղաքը երեկոյթներու և մեծ բազմութիւններու մէջ տանելէ:

Պէտք չէ երբեք աղաքը հնազանդեցնելու համար զանոնք երեկայական բաներով վախցնել:

Պէտք չէ երբեք աղաքը նախապաշարել:

Մի դարձնէք ձեր աղաքը քմահաճ: Անոնք չափ անգամ իրենց քմահաճոյքը գոհացնել տալու համար կու լան, պէտք չէ տեղի տալ, անգամ մը որ աղան լալով իր ուզածը ձեռք կը բերէ, այլեւ լալկան կը դառնայ:

Երբ տղուն պէտքերը ժամանակին կը հողաք, երբ ան իր պէտքցու սնունդը ժամանակին կ'առնէ, ժամանակին կը քնանայ, այլեւ լալու պատճառ մը չ'ուեննար: Այլապէս, երբ փոքր տղաք կու լան՝ կը նշանակէ թէ անհանդիստ են, հիւանդ են, ուրեմն պէտք է ըստ այնմ ուշադրութիւն դարձնել:



Ընդհանրապէս մարդիկ իրենց անհրաժեշտ սնունդէն աւելի կ'ուտեն, ասիկա փնասակար է, մարտողութիւնը կը խանգարէ և խաղաղ քունը կ'արգիլէ: Որկորամուտութիւնը շատ գէշ սովորութիւն մըն է և անգամ մը վարժուելէ յետոյ դժուար է անկէ հրաժարիլ: Ձեր տղաքը վարժեցուցէք չափով ուտել:

Մաքրութիւնը առողջութեան նախապայմանն է, փոքր տարիքէն իսկ վարժեցուցէք ձեր տղաքը մաքուր մնալու: Առտուան լուացողիւր, կերակուրներէ յետոյ բերանը լուալը և ակռաները մաքուր պահելը աղուն մէջ պէտք է շատ կանուխէն սովորութիւն դարձնել:

Մաքուր խօսիլը քաղաքավարութեան պահանջն է: Պէտք է այս մասին ալ մեծ ուշադրութիւն դարձնել: Նոր լեզու ելլող տղոց ջանացէք բառերը ճիշդ արտասանել տալ, երեսնայական տառադարձուած բառեր արտասանել տալը պարզ ժամավաճառութիւն է: Թող տղաք թիչ մը ուշ խօսիլ սկսին, բայց լաւ խօսիլ սորվին:

Վերջապէս պէտք չէ երբեք մոռնալ ժողովրդական առածը որ կ'ըսէ. ծառը պղծիկուց կը ըսկի: Գէշ սովորութիւնները իրենց սկզբնական շրջանին կարելի է ուղղել, բայց աննկատ թողուած պարագային անոնք կ'արմատանան և անուղղելի կը դառնան:

Երբ տղայ մը պղծիկուց կ'օժտուի լաւ սովորութիւններով և կը վարժուի յարգել բնականոն կեանքի պայմանները, միջավայրը և պարագաները իսկ դժուար կրնան շեղեցնել զայն ուղիղ ճամբէն և մոլորեցնել, որով ան արդէն կ'ըլլայ առողջ, ճշտապահ, կարգապահ և ըստ ամենայնի ատակ բոլորելու բնականոն կեանք մը:

Տղուն ապագան ծնողքն է որ կը կերթէ, պէտք չէ ուշադրութենէ վրիպեցնել այս պարագան:

## Մ Ե Ր Ս Ն Ն Դ Ա Ի Ո Ր Ո Ի Մ Ը

Առողջ ապրելու նախապայմանն է ունենալ բպւարար և լաւ արիւն: Մարմինի իւրաքանչիւր մաս կը կազմուի, կը պահպանուի եւ կ'աճի արիւնով:

Արիւնը կը կազմուի մեր առած սնունդով: Կաւ և բաւարար արիւնը պայմանաւորուած է մեր սնունդին, և աւ և բաւարար արիւնը կարելի չէ ունենալ:

Գէշ սնունդով լաւ արիւն կարելի է պայմաններուն յարմարիտ է որ մեր մարմինը օժտուած է պայմաններուն յարմարիտ հիանալի ուժով մը, բայց այս ուժը անկարող է գէշ ու անկանոն սնունդը հարուստ արեան վերածելու: Միւս կողմէ ուժը կազմողն ալ արիւնն է:

Ուրեմն կարելի է ըսել որ մեր կենցաղի բնականոն ընթացքը

մեծ մասով կախուած է մեր ստացած սնունդէն:

Ի՞նչպէ՞ս ՈՒՏԵՆ. — Մսունքը արեան կը փոխակերպուի մարսու-

Միամ  
Արեակ Ապոյանեանի  
Գանիք — Մարաբա

ղութիւնով: Չմարտուած սնունդ մը ո՛չ միայն օգուտ չունի, այլ մեր մարտողական խողովակը պարապ տեղը կը յոգնեցնէ և կը մաշեցնէ:

Լաւ մարսելու համար պէտք է լաւ ծամել: Ստամոքսը ակռայ չունի: Կերակուր մը որքան շատ մնայ բերնին մէջ՝ այնքան քիչ կը մնայ ստամոքսին մէջ: Լաւ ծամուած կերակուր մը իր սննդատու նիւթերուն գրեթէ ամբողջութիւնը մարսելի կը դարձնէ:

Լաւ ծամելու համար կակուղ ուտելիքներու հետ կարծր բաներ ալ ուտելու է, որովհետեւ ասոնք կը զրգռեն լորձունքի արտադրութիւնը: Ծամելուն նպատակն է կերուած նիւթերը մանրացնել և զանոնք լորձունքով շաղխել:

Լաւ կարենալ ծամելու համար ակռաները անհրաժեշտ են, անոնցմէ իւրաքանչիւրը իր դերը ունի: Խնամք պէտք է ասնիլ ակռաներուն, եթէ պակասներ կան՝ պէտք է արհեստականօրէն լրացնել:

Նախընտրելի է քիչ ուտել լաւ ծամելով, քան թէ ստամոքսը լեցնել չծամուած նիւթերով, որովհետեւ չծամուած կլլուած նիւթերուն մեծ մասը առանց մարսուելու կ'անցնի մարտողական խողովակէն և կ'արտաքսուի, որով արիւնը չի կրնար օգտուիլ անոնցմէ:

Լաւ մարսելու համար պէտք է ճաշերու մէջ կանոնաւորութիւն դնել: Անժամանակ և խառն ուտելով պատճառ կը դառնանք մեր մարտողական խողովակին խանգարումին: Երբ սպասենք կերակուրի ժամանակին և այն ատեն միայն ուտենք՝ աւելի արտադրով կ'ուտենք և համ կը զգանք:

Օրական 3 անգամ ուտելը բաւական է, նստուկ կեանք ունեցողներուն համար նոյնիսկ 2 անգամը բաւական:

Ոչ մէկ ատեն ստամոքսը պէտք է ծանրաբեռնել, ուտելու մէջ ծայրայեղութիւնը կը հիւանդացնէ, այնուհետեւ պատճառ կը դառնայ ստամոքսի ընդլայնումին, որուն անմիջական արդիւնքը կ'ըլլայ զրուարամարսութիւնը:

Յաճախ զգացուած ստամոքսի պարապութիւնը և մարելիքը՝ անօթութեան նշան չեն, այլ յոգնած ստամոքսին աղաղակն են որ հանգիստ կ'ուզէ:

Առաւօտները և իրիկունները նախընտրելի է թեթեւ և դիւրամարս բաներ ուտելու: Օրուան ճաշին է որ կարելի է ծանր բաներ ուտել: Երբ իրիկունը մեր ստամոքսը ծանրաբեռնենք՝ լաւ չենք կրնար քնանալ:

Մեր գործերը այնպէս մը դասաւորելու ենք, որ կէսօրուան ճաշէն յետոյ, երբ մեր ստամոքսը ծանրաբեռնուած է, բաղաժառար թեթեւ և չափաւոր աշխատանք տանինք: Մարտողութեան համար մեր ստամոքսը շատ արեան պէտք ունի, ծանր աշխատանքը զայն այդ արիւնէն կը զրկէ, որով մարտողութիւնը կը ակարանայ:

Ի՞նչ ՈՒՏԵՆ. — Մարդս բնութեամբ պողակեր է, անոր սկզբնական սնունդի նիւթերը եղպծ են պտուղ, բանջարեղէն և արմաթիք և

այս երեք նիւթերը մարմինին ուժերը պահելու համար անհրաժեշտ բոլոր սնուցիչ տարրերը կը պարունակեն, այնուհետեւ անոնք այնքան բազմազան են, որ ամէն կլիմայի, եղանակի, խառնուածքի և զբաղումներու պահանջը կը լրացնեն և ամէն ճաշակի գոհացում կու տան:

Սակայն դարերու ընթացքին, քաղաքակրթութեան բերումով, մարդիկ վարժուած են ասոնցմէ տարբեր սնունդներու ալ և իրենց կազմաւորումը ընտելացած է անոնց, այնպէս որ ներկայի քաղաքակրթ մարդը մնացած չէ այլևս նախկին պտղակեր էակը:

Բոլոր մարդոց խառնուածքը նոյնը չէ, և ամէն մարդ նոյն կերպով չի կրնար սնանիլ: Նոյն նիւթը տարբեր մարդոց վրայ տարբեր ազդեցութիւն կ'ընէ, այս պատճառաւ ալ իւրաքանչիւր ոք ուշադիր ըլլայ զանազան սննդեղէններու իր վրայ գործած ազդեցութեան եւ ըստ այնմ կատարէ ընտրութիւնը:

Միշտ նախընտրելի են պարզ պատրաստուած կերակուրները, բարդ, շատ իւղոտ և շատ համեմուած կերակուրները դժուարամարս են և ստամոքսը կը յոգնեցնեն, նոյնն է պարագան շատ ճիւղ կարկանդակներու:

Մարդուս կազմաւորումը այլազան տարրերու պէտք ունի, ասոր համար ալ սննդեղէններու շատ տեսակներ պէտք է գործածենք, բայց ասոնք՝ փոխն ի փոխ և ո՛չ թէ մէկ անգամէն: Իւրաքանչիւր ճաշի՝ փոքր պէտպիսութիւն մը միայն բաւական է, հակառակ պարագային մարսողութիւնը կը դժուարանայ:

ԿԱՅՆՆԵՆՆԵՆՆԵՆ.— Մարդիկ շատ կանուխէն ընտելացած են կաթին, որ սքանչելի սնունդ մըն է: Բայց հարկ է ձեռք առնել կարգ մը նախազգշութիւններ: Կաթը շփումի մէջ մտնելով օդին անմաքրուածիւններուն, շուտով իր մէջ կ'ընդունի զանազան վարակիչ մանրէներ և պատճառ կը դառնայ հիւանդութեանց: Կաթը պէտք է պահել ներ և պատճառ կը դառնայ հիւանդութեանց: Կաթը պէտք է պահել շատ զով տեղ ու լաւ ծածկուած: Երբեք պէտք չէ գործածել հում: Շատ եփուած կաթն ալ կը կորսնցնէ իր կենսահիւթը: Երբ ան եռալու մօտ լաւ կը թրթռացնէ իր երեսը, այլևս անոր մէջ կենդանի մանրէ չի մնար և պէտք է վար առնել:

Կաթին սերը կենդանական իւղերուն լաւագոյնն է, սննդարար և օգտակար: Նոյնն է կարագը, պայմանով որ թարմ ըլլայ, հինցած կարագները յանձնարարելի չեն: Տարբեր է պարագան հալած կարագին որ կերակուրներու պատրաստութեան կը գործածուի:

Թարմ պանիրը առողջարար և զիւրամարս է և միշտ նախընտրելի աղած կամ արհեստական պատրաստուած պանիրներէն:

Մածուը շատ օգտակար և պիտանի թթու և ալքօօլ: Ան սննդախմորումով յառաջ կու գան կաթնային թթու և ալքօօլ: Ան սննդարար է իր պարունակած նիւթերուն բերումով, քնաբեր է իր պարունակած ալքօօլին պատճառով եւ շնորհիւ կաթնաթթուին՝ հականխա-

կան և մանրէասպան ուժ ունի: Հաստ աղիքին մէջ մասնաւոր մանրէներ կան որ յաճախ իրենց թոյնով պնդեցողութիւն յառաջ կը բերեն և արեան ճնշումը կը բարձրացնեն, մածուցիկ պարունակած մանրէները կը հակազդեն այդ վնասակար մանրէներուն և դանոնք կը փճացնեն:

Ամառ ատեն թան խմել օգտակար է, իր մէջ պարունակող քիչ քանակութիւնով կաթնային թթուներ զովացուցիչ է: Թանապուրը ամառուան լաւագոյն ուտելիքներէն մին է:

ՊՏՈՒՂՆԵՐ.— Զրուտ կամ մտուտ պտուղները — տանձ, խնձոր սալոր, սերկեւելի, խաղող, դեղձ, կեռաս, բալ, ծիրան եւայլն— ընդհանրապէս կը պարունակեն թթուներ և անգործարանական աղեր, որոնք անհրաժեշտ են մեր կազմաւորումին: Սակայն պայման է պետուղը ուտել հասած վիճակի մէջ: Խակ պտուղները թէ ակտաներուն կը վնասեն և թէ ստամոքսին: Միայն շատ թթու պտուղներն են որ կարգ մը մարդոց չեն յարմարիր: Զգուշանալու է նոյն ատեն թէ պտուղ և թէ բանջարեղէն ուտելէ, որովհետեւ երկուքը միասին դժուար կը մարսուին: Շատ յանձնարարելի չէ անօթի փորով պտուղ ուտելը, պտուղը պէտք է ճաշին մաս կազմէ: Երբ երկու ճաշերու մէջ պտուղ ուտելու ըզննք, պէտք է քիչ քանակութեամբ ուտենք:

Կծեպաւոր պտուղները — ընկոյզ, կաղին, նուշ, սիստակ — աւելի սնունդներ են և երբեք յանձնարարելի չէ դանոնք ուտել երկու ճաշերու միջև: Ասոնք իւղոտ ըլլալուն համար կը գործածուին նաև կարկանդակներու և սննդարար կերակուրներու մէջ, սակայն ասոնց մեծ չափով գործածութիւնը կրնայ անմարսողութիւն և յօգացաւորութիւն յառաջ բերել. ուստի յանձնարարելի է անոնց չափաւոր գործածութիւնը: Պիստակը ընդեղէն է, հում ուտելը լաւ չէ, պէտք է խաշել կամ փուռէ անցնել, վերջի պարագային ուշադրութիւն ընել որ չխորովուի, որովհետեւ դժուարամարս կ'ըլլայ:

Զիթապտուղը սննդարար է, կը գործածուի իբր կերակուր: Շատ գործածութիւնը կրնայ պնդութիւն յառաջ բերել: Նարինջը, մանաւանդ երբ ծառին վրայ հասած է, շատ առողջարար է:

Մարդս, աստիճանական վարժութիւնով, կրնայ միայն պտուղներով ալ սնանիլ:

ԱՐՄՏԻՔ.— Արմտիքները — ցորեն, գարի, հաճար, վարսակ եւ քիպացորեն եայլն — որեւէ ձևի տակ ուտուելով սննդատու մեծ յատկութիւններ ունին, միայն թէ արհեստական կերպով անոնք զրկուած չըլլան իրենց կարգ մը օգտակար տարրերէն: Թեփը կամ հացահատիկին կեղեքը առատ կենսահիւթ (վիթամին) ունի, փայլուն բրնձը եւ բարակ ընթիւր ալիւրը զրկուած են կեղեքէն և պակաս սննդարար են, անոնք այլևս կենսահիւթ չունին և միայն օսլա կը պարունակեն: Ուրեմն նախընտրելի է թեփը չհանուած ալիւրով հացը և կեղեքով բրնձը:



առարկան դարձուցած են զայն: Մինչդեռ հեղինակաւոր կենսաբաններ և բժիշկներ առանց ալ և այլի կը յայտարարեն հակառակը:

Առողջ և երկար ապրելու համար պէտք է չափաւորենք միսի գործածութիւնը և ընդհանրապէս ուտենք բանջարեղէնի հետ, կամ թեթե խորոված և քիչ քանակութիւնով:

## Ա Ռ Ո Ղ Ջ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՔՈՒՆԸ.— Արթուն վիճակի մէջ մեր ուղեղին և մեր մկաններուն յարատե աշխատանքը կ'այրէ նիւթը և մեր հիւսուածքը կը պատէ վնասակար չորութիւն մը: Եթէ նոյնիսկ մեր մկանները չյոգնեցնենք, դարձեալ մեր կազմաւորումը կը թունաւորուի: Ստոյգ է որ մեր արտահանման գործարանները — երկկամունք, մորթ, գեղձեր — կը վանեն այս թոյները, բայց արթուն վիճակի մէջ չորութեան կուտակումը աւելի գործունեայ է քան անոր բարձումը: Այս կուտակումն է, որ ներգործելով շղային կեղրոններուն վրայ, քուն կը բերէ: Քունի ընթացքին արտահանման գործարանները այս կուտակուած թոյնը կը մաքրեն և երբ այս աշխատանքը կը լրանայ կ'արթնանք: Քնանալու յարմար անկողինը պէտք է ո'չ շատ կակուղ և ո'չ այ շատ կարծր ըլլայ, լայն ըլլալու է որպէսզի կարենանք կէս մը ծռած տարածել մեր անդամները: Գլուխը թեթեակի բարձր պէտք է բռնուի, պէտք է գլխու բարձր շատ կակուղ ըլլայ, որպէսզի անոր մէջ չթաղուի: Անկողինի հազուստը պէտք է ըլլայ լայն և մարմինին ոչ մէկ կողմը պէտք է սեղմէ: Ամէնէն յարմար ձևն է աջ կողմի վրայ պառկել: Փորի վրայ պառկելով կ'անդամալուծենք ստամոքսի և աղիքներուն շարժումները: Կռնակի վրայ պառկելով մեր ստորին անդամներուն ազատ կծկումը կ'արգիլենք, այնուհետև ուղեղի յետսակողմի բլթակը բարձին վրայ ճնշուելով կը պրկէ ծոծրակը և կ'ունենանք գլխու ցաւ, բանդագուշանք, կը խոկանք և զարհուրելի երազներ կը տեսնենք: Չախ կողմի վրայ պառկելով մեր լիարդը, որ աջ կողմն է, կը ճնշէ ստամոքսին վրայ:

Լաւ է ննջասենեակին պատուհանը քիչ մը բաց ձգել, միայն թէ բաց մասին դէմ վարագոյր քաշել՝ արգիլելու համար օդի հոսանքը: Մնկողինին մէջ պէտք է ոտքերը տաք և գլուխը պաղ պահել: Առողջապահիկ չէ ամբողջ մարմինը ծանր վերմակով ծածկել: Չափաւոր վերմակ մը լաւագոյն կերպով կը պաշտպանէ մեր մարմինը սրտերէն դէմ, միայն զգուշութիւն ընելու է, որ մանաւանդ մեր ոտքերը չբացուին: Վերմակը պէտք է քաշել մինչև վիզը, գլուխը թողլով բաց:

Ննջասենեակին կահաւորումը պէտք է ըլլայ պարզ, զարդեր, երկներ, ժանեակներ պէտք չեն, անոնք փոշի կը բռնեն: Զգուշանա-




քի արիւնհանոսութեան, անցուկ աղեթափութեան եւայլն ատեն: Շատ տկարացած հիւանդները միայն բժիշկին խորհուրդով պէտք է լուծողական առնեն:

**ԾՈՍՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ** — Յաճախ երբ մարդ ուժգին յուզումի մը կ'ենթարկուի, երբ գլխու ցաւէ կը տառայի, երբ անքնութիւն ունի, երբ նախորդ իրկուներ մեծ կերուխում ունեցած է՝ անորժակ չ'ունենար: Այս պարագային լաւ է մէկ-երկու ճաշ դանց ընել: Սակայն նոյն ատեն խմել բուսաջուր՝ ընկերացած թարմ պտուղի մը:

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ**. — Յոնձնարարելի է միշտ տան մէջ ի ձեռին ունենալ կարգ մը անհրաժեշտ դեղեր: Ասոնց գլխաւորներն են. — 1. Բինին՝ ջերմի և պաղառութեան համար (մէկ անգամէն 0,50 հրամ) 2. Սուլֆատ տը սուտ կամ մանեէզի (չափահասներու համար 30 - 40 կրամ) կամ հնդկական իւզ (չափահասներու համար ապուրի դգալ մը)՝ իբր լուծողական: 3. Թէնթիւր տ'իոտ և ասիտ պորիք (լիդր մը եռացուցած ջուրի մէջ ապուրի դգալ մը հալեցուած)՝ իբր հակահիստիական: 4. Թթուածնացեալ ջուր՝ վերքերը լուալու համար: 5. Լաւտանիւմ (չաքարի կտորի մը վրայ կամ քիչ մը ջուրի մէջ 5 - 10 կաթիլ)՝ փորահարութեան և փորի ցաւի դէմ: Ինչպէս նաև բամպակ և պատատի լաթ:

**ՄԱՐՄԻՆԻ ՄԱՐՐՈՒԹԻՆ**. — Եզուենգներուն տակ կը վխտան ամէն կարգի հիւանդութեանց մանրէները: Կամ պէտք է շատ կարճ կտրել և կամ ամէն ճաշէ և պառկելէ յառաջ խոզանակել տաք ջուրով եւ օճալով:

Տրամաբանական է լուացուիլ նախքան պառկելը: Յերեկին մանաւանդ մեր դէմքը և ձեռքերը կ'աղտոտին փոշիներէն, քրտինքէն եւայլն: Երբ կերակուրէն յետոյ բերաննիդ կը մաքրէք, առանց ամբողջովին լուացուելու անկողին չ'տնենք այդ աղտոտութիւններու և մանրէներու հետ: Լուացուելէն յետոյ լաւ քուն ալ կ'ունենանք, իսկ միւս կողմէ մեր յաջորդ օրուան գործը թեթեւեցած, երբ պարզ լուացք մը արդէն բաւական կ'ըլլայ:

 Մեր ակուանները մեծ ներգործութիւն ունին մեր առողջութեան վրայ: Լաւ ակուաներով լաւ կը ծամուի, լաւ ծամելով լաւ կը մարտուի և լաւ մարտելով՝ առողջ կ'ըլլանք: Ուրեմն պէտք է գուրգուրանք մեր ակուաններուն վրայ: Երբ մեր բերանը միշտ մաքուր պահենք և իւրաքանչիւր կերակուրէ յետոյ ակուաններուն վրայ որևէ աղտոտութիւն չ'թողունք, անոնք դժուար կը փախն: Շատ մարդոց ակուանները կը թափին առանց փտելու, որովհետև լորձունքին մէջ գտնուող քանի մը տարրեր կը քարանան լինտերու և ակուաններու միջև և հետզհետէ ակուան լինտերէն կը բաժնեն: Տեական ակուաներու մաքրութիւնը կ'արդիլէ այդ քարացումը:



Ակոսաները պէտք է խողանակել լինաէն սկսած ղէպի բացը, հորիզոնական կամ ղէպի լինտը խողանակումը պատճառ կը դառնայ ակոսն լինաէն բաժնելու:

ԼՈՂԱՆՔ.— Տաք ջուրով լողանքի ատեն ջուրին աաքուծիւնը պէտք չէ հարիւրամասնեայ 36 աստիճանէն աւելի ըլլայ: Լաւ է ջուրին մէջ դնել ափ մը սոսա որ մորթը կը կակուղցնէ և մարմինի մաքրութիւնը կը ղիւրացնէ: Տաք լողանքը լաւ դարման մըն է մարմինի և միտքի յոգնութեան, ստամոքսի, աղիքներու և փափուշաններու բորբոքումի: Սովորական լողարաններու մէջ ջուրը քաւորդ ժամուան մէջ 2 աստիճան կը պաղի, պէտք է ուրեմն քիչ մը պահեստի շատ տաք ջուր ունենայ՝ տաքութիւնը անով մէկ աստիճանի վրայ պահելու համար: Լաւ է որ լողանքէ ելլելու ատեն ջուրին տաքութիւնը քանի մը աստիճան աւելի ըլլայ մտած ատենուան տաքութեանէն:

Պաղ ջուրի լողանքը որ կը կատարուի ծովի, գետերու և լիճերու մէջ, ամէն մարդու չի լարմարիր, այնպէս որ պէտք է նախապէս բժիշկին խորհուրդ հարցնել: Ամէն պարագայի տակ կերակուրէն երկու ժամ վերջ պէտք է ջուրը մտնել: Զգուշանալու է քրտնած ջուր մտնելէ: Անօթի լողանքը յոգնեցուցիչ է: Լողանքէն յետոյ պէտք է քալել, վաղի կամ ուրիշ շարժումով աշխատանք մը կատարել՝ արեան շրջանը վերհաստատելու համար, կարելի է ոտքերը տաք ջուրը դնել և կամ ալքօլով շփում կատարել:

Ոտքերու լողանքն ալ կատարել կերակուրէ 2 ժամ յետոյ: գաղջ ջուրի մէջ քիչ մը սոսա դնել որ կը ղիւրացնէ մեղած մորթին ու կոշտերուն մաւրիէն բաժանումը: Ոտքի լողանքի ատեն ալ ջուրին տաքութիւնը հաւասար պահելու է ատեն ատեն տաք ջուր լեցնելով: Լողանքը պէտք է տեւ 15—25 վայրկեան: Լողանքէն յետոյ մեծ զգուշութիւն ընելու է ոտքերը չպաղեցնելու համար:

ԲՆԱԿԱՐԱՆ.— Բնակարանի շամար ամենակարեւորն է օդը և լոյսը: Ամառը ջանալու է միշտ լայն բանալ պատուհանները անգամ, առադաւորելու համար, իսկ ձմեռը գէթ օրական երկու անգամ, առաւուրը և երեկոյեան, քանի մը վայրկեան բանալու է պատուհանները: Ենջասնեակիւն մէջ շատ պաւղ կանաւորում պէտք է, որպէսզի կարելի եղածին չափ փոշիի առաջըր առնուի: Ելլելէ յետոյ անկողինը լայն բանալու է և ժամ մը օդաւորելու է համեր:

Տախտակամպի ճեղքերը միջատներու բոյն են և փոշիի ամբարանոց, պէտք է զանոնք լեցնել: Խառնեցէք 10 մաս կիր և մէկ մաս մանուր, պէտք է զանոնք լեցնել: և տաք վիճակի մէջ ձեռքեցէք ճեղքերը: Գործ առօրէի տաքցուցէք և տաք վիճակի մէջ ձեռքեցէք ճեղքերը: Բնակարանէն ներս շուն կամ կատու առնելու չէ, որոնք միայն կ'աղտոտեն և մանրէներ կը փոխադրեն, նոյնպէս կրնայ վիրաւորել:

երախաները և մանաւանդ անոնց փոխանցել զանազան հիւանդութեանց սերմեր: Այս կենդանիներուն սակներուն մէջ կը սիրեն աճիլ լուերը, որոնք կը փոխադրուին տուն և կ'անհանգստացնեն՝ աեղաւորուելով մանաւանդ անկողիններուն մէջ:

Մոխրները և ճանճերը ո՛չ միայն կ'անհանգստացնեն մեզ, այլ հիւանդութիւն կը փոխադրեն, պէտք է զանոնք հեռու պահել մեր բնակարաններէն: Ճանճերուն դէմ կրնանք մաքառիլ այսպէս. պնակի մը մէջ տարածել հնգկական իւղի խաւ մը, կամ հարիւրին 15 ֆորմոլի, 25 կաթի, 60 ջուրի և քիչ մը շաքարի խառնուրդ մը և դնել մէկ անկիւնը, ճանճերը կը փակին հոն, Բնակարանին շրջակայքը ճանճերը կը սիրեն աղտոտ տեղերը, ուր թխտող էգերը կը թափեն իրենց հակկիթները: Այս տեղերը թափել քարիւղ կամ նոր մարած կիր: Արաքնոցները յաճախակի հականելիս:

Մլուկներն ալ ունին շատ մը անպատեհութիւններ, ո՛չ միայն գիշերը մեզ անհանգիստ կ'ընեն, այլ նաև զանազան հիւանդութիւններ կը փոխանակեն: Մլուկներու դէմ կան միջատասպան փոշիներ: Կարելի է անոնց բոյները պատել էսանս տը թէրէպէնթինով կամ քարիւղով կամ քրէոլինով:

Մոխրները շատ աւելի վտանգաւոր են, անոնք են ջերմախափ տարածիչը՝ ձախճախուածներն են անոնց կեղրոնները և բնակարանները կը խուժեն ընդհանրապէս երեկոյեան դէմ: Մանաւանդ ննջասենեակներէն պէտք է հեռացնել զանոնք՝ երեկոյեան պատուհանները գոցելու առեն վանելով զանոնք: Ի հարկին անկողինին վրայ անցնել մոխրարգել: Անոնց թխտող էգերը հեռացնելու և թրթուրները ոչնչացընելու համար կարելի է գործածել չղտուած քարիւղ՝ քիչ մը ջուրով խառնուած:

Տան մէջ փորձանք մըն ալ մեցերն (կիւվէ) են, որոնք առաւելապէս կը վնասեն հագուստներուն: Պէտք է պահարանը դնելիք հագուստները լաւ թոթուել, ծեծել ու այնուհետև անոնց մէջ դնել քափուր: Եթէ գորգի մը կամ կապերտի մը ծայրը սկսած են կրծել մեցերը, հոն դնել թաց լաթ մը և տաք արդուկով լաւ արդուկել, յետոյ հակառակ կողմը զարձնել և նմանապէս արդուկել: Քարիւղը, պէնզինը և թէրէպէնթինը կը փախցնեն մեցերը, լաւ է երբեմն տախտակամածին վրայ թափել ասոնցմէ:

Խոհանոցի ուտիճներուն դէմ կարելի է մաքառիլ տախտակամածը, տախտակի ճեղքերը և անկիւնները պատելով քարիւղով, յետոյ անոնց թաքստոցները յատուկ փքոցով փչելով ծծումբի փոշի:

Քաղեց

Յ. Գ. ԱԹԱՆԱՍԵԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ԱԹԱՆԱՍԵԱՆ, ծնած է Ասաբազար 1884 Ապրիլ 15ին: Ծննդավայրի Արամեան Ազգ. բարձր. նախակրթարանի ընթացքը աւարտելով 1899ին կը մտնէ ուսուցչական ասպարէզ՝ տեղւոյն Ազգ. վարժարաններուն մէջ դասախօսելով մաթեմաթիք եւ գիտութիւն: Ինքնախառնութիւնով հետեւած է ուսողութեան եւ 1910—1915 պատճառով արժանանալով Ասաբազարի կեդրոնական վարժարանին մէջ իբր ուսողութեան ուսուցիչ: 1915ին ախտուած է եւ Տեր-Զօրի շարդէն կրցած է ազատիլ: Զինադադարէն յետոյ քանի մը ամիս վարած է Նեան Թափ Ազգ. ուղեւորչին տնօրէնութիւնը եւ ապա եղած է տնօրէն ուրբերու կեդրոնին: Անցնելով իր ծննդավայրը, հոն նախ բացած է մասնաւոր վարժարան մը եւ ապա յունական գրաւումի ասէն, եղած է տնօրէն Ազգ. վարժարանին: Յոյն բանակին քառուելուն հետեւանելով անցած է Յունաստան եւ Էվգիսիօքոօլիի հայ գաղթականներուն պատճառական ներկայացուցիչն եղած է: 1922 Յունուարէն ի վեր հաստատուած է Ռումանիա ու իբր ուսուցիչ պատճառով արժանանալով Ազգ. վարժարաններուն մէջ, Ներկայիս Պուրթէի մէջ կը գրգռի խմբագրութիւնով եւ խմբագրական գործերով:



Առաջատար է զանազան ազգային մարմիններու մէջ, այսպէս իր ծննդավայրին մէջ անդամակցած է Կրթասիրաց Ընկերութեան, Ընթերցասիրաց Միութեան, Թատրասիրաց Միութեան եւ Հ. Յ. Գ. Կիւմբէի վարչութիւններուն. նշանակուած է ուսուցչական Ընթերցաց Քննիչ Յանձնախումբի անդամ, եղած է «Բիւքարնիա» քերթին վարչչեան Յանձնախումբի մէջ անդամակցած է Հ. Մ. Ը. Մ.ի տեղական եւ Շրջ. տէն, Պուրթէի մէջ անդամակցած է Հ. Մ. Ը. Մ.ի տեղական եւ Շրջ. վարչութիւններուն, «Արարաց» ընթերցարանի եւ «ԲաՅՅի» Մտակ. Միութեան վարչութիւններուն: Քոստանցայի մէջ անդամակցած «Արախ» կրթ. Միութեան վարչութեան:

Իր հեղինակութիւններն են, Գրահափ, Տարեք բուսականութեան, Տարեք երկրաչափութեան (կիսով սպուած է տեղահանութեան ասէն փնացած), Հափ (Ա. տարի), Պոլսու ծառեր, Պոլսուաս եւ յօտում պոփնացած), Հափ (Ա. տարի), Պոլսու ծառեր, Պոլսուաս եւ յօտում պոփնացած), Ուղեցոյց հունգարերէն լեզուի, Ուղեցոյց ֆրանսերէն լեզուի, Սիրոյ տեղէն (վեպ): Շարք մը հեղինակութիւններ ալ ունի հրատարակած Յ. Գ. Արուստան անունով (Ուղեցոյց Ռում. լեզուի, Մեր Առողջարակած Յ. Գ. Արուստան անունով): Հրատարակած է Գարուն եւ Կոկոն շուրթիւնը, Ժողովրդական Երգարան): Հրատարակած է Գարուն եւ Կոկոն շուրթիւնը, մանկական-պատեմական եւ Գիտութիւն եւ Գիտելիք գիտական ամսաթերթեր: Ունի կարգ մը անհիպ գործեր, որոնց կարգին Ասաբազարի պատմութիւնը: Առաջատար է բազմաթիւ քերթերու եւ հանդէսներու. վարած է «Նոր խմբագրութիւնը «Երկիր» եւ «Հայ Մամուլ» քերթերուն: Եղած է «Նոր Արեւալոյս»ի հիմնադիր եւ «Նաւասարդ»ի հրատարակիչ:

Առաջատար է զանազան ազգային մարմիններու մէջ, այսպէս իր ծննդավայրին մէջ անդամակցած է Կրթասիրաց Ընկերութեան, Ընթերցասիրաց Միութեան, Թատրասիրաց Միութեան եւ Հ. Յ. Գ. Կիւմբէի վարչութիւններուն. նշանակուած է ուսուցչական Ընթերցաց Քննիչ Յանձնախումբի անդամ, եղած է «Բիւքարնիա» քերթին վարչչեան Յանձնախումբի մէջ անդամակցած է Հ. Մ. Ը. Մ.ի տեղական եւ Շրջ. տէն, Պուրթէի մէջ անդամակցած է Հ. Մ. Ը. Մ.ի տեղական եւ Շրջ. վարչութիւններուն, «Արարաց» ընթերցարանի եւ «ԲաՅՅի» Մտակ. Միութեան վարչութիւններուն: Քոստանցայի մէջ անդամակցած «Արախ» կրթ. Միութեան վարչութեան:

Երագիս մեջ տեսայ ըզբեզ  
Կ'երգեի՛ր.  
Շուրջրդ հրեցա՛կ, շուրջրդ պարեեզ  
Լուսալի՛ր:

Եւ քու երգըդ յսակ-յսակ  
Կ'իյնար վար՝  
Իմ սքնակիս մեջ փրլասակ  
Ու խաւար:

Դուն կ'ըսեի՛ր բառերով խունկ.  
— Հերի՛ք լաս.  
Զիս կը խեղդե՛ մեն մի արցունք  
Ինկած վրաս:

Զիս կը նեղե՛ սեր սուգիդ  
Ծանր ու խոր.  
Ելի՛ր. յոյսով լրա՛ հոգիդ  
Վիրաւոր:

Թող չըզոցե՛ ցար ձըմեռ՝  
Քու նամբան.  
Մի՛ ձգեր լճուած՝ բունիկը մեր  
Քսան տարուան:

Զըմբնա՛ս որք ու վեցակի՛ր,  
Զըփըլի՛ս.  
ձիւղիկդ ինկաւ, դուն բարձրացի՛ր,  
Սիրելի՛ս:

Շարունակուի՛ երգըս կիսաս.  
Օրե՛ք քեզ,  
Ու իմ քառեա աստեղազարդ  
Հրնուի՛մ ես:

Հրնուի՛ անիւնս ալ հողին տակ  
Թե՛լ առ քե՛լ.  
Երբ քեւքեւի՛ վրաս երթա՛մ  
Աղօթելի... .

## ԱՆՏԷՐ ՄԵՌԵԼՆԵՐ

Այսօր, Շաբաթ իրիկունով,  
Ձեզ կ'այցելեմ ես մրսափայլ,  
Գերեզմաններ մութ ու անփայլ,  
Որ կը ննչե՛ք անվերջ փունով:

Անտք, անտք մեռելներ՝ դուք,  
Ռոնց հոգին հոգին հանգոյն  
Արդար եղաւ ու փաղցրագոյն,  
Կամ եղաւ լուծ մը չարաւու՛ք:

Որ բանտնու մէջ քօրվեցի՛ք  
Ուրիշներուն մեղքն ու արիւն,  
Կերա՛ք քոյնը սեւ օրերուն,  
Կերաւ բզձե՛զ մահն ալ սաստիկ:

Կամ, մոլորած կրքի մէջ քաւ՝  
Ձեր ուղեղին համբան մոռցա՛ք,  
Ու մարեցի՛ք ջահեր արձակ,  
Ու մարեցա՛ք դուք ալ՝ հարկաւ:

Կամ լեցուցի՛ք ձեր վառ Գարունն  
Այլոց փառքի կուժին մէջ սին,  
Ինկա՛մ՝ այլո՛ց քողով գափնին,  
Եւ չունեցա՛ք ծիլ մը անուն:

Եւ կամ անտուն կամ բնկեցիկ,  
Գրութիւններու պոստին ծաղկած,  
Յոգնած կրելէ սով ու արկած՝  
Առանց օւ՛քի մեռա՛ք-գացի՛ք:

Եւ կամ խրմուր՝ մեղքի վաստակ՝  
Լոյս չըսեսա՛ծ կամ հազիւ հազ՝  
Դարձա՛ք մութին, հեռուին անհաս,  
Ու կը պառկի՛ք պատերու սակ:

Դու՛ք՝ մեռելներ՝ նորեկ ու հին,  
Սրբու՛ած անգութ մոռացումէն,  
Ձեզ հետ քաղած սերմերն ամէն  
Հանճարին կամ մրուայ չարին:

Դու՛ք մեռելնե՛ր, որոնց չեկաւ  
Մեկը ցօղ մը արցունք բափել,  
Նե՛սել վրանիդ խունկի մը թել,  
Քամել արե՛ն բառ մը՝ սակաւ:

Ինձ կ'երկարե՛ք սու՛ւեր-սու՛ւեր  
Ձեռքեր՝ չորցած ծառերու պէս,  
Գանկեր՝ փլասակ տուներ կարծես,  
Եւ աչկերու ցամփած հորեր:

Ու կը լրսե՛մ ցաւ մ'ապստամբ  
Ձեր աւերակ ծրնօսներէն,  
Ու գրկելով եղբայրօրէն՝  
Կը համբուրե՛մ ձեզ ջերմութեամբ:

Չ. ՊԼՊՈՒԼ



### Հ Ա Յ Դ Ո Ի Կ Ը

Ժայռի բեկորին կիսով կրքնած  
Աչքը սեւեռուն,  
Հրացանը պատրաստ ու դատոյնը բաց  
Կը դիտէ հեռուն:

Գիտե՞ք ով է ան, մարդն այն լեռան.  
— Հայդու՛կն է արի,  
Որուն սիրելիք է կայք գոն եղան  
Հուրի, աւարի:

Եւ երբ յարձակի, ա՛յ չի գիտեր չափ.  
Կարծես ամենի.  
Առիւծ մ'է կասողած. թե՛նամին անբափ  
Կը մասնէ անի:

Գառնացած արսով, գիտե՞ք ինչ կ'ըղձայ  
— Թուրք կը փնտռէ  
Վրե՛ծի խորանին ընելու ընծայ  
Անցնել թրէ:

Աչքն այն արծուի հորիզոնին վրայ  
Ինչո՞ւ յառեր է.  
— Քո՛ւրդ կը փնտռէ. եւ երբ գայն գտնայ  
Գետի՛ն կը փրռէ:

**Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆԻ**  
**Ք Ա Ն Ի Մ Ը Ա Ն Տ Ի Պ Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Ը**

Անցեալ տարի երբ «Գաղութահայ Տարեգիրք»-ի վերջին պրակը մամուլին յանձնուած էր, Միլանոյէն հասաւ Հ. Սիմոն Երեմեանի — Ատրուշան — մահազդը:

Հ. Երեմեան որ խոստացած էր մեզի աշխատակցիւ և որ իր «Յուշեր ու Նիշեր»ը գրեց մեր Տարեգիրքին մէջ՝ բեղմնաւոր գրիչ մ'եղած է և հազաւոր էջեր գրած է 43 տարուայ ընթացքին: Ծնած է Տրապիւզոն 1871ին. 1881ին Ս. Ղազար գացած և 1895ին քահանայ ձեռնադրուած: Գործունէութիւնը կը սկսի ուսուցչութեամբ. 1901ին «Բազմավէպ»ի խմբագիրն եղած է: «Որբունի»ն ու յետոյ «Գեղունի»ները խմբագրած: Գրական գրքերու քննադատը եղած է և 10 հատորներ հրատարակած «Գրական Հայեր» օրագոսին օակ: Ունի վիպական, թատերական շատ մը երկեր: Աշխատակցած է բազմաթիւ թերթերու, հանդէսներու և Տարեգրքերու: Եղած է Ս. Ղազարու վանքին եւ վարժարաններուն մէջ՝ մատակարար, ուսուցիչ, ուսումնապետ և անօրէն: Վախճանած է Միլանոյի մէջ 1938 Նոյեմբեր 29ին:



Հ. Ս. Երեմեան կ'աւխաւսի (Լուսանկար՝ ԲրոՅ. Լ. Կիւրեղեանի)

Ստորեւ կը հրատարակենք իր քանի մը նամակները ուզողուած Մեծ. Տոքթ. Վահրամ Թորգոմեանի, զոր մեր յարգելի բարեկամը մեր տրամադրութեան օակ կը դնէ:

Ա.

Վենետիկ 19 Դեկտ. 1920

Պատուական և Սիրեցեալ Թորգոմեան

Մեծ հաճոյով ստացայ Ձեր սիրուն նամակը, զայս իրաւամբ կը քննադատեմ իսպալկան քաղաքականութիւնը, ինչ որ ես արդէն կ'ստանամ

եմ, կարելուր անձնաւորութեանց նակասին զարկած եմ, ու պէտք է գիտնալ որ շատ մը իսպ. քերթերու մէջ արդէն յայտնապէս պարզած եմ իմ կարծիքս. ամիս մ'առաջ Հռոմի, Պոլոնիայի, Թրիեսթի քերթերը հրատարակելով ենթերվիւ մը ինծի հետ եղած, Ֆրանսացի ընդհանուր հիւպատոսէն պատշտական հրահանգներ տեղացին ամէն տեղ Հայերը ապերախս են եւայլն:

Ինծի համար ամէնն ալ Թուրքէն աւելի զգաւններ են, մենք մեր փրկութիւնը դրամին ու մեր սուրբն վրայ դնելու ենք. ամէնէն ցաւալին այն է որ մենք մեր մէջ չկրցանք միաբան գործակցութեամբ մը կազմակերպել Հայաստան մը՝ մեծ, հզօր, եւ քոյլ տուինք որ յայտնի է ծածուկ քեցամիները մեր երկրապառակութենէն օգտուին: Սփօրցալի նման զամէլիոններ շատ կան, օտարը իր շահէն զատ ուրիշ կերպ չի կրնար մտածել:

Ես արդէն կը զտնուիմ դարձեալ Մ. Ռափայելեան վարժարանի տեսչութեան մէջ. 80 աշակերտներ ունիմ, ամէնն ալ հայութեան արժանաւոր զաւակներ բնելու փութովը կ'աշխատիմ. երբ յաջողիմ՝ այդ կ'ըլլայ իմ միաբարութիւնս ու վարձատրութիւնս:

«Բազմավեպ»ը կը յղեմ. անփոյր եղէք: Նոր տարւոյ առթիւ ընդունեցէք Զեզի եւ Զեր տիկնոջ իմ ջերմագին մաղթանքներս:

Հ. Ս. ԵՐԵՄՅԱՆ

Բ.

Ազգոյ 1 Նոյ. 1925

*Սիրեցեալ բարեկամ*

Մեր Լեւոն Կիրեղեանը կը զտնուի Հռոմ, հասցէն է S-re Timolini Via Sardegna քիւ 69: Զեր քա՛րսն ստացած ենք, ո՛չ նամակը: Տիկին Կիրեղեան ջերմապէս կը խնդրէ որ Նորատունկեան ԷՖ.ի եւ Զեր բարեկամութիւնը *Գան ի գործ դնելով* զաք Ազգոյ մեր Արարտեան վիլլան պատուելու Զեր ներկայութեամբ. միեւնոյն ջերմաջերմ խնդրանքն ընդունեցէք եւ իմ կողմէս, յարգանքի բարեւներս տիկինէն եւ ինձմէ:

Զերդ Հ. Ս. ԵՐԵՄՅԱՆ

Գ.

Ազգոյ 30 Մարտ 1927

*Ճանտան սիրելի Տօքզորս Տիար Թորդոմեան,*

Ստացած եմ Փարիզէն եւ Փասովայէն Զեր երկու քա՛րտերն: Իմ նամբորդութիւնս դժուար է, զի պարագաներս չեն ներեր, պատճառը Զեզ կրնայ Տալ մեր սիրելի Սիրունեան պարոն Արմենակը:



Բայց մեկը որ Փարիզէն գուրած կ'ընէ նամբորդելու, դիւցազնաբար կրնայ նամբան երկարելով հասնիլ մինչեւ Ազովական — Արարասը:

Իմ եւ եղբօս Լեւոն կիրեղեանի կողմէն *Իրօք կը խնդրենք* որ բարեհաճիք մեզի մէկ քանի օր հիւր ըլլալու: Եւ այն ատեն կարելի է փոխադարձաբար խօսքեր փոխանակել: Եղբայրս միեւնոյն ատեն ստացած ըլլալով Ձեր վերջին տեսակն. իր սեանչացումը կը յայտնէ Ձեր գրական գործունէութեան վրայ եւ շնորհակալութիւնը կը փափագի յայտնել ան անձամբ հոս:

Անձկանօք սպասելով Ձեր գալստեան, առ այժմ ջերմագին ուղչագորումով:

Ձերդ Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

Դ.

Ազովյայ 18 Յուլիս 1927

*Ազնիւ եւ Սիրեցեալ  
ՏղքԹ. Թորգոմեան բարեկամս*

Գնացիք եւ լուսնի: Կը լսեմ որ Նորասուկեան էֆէնտին եկած է Փասովա, կարծեցի որ դուք ալ միասին եք. գուր յուսախաբութիւն:

Յուսամ լուսնիւննիս դժբախտութիւն չէ: Ինչ որ կը մաղթեմ:

Մեր Լեւոն կիրեղեան փրօֆեսորէն շատ բարեւներ, ի միասին խնդրանք մ'ալ ունի, որ երբ կարելի է իմացնել հրատարակիչ Ernest Leroux, Rue Bonaparte 28 Paris, որ ինչպէս խնդրած էինք, բարեհաճէր մեզի դիւրելու իր քրքրու Catalogueէն վերջինը:

Ս. Անարոնեան նորէն գիրք մը հրատարակած է, ինչպէս իր առաջինը, նոյնպէս այս վերջինը ինձ յղելու ազնուօրէն մոռացեր է: Ու ես եղայ որ «Գեղունի» ին մեջ լուսանկարովը առաջին անգամ հոչակեցի իր արժանիքը:

Յարգանք եւ սէր Սիրոյդ  
Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

### ՓՈՒԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՕՏԱՐ ՈՃԵՐՈՒ ՀԵՏ\*

Միթէ տեսած էք, գոհարեղէնի միջնադարեան տուփեր: Փան-  
եակի մը նման՝ նրբօրէն աշխատուած և ձեռագործուած, ոսկիէ և  
արծաթէ, զարդարուած թանկագին քարերով: Այս տուփերը մէյմէկ  
մատեաններ են իրենց դարաշրջանի արուեստը ներկայացնող: Հոն կ'ե-  
րեւան «օժիվ»ներ, «Ռողաս»ներ և տասը տեսակ միջնադարեան քան-  
դակներ և զարդերու գծագրութիւններ, որպէս թէ անոնք ըլլային մէյ  
մէկ փոքրիկ մատուռները իշխանին և կամ իշխանուհիին սնարի սե-  
ղանին վրայ դրուած:

Ամէն անգամ որ հայկական ճարտարապետութեան մէկ յիշատա-  
կարանին կը մօտենամ, կը կրեմ այնպիսի Թալաշուրի թիւն մը, որպէս  
թէ ան ըլլար միջնադարեան գոհարեղէնի քանդակագործ տուփ մը:  
Անոր պէս է, փոքր իր համեմատութիւններովը, ներդաշնակ իր շա-  
փերովը, զարդարուն ինքնատիպ քանդակներով, սիւնաշարքերով, խո-  
ռոջներով և զանազան քանդակներով, որոնց ներկայութիւնը կու տայ  
լոյսի և շուքի սիրուն խաղեր:

Իրապէս՝ հայ յիշատակարանը գոհարեղէնի տուփ մըն է: Կը  
բաւէ անոր մօտենալ, զննել աջին ու ձախին, գտնելու համար հոն  
պահուած թանկագին գործեր:

Հայկական ոճի համեմատութիւնները, երկայնքին լայնքին և և  
բարձրութեան միջև, այնքան ներդաշնակ են որ շինուածքը կը ներ-  
կայանայ դերագանց վայելչութեամբ մը: Այս վայելչութեան գաղտ-  
նիքներէն մէկն ալ կը գտնուի այն բանին մէջ որ, ան՝ ըլլալով նիւ-

\*) Սոյն գրուածքս, համառօս ուրուագիծ մը ըլլալէ գաւ ուրիշ յա-  
ւակնութիւն չունի: Ռովմէսե կարելի չէ հասարակական փոխ-յարա-  
բերութիւններու նման փափուկ խնդիր մը ուսումնասիրել քանի մը էջի  
մէջ: Այս գրուածքովս հպած իւրաքանչիւր նիւթ կը պահանջէ ընդարձակ  
ուսումնասիրութիւններ, որոնք բնական է դուրս կ'իյնան ներկայ հրա-  
սարակութեան օրջանակէն: Սյունահնդեթ ընթերցողը պիտի կարենայ  
կազմել համառօս գաղափար մը հայ ոճի դիրքին մասին, միւս ոճերուն  
մէջ: Ս. ձ.

Թապէս փոքր չափերու վրայ կը գործածէ այդ չափերուն չհամապատասխանող զարդարանքներ: Այս պարագան յառաջ կը բերէ, ամբողջութեան մէջ տեսակ մը հակադրութիւն որ այս շինուածքը կը զարձընէ գոհարեղէնի տուփ մը:

Պէտք է ըսել, սակայն, թէ այս շինուածքին վրայ գտնուող ամէն մաս, անպատճառ հայկական յղացումէ ծնած չէ: Կան մասեր՝ որոնք ներմուծումներ են, դրացի ազգերու ոճերէն: Կան մասեր՝ որոնք հայկական յղացումներ են և ատենի ընթացքին՝ արտածուած և փոխանցուած են օտար ազգերու ճարտարապետութեանց մէջ:

Այս ամէնը, սակայն, իրարու այնպէս մը համադրուած են, այնպէ՛ս մը իւրացուած որ կը կազմեն անբաժանելի միութիւն մը:

Հայկական շէնքը՝ իր ուղղանկիւն-քառանկիւնի յատկագրիծովը և իր համեմատութիւններովը կը սկսի հելլէնո-հռովմէական շինուածքի ծածկէն: Եւ ինչ որ կը կոչեն «Արեւելեան Պաղիիք», ուրիշ բան չէ հղած՝ իր խորքին մէջ՝ բայց հայկական շինութիւնը, հելլէնո-հռովմէական յատկագրիծով և ինքնայատուկ քարաշէն կամարակապ տանիքով:

Հէլլէնո-հռովմէական վերապրում մըն է նաև, որմերուն փակած արտաքին սիւնաշարքերը, որոնք իրարու կը կապուին թեթեւ աղեղներու գծազրութեամբ մը:


Քանդակազարդումները սակայն, կը պահեն արեւելեան իրենց քերականց գծազրութիւնները: Այս զարդանկարները՝ որոնք Սասանեան և Նոյնիսկ՝ աւելի առաջ՝ Ասորո-Քաղդէական դրոշմ մը կը կրեն, եան և Նոյնիսկ՝ առաջի ձեռագործներու, կերպաներու գծազրութեանց՝ կը նմանին կանացի ձեռագործներու, և այսպէս զանազան ձևերով և ապահովաբար նման օրինակներէ առնուած են: Կան Նոյնիսկ քանդակներ՝ ուր դերձանին ոլորտքը կը ցուցադրուի, կարծէք հասկցնելու համար թէ՛ ան՝ ձեռագործէ ընդօրինակուած է:

Հայ ճարտարապետութիւնը քարի ճարտարապետութիւն է և այս պատճառաւ հոն ներկայ կ'ըլլանք քանդակագործութեան մեծ դարձացումի մը: Մինչդեռ պարագան Նոյնը չէ այլ շինուածանիւթեր գործացումի մը: Մինչդեռ պարագան Նոյնը չէ այլ շինուածանիւթեր գործածող ճարտարապետութեանց համար: Օրինակ՝ աղիւս գործածող ու ձեռքով ճարտարապետութեանց համար: Օրինակ՝ աղիւս գործածող ու ձեռքով ճարտարապետութեանց համար: Օրինակ՝ աղիւս գործածող ու ձեռքով ճարտարապետութեանց համար: Օրինակ՝ աղիւս գործածող ու ձեռքով ճարտարապետութեանց համար:

Հայ ճարտարապետութիւնը քարի ճարտարապետութիւն է և այս պատճառաւ ալ հայկական ոճի արտասահմանեան ճառագայթումին մէջ կը տեսնենք մեր գծազրութիւնը այն երկիրներուն մէջ՝ ուր՝ քարն է որպէս տիրապետող նիւթ, գործածուած շինութեանց մէջ:

Չարմանիլիօրէն կը գտնենք հայկական զարդանկարներ Դաւոսի մասին մէջ, զետեղուած Բիւզանդական ոճի քարեայ տաճարին մասին մէջ, զետեղուած Բիւզանդական ոճի քարեայ տաճարին մասին մէջ, զետեղուած Բիւզանդական ոճի քարեայ տաճարին մասին մէջ:

կան քարաշէն շինութիւններու վրայ և մինչև—վիսթուլայի ճամբով—  
իրանտա, ուր շատ հինէն, ար-  
դէն ծանօթ էին հայկական քան-  
դակները:



Գպրեվանք կամ կարմիր վանք  
կայն, կայ կէտ մը ուր հայկական  
քարի ճարտարապետութիւնը չե-  
տեւեցաւ հելլենական շինուա-  
ծածէին: Սա՛ քիւերու (corniche)  
շինուածքն է: Հելլենական քի-  
ւերը՝ թէև քարաշէն՝ կը ներ-  
չնչուին փայտի գործածութենէն  
մնացած զարդարանքներէ, որոնք  
փոխանցուած են քարին վրայ:  
Հայկական ճարտարապետութիւ-  
նը հոս կը պահէ արեւելեան ինք-  
նուրոյն շինուածածները, և շատ  
հազուադէպ է որ հանդիպինք այս  
քիւերուն վրայ հելլենականէն  
մոռցուած «մօթիւ»ի մը:

Բայց տանիքին վրայ է որ պի-  
տի հանդիպինք հայկական ճար-  
տարապետութեան գլուխ գոր-  
ծոցին, կաթողիկէին:

Գմբէթի շինութիւնը արեւել-


Հայկական շինուածքին տա-  
նիքը, իր մակարդակներու դա-  
սաւորումովը կը սերի հելլենո-  
հռովմէական շինուած աձևէն,  
բայց անոր խաչածե կարգադ-  
րումը, քրիստոնէական շրջանէն՝  
հայկական յղացում է: Այս խա-  
չածե տանիքը, թէև հայերը դրին  
իրենց ուղղանկիւն քառանկիւ-  
նին վրայ, սակայն փոխադրուե-  
լով Հայաստանէն դուրս, Բիւզան-  
դիոն և Յունաստան, ծնունդ  
տուաւ խաչածե եկեղեցիներուն:  
Նև հայկական խաչն ալ կոչուեցաւ  
«Յունական խաչ»: Թէև ան Յու-  
նաստանի մէջ երեցաւ միայն  
Ը. դարուն:

Տանիքի շինութեան մէջ սա-



Դափանց վանք կամ  
Ս. Գր. Լուսաւորիչ Նորատուսի

եան յղացումն է ընդհանուր ճարտարապետութեան մէջ և անոր գործածութիւնը շատ հին է Հայոց մէջ: Հայկական հին տանիքը, իր կոնաձև կազմութեամբը արդէն կը ձգտէր դժբէթի ձևին: Սակայն



Նրեւանի Չորագետի եկեղեցին

բուն գմբէթի գործածութիւնը Հայոց մէջ վերապահուած էր իշխանական և թագաւորական պալատներուն և ապարանքներուն միայն: Ան կը բարձրանար սոյն շէնքերուն մէջ «աճար» կոչուած մեծ սրահին տանիքին վրայ: Տաճարը հայկական շինուածքին մէջ կը համապատասխանէ գահակից սրահին. Գրիստոնէութեան մուտքովը, Հայերը — որոնք աշխարհի վրայ քառորդ դարու առաջնութեամբ ուրիշ ժողովուրդներու վրայ, ըրին զայն պետական կրօնք — փոխադրեցին արքայական գմբէթը Յիսուս շարքային նուիրուած նոր տաճարին վրայ: Հռովմայեցիք ալ գիտէին գմբէթ բարձրացնել սակայն՝ անոնցը՝

Պիւրականոյց էր, արուած ըլլալով որ կտր խարխախ վրայ կը կառուցանէին Հայկական գմբէթը, առաջի մէկ օրէն շինուեցաւ քառակուսի խարխախ վրայ: Ինչ որ պատճառ եղաւ բոլորովին փոքրեցնելու հռովմէականէն:


Ձանաղան փորձերէ վերջն է որ հայ ճարտարագետը հասաւ գրմթի կատարելագոյն կառուցման մը չորս ողնոյցներու (pendentif) վրայ:

Բիւզանդացիք՝ թէ՛ արեւմտուտքէն և թէ՛ արեւելքէն, Հռովմէն թէ՛ Հայաստանէն, ստացան գմթի զաղափարը: Անոնք ա՛լ զարդարեցին, կայսերական իրենց պալատները գմթիով մը որմէ փոխանցեցին եկեղեցիներուն վրայ:

Բիւզանդիոն՝ իր ճարտարագետները կը ճարէր Փոքր Ասիայէն, ուր հայկական դպրոցը կը ցուցադրէր, իր ամբողջ գեղեցկուժեամբ՝ հայկական շինուածածէր: Նոյն իսկ Բիւզանդիոն՝ ուր բազմեցան 14 հայ կայսեր, զնաց մինչև Հայաստան՝ հայ ճարտարագետներ որոնելու: Ու ան ընդերկեց՝ փոխանակ հռովմէական ձև գմթիին՝ հայկական ողնոյցաւոր գմթիթը: Ասիկա՝ աւելի վերջը՝ կազմեց Բիւզանդական ճարտարագետական փառքերէն մին:

Բիւզանդիոնի հռչակաւոր Ս. Սոփիայի գմթիթը, որ հազար տարիէ ի վեր կը մնայ կանգուն, հակառակ դարերու աւերիչ ազդեցութեան, Տրդատ հայ ճարտարագետը շինեց ողնոյցներու վրայ:


Այս Տրդատը այն ճարտարագետն է՝ որ նախապէս շինած էր Անիի



Երեւակայ Ս. Կարապետի վանքը

Ս. Աստուածածին եկեղեցին իր ողնոյցաւոր գմթիթովը, ինչպէս նաև Հաղբատի նշանաւոր ջլաւոր գմթիթը, որ ճարտարագետական այլ ճիւղի մը նախատիպը կը համարուի աշխարհի մէջ:

Հայկական գմբէթին արտաքին տեսքը, կոնաձև տանիքով, գլանաձև թմբուկով, արդիւնք է շինուածանիւթին՝ քարին ընձեռած կարելու թեանց: Մնաց որ հայկական ոճը, խորքին մէջ, ծնունդ է շինուածանիւթին ընձեռած կարելու թեանցը: Ուրիշ նիւթերով շինուածք մը, ապահովաբար պիտի տար այլ գծագրութեամբ ձևեր, ինչպէս կը



ԶՈՒԱՐԹՆՈՑ ԵԿԵՂԵՅԻՆ  
Այժմեան աւերակներու նախկին վիճակը  
Հայ նարսարապետական ոճի եւ գեղեցիկ մեկ նկարը  
(Գործ նարսարապետ ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ)

տեսնենք պարսկական, ասորական և նոյնիսկ բիւզանդական շինուածաձևերուն վրայ:

Գոհարեղէնի այս տուփին արտաքինը, արագ ակնարկով մը տեսնելէ վերջ, նայինք ներսի կազմութիւնը:

Բուն հայկական ոճը կ'ընդգրկէ պարզ մուտքի դուռ մը: Շատ անհամեմատ կարեւորութիւն է որ մուտքի զրան տրուեն բլուրի վերջն է, ԺԱ. և ԺԲ. դարերուն է որ մուտքի զրան տրուեն անհամեմատ կարեւորութիւն մը և խճողուցաւ զարդերով: Ակնհայտ արեւմտեան ազդեցութիւն մըն է, մեծակառոյց դուռներու զրուսթիւնը: Նոյնպէս օտար ազդեցութիւններ են զանազատուների շինութիւնը և ներքին գաւիթներու զրուսթիւնը, Ասոնք հայկական սկզբնա-

կան զուտ ոճին մէջ գոյութիւն չունէին և ատենի ընթացքին արեւմտեան ներմուծումներ եղան. ծիսակատարութեանց կրած ազդեցութեանց և փոփոխութեանց հետ համընթաց, Բնական է այս բոլորին շինութիւնները պատշաճեցուցուեցան տոհմիկ ոճին, այնպէս մը որ անոնք դարձան անոր անբաժան մէկ մասը, օտար հեղինակներ մոլորեցնելու աստիճան:

Լուսամուտներու նուազութիւնն ալ օտար ազդեցութիւն մըն է, հիլլէնօ-հոլովմէական նախկին օրինակէն մնացած:

Ուրեմն հայկական շինուածքին ներքին մասը պիտի նայինք միայն գոթիկէն մաղուած միջնադ լոյսին մէջէն:

Հոս պիտի տեսնենք շինուածքին գեղարուեստական մասէն աւելի, կաղմական մասերը, որոնք բուն շինարարական տեսակէտէն շատ կարելոր օնը մը կը գրաւեն և ոճին խարխիւն են:

Վերը խօսեցայ շինուածանիւթին ընձեռած կարելիութեանց մասին: Ահա այս կարելիութիւններն են որ տուն քուրն հայ ճարտարագետին, յղանալ և կառուցանել այնպիսի ճարտար շինուածքներ որոնց շինութիւնը կարելի ըլլար իր ձեռքի նիւթով՝ քարով՝ գլուխ հանել լստանց քարաչէն խրթին օժանդակ շինութեանց:

Որովհետեւ, — չմոռնամ ըսել — ամէն բանէ առաջ հայ ճարտարագետը, քարագործ մըն էր և կը կրէր ճարտարագետ ի քար» տիտ զոտը: Ուրեմն անոր յղացած շինուածքները, բոլորն ալ քարաչէն պէտք էին ըլլալ, փայտէ օժանդակ շինուածքներու նուազագոյն գործածութեամբ մը:

Այնպէս որ ծնունդ առաւ սրակտուց կամարը՝ որուն շինութիւնը կարելի է առանց փայտաչէն կաղապարի: Նոյնպէս ծնունդ առաւ հայկական «Օժիվ»ը, այսինքն քարաչէն աղեղներու (զիլ = nenocere) վրայ շինուած կամարը:

Մեծ տարածութիւններ քարաչէն ծածկոյթով կարենալ ծածկելու համար — առանց որ փայտաչէն խրթին կաղապարներ գործածելու պէտք ըլլայ — հայ ճարտարագետը յղացաւ աղեղներու զրութիւն մը, որոնք յարմար կերպով իրար խաչաձևելով, ծածկուելիք տարածութիւնը կը վերածէին բաղմամբիւ իրարմէ անկախ մասերու, որոնց վրայ քարաչէն ծածկոց հիւսելը, շատ աւելի հեշտ էր:


Այս զրութիւնը (Հովիւի և Ս. Առաքելոց եկեղեցիներ Անիի մէջ, Հաղրատ կայն) ծնունդ քուրաւ ջիւերու գործածութեան:

Այս զրութիւնը Հայաստանի մէջ գործադրութեան գրուելէն փերջը Թ. և Ժ. դարերուն ընդօրինակուեցաւ: Արարներէն և անոնց միջոցաւ փոխադրուեցաւ Սպանիա, Անոնք ընդօրինակեցին հայկական ջիւերու գծադրութիւնը միայն, առանց դաղելու անոնց կաղմական դերովը: Ռեբիշ ճամբով մըն ալ՝ հայկական ջիւերը հասան հիւսիսային Իտալիա, ուր Լօմպարտական քանի մը շինուածքներու մէջ փորձեցին



կազմական նշանակութիւն մը տալ անոնց: Սպանիայէն և Լոմար-տի-սյէն անցաւ հայկական ջիւր Թրանսա, և ծնունդ առնող կոթական ոճին մէջ մտաւ, թէ և շատ ազաւազուած և կորսնցուցած իր գոյութեան պատճառները:

Կոթական ոճին պարծանքը «Օփիլ»ը հայկական յղացում եւ



Հաղբաս վանքի Ս. Նսան եկեղեցւոյ ներքին մասը

ծնունդ է. բերուած արեւմուտք, սրակաուց կամարին հետ Արարես-րու և գաղթական Հայերու միջոցաւ:

Նոյն է նաև հայկական լման կամարակապ տանիքին *voute en berceau*) տեղափոխութեան պարագան, Հայկական ջիւերէն առաջ, ան փոխանցուեցաւ Միջերկրականի ճամբով Արեւմուտք և մտաւ Ռոման ֆոնտանցուեցաւ Միջերկրականի ճամբով Ս. Հռիփսիմէի մէջ:

Ոճին մէջ, որուն նախտիպը կը գտնենք Ս. Հռիփսիմէի մէջ, նուրբ

Հայկական շիւղակապով զարդարուին, այլ և ճարտարապետական սկզբունքներու քանդակներով զարդարուին, այլ և ճարտարապետական սկզբունքներու մատեն մըն է, որմէ ներշնչուեցաւ Արեւմտեան ճարտարապետու-

թիւնը Միջին դարուն:

Սակայն երկար ատեն պէտք եղաւ, մինչև որ այս խաչը հասկը-

ցաւ և ընդունեց Արեւմուտքը, որուն գիտունները տասը տեսակ

տրամարանութիւն կը բերէին լեռնէն ու ձորէն՝ բացատրելու

համար, Ռոման ոճին կրկնակ աղբիւրներուն (*arc doubleaux*)

համար, Ռոման ոճին կրկնակ աղբիւրներուն և կամ կոթական ոճին, «Օփիլ»ին կազմու-

գոյութեան պատճառները

Թեան և դերին մասին: Մինչև որ ապշահար աչքերնին դարձուցին  
դէպի Արևելք, դէպի Հայաստան տեսնելու համար, այդ շինութեանց



ՀՈՒՓՍԻՄԵՅՆ ՏԱՃԱՐԸ  
Մին Հայ նախարապետութեան կորոզներէն

Նախնական օրինակները և անոնց գոյութեան կազմական բուն պատ-  
ճառները:

Եւ այսօր հայկական ճարտարապետութեան ոճը կը բազմի միւս  
օճերուն կարգին իր ինքնուրոյն զարոցովը և կանոններովը:

Լոզան, Մայիս 1939

Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ  
Ճարտարագէտ



մանաքարի արձանագրութիւնը բուսական համարելով, գրեր զրկեր է Զեր մեծապատուութեան:

Զեր ազնուաբարոյ բնաւորութենէն խրախուսեալ, այսօր կը համարձակիմ Պըյըզլիանց տոհմին վրայ իմ գիտցած տեղեկութիւններս և ձեռքս եղած վաւեր արձանագրութիւններս համառօտակի պատմել:

ժամանակաւ՝ Պըյըզլիանք եօթը եղբարք են եղեր հոս, երեւիլի և ականաւոր գերդաստան, ասոնք կը գաղթեն Ռոմանիա, մինչև Եաշ քաղաքը երթալնին լսած եմ: Որովհետև ձեռքս ունիմ մի ձեռագիր և ընդարձակ կանոնագիրք, զոր Պըյըզլու օղլու պարոն Վարդանն գրել ատեւ է Եաշ քաղաքին մէջ Ռուսճուզցի արիացու Պօղոսի ձեռքով ի թուին 1783 Ապրիլ 10, անշուշտ ի պէտս դատաւարութեան Ազգային խնդրոց: Ի վերոյ գրեալ կանոնագիրս մեր՝ բաց ի կանոնաց եկեղեցւոյ, կը գտնուին Հայոց ազգին դատաստանագիրքն, Նաև Յունաց և Հռովմայեցւոց ազգաց առանձին առանձին դատաստանագրքերն, որուն երկար յիշատակարանէն հատուտ մը կը բերենք հոս, ի քաջայայտ ծանօթութիւն Պըյըզլիան պայծառ ընծիւղ տոհմին:

«... Վասն որոյ յամենայն տեղիս ցանկալի և փափագելի եւ դժուարագնահատելի լինելով սուրբ կանոնագիրքս և դատաստանագիրքս՝ փափագեաց ի վերայ յայսմ անձնջելի յիշատակի և հոգեւոր դաւակի այսմ գրքի, մեծահաւատ և բարեպաշտ, հեղահոգի և աստուածասէր, երկիւղած և հոգեւէր, Ռուսճուզցի Պըյըզլու մահտեսի Աստուածատուրեան մահտեսի Յակոբի որդի Պըյըզլու օղլու կոչեցեալ պարոն Վարդանն, իւր արդեամբ և ըղձանօք, եւ գրել դայս սուրբ գիրքս կանոնաց զի լինի յիշատակ յիւրն և որդւոց նորին, եւ արդ ուր ուրեք որ պիտոյասցի և ո ոք որ ընթեռնուցի ու զսուրբ գիրքս զայս, և վայելեաց է քաղցրութենէ սորին, յիշեցէ զպարոն Վարդանն, և զվերոյիշեալ հանգուցեալ ծնողսն նորին, և զկենդանի մայրն նորին զՄարիամն, և այլ յիշեալիք զհարազատ եղբորսն (եղբարսն) նորին, զՄանուկն, և զԿարապետն, զՊապիկն, և զՍարգիսն, զԱւետիքն, և զԳիէորզն, զՅակոբն և զդասերսն յիշեալիք զմաքուր աղօթս ձերս և այլն:

Արդ այս վերոգրեալ Մանուկին և կնոջ նորա Անթառամին՝ Բրարիոն անուն աղջկան թոռն եմ ես, որու մէկ քոյրը՝ այդր ի քաղաքիդ Ալթընօվիչ Մանուկին մայրը Հոփփիմէ, անոնց մէկ քոյրը Պալասանեան Գրիգորին կնկան Թագուհւոյն մամը Մարիամ, և ուրիշ մէկ քոյր ալ Վառվառէ Եաշ քաղաքին մէջ կարգուած է, և մէկ եղբայրնին ալ Գայեանէ տիկնոջ էրկը Գալուստ:

Իմ մամս Բրարիոնը միշտ կը յիշէր մահտեսի Մանչուկ անունով հօրեղբայր մը, (թերեւ իր հօրը՝ հօրեղբայր ըլլայ, վասնզի կարգս հօրեղբայր չիշուեր) և այս մ. Մանչուկը շատ երեւիլի մարդ է եղեր եւ խելացի, այս տեղի բաշային սեղանաւորը և հանդերձապետը. բաշան երբ կը տեսնայ եղեր գալը, կը վարանի եղեր թէ ինչ պատասխան

տայ, այն ժամանակ Մանուկ պէյ (Մանուկ պէյ Միրզաեանց) յիշեալ Մանուկին խանութին մէջ աշակերտ կը գտնուէի եղեր, և շատ անգամ ինքը չերթալով Բաշային քով, Մանուկ պէյը կը խրկէ եղեր:

Մէյ մ'ալ կը պատմէր վերոյիշեալ մամա, թէ իւր մամը, այսինքն հօրը Մանուկին մայրը միշտ կ'ողորայ եղեր «կիւկիւմիւ կիւկիւմիւ» ըսելով, որովհետեւ այս կողմը գաղթելու ժամանակնին, իրենց բոլոր ունեցած ոսկիներն ու հարստութիւննին պղինձէ սափորի մէջ կը լեցունեցած չեն առնելու գալու, ակութիւն (օճախին) վրայ լեցուն կը թողուն և կը փախչին կու գան հոս:

Երեք հատ գերեզմանաքարեր  
ա. «Այս տապան հանգստեան Պըլըզլեանց մահի Աստուածատուրի որդի կարապետին որ փոխեցաւ ՌՄԽԸ (1799) Յունուսի 11»:

բ. «Այս տապան հանգստեան Պըլըզլեանց Գրիգորի զուստը Դայչէ կիւլին, որ փոխեցաւ ՌՄԽԶ (1797) Փետրուարի ժա»:

գ. «Ըստ հրամանի Տեառն արարչի.  
էջ ի հնձան սոյն տապանի  
Որ էր պարկեշտ և գովելի  
Օհաննէս հեզահոզի  
Պըլըզլեան մահտեսի Մկրտիչ որդի,  
Որք հանդիպիք ի սոյն տապանի  
Մի՛ ձանձրանայք տալ զողորմի,  
Թ՛վին ՌՄԽԶ (1797) Սեպտեմբերի ԺԸ.ի»:

Եկեղեցւոյ մէջ Պըլըզլեանց անունը չերեար:  
Քանի մը տեղեկութիւններ կը գտնուին Պըլըզլեան Գէորգին վրայ ի մայր ցուցակի վրիննայի ձեռագրաց, որ ի Հ. Յակոբ Տաշեանէ, Արղ այսչափ մանրախոյլ ծանօթութիւններ կը նուիրեմ Ձեզ ի գիտութիւն և Ձեր ազնուափայլ տոհմին ծագումն ալ յաւելի ցանկալի է ինձի:

Մնամ ազօրարաւ  
ԽԱԶԱԿԻՐ ԿԱՐԱՊԵՏ ԱԽԱԳ ԳԶՅՆ. ՊՕՅԱՃԵԱՆՅ

1899 Մայիս 3  
Բուսնուփ

Գ.

Կ. ՊՈԼՄՈՅ ԿԱՐԱՊԵՏ ՊԱՏՐԻԱՐԻԻ ԳԻՐԸ

(Ժամանակակից 17 Ամիրաներու ստորագրութեամբ)

Ուղղուած առ ԳԵՐԱՊԱՏԻԻ ԵՒ ԳԱՀԵՐԷՑ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐԲԵՊ.

Գերահռչակ մայրաքաղաքան Ազրիանապոլսոյ

Հայր մեր գորովագութ,

Քաջայայտ է ամենեցուն, զի անուշք և առաջնորդք իւրաքան.  
չիւր քաղաքաց և վանօրէից ունին միայն զհոգ ժողովրդոց իւրեանց,

զի հոգեւորական իշխանութիւն նոցա ամփոփեալ կայ ի վիճակսն զորս հովուեն: Իսկ պատրիարքական իշխանութիւն թագաւորեալ քաղաքիս՝ մեծ և ընդարձակ է յոյժ, և ձգի յամենայն աթոռս և առաջնորդութիւնս, որք են ի խաղաղական սահմանս հզոր և ամենողորմ տէրութեան Օսմանեան: Քանզի՜ պատրիարքն կացուցեալ ի ղիմաց յամօրէն ազգին, և յանդիման առնէ զըրութիւն նորա, և տէրութիւնն իսկ այնպէս ճանաչէ:

Վայսն այսորիկ ի սկզբանէ և այսօր տեսուչք և առաջնորդք իւրաքանչիւր վիճակաց, զգլխաւոր իրողութիւնս որք վերաբերին առ տէրութիւնն, սովոր են զրել առ ամենապատիւ և վեհափառ պատրիարքն, որ զկարելիսն ինքեամբ, և զգժուարինն խորհրդով ազգային ժողովոյ հոգայ և տնօրինէ՝ իրրե զգործ սեպհական վիճակի իւրոյ:

Սմին իրի պարտ և արժան էր, յայլ ամենայն առաջնորդական վիճակաց ըստ տանելոյ իւրաքանչիւրոց մինչև ցայժմ ունել եկամուտս ի պէտս ծախուց պատրիարքարանին, սակայն մինչև ցայսօր ժամանակի յեկամաօր կոստանդնուպոլսոյ հոգայր զբաղում ծախսն, ոչինչ հարկեցուցանելով զարտաքին գաւառսն բաժանորդ լինել նոցին: Բայց քանզի ի ժամանակս յայսօրիկ ծանրացան յոյժ ծախք պատրիարքական Աթոռոյն, մանաւանդ ի պատճառս թէզքէրէին երթեկեկողաց, որ սահմանեալ է բարձր հրամանաւ արքունական մեծափառութեան, վասն որոյ և կացուցեալ եղեն բազում զբազիրք բաղձապատիկ ծախիւք զի յականէ յանուանէ զրեսցեն և արձանագրեսցեն զհամագգլիս մեր, որք գան և զնան ի զանազան գաւառս, կամ փոխադրին ի տէղւոջէ ի տեղի, որ մեծաւ մասամբ են յարաքին գաւառաց:

Ուստի այժմ բոլոր ծախքն ազգային ժողովով բաժին արարաւ և պատրիարքական աթոռոյն կոստանդնուպոլսոյ՝ առաւել քան որ իրաւամբ անկանէր նմա՝ սահմանեցաւ տալ, և մնացեալ մասն արաքքին գաւառաց բաժանեցաւ ըստ բաւականութեան իւրաքանչիւր վիճակի և ազգարարական գրով հրաքարակեցաւ առ ամենայն տեսուչս և առաջնորդս գաւառաց, զի ամ ըստ ամէ ի սկսանիլ ամսոյն մայիսի առաքեսցեն զայն առ յարգելի Երեսփոխանն ազգին որ կացուցաւ այժմ ի պատրիարքարանն:

Որ և խորհրդով և հաւանութեամբ նոյն ազգային ժողովոյն յատկացաւ բաժին Արքեպիսկոպոսական վիճակի Չերում հազար դրուչ, զոր և այժմ հարկ համարեցաք զրել առ սրբութիւն Չեր, զի զայն զրամն ամ ըստ ամէ ի սկսանիլ մայիս ամսոյ անյապաղ առաքեսցեն այսօր առ յարգելի Երեսփոխանն ազգին, որ կայ ի պատրիարքարանն, առ ի հոգալ զծախսս գրադրաց թէզքէրէին ի կաթարումն հրամանաց արքունի, և զայլ կարեւոր պիտոյս համար, որք հարկաւոր են լինել ի շնորհս և ի վայելչութիւն համօրէն ազգին:

Զայս և ծանիցէ սրբութիւն ձեր, զի զայն հազար դրուչն, որ

աղբային խորհրդով և հաճութեամբ անկաւ Արքեպիսկոպոսական վիճակի ձերում, եթէ սեպհական արդիւնքդ ոչ կարասցէ վճարել, կոչեցես զիշխանս և զգլխաւորս վիճակիդ, և խորհրդով և հաւանութեամբ միմիանց անօրինեցիք ժողովել յեկեղեցեաց կողմանդ, և անյապաղ առաքել այսր զի է մանաւանդ ի պէտս հարկաւոր ծախուց գրադրաց, ի կառարունն հրամանաց Մեծի Տէրութեան:

(ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

Ծառայ Տեառն կարապետ Ազնաւորեան: Ծ. Տ. նաքարապետ Գրիգոր: Ծ. Տ. Յարութիւն Պեղեան: Ծ. Տ. Սիմոն վառօղապետ: Ծ. Տ. ձանկ միս. Սիմոնեան: Ծ. Տ. Միքայել Բիւմիւսեան: Ծ. Տ. միս. Երամ Աբիկեան: Ծ. Տ. Բարունակ Մասեճեան: Ծ. Տ. Յարութիւն Կելկիլեան: Ծ. Տ. Պօղոս Մարգարեան: Ծ. Տ. Մարտիրոս Պաղասաւեան: Ծ. Տ. Մարգար Մարտիրոսեան: Ծ. Տ. Օհաննէս Խորանեան: Ծ. Տ. Խաչատուր: Ծ. Տ. միս. Պաղասաւ Զանկեան: Ծ. Տ. միս. Պետրոս Պաամանի: Ծ. Տ. Բարսեղ:

Ըստ բարեհաճութեան ազգին ստորագրեալ կնքեցի:  
ՊԱՏՐԻԱՐԲ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ԿԱՐԱՊԵՏ ԱՐԲԵՊ.\*

Վասն սառւգութեան գրուածոց սրբազանին, և կնքոյ յարկի Ամիրայի(ց) Պօլսոյ՝ կնքեցի

ՄԵՍՐՈՎԲ ԱՐԲԵՊՍ. ԱԳՐԱՆԱՊՈԼՍՈՅ

Հրս. ՆԵՐՍԷՍ ԳԱՍԱՊԵՆԷ

Բլովսիւ

\*) Գրութիւնս որ անթուակիր է՝ կը պատկանի 1823—1839 թուականին որ է կարապետ Արքեպիսկոպոսական օրջանը:

## Մ Ե Ծ Պ Ա Պ Ա Ս

Մեր գիւղին մէջ ամէնքը կը ճանչնային իմ մեծ պապան, մօրս հայրը, Ստեփան պապան, մականունով Չփինց Ստեփանը: Ես, ձմեռը իրենց օճախին քով իր ծնկներուն վրայ եմ մեծցեր: Շատ պզտիկուց կը յիշեմ զինքը: Պայտազործ էր, և իր այս արհեստը սորվեցուցած էր երկու զանակներուն, իմ քայիներուն:

Ծրկայն էր մեծ պապայի հասակը, եթէ արհեստէն ու տարիքէն ընկճուած կուրծքը վեր բռնէր: Տէյէնէկը միշտ ձեռքը տեսած եմ. երկաթէն ցատկած կայծ մը քալիս գացեր աչքին պլպլուն է զարկեր ու կերեր: Միականի էր իմ մեծ պապան, բայց միաքը լուսաւոր, աւելի՛ լուսաւոր:

Առաւօտները, ձմեռ ու ամառ, ցուրտին ու բուքին կ'ելէր, ձայն կու տար իր զաւակներուն ու զանոնք առջևը ձգած գործին կ'երթար, երկաթի ձողերը ծծեկու և անոնցմէ էջու և ձիու պայտեր գետին նետելու: Լուսազրիւրին ճամբուն վրայ կարգաւ շարուած էին պայտազործներու արհեստանոցները:

Թըք-թաք, կը զարնէին անոնք կարմիր երկաթին, ուժով եւ քրտնած:

Այդ ուժով հարուածները չէին խանգարեր դրացիներու պզտիկներուն քուեն իսկ. անոնք այդ ձայնին մօտիկ ծնած ու մեծցած էին: Թափ-թիփը օրօրի մը պէս բան մըն էր այդ գործարաններուն մօտիկ գտնուած անեցիներուն:

Իմ դպրոցի ճամբուն վրան կ'աշխատէր իմ մեծ պապը, սակայն երբ կը մօտէի ձեռքն համբուրելու: Ա՛խ, ի՛նչ անուշ էր այն հացին մէկ պատառ, որ պապս կու տար ինծի, թէ և պատառը սև էր, գետնի հողին պէս:

Չեմ կարող ըսիլ հիմայ թէ կարողալ զիտէ՞ր մեծ պապս: Ես ինչո՞ւ օր մը գիրքս չդրի իր դիմաց տեսնելու համար թէ դպրոցի երես տեսած է ան: Բայց եթէ դպրոց գացած ու այրբենդիմը սորված չէ, ուսկի՞ց զիտէ ծայրէ ծայր «Հաւատով խոստովանիմ» ջրանհչորս առնները, զոր ամէն իրիկուն կ'ըսէր և ինծի՛ ալ կը սորվեցնէր: Ուսկի՞ց զիտէր Նարեկացիի աղօթքները, գոց, Հայր մերի պէս: Հապա շարականները, զոր ամէն առտու կ'երգէր երբ աղաքները անկողինուն մէջ կը դառնային մէյ մը ու երբ կ'ուշանային դուրս ցատկի տաքուկ վերմակին տակէն, ան կէս ձգած շարականը կրկին կը ձայնէր:



— Նիկողոս, Յակոբ, հայտեցէք, կը լուսնայ այի:

Զմեռները, իրիկուան երբ մանդալին մէջ եզիպտացորեն կը պայ-  
թեցնենք, մեծ պապաս կրակի ունելին ձեռքը «փաթ-քիւթ»ով սկսող  
բան մը կ'ըսէր ու կը վերջացնէր «չատը ինծի քիչը քեզի» և անա  
փոքրիկ եզիպտացորենը ճերմկած, ծաղիկի մը ձե առած մանդալէն  
դուրս կը նետուէր յետոյ մեր բերնին հիւր ըլլալու համար:

Երբեմն ալ կրակին մոտիրին տակ քանի մը բաղաթէս գրած կ'ըլ-  
լար կամ մանդալին վրայ թէնճիբէ մը դուռմ կ'եփէր և մինչև որ  
բաղաթէսը խորովուէր կամ դրուճմը եփէր ու պաղէր՝ մեծ պապաս  
մեզի հէքեաթներ կը պատմէր: Ազամ Եւայի պատմութենէն սկսած՝  
Սուրբ Գրքի պատմած բոլոր դէպքերը ջուրի պէս կ'ըսէր: Դժոխքը  
երբ կը նկարագրէր՝ քանի մը օր չէինք հայնոյէր որ մի՛ գուցէ հոն  
նետուինք: Ինչպէ՛ս գիւէր, ճիշդ անոր հակառակը Արքայութեան ար-  
ժանացողներու երջանիկ ժամերը նկարագրելու:

Այս նկարագրութեան վրայ մենք նորէն կը զգուշանայինք  
մեզք գործելէ, որպէսզի արդարներուն հետ արքայութիւնը վայելէինք:  
Իրմէ լսած եմ Յովն. վարդապետի միտքան եղած յետոյ անկից ետ եկած  
Պարտիզակցի, Լիմ անապատի միտքան եղած յետոյ անկից ետ եկած  
ու Մանուշակի լեռներուն վրայ ճգնած էր: Պաղուկ ջուրը զոր ուխ-  
տաւորները կը խմէին, ինքը բղխեցուցած է դայն:

Ամառը ես մեծ պապայիս հետ այգին գացած եմ, ինքը անկած  
է որթերը:— Կե՛ր, տղաս, կե՛ր, կը կրկնէր միշտ թուղին ճիւղերը վար  
է որթերը:— Կե՛ր, տղաս, կե՛ր, կը կրկնէր մեծ ողկոյց մը ձեռքս տուած, եր-  
քաչելով. ու սաթի պէս դեղնակ մեծ ողկոյց մը ձեռքս տուած, կ'իջնէինք վերի  
կար կողովը ուսին զարկած, տէյնէկը ձեռքը վար կ'իջնէինք վերի  
արտերի մեծ պապայիս այգիէն երբ զիմացնիս ձմերուկի պէս կարմիր  
արեւը Մարմարայ ծովուն մէջ կ'ընկղմէր:

Սեպտեմբերի վերջերն ալ՝ ես շարաթ իրկուսները իր հետ աւաման  
գացած եմ, ուր հող մ'ունէր մեծ պապաս, եզիպտացորենով լեցուն  
հող մը. որուն ճիշդ մէջ անդը դուլէպէ մը կար, որուն առջև կրակ կը  
վառէր թէ՛ տաքնալու, և թէ՛ շնագայլերը փախցնելու համար:

Մեր քունը երբ խոտերուն վրայ կը տանէր, կրակը կը մարէր և  
շնագայլերը մեր մօտիկը կ'ուռէին եզիպտացորենը և կ'ոռնային: Մեծ  
պապաս ինձմէ առաջ կ'արթննար և իր բոլոր ուժովը երկար «հէ՛յ»  
մը կը պոռար ու ձեռքով կաղի թէնէքէն կը զարնէր, շնագայլերը  
լեղապատառ կը փախչէին ու մենք ժամ մըն ալ կը քնանայինք:

Առտուն ես բոցի մը զիմաց կ'արթննայի, երբ արեւը արդէն շա-  
տոնց վեր ելած է մեր ետին կանաչներէն: Մեծ պապաս քանի մը  
քոչան միտիը նետած կ'ըլլար կրակին վրայ, փաթ-քիւթ կը փաթէին  
անոնք: Ո՛հ, որքան համով էր այժմայի մեր այս նախաճաշը:

Մեծ պապաս բարի մարդ էր, երբեք հայրոջանք լսած չեմ իր բերնէն: Մենք երանի կու տայինք իրեն, որովհետև քաջ գիտէինք որ իրեն պէտքերը միայն կրնային արքայութեան արժանանայ: Ամէն կիրակի ան եկեղեցի էր, իր մինաւերին վրայ, տիրացուները երբ սխալ երգէին կը սրբազրէր, երբեմն եղանակը, երբեմն բառերը:

Վա՛յ թէ դպրոցէն պակսէի, ձեռքէս բռնած կը տանէր, Շեխ վարժապետին կը յանձնէր:

Ես որ ուսման սէր ունեցայ մեծ պապայիս չեմ պարտիր արդեօք: Իր աղջիկը չէ՛ր իմ մայրը, որ թէև հազիւ այբբենգիմը ճանչցած ձգած էր դպրոցը, իր Շիրինեան վարժապետին անունը ու այրին երեք տիւրէկ ունենալը կը յիշէր միայն, և սակայն Ստեփան պապաս ըսած է մօրս — Մկրտիչը դպրոցէն չհանես:

Մայրս, ուրիշին հացը եփեց, շալակով պէճէկի եսփրախ կրեց ինծի գիրք ու տետրակ և ձմրան ետմէնի դնելու համար, որ դպրոցէն ետ չմնամ:

45 տարի առաջ 1894ին, իրկուն մը մեծ պապայիս գացի. 2—3 տարիէ ի վեր մենք ելած էինք իրենց տունէն: Յամ սէտիրին վրայ նոտած էր մանդալին քով: Ես 13 տարեկան տղայ էի այդ առնն: Մանդալին մէջ ո՛չ եգիպտացորեն կը փաթէր, մոխիրին տակ ո՛չ բաղաթէս կը խորովուէր, և թէնճիրէին մէջ ո՛չ ալ դղում կ'եփէր: Ես կարդալ գիտէի և Դաշնակցական մօրեղբորս Դրօսակ մը ժարած էի: Յակոր ժայիլիս բացակայութենէն օգտուելով՝ Մեծ պապաս կարդալ տուաւ Դրօսակը ցած ձայնով: Հայաստանի հայ ժողովուրդին զուրումն էր նկատաբարուած անոր էջերու՛ վրայ:

— Վա՛խ, վա՛խ, կը կրկնէր միշտ, իմ մեծ պապան, վերջապէս ա՛ղաթ Հայաստան մը պիտի չունենանք:

Ոտքի ելաւ, դուռը բացաւ, վար իջաւ պառկելու: Մեծ մամաս, Յակոր ժայիլիս կիներ ու ես անզգալարար համրեցինք սանդուխներուն աչքերը՝ որոնց վրայ կը կոխէր իմ յաղթանդամ մեծ պապաս:

Ու յանկարծ «փա՛ֆ», մէկը իր մեծ մարմնով տախտակին վրայ ինկաւ, երեքս միասին դուրս թռանք: Խեղճ պապաս գետին ինկած էր:

— Մա՛րդ, մա՛րդ: Մեծ պապա՛, Մեծ պապա՛:

Մեծ մամաս ու ես արցունքը աչքերնուս սկսանք զինքը կանչել: Հարսը միայն կ'արտասուէր, իրաւունք չունէր խօսելու:

Ի դուր պոռպցինք որ արթննայ, ան երեսը չդարձուց մեզի, թէև կը շնչէր:

Դրացիները եկան, հաստատեցին որ տամիա իջեր է մեծ պապայիս վրան: Վեր տարին, ցած սէտիրին վրայ ուր քառորդ ժամ մա՛ռաջ Հայաստանի ազգակիցներուն կրած տառապանքը մտիկ ըրած էր, այդ սէտիրին վրայ անկողին ձգեցին, պառկեցաւ և առանց բառ մը

ըսելով, յաւիտենական քունով փակեց աչքերը, զանոնք բանայու համար իր նկարագրած Արքայութեան մէջ:

Մեծ պապաս իր կեանքը փակեց — «վա՛խ, վա՛խ, վերջապէս ազատ Հայաստան մը պիտի չունենանք» ըսելով:

Ես չէի մտածեր այդ ատեն թէ իմ մենտորը կորսնցուցած եմ և չէի ալ խորհեր որ իմ մեծ պապաս քառասունը հինգ տարի ետք պիտի արթնցնեմ ու իր ներկայութեան պիտի պատմեմ աշխարհի՛ որ ես յառ քան կը պարտիմ իմ Մեծ ՊԱՊԱՅԻՆ:

Հ. ՄԿՐՏԻՉ Վ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

17 Հոկտ. 1939

### ԳԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԱԿԸ

Չի գիտեր srsմիլ, զուարք կը խնդայ,  
Կասակներ կ'ընէ նրբին սրամիս.  
Եւ վայրկենին ալ լուրջ ու անժպիս,  
Ձեզ իր ապրանքին զովեսք կու սայ:

Լուցկի. սիկառի բուրբ ունի սիւրուր,  
Տասը պահարան կու սայ ասնոցի.  
Գուլպայ կը ծախէ բրդէ զունաւուր,  
Ժիր ու կրակոս է, կը նմանի բոցի:

Եւ կարծես մոգի ձեռնով մը ուժեղ  
Ապրանքը կը փոխէ իր գոյնն ու որակ.  
Ա՛յ ձե՛լ չի՛ բերեր տուփ, բոքի պրակ,  
Այլ համեղ ու քարմ ուսելիք, բոկե՛ղ:

Բայց ուսկի՞ց կու գայ այն ձայնը խորունկ  
Որ միտք կը կրկնէ «Շարժում» «Իրաւունք».  
Ո՛հ, նոյն կազմո՞շն է, զուակ սիրասուն.  
Ե՛ւ բնաւ հանգիստ չունի օրն ի բուն:

Թո՛ղ երկար ապրի տղեկն անձնուրաց  
Որ արդէն բեկն է իր հե՛ք ծնողաց,  
Եւ որ հագուստին սակը աննոռնի,  
Ա՛խարհի չափ լայն հոգի մը ունի:

ԳԱՄԵՐ ԱՐՇԱԻՐ

## Վ Կ Ա Ն

(ՀԱՏՈՒԱԾ ՄԸ «ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ» ԱՆՏԻՊ ԳՈՐԾԷՆ)

Վկայ.— Այո՛, պարտականութիւնս է, Տէր դատաւո՛ր, պատմել ոճրին մանրամասնութիւնը՝ յանուն արդարութեան: (Իրտինքները սրբելով): Միայն, թող տուէք ինձ պրպտել այս եղբրական դէպքին սկզբնապատճառները և դատարանիդ ներկայացնել:

Դատաւոր.— Միայն թէ՛ համառօտ և առանց խորհրդածութեան:

Վկայ.— Պիտի ջանամ, Տէր դատաւո՛ր: Ես իբրև փաստարան, ուղեցի ընծայել իմ պաշտպանութիւնս Տիկին Գամերեանի, բայց ան մերժեց: Կը կարծեմ թէ ամբաստանեալ կնոջ մը փաստարան չվարձելը բացառիկ երեւոյթ մըն է, մեզի և դատարանիդ համար: Տիկին Գամերեան մերժեց, ո՛չ թէ զգայացունց երեւոյթ մը պարզելու համար հոս, այլ որովհետև իր դժբախտութեան բերումով յուսահատած էր կեանքէն: Դուք զինքը լսեցիք: Համերոող եղէք քիչ մը եւ ներողամիտ՝ որպէսդի ես ձեզ ներկայացնեմ այս ընտանիքը իր անաւոր դժբախտութեան մէջ:

Պ. Գամերեան իր յիսունը երկու տարեկանին կ'ամուսնանայ տանրեօթը տարեկան աղջկան մը հետ որ իր ծնողաց թշուառութեան և պարտադրումին վրայ կը ստիպուի իր կեանքը կապել անոր: Երեւկայեցէք Գարունը, կանաչութիւն, ծաղիկ, արև և լոյս: Ու երեւկայեցէք Ձմեռը, ցուրտ, մռայլ և դաժան: Ու բաղդատեցէք երկուքը իրարու հետ: Որքա՛ն հակասութիւն: Կ'անցնին տարիները, և վաթսուէնամեայ ծերունի մը ոչինչ կրնայ շնորհել ծաղկատի կնոջ մը որ կեանքով և խանդով լեցուն է:

Դատախազ.— Կը բողոքե՛մ, Տէր դատաւո՛ր, վկայ մը իրաւունք չունի այսքան խորհրդածութիւն ընելու: Պ. փաստարանը հոս կանչուած չէ իր արուեստը կիրարկելու: Պարտաւոր է միայն իր տեսածն ու լսածը պատմելու:

Դատաւոր.— (Դատախազին) Մի՛ միջամտէք նախագահի իրաւունքներուն:

Վկայ.— Ես տեսածներս և լսածներս պիտի պատմեմ ձեզ: (պահ մը մտածելով) Ու ես տեսայ ու լսեցի որ Տիկին Գամերեան յուսախար եղած է ու լուռ կը տառապի: Պ. Գամերեան անկարող է զգալու իր կնոջ հոգեկան տագնապը: Ընդհակառակը, անիկա կրակին վրայ



Վկայ, — (ինքզինքէն ելած) Ինչպէ՞ս լռեմ, Տէր դատաւոր, երբ այդ սիրահարը ե՛ս եմ:

Դատաւոր. — (Ձարմացած) Դո՞ւք:

Վկայ. — Այո՛, ե՛ս (փսփսուք և իրարանցում դատարանին մէջ):

Դատաւոր. — Շարունակեցէք ուրեմն թէ ի՞նչ տեսաք:

Վկայ. — Ե՛ս, Տէր դատաւոր, տեսայ թէ ինչպէ՛ս Տիկին Գամերեան իր կուրծքը բռնած, վերաւոր դէպի սրահ կու գար ինծի քաշկըռաուելով և ձեռքերուս մէջ կը նուաղէր: Բժշկական տեղեկագիրը իմ տեսածներս կը հաստատէ: (Պահ մը լուռ) Այս կինը, պարոնայք դատաւորնե՛ր, իր ուժերէն բարձր զոհողութիւն մը կ'ընէ: Իր պատիւը և սէրը կը նախընտրէ կեանքէն աւելի: Բայց նախախնամութիւնը արդար կեբպով լուծեց խնդիրը: Այո՛, մի զարմանաք: Երիտասարդներու երջանկութեան սեմին վրայ արգելք մըն էր պ. Գամերեան: Այս կինը անմեղ է պարոնայք երդուեալներու նայեցէ՛ք իր դէմքին և անմեղ արտայայտութեան: Խաղաղութիւնը կ'արտացոլայ իր նայուածքէն: Երբ այս կինը անմեղ հռչակէք (զանգակ) կեանք կու տաք նաեւ եօթնամեայ անմեղ մանկան մը (զանգակ աւելի բուռն) ինչպէս նաև երիտասարդի մը, այսինքն ինծի՛ . . .

Դատախազ. — Հերիք է այլևս:

Դատաւոր. — (Չանգակը աւելի ուժգին կը հնչեցնէ):

Վկայ. — (բարձր) . . . Որ կը սիրեմ զինքը, ու պիտի սիրեմ՝ եթէ նոյն իսկ մարդասպան հռչակէք զայն (կը նուաղի):

(Յուզում և իրարանցում դատարասրահին մէջ):

ՀՐԱՆԴ ՀՐԱՀԱՆ

Փլովսիվ

Ե Ր Գ Ե Ր Գ Ո Յ

Աղօթքը բերնի՛ս — արեւ կիրակի—,  
Օրհնեցի երբ որ շիրիմն հրնօրեայ,  
Մեռեկներն ցեղիս՝ արքնցած սեայ...  
Որոնք բուռ առ բուռ, պերճութեամբ ոնի՛  
Անուրջ նեւեցին չարչարուող գանկիս,  
Եւ աշխուս մեջ՝ Յարութեան մայիս...

Հայրենի սան երբ արսկեցի մոխրէն՝  
Աւերին վրայ հրնածոր փողիկն,  
Թիթեռներ բլրան դարերու կրքիկն...  
Որոնք անցեալի խորխերու սակէն՝  
Զայրոյթով յանկարծ, սրտիս մեջ մրսան,  
Բանեղով վրեժ ու կարմիր մասեան...

Հաց մը ես գրկած, ինչպէս սուրբը՝ խաչ,  
Յոգնասանչ բոնրին երբ գացի այցի.  
Հացբուխներ ելան կասարբ խաչի...  
Ըսին «Յիսուսի խաչէն շատ առաջ  
Մենք խաչուեցանք արեւուն դիմաց,  
Ու մենք այդ խաչին՝ Մարիամներ սրմբած...»

Սիրքս զբթառատ, մեր գիւղի ժամուն՝  
Իբրեւ զըւարակ ես սարի յօժար,  
Ըսի, «Աւարի՛չ, երբ կամիս՝ ա՛ն...»,  
Խորանի սակէն, մարմար փարեուն,  
Պապերը լացին: Արտաւէն անոնց՝  
Աւետրան եղաւ տեսիլի հրնոց...:

Փունջ մը գինարբու՛մ, ամի մը մանուշակ  
Հեռուէն նեւեցի երբ մեր գիւղերուն,  
Բիրքս ծաղկեցաւ լայնէն ներկերուն...,  
Ծուխը բոնիրիկն, բոցարձարձ կրակ՝  
Հիւսեցին հրգօր փերքուածը հացի,  
Բանդակուող նակսին՝ խոժոռ ներկայի...:

Նայուածքս խունկի նրման ցանեցի՝  
Կալերու սբուն եզին ու ափին,  
Ինչպէս սերմնացան՝ սերմը զոզնոցին...  
Կալերու մէջէն, վազուով խենքի՝  
Քայեցին հուժկու եզները քրտնած.  
Եղջերնուն վրայ՝ արեւը բազմած...:

Աղբիւրի ալին՝ իմ երգս սրի,  
Քանզի ուզեցի որ երգս ունենայ՝  
Իր ալիքներու քսեղին վրայ . . .  
Ջուրը քշքշաց դիւահա՛ր ոգիւ,  
Հազար համբայե՛ տառուղներ եկան,  
Սիրայ մարգրիտներ՝ յաքերնուն բերան...:

Ձեքը լեցուցի հող նրբագին մէջ,  
Պատրոյզն վառեցի հաւաստիս կայծէն,  
Յաբէքը որպէս կայծփարի բոցէն,  
Ու երբ նայեցայ, հոսուումով անվերջ՝  
Խորհուրդներ անցան կրթոնի դասէն,  
Եղեգի նրման՝ Յիսուսի կողէն...:

Յա՛ւէս օրհնեալ ես, սրբա՛փալ կարագ,  
Որ ինձ կը ժրպտիս՝ խորէն պոսուկին,  
Մոդէսը ինչպէս՝ գարնան արբունքին . . .  
Մայրութեան փառքին, խրմբակ առ խրմբակ,  
Կովեր վազեցին, ծիծերնուն հորքեր,  
Եւ կրճակներուն՝ վրայ հին վառեր:

Յեղապատճութեան ես ուխտեալ գերի,  
Հայոց պատմութեան՝ մուսքը լրդեցի,  
Ինչպէս ուխտաւորն՝ սեմերը վանքի . . .  
Մասիսի վինէն, Արտաւազը յառած՝  
Նժոյզն արձակեց բրձնութեան դեմ քած,  
Որ վերածընի արքայ ու Ասուած...:

ՍՕՍ - Վ.Ա.ՆԻ



# ԾՈՓԱՅ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄՆԵՐԸ

(Բ. Ա. 190—93)

Չէք կրնար երեակայել թէ ինչ մեծ դեր կը խաղան հասարակ դրամավաճառները, որոնց հաւաքած զանազան հին դրամները, վաճառքի ապրանք ըլլալով և ձեռք ձեռքէ անցնելով, կը հասնին գիտութեան կեդրոնները, օրինակ՝ Բարիզ, Պերլին, Լոնտոն եւ այլն և հմուտ դրամագէտներու ձեռքին տակ դասաւորուելով նոր նոր փաստերով կը լուսաւորեն հին պատմութեան մութ մնացած կողմերը:

Հայաստանի ընդարձակ հողամասը լիքն է պատմական հնութիւններով, բայց անշարժ, անփոխադրելի և մանաւանդ մեծ մասով չպեղուած և լոյս աշխարհ չեկած ըլլալուն համար առայժմ օգտակար չեն հայրենիքէն հեռու ապրող հայ հնախօսին, իսկ հնութիւններու բեկորներ, որոնք զանազան ճամբաներով Սերոպա կը հասնին, շատ տկար ծառայութիւն մը կրնան ընել անոր:

Հին դրամը, ինչպէս շեշտեցինք, իրրե վաճառքի ապրանք, հողին մակերեսը ելլալէն և գանուելէն հաջ, շուտ կը գաղթէ՝ Սերոպա թանգարաններու դրամական բաժիններու մէջ հաւաքուած միլիոնաւոր դրամները գլխաւորաբար ձեռք բերուած են գնումով:

Հին քաղաքակրթութեան օրրանը եղող Փոքր Ասիայէն տակաւին միշտ հին դրամներու հեղեղ մը զէպի Սերոպա կը հոսի Ուրհին հայկական դրամներն ալ այդ յորձանքին հետ միասին կու գան և կը ներկայանան հայ հնախօս-դրամագէտին:

Եւ որովհետեւ դրամը իր էութեամբ բեկոր մը չէ, այլ ամբողջութիւն մը, իր վրայ քանդակուած կիսանդրիով, խորագիրով և գանազան հանդամանգներով, կրնայ հաստատուն և ստոյգ տեղեկունութիւններ տալ մեզի՝ գարբրու խաւարով պատուած զէպքերու և պատմական անցեալի մասին:

Հետեւաբար հայ դրամագէտներու և սիրողներու գլխաւոր պարտականութիւնն է փնտռել նոր և հին հաւաքածոնները աչքէ անցընել, տակաւնութիւնն է փնտռել, որովհետեւ հայկական հին դրամները միշտ, առանց յուսալքուելու, որովհետեւ համանաւանդ այս յօդուածին նիւթ երաւական հազուադէպ են, նամանաւանդ այս յօդուածին նիւթ գողները:

Ոչ միայն Հայոց, այլ օտար պզգաց պատկանող շատ մը դրամներէն իսկ, միւսն ալ այսօր գտնուած են միակ օրինակներ (unique exemplaire) որոնցմէ երկրորդ կամ երրորդ նմոյշ մը գտնելը անհնար եղած

է. ըայց գտնուածը՝ ուսումնասիրուելէ և արձանագրուելէ ետք գիտութեան կը պատկանի և կը յաւերժանայ:

Մեր խօսքը հոս պիտի մասնաւորենք Մոսկաց թագաւորներու դրամներուն վրայ:

Նախ անկեղծ՝ ըլլալու համար պէտք է խոստովանինք որ Հայոց հին պատմութիւնը շատ մը շրջաններ ունի և ազգասիրական թռունդ ոգի մը բաւական չէ պատմութիւն գրելու, այլ փաստերը խօսեցնելու է:

Երկրորդ, քննադատութեան տարափին տակ, արդէն տակն ու վրայ ըրած ենք այն ինչ որ ունէինք:

Ագաթանգեղոսը սուտ և շինծու յայտարարեցինք, Բուզանդը չափաղանցող և ազգին թշնամի, Ղ. Փարպեցին և Եղիշէն կողմնակալ և կրօնամոլ, Խորենացին առասպելահիւս և անտեղեակ հին պատմութեան:

Լա՛ւ, ուրեմն պէտք է սկսիլ սկիզբէն:

Մոսկաց թագաւորութեան մասին հայ մատենագրութիւնը լուռ կը մնայ:

Յոյն պատմիչ մը, որպիսին է Սղարսոն (Բ. Ա. 58 — Բ. Յ. 25) կողմնակալութիւն ընելու որեւէ դրդապատճառ չունի, և այն ինչ որ գրած է Հայոց մասին, անվիճելի է:

Ահա և իր վկայութիւնը:

Իրիստոսէ առաջ 190 թուին, երբ Անաթոքոս Գ. մեծ Սուրբական թագաւորը, Մազնեսիայի մօտ պարտուեցաւ Հռովմէացիներէն, որոնք անդարձ կերպով ոտք դրին Փոքր Ասիոյ հողամասին վրայ, Հայաստանի երկու հայ կուսակալները Զարեհ (Զարիադրէս) և Արտաշէս (Արտաքսիաս) տեսնելով իրենց օրոյն Անաթոքոսի տկարութիւնը, միաժամանակ ապստամբեցան և հիմը դրին երկու անկախ հայկական թագաւորութիւններու:

Փա՛ստ: Ահա Զարեհի դրամը:



Զարեհի դրամը, պղինձ, արժուութիւն 18 միլիմէթր  
(Կր գտնուի Raiser Fridrich museum, Berlin)

Մոփաց թագաւորութեան հիմնադիրը երիտասարդ է և աղքետիկ երեւոյթ մը ունի:

Իր կրած ինքնայատուկ սրածայր խոյրը կամ գլխանոցը, թէև շատ կը տարբերի Այրարատեան աշխարհի հայ թագաւորաց խոյրէն, բայց նուազ պատկառազրու չէ:

Դրամին երկրորդ կողմը Անահիտը չորով կեանքի և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց» կանգուն կեցած է, ոտքերուն քով թեւաւոր զոյգ մը սֆինքսներով:

Հայկական զիցարանութեան համար նշանակելի երեւոյթմըն է որ Անահիտ տիկինը, հոս կը ներկայանայ օգնական զոյգ մը սֆինքսներով: Արուեստի տեսակէտով ալ դրամը արժանի է գնահատման: Զարուեստի կիսանդրին, որ իր բուն զիմանկարը ըլլալ կը թուի, վարպետութեամբ աշխատուած և բարձր քանդակուած է, բան մը որ յունական դրամներու մէջ ալ հազուադէպ է:

Խորագիրը յունարէն՝ ΣΥΛΛΟΓΗ ΜΕΤΕΤΕΛΕΣΜΑΤΩΝ ԿΑΙ ΔΙΑΣΤΗΜΑΤΩΝ (որդի) Անիսադէսի թագաւորած է 190—165 (ն. Ք.):

Ինչպէս ըսինք, իրեն ժամանակակից էր Այրարատեան թագաւոր Արտաշէսը կամ Արթաշէսիսը, որուն մասին մեր խորհրդաւոր պատմիչ Խորենացին կը գրէ «... և դրամ ատանձին զիւր պատկերն հարմարեցնելով»:

Բայց ցուալի է որ մենք այդ դրամը չենք տեսած, որովհետեւ մինչև հիմա գտնուած չէ, Խորենացին արդեօք Ե. կամ է. դարուն տեսած է զայն, կը կասկածիմ, ուրեմն վիճելի է նաև իր վկայութիւնը: Վերոյիշեալ երկու թագաւորութիւններու մէջ ծայր տուաւ գերակայութեան կռիւը:

Դարձեալ յոյն մատենագիրներու վկայութենէն գիտենք թէ Զարեհի ժառանգ Մինորոսը (կամ Մինորոսը կամ Մերուսը) ամրացաւ իր հօրը գահուն վրայ շնորհիւ Կայսրի վկայութիւնը: Թագաւորին աջակցութեան, որովհետեւ Արդաքսիաս ուղեց նուաճել Մոփաց աշխարհը:

Մինորոսը (165—150?) գոյութիւնը հաստատուելու համար պէտք ունինք իր դրամին, տակաւին չէ գտնուած: Ասկէ ետք պատմութիւնը կը լռէ, բայց դրամագիտութիւնը դարձեալ կը խօսի:

Անա Մորփիլիկոսի դրամը, որ խիստ նմանութիւն մը ունի Զարեհի դրամին: (տես թիւ 2):

Խորագիրը յունարէն՝ ՄՈՐՓԻ ԶԱՐԵԻ Ե Ի ԳԻՐԸ ԿԱՄ ԹԻԼԸ: Կամ՝ ՄՈՐՓԻ (որդի) Զարեհի: Շատ կարելի է Մորփ ըլլայ Զարեհի կրտսեր որդիներէն մին: Եւստ կարելի է Մորփ ըլլայ Զարեհի կրտսեր որդիներէն մին: Իր մասին աղօտ յիշատակութիւն մը կայ Խորենացիի աւանդա-

կան պատմութեան մէջ, ըստ որուն Վաղարշակ, մեծ պատերազմէ մը ետք կը սպաննէ կապաղովկոյ Մորփիլիկէս իշխպնը և կը նուաճէ անոր երկիրները:

Բայց Մորի կապաղովկոյ թագաւորը չէ, այլ Ծոփաց, իսկ «Վա-



Մորփիլիկոսի դրամը, պղինձ, սահաճութիւն 17 միլիմէր  
(Կր գտնուի Raiser Fridrich museum Berlin)

զարշակ» հաւանական է Արղաքսիասի յաջորդներէն մին, որ հօրը քաղաքականութեան հետեւելով կը ձգտի նուաճել Ծոփաց աշխարհը:

Մորփիլիկոսի դրամը արուեստի տեսակէտով Չարհնի դրամէն վար է: Կիսանդրին շատ փոքր է և զէմքի նրբութիւնները կարելի չէ դանազանել:

Դրամին երկրորդ կողմը՝ Անահիտ դիցուհին կանգնած, զլուխը աշտարակազարդ թագով, հագած է ծալքաւոր երկայն chiton և վրայէն կարճ stola\*, ալ ձեռքը բռնած է ծաղիկ մը, կը պակսին սաքին քովի սֆինքսները:

Ուշացրաւ է որ Անահիտի ալ թեին տակ որոշակի կը տեսնուի յունարէն Ի գիրը (կամ ութը թիւը), որ կը նշանակէ թագաւորութեան ութերորդ տարին:

Այս ճշդութով, կը հաստատուի Մորփիլիկոսի, առնուազն, ութը տարի թագաւորելը — 150?—142?:

Իրմէ ետք, պատմութիւնը զարձեալ կը լռէ մինչև Մեծն Տիգրանի օրերը:

Այս վերջինը սպաննեց Չարիադրայ սերունդի վերջին թագաւոր՝ Արղանէսը և եղաւ միահեծան տէր բովանդակ Հայաստանի (Բ. Ա. 93):

Համառօտ գիծերով այս է Ծոփաց թագաւորութեան հարիւրամեայ կեանքը:

Այս քանի մը տողերով նպատակ չունիմ յիշեալ թագաւորու-

\*) Թիւ մէկ Անանիսը թագ չի կրեր եւ հագած է կարն chiton մը. յատուկ երիտասարդ աղջկանց:

Թեան պատմութիւնը ընելու, այլ Ծոփաց զրամները ծանօթացնելու ընթերցողներու և հայ զրամագիտութիւնով հետաքրքրուողներու լայն շրջանակի մը, դիւրացնելու համար անոնց պրպտումները: Դրամներու և պատկերները տեսնելը շատ մը առաւելութիւններ ունի քան անոնց նկարագրութիւնը:

Ուրիմն պէտք է որոնել ոչ միայն Միւրորդականէսի և Արդանէսի զրամները այլ աւելին, քանի մը թագաւորներու և ս, որոնք թագաւորած ըլլալ կը թուին Մորիէն ետք մինչև Արտանէս:

Գտնուելիք նմոյշները անկասկած մեծ նմանութիւն մը պիտի ունենան նախորդ զրամներուն, մասնաւանդ թագաւորին կրած խոյրը որ շատ յատկանշական է:

Այս շարքէն նոր, անծանօթ զրամ մը գտնողը բացառիկ ծառայութիւն ևս պիտի ընէ Հայոց պատմութեան: Լսեցէք նաև ինչ կը խօսի աչմը պիտի ընէ Հայոց պատմութեան: Լսեցէք նաև ինչ կը խօսի աչմը պիտի ընէ Հայոց պատմութեան: Լսեցէք նաև ինչ կը խօսի աչմը պիտի ընէ Հայոց պատմութեան: Ernest Eabelon, փոքր Ասիոյ թագաւորներուն մասին:

«Պատմութիւնը՝ Կիլիկիոյ, Պոմփիլիոյ, Լիւսիայի, Կարիայի հարըստութեանց, նոյնպէս Կապադովկիոյ, Պոսֆորի, Պոնտոսի կամ Բիւթանիոյ թագաւորներու. չունի աւելի հաստատուն հիմք քան զրամները, որ ճշգրտօրէն թուագրուած, կը լրացնեն, կը լուսարանեն հեղինակներու գրածները, յաճախ թոյլ կու տան ստուգելու անոնց առաւել կամ պակաս հակասող հաւաստումները և ճշտելու այս հարըստութեանց առաւել կամ պակաս մթին յաջորդականութիւնը»:

Իսկ ապագային հայ հնախոյրը երբ սկսի պեղել Զարհի երկիրը, Անձիտը, Ողոմանդէսը, Ծոփքը և մայրաքաղաքը — Կարկաղիակերտը, երևան պիտի գան շատ մը անծանօթ հնութիւններ և զրամներ որոնք պերճախօսօրէն պիտի պատմեն, մեղի ժառանգ ինկած Ծոփաց պատմութիւնը:



Ա. ԲԵՕԹԷՆԷՃԵԱՆ

## Լ ՈՒ Ս Ա Հ Ո Ք Ի

ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆԵԱԼ ԵՂԻՑԻ

Մինչ շիջեցաւ լոյսն աչեերուդ մըքավառ  
Եւ սիրեց ալեւս չի՛ բաբախեր կուրծքիդ սակ,  
Բայց հոգեպէս՝ դուն միտս կ'ապրիս ինձ համար,  
Ինչպէս լուսնակն երկնին մէջ կապուսակ:

Դուն կը լըռես, որպէս դանդիւ անարեւ  
Եւ կեանքդ ի սպառ պիտի բռնի վարդին պէս,  
Բայց երկնէն՝ ինձ կը ժպտիս ակներեւ,  
Աստղերուն հետ՝ քոչկոտելով լուսագէս:

Ո՛չ եւս քրքոյ դեմքիդ ժրպիտն անապակ  
Եւ ո՛չ արեւ պիտի շողայ նակսիդ վրան  
Բայց լոյսն ի վեր՝ քեզ կը փնտնեմ ո՛ հոգեակ,  
Դեմքիդ կարօս ձայնիդ կարօս յաւիտեան:

Ուր որ ըլլամ քեզ չեմ մոռնար իմ Սիրո՛ւտ,  
Եւ յիշատակդ երբեք սրճես չ'անհետիր,  
Քրնարն հոգւոյս՝ պիտի երգե մելանուտ  
Անմահութիւնդ եւ քու անցեալդ ամբասիր:

Ողջո՛յն քեզի, լուսափրփիք իմ Հրեւակ  
Մըմունջ մ'աղօթք՝ արցունքերուս փոխարէն  
Քեզի նըւէ՛ր. — մինչ ծաղիկներ զըլխահակ՝  
Լըռիկ կ'ողբան գերեզմանիդ սընարէն:

Ո՛ երանի, յաւերժահա՛րս երջանիկ  
Որ հեռացար այս տաղտալի աշխարհէն  
Այժմ քըռի՛ր, աղանակերպ իմ քոչնիկ՝  
Թըռի՛ր մինչեւ գահոյքն երկնից լուսեղէն:

Եւ դուն այժմիկ կը նմանիս այն շողին  
Որ մեկնելով բորբ արեւուն կողերէն՝  
Կ'իջնես յուշիկ, կամարներէն յուսածին,  
Հոգիս ողղել՝ կոյս համբոյրովրդ նորէն:

Բայց դեռ հազիւ դուն մօտեցած իմ հոգւոյս՝  
Անդարձօրէն կը վերանաս յոյսին հետ,  
Ի՛նչպէս դիւրիչ սակաւ մեռնող վերջալոյս:  
Որ կ'անհետի իմ աչներէս առյաւէտ:

Պատշեղի՛ բոյր, այժմ երբ յաւերժ կ'ողբամ քեզ  
Ո՛րպէս նոնի կանգնած շիրմիդ սրնարին՝  
Թող սուր ինձի, որ հաւատով հրձծեմ ես  
Աղօթքն այն սուրբ, զոր երկնեցիքն միասին ..  
ԹԱԴԷՆՍ ԿԱՊՈՒՏԻՎԵԱՆ

23 Օգոստոս 1938  
Պուլքրէշ



### ԿՍՆՅՆԻԿԵԱՆՔԸ

Կ'անցնի կեանքը, ու վայրկեաններն անդադար.  
Որքա՛ն շանիս անուն համբաւ անհամար,  
Հարուստ աղիւս նոյն հողին սակ միասին,  
Պիտի կորչիցն, այ՛ս է գրբուած մեր նակսին...

Փառք ու պատիւ, անբիւ զանձեր՝ գոհարներ  
Հոս կը մընան. ո՛վ փառամոլ ագահներ,  
Մարդը հիւր է եւ այցելու այս աշխարհ,  
Կ'անցնի կեանքը, աշխարհ մարդուս չի մընար:

Եկեք ուրեմն, այրիքն կեանքը նրաւափառ  
Զի ան կ'անցնի իբրեւ շանք մը հրաւալառ  
Նղբայրութեան բմպեցն գիւնին գեղեցիկ,  
Ու քերգեցն սերն, երգեցն համբոյրը ջեմիկ:

ԱՐՄԵՆՈՒՆԻ ՕՀԱՆԵԱՆ

## ԵԿՈՒՐ Ո՛Վ ԻՄ ՊԱՇՏԵԼԻՄ

ԱՆՈՐ ՈՐ ՍԻՐԱԾ ԵՄ ԶԵՐՄՕՐԷՆ

Քեզի համար բացած եմ դռները վարդապսակ դղեակիս,  
Գիշեր ու ցերեկ քեզի կը սպասեմ . . .

Խրախնամքի սեղան եմ պատրաստեր, ո՛վ իմ սիրելիս . . .  
Կարմիր գինին առատութեամբ պիտի հոսի, յաւերժա-  
հարսերը պիտի պարեն ու կարմիր վարդերէ պսակ պիտի  
հիւսեմ քու վեհապանձ նակասք զարդարելու համար . . .

Եկո՛ւր, ո՛վ իմ պաշտելիս . . .

Յաւերժական սիրոյ մեղեդին պիտի երգեմ քեզի հա-  
մար. ծնրադիր պիտի երկրպագեմ հօրութեանդ առջեւ . . .  
Եկո՛ւր . . .

Անհասնում տեղանքներ պիտի փափսամ իմ արսիս խո-  
րերէն . . .

Քուրումնաւէ ծաղիկներով փունջեր եմ կազմեր՝ զար-  
դարելու համար հեռանքի սենեակս . . .

Հոգիդ Կուրեմքս պիտի լեցուի եւ արբեցումի զմայ-  
լելի պանք պիտի ապրինք այս գիշեր . . .

Եկո՛ւր, սիրելիս . . .

Ես սիրոյ եւ գեղեցկութեան դիցուհին եմ

Իմ ժպիսը՝ զարուն եւ կեանք պիտի պարզեւէ քեզի . . .

Ես՝ բուրումնաւէ հովիտներու յաւերժահարսն եմ, ու  
անմահութեան նեկսարք իմ օրքներես պիտի հոսի . . .

Եկո՛ւր, ո՛վ իմ սիրելիս . . .

Շղարս ու բենեգ հագած՝ քեզի կը սպասեմ . . .

Երջանկութեան գիշերն է այս գիշեր, ու Յաւիտեան-  
կանութիւնը մեկ երկվայրկեանի  
մէջ պիտի ապրինք:

Յայգալոյսին պիտի լսենք քրո-  
չուններուն գեղգեղը, Սիրոյ երգե-  
հոնին մոունջները . . .

Դաւիթի զաւիղը պիտի հնչէ . . .

Ասղերը արեալոյսը պիտի համ-  
բուրեն, եւ Սիրոյ աստուածը նա-  
խանձով մեզ պիտի դիտէ . . .

Խորհրդաւոր եւ սուրբ գիշեր,  
Սարսուռի եւ սիրոյ գիշեր . . .

ԱՐՄԵՆՈՒԷԻ ՕԶԱՆԵԱՆ







ուի ու կը զուարթանայ անոր հրճուեցուցիչ ազդեցութիւններէն. կը սեզմուի ու կ'ամպտի տխրազդեցիկներէն: Արարիչը՝ իր պատկերին ու նմանութեան համեմատ՝ մարդը ստեղծած պահուէն, անոր սրտին մէջ դրեր էր միայն անմեղութեան, բարութեան, սիրոյ, հրճուանքի զգացումներ ու սիրուի հոն ժպտարձակ ճառագայթներ: Մարդուս այդ երջանիկ վիճակը ահա թէ ինչ սիրուն նկարագրուած է Շարականին մէջ՝ զոր այնքան խանդով կ'երգենք թուն Բարեկենդանի կիրակիին. «Բանն որ ընդ Հօր յէութեան ու համագոյ Սուրբ Հոգւոյն, զպատկերն իւրական խառնեալ ընդ հողանիւք բնութեանս, զոր զարդարեալ փառօք եղ ի դրախտին փափկութեան: Յորում ցնծայր անխրական խնդրութեամբ, քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին յորմէ զուսոյն ճառագայթ սպաւուրք ի յինքեանս»:

Բայց, ախո՛ս, մարդուս անխորհուրդ պատուիրադանցութիւնը սեւաթոյր ամպի մը պէս կը մթադնէ այդ լուսասփիւռ ճառագայթները, և ահա մուտ կը գործեն անոր սրտին մէջ նաև տխրութեան, ցաւի, երկուղի, ատելութեան, վրէժխնդրութեան զգացումներ, և անկէ վերջ՝ ըստ իր գործերուն՝ լուսերանգը կամ տխրերանգը կը պատէ իր գէմքը, ըստ որում եւ Սիրաք իր շիմաստութեան» գրքին մէջ կ'ըսէ. «Սիրտ մարդոյ այլազունէ զերեսս մարդոյ, եթէ ի բարիս և եթէ ի չարիս: Հետք սրտի ի բարիս՝ դէմք զուարթ» (Անդ. ԺԳ. 31—2): Առածն ալ կ'ըսէ.

«Ժամ կայ սեւ, մուք խաւար

Որ երեսիդ մուր կու սայ.

Ժամ կայ ներմակ ու պայծառ

Որ երեսիդ հուր կու սայ»:

Որչափ որ բարձր են մարդուս հոգին ու միտքը, որչափ որ մարմնին մէջ կան հրաշակերտ զգայարանքներ և բազմաթիւ անդամներ, սակայն, այս բոլորին մէջ, ամէնէն աւելի, սիրտն է որ կը տիրէ մարդուս զգացումներուն վրայ: Իր բերանը ստէպ զայն կ'արտասանէ, յիշողութիւնը միշտ անով կը զրազի, ան իր սիրահարն է, անոր դպչիլը՝ կը նշանակէ իրեն դպչել, ան վառարանն է իր բովանդակ զգացումներուն, չափանիչը սիրոյն և ատելութեան, յայտարարը ուրախութեան ու տրտմութեան, ուստի և իր բերանը կը յեղեղէ միշտ. «Սիրտս կը նեղուի, սիրտս կ'ուրախանայ, սիրտս կը տրտմի, սիրտս կը սոչորի սիրով, սիրտս կը լեցուի ատելութեամբ, սիրտս կ'ամբրապնդուի, սիրտս կը լքանի, սիրտս կը յուզուի, սիրտս կը ճմլուի», և որ ըստ կարգի Եւ ահա սրտին կրած այս ներհակազդեցութիւններէն և զգացումներէն կը գոյանայ ժպիսը և Արցունքը:

Ժպիտը լուսախիւր ճառագայթն է մարդուս արև կեանքին, յայտարար նշանը գոճուակութեան սրտին, ուսկից իբր ակնազրիւրէ բղխելով կը սփռուի իր երեսին վրայ ու կը փայլի հոն արևի ճառագայթներուն պէս:



Երբ մարդուս երեսին վրայ չի փայլիր ժպիտը՝ մթազնելով տըխրուլթեան թանձրախիտ ամպերէն, ասոնցմէ խեղճն կը սկսի կաթկթիլ արցունք, և ինչպէս ջուրի և երկրի գոլորշին արեւի ջերմութեամբ վեր բարձրանալով կը դիզուի, կը թանձրանայ օդին մէջ և ամպ մը կը կազմէ, այսպէս ալ տխրութեան ու ցաւի մարախլապատ շողին լեցուելով սրտին մէջ՝ անկէ կը փոխադրուի «մարդուս աչքերու վրայի նուշաչափ մսեղէն անօթին մէջ, զոր անդամագէտները կ'անուանեն արցունքի աղբիւր, ուսկից նուրբ երակներու միջոցաւ՝ կը վազէ այտէն վար»։ Այս արցունքն էր որ առաջին անգամ սկսաւ վազել աչքերէն մեր յանցաւոր նախահօրը ու նախամօրը՝ երբ Աստուծոյ բերնէն լսեցին իրենց սա պատիմները. Դու, Եւա «Տրտմութեամբ ծնցես որդիս, և այր քո փրկեսցէ քեզ»։ Եւ դու, Ադամ, «Բրտամբք երեսաց քոց կերիցես զհաց, մինչև դարձցիս յերկիր, ուստի արար, զի հող էիր և ի հող դարձցիս»։ »Եւ եհան արձակեաց զնոսա ի դրախտէ անտի, գործել զերկիր՝ ուստի առաւ» (Ծննդ. Ա. Գ.)։

Այսպէս փակուելով փափկութեան ու ժպիտի զրախտը, այն տեղը կամ աշխարհը՝ ուր արտաքսուեցան, կոչուեցաւ արցունքի հովիտ, ուր լալով կու գայ մարդ, լալով ալ կ'երթայ։ Ուստի Վ. Հիւկօ կ'ըսէ «Մարդ կը ծնանի աւելի տատապելու քան թէ երջանկանալու համար։ Մեր աչքերը կրնան կորսնցնել օր մը իրենց տեսողութիւնը, բայց երբեք չեն կորսնցնէր արցունք թափելու յատկութիւնը»։

Ողբաղեալ անմահանուն Սիպիլը, որ շրջագայած կ'երևի արցունքի հովիտին ամէն կողմը, ահա թէ ինչպէս կը նկարագրէ հոն տեսած արցունքները՝ իր մէկ քերթուածին մէջ.

«Արցունքներ կան շիբ շիբ սքրում, մելամաղանս,  
Որոնք կու լան, կաթկրքելով այսին վրայ,  
Ամէն կաթիլ՝ հեծկրլսանք մը. կոծ մ'ե քախմոս,  
Իր ցօղին մէջ տառապանք մը կը քրքրուայ»։

«Արցունք մ'այ կայ, որ միտս կ'այրէ, բայց չի՛ կաթիր.  
Հեղուկ բոց մը, բուռն քապառիչ, անե՛ղ կրակ,  
Յամբած արցունք, որ չի հասնիր՝ մինչևե մոխիր  
կրքիցն աչքերն, հոգին դառնայ կոյս մ'աւերակ»։

«Արցունքի հովտին» մէջ ապրող, ո՛ր համօրէն մահկանացուներ, միթէ դուք ալ, գրեթէ ամէն օր, չէ՞ք տեսներ այդ արցունքները։ Երբ կ'այցելէք գերեզմանատունը՝ չէ՞ք տեսներ հոն ցաւազին մարերիկներ, որոնք ինկած տապանաքարերու վրայ՝ կու լան կողկողազին. «որոնց այտերուն վրայ կաթկթած ամէն կաթիլ հեծկրտանք մըն է, կոծ մը թախծոտ»։

Եւ ինչո՞ւ կու լան, կու լան, վասնզի թառապմբ են իրենց սի-



Յիսուս՝ ժողովուրդին ովսանաններով՝ երբ Երուսաղէմ մտնելու վրայ է, տեսնելով քաղաքը մօտէն՝ կը յուզուի սիրտը սաստիկ, «Եւ ելաց ի վերա նորա», կ'ըսէ աւետարանիչը. կը յուզուի և կու լայ՝ աչքին առջև բերելով անոր պատահելիք ամէն չարիքները, ու սրտառուէ ձայնով կ'ըսէ. «Եթէ զիտէիր դու զոնէ յաւուրս յայսմիկ զխաղաղութիւն քո, բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոս» (Ղուկ. ԺԹ. 42):

Յիսուսի գործադուրս սրտին կրած վիշտերը աննկարագրելի են, մանաւանդ Գեթսեմանիի մէջ անցուցած այն սարսուցցուցիչ տագնապները, աչքին առջև բերելով իր քաշելիք անլուր տանջանքները ու ահաւոր մահը, զոր ակնարկելով կը գոչէ Մարգարէն. «Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ» (Սաղմ. ԾԴ.): Նո՛յն ինքն Յիսուս գտրհուրած՝ կը զիմէ իր Հօրը՝ ըսելով. «Հայր, եթէ կամիս՝ անցո զբաժակս զայս յի՛նէն... և էր տագնապի, և հոսէին ի նմանէ քրտունք իբրև զկայակս արեան՝ ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր» (Ղուկասի. 42—4):

Իսկ ո՞վ կրնայ անթաց աչքով զիտել Յիսուսի խաչին ստորոտը կեցող իր ամենասիրելի մօրը ցաւագին վիճակը, որուն աչքերէն թափուած աղի արցունքը և աղեխարշ տեսիլը ահա ի՛նչ սրտածմլիկ ոճով նկարագրուած է հետագայ Տաղիս մէջ, զոր յուզումով կ'ողբերգէնք Աւագ Ուրբաթի զիշերածամին:

Ասուածային կոյսըն Մարիամ  
Կայր առ խաչին իւրոյ Միածնին,  
Հեղոյր արսուր կրակրմամբ սրբին,  
Եւ զայս ասէր ձայնս ողորմելին.  
Ա՛յ, ո՛հ, այ, ո՛հ, զբեզ ի խաչ սեռողիս  
Հազարս ցաւոց մօրդ այրած սրբի:


Որդեա՛կ, որդեա՛կ, Յիսուս իմ որդեա՛կ,  
Աչացրս յոյս մօրս քո կուսի.  
Իմ Միածին գառն անպարսական.  
Ընդ ո՞ր մեղաց կաս այժմ խաչին:  
Ա՛յ, ո՛հ, ա՛յ, ո՛հ . . .

Ե՛կ Յովնաճնես, ե՛կ որդեակ ե՛ւ դու,  
Իմ Միածնին սիրուն աւակեթ,  
Առցո՛ւ՛մ զմարմինն ողջագուրեցու՛մ,  
Եւ արսասու՛մ բզնա քաղեցու՛մ:  
Ա՛յ, ո՛հ, ա՛յ, ո՛հ . . .»:

Արցունքը որչափ որ հետեւանք է ցաւի, վիշտի, տրամուլթեան, յուզումի եւայլն, բայց երբ կը կաթկթի, կը մեղմացնէ անոնց սաստկութիւնը, մինչդեռ ինչպէս վերն շաւու Սիպիլ, արցունքը երբ չի կաթիր և ցամքած է, կ'այրէ մարգուս սիրաբ ու մարմինը կը դարձնէ մոխիր, որուն ստուգութեան ան օրինակ մը:

Ստորագրողիս ամենամօտիկ արեւակիցներէն մին՝ մանկամարդ կին մը, երեք ամսուան մէջ տարածամ մահով կը կորսնցնէ իր երկտասարդ ամուսինը և երկու դեռափթիթ զաւակները. առանց թափելու և ոչ կ'աթիլ մը արցունք, որ խափնուով անոր սրտին մէջ՝ կ'այրէ ու մոխիր կը դարձնէ զայն և այսպէս ինքն ալ կը չուէ անոնց ետեւէն ղէպի անդիտ աշխարհ:

«Արցունքի հովտիս» մէջ եթէ կ'ուզենք որ մեր սիրաբ կարելի եղածին չափ ղերծ և անաղղելի մնայ տխրութեանէ, ցաւէ ու մեր երեսին ժպտաբ մթազնող ուէ պատճառներէ, ամէնէն առաջ զգուշանանք մեղքէ և այն ամէն ապօրինի գործերէ, որոնք կ'արաքաւորեն ու կը վրդովեն մեր սիրաբ և արտասուել կու տան մեղ. սրկրորդ՝ նմանինք Ս. Յ. Ոսկերերան Հայրապետի, որ իր ամէն յաջող ու ձախող պատահարներուն մէջ՝ համակամելով Առտուծոյ կամքին՝ կը գոչէր. «Փա՛ռք քեզ, Տէր, փա՛ռք քեզ, յաղագս ամենայնի փա՛ռք քեզ»: Եթէ այսպէս ապրինք՝ ոչ միայն մենք չենք ողբար ու կը ժպտինք, այլ նաև Աստուած, որուն ուղղելով իր խօսքը՝ մեր հրեշտականման Ս. Գրիգոր Նարեկացին կ'ըսէ. «Եթէ մեղանչեմք ողբաս, եթէ արդարանամք ժպտիս»:



Հ. ԵՓՐԵՄ Վ. ԱՊՐՈՅԵԱՆ

Կ. Պոլիս 1939 Յունուար

ԱՌ ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՆ ԻՄ

Հ. Ս. Վ. ԵՐԵՄԵԱՆ

(ԱՏՐՈՒՇԱՆ)

Ո՛վ յարգելիդ իմ «Աթուռչան»  
«Խօսքեր» րդ քու բողոքաձայն՝  
Դրպանի նոր ճարեցոյցին  
Մէջ այս անգամ, իմ անուցին՝  
Վարդապետիդ բեղուն գրչեն  
Ինչո՞ւ համար ուղղուած են . . .  
Արդեօք գիտա՞կ ես վիճեցուս՝  
Որոնց ներքեւ կ'իմ քու,  
Կը տարուիմ յար, ո՞ւր չգիտեմ,  
Ընդհարե աւա՞ղ, բաղդես սրժխեմ . . .

\* \* \*

Զգացի՛ քե՛ արժիս խորեն  
Քու այդ խօսքերդ՝ դուրս քաշուած են.  
Զե՞ որ անխոնջ գիտուններու  
Աւխասանքը խիստ փորձարկու.  
Կը հաւաստեն ա՛յլ եւս հիմա,  
Քե՛ արտակից ու հեռակայ  
Երկու անձեր կը խօսակցին,  
Նախադրացում կոչուած բանին  
Շնորհիւ, որ դեռ բացայայտ չե՛.  
Այլ գեթ գիտենք, զի արդիւնք է  
Զարմանալի այն տարժումին  
Որ կը լինի ուղեղային  
Բջիջներու ծոցիկին մէջ,  
Ուրկէ բղխին շողեր անեղջ,  
Սակայն անեստ եւ միտ լռին  
Նման անքէլ հեռախօսին,  
Ու գաղափար եւ զգացում  
Ճառագայթի պէս անդադրում,  
Կ'երթան զբոլել սիրելիին  
Բջիջները իւր ուղեղին:

\* \* \*



Ըստ այսմ անա դու հեռու եմ  
Ինձ ցաւակից՝ ազնուօրէն  
Ըլլալ կ'ուզես, եւ վաղեմի  
Բարեկամիդ, ո՛ր սգալի  
Վիճակին ալ *անձայն խօսքով*  
Յայտաբերել սիրոյդ գորով,  
Իբրեւ անկեղծ Մխիթարեան  
Դուն կը կանգնիս ինձ դեմ սերկեան,  
Որդեկորոյս անմխիթար  
Հօր մը բլլալ մեծ մխիթար...

\* \* \*

Շքնորհակալ ես կը մնամ  
Քեզի, ո՛ր Հայր, որ ինքնակամ,  
Դառնակսկիծ իմ բախճութեան  
Կ'ըլլաս վաճիչ եւ ինձ պաշտպան...  
Նորեկ հազար ինը հարիւր  
Եռսուն եւ ութ տարին գէթ դիւր՝  
Բերեք յաճկարձ մեր ցաւերուն,  
Զորս կը կրենք օրերն ի բուն,  
Ու սկնաջան յոգնութիւնով  
Իմ շարագրած գործերս յոլով,  
Կարենայի Հայ մամուլին  
Ս.դե՛ր յանձնել կափարիչին  
Ու զհեղ տեսնալ դեռ Գերապանձ  
Հասորներով պննազարդուած:  
Որոնք արդէն Սուրբ Ղազարու  
Վանքէն եղան մեզ յուսասու\*

Միշտ էոյդ անձնուէր  
Տոբ. Վ. Յ. ՔՈՐԳՈՄԵԱՆ

Բարիդ 2 Դեկտ. 1939

\*) Հ. Սիմոն Վ. Երեմեան, Վեցնէիկի Մխիթարեան միաբան, որ  
«Աւարուշան» գրական ծածկանունով ընթիւր յօդուածներ ունի գանազան  
բերքերու եւ Տարեցոյցերու մէջ, իմ խիստ մտերիմ բարեկամս է: Ինքը  
1938-ի «Գրպանի Տարեցոյց»-ին մէջ (էջ 94—99) գրած է՝ «ԵՕՍ-ՔԵՆ ԵՕՍ-  
ՔԵՆԵՍ» վերնագրով յուզումնալից յօդուած մը, զոր պատիւ քրտ է ձօնել  
իմ անունիս: Փութացի շնորհակալ ըլլալ իրեն սոյն ժխեղձ նսանաւոր  
Տ. Վ. Յ. Ք.

## ՀԱՅ Բ Ն Ե Ր Ս Է Ս Ա. Կ Ի Ն Ե Ա Ն

Վիեննայի Մխիթարեանները, հայ խաւերու մէջ այնքան ծանօթ չեն, որքան ուրիշներ: Հայ բանասիրական, գիտական կալուածին մէջ սակայն, անոնք ունին իրենց պատուոյ տեղը:

Մեր նպատակը չէ Մխիթարեաններու գործը ծանօթացնել հոս, այլ անոր անդամներէն մէկուն՝ մեր հանդիպումով քանի մը ասպարու թիւններ արձանագրել:



Հ. ՆԵՐՍԷՍ Ա. ԿԻՆԵԱՆ  
Եւ ԲԵՌՅ. ՏԻՐԱՆ ԼԻԻԼԷՃԵԱՆ

Այս տարի, քանի մը ամիսներէ ի վեր Երուսաղէմայ հայ կաթողիկոս Սահակ-Մեսրոպ վարժարանին մէջ միասնաբար կ'ապրինք Հայր Ակինեան հետ, որ եկած է Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքի հայերէն զըրչագրերը աչքէ անցընելու ծրագրով, իր Հայ Գրականութեան Պատմութիւնը մինչեւ ժ.Ս. դար գործին համար նիւթ հաւաքելու:

Երուսաղէմայ լայնախոհ նորընտիր բանասէր պատրիարքը Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպոս. Նշանեան և Միաբանութիւնը բաց ձգած է վանքի ձեռագրատունը անխոնջ վաստակաւոր բանասէր Հ. Ակինեանի առջև:

Հ. Ակինեան Վիեննայէն մեկնելով՝ նախ հանդիպած է Կիպրոս կղզին, ուր իր միաբանութեան հիմնադիրը Մեծն Մխիթար 1695ի ամառը գացած էր: Հ. Ակինեան անդուրյն հայ գաղութէն լաւ տպաւորուած է, համակրանքով կը յիշէ մանաւանդ Նիկոսիոյ առաջնորդական փոխանորդ և Մելքոնեան հաստատութեան հոգեւոր ղսափարակ Պարոյր վրդ. Մինասեանը:

Հ. Ակինեանը միջնասակ է քիչ մը կորած մէջքով. լեցուն դիմագծով. ունի ուռսական նուրբ քիթ, ցցուն ճակատ, ակնոցի ետեւ ասպասանած զոյգ ժպտուն աչքերը՝ նոյնպէս ուռսական, երբ կը խօսի՝ խուզարկու են անոնք: Մելամաղձոտ կնճիւղներ արդէն տեղ առած են երբ խորհողի դիրքին վրայ նշմարէք զինքը:

Հ. Ակինեանի խօսակցութեան նիւթը հայ ձեռագիրներն են. այս պատճառով է որ յաճախ կը կատակենք հետը. — «Հ. Ակինեան բան-

ատրկելու, սակայն գիտէ՞ք ո՛րք, Ս. Թորոսի մէջ» (Ս. Յակոբի ձեռագիրներուն պահ զրուած վայրը):

Բանասէր վարդապետը կը ծիծաղի. սանկ նման բան մ'ըլլար տարիի մը չափ՝ կարծէք ուրախութեամբ պիտի հաւանէր...

Հայաստան բառը կ'ոգեւորէ զինքը, երբ անոր մասին եղած զրոյցը համեմուռի ուղղակի կամ անուղղակի ձեռագիրներով:

Իրբեկ խմբագիր «Հանդէս Ամսօրեայի» խտապահանջ է, զուտ բանասիրական յօդուածները միայն կը հիւրասիրէ. այդ պատճառաւ «չոր» է այս հանդէսը. խիստ պահակի մը նման կեցած՝ ներս չ'ընդունիր ա՛յլ նիւթեր, նախ ինքը աչքէ կ'անցընէ, կը քննէ ու «այո» ով կամ «ոչ» ով կ'որոշէ անոնց բախուր:



ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՆՇՍ.ՆՅԱՆ  
Պատրիարք Երուսաղիմայ

Հալէպի առաջնորդ Արտաւազդ Արքեպիսկոպոսի մասին յարգանքով կը խօսի, կը գնահատէ անոր մեթոօիկ աշխատութիւնները:

Հ. Ակինեան ընկերային է. զգուշաւոր՝ արտայայտուելու պառնն. վերապահ՝ երբ կը լսէ: Հետաքրքիր են Հայաստանի մասին իր զրուագները, մանաւանդ 1924—1928 թուին երբ Հայաստան կը գտնուէր, հուսկ ինք ամիսներ զաւ բանտարուած էր. այդ զրոյցները եթէ օր մը գրի առնուին՝ օգտակար ատաղձ կրնան դառնալ մամանակակից ղէպքերու արձանագրութեանց համար:

Հ. Ակինեան ծնած է Արդուին 1883 Սեպտ. 10ին: Նախնական սուսմը իր ծննդավայրին մէջ սօսանալէ ետք 1895ին Պոլսոյ ճամբով կ'առաջնորդուի Վիեննա, 1907ին քահանայ կը ձեռնադրուի Լէմպէրկի նոր հանգուցեալ Թէոփորիչ Արքեպիսկոպոսէն: Մխիթարեան Միարանութեան սիւններէն այսօր, Լոյս ընծայած է՝ «Տիմոթէոս Կուզ Հայ Մատենագրութեան մէջ», «Զաքարիա եպ. Գոյունեանց ե իր տաղերը», «Յովնաթան Նադալ և Նադալ Յովնաթանեանք», «Կիւրին կաթողիկոս «Յովնաթան Նադալ հայ վկայաբանութեան համար», «Իսլամականացիք «Ակ-Վրաց», «Նիւթեր հայ վկայաբանութեան վրայ», «Մատենագիտական Աղթամարայ կաթողիկոսաց», «Հինգ պանդուխտ տաղասացներ», «Ակ-Վրացի մը Մխիթարեան Միարանութեան հայերէն և Վիեննայի Մխիթարեան հետազօտութիւններ», «Գրաստական հայերէն և Վիեննայի Մխիթարեան ղպրոցը», «Ուզեգրութիւն Սէմէոն ղպրի Լեհացու», «Մոզսէս Գ. կթղ. Տաթեւացի», «Թուղթ Մակարայ Երուսաղէմի հայրապետի առ Վըր-

Թանէս եպիսկոպոսապետ Հայոց», «Եղիշէ վրդ.ի պատմութիւն Հայոց պատերազմի», եւ այլն:

Մամուլ տակ են «Եղիշէի Գ.» հափորը, «Գրիգորիս կթղ. Աղթամարի և իւր տաղերը», «Տեսիլ Ս. Սահակայ», «Սահակ և Մեսրոպ Մաշտոց և Ն. գարու հայ գրականութիւնը», «Փաւստոս Բիւզանդի ժամանակագրութիւնը», «Յուլեան հայերէն ձեռագրաց Լէմպէրկի»:

Անտիպ կը մնան «Պատմութիւն Մեծն Աղեքսանդրի», «Յուլեան հայ ձեռագրաց Հոռմի Հայոց Հիւրանոցի» եւ այլն:

Գլխու պտոյտ կու տան այս բոլորը մէկ անգամէն զիջուած տեսնելով: Հպմբերատար աշխատանք: Կրկին ճամբորդութիւններ Եւրոպայի մայրաքաղաքները, թանգարանները, Արեւելք, Հայաստան: Ու այսօր կրկին կը թափառի անխոնջ վանականը անշուք, անձայն, բայց կը գործէ վիթխարի: Ակիներն աշխատակցած է նոսէ հայ պարբերականներու և թերթերու ու ժամանակ կը գտնէ հետաքրքրուելու իր միաբանութեան կողմէ բացուած վարժարաններով (Գահիրէ և Պէյրութ), որոնց նպատակն է հայր հայ պահել, նոր սերունդը կերտելու հայու զիմագծով, մտածումով, ապրումով:

Մեր խօսակցութեանց ընթացքին առիթներ կը ստեղծեմ Հայաստանի կեանքէն լսել զինքը: Մաս մը նստազրած եմ, սակայն ներկայիս անյարմար կը նկատեմ անոնց արձանագրութիւնը այս տեղ:



Իր միաբանութեան մասին մասնաւոր գուրդուրանքով կը խօսի ան: Մանաւանդ ակնածանքով կը յիշէ Աբրահոյ բարեմասութիւնները: Իր անկեղծ արտայայտութեան շեշտերը կը վստահնեն մեղ թէ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մէջ երկուութիւն չկայ: Համերաշխ ու միաբան կ'ապրին ու կը գործեն:

Չեմ կրնար զսոնց ընել հոս պարագայ մը, Հ. Ակիներն մասնաւոր հիւսցումով կը խօսի Հայ կաթողիկէ պատրիարք Ամեն. Գրիգոր Աղաջանեանի մասին, «ընտիր եկեղեցական, մաքուր հայ, աշքառու զիտնական»:

Գե. Գրիգոր Յ. Ա. Ա. Ա. Ն. Ն. Ուշագրաւ կէտ մը Հայր Ակիներնի մէջ. Հայ Կաթողիկէ Պատրիարք կը կրկնեմ. եթէ ձեռքէն գայ ձեռագիրները հեռախուզողներու բանակ մը կը կազմէ արշաւելու համար. հոն ուր հայերէն ձեռագիր կայ...:

Զմոռնամ ըսելու թէ Հ. Ակիներն զեռ առողջ է և եռանդուն պիտի ճամբորդէ Իրաք, Իրան և այլուր. այս ամէնը՝ իր Հայ Գաղափարեան Պատմաբանը, որ իր գլուխ գործոցը պիտի ըլլայ:

11 Հոկ. 1939, Երուսաղեմ Բրոն. ՏԻՐԱՆ ԼԻԼԷՃԵԱՆ

# Յ Ի Ս Ո Ի Ս Ե Ի Ս Ո Կ Ր Ա Տ

Դասական Յունաստանի և Հռովմէական կայսրութեան արտադրած բազմաթիւ հանճարներուն մէջ ամենափայլուններէն մին է Սոկրատ, որ նկարագրի տեսակէտէ սմէնարարձրերէն է: Մարկուս Ուրեզիանոս, Սենեկա և Նպիկատէտուս իրենց լոյսը Սոկրատին կը պար-Ուրեզիանոս, Սենեկա և Նպիկատէտուս իրենց լոյսը Սոկրատին կը պարտին, ինչպէս Պլատոն և Արիստոտել ալ: Յոյն փիլիսոփայութիւնը տին, ինչպէս Պլատոն և Արիստոտել ալ: Յոյն փիլիսոփայութիւնը տին, ինչպէս Պլատոն և Արիստոտել ալ: Յոյն փիլիսոփայութիւնը տին, ինչպէս Պլատոն և Արիստոտել ալ: Յոյն փիլիսոփայութիւնը տին, ինչպէս Պլատոն և Արիստոտել ալ:

Նախ տանք նմանութիւնները:

Երկուքն ալ կ'արհամարհէին գիրը: Անոնք այն կարծիքէն էին որ եթէ իրենց խորհուրդները արժէք ունին՝ կը թափանցեն մարդոց սրտերուն մէջ և զանոնք կ'այլափոխեն և այս է արդէն կարեւորը: Ի՞նչ կ'արժեն գրքերու մէջ թաքնուած և զբաղարաններու խորշերը նետուած խորհուրդները: Ան որ մարդոց սրտերուն և մտքերուն վրայ ազդելով կրնայ զանոնք շարժման մէջ դնել՝ կրնայ վստահ ըլլալ որ իր խորհուրդները անմահ կը մնան, որովհետեւ անոնք գրուած պիտի ըլլան մարդոց սրտերուն մէջ: Թէ՛ Յիսուս և թէ՛ Սոկրատ հաւանաբար այսպիսի նկատումներէ մղուած թուղթի ջանձնեցին իրենց խորհուրդները:

Երկուքն ալ հաւատարիմ բարեկամներ ունեցած և խիստ սիրուած են որոշ շրջանակի մը պաշտօնաւոր անձերէ: Ինչպէս է երկուքն ալ ռիւրիմ թշնամիներ ունէին: Ե՛րբ ճշմարտութիւնը խօսողը թըշնամի չէ ունեցած, Սակայն ատոր փոխարէն ալ ունեցած են անկեղծ բարեկամներ: Ասիկա իրենց նկարագրի բարձրութեան գրաւականն է:

Երկուքն ալ կրնային մահէն խոյս տալ՝ սակայն մերժեցին: Անոնք պատրաստ էին ճշմարտութեան համար մահը դիմազրաւելու: Այս աեսակէտով ալ անոնք իրարու նման եղած են: Հոս սակայն կը վերջանայ անոնց նմանութիւնը:

Հիմա տեսնենք թէ ինչո՞վ իրարմէ տարբեր էին:

Սովորատ փիլիսոփայ էր, այդ ոճով խօսեցաւ. ուստի իր տրամաբանութիւնը քիչերու մատչելի է: Յիսուս այնքան պարզ լեզուով խօսեցաւ որ ամէն մարդ կրնայ հասկնալ իր դէմքը. իր մեծագոյն ճշմարտութիւնները առականերով տուաւ:

Սովորատ հաւատարիմ Յոյներու չափաւորութեան սկզբունքին, տրամաբանօրէն լաւ հաշուուած սկզբունքներ տուաւ որ անհատին զոհողութիւն չի պահանջեր: Այնքան՝ որքան որ արժան է ասլ ուրիշին: Նպատակը անձը մեղքէ զերծ պահել է, կրաւորական առաքինութիւն: Յիսուս սորվեցուց զո՞նկ՝ նոյնիսկ թշնամին սիրաշահելու համար: Անհատը պէտք չէ իր եսին համար մտածէ, ընդհակառակը անհատական եսը պէտք է մեռնի:

Սովորատ տրամաբանութեամբ հասած է Աստուծոյ դաղափարին և անոր տրամաբանական սահմանումները կու տայ: Յիսուս այնպէս կը խօսի որպէս թէ կը ճանչնայ Աստուծոյ սիրաբը: Սովորատ կ'ըսէ՝ ա՛յն՝ ինչ որ Աստուած չէ, Յիսուս է որ կու տայ Աստուծոյ էութիւնը՝ որ սէր է:

Սովորաթի համար առաքինութիւնը զիտնայն է կամ հասկացողութիւնը: Յիսուսի համար առաքինութիւնը զօնարերող սէրն է:

Անոնց կեանքի վերջին զրուագներն ալ նմանութենէ աւելի տարբերութիւններ կը պարունակեն:

Արգար կամ անարդար՝ Սովորատ դատարանի միջոցաւ դատուեցաւ և անոր դատապարտութեան համար ամբօխը դեր չկատարեց: Մինչդեռ Յիսուս՝ կիրքի, կոյր նախանձի և առելութեան զօնն էր:

Սովորատ մահուայ պարագային շրջապատուած էր իր բարեկամներով: Յիսուս խաչին վրայ առանձին էր, լքուած բոլորէն և շրջապատուած թշնամիներէ որոնք իր ցաւերը կը ծաղրէին:

Սովորաթի մահը անցած էր առանց տանջանքի: Յիսուսինը ամենաառաջալից մահերէն մին էր:

Սովորատ այսքանը ըսաւ իր թշնամիներուն մասին թէ անոնց չարիք նկատածը իրեն համար բարիք պիտի ըլլայ, որովհետեւ անմահ կեանք պիտի մտնէ: Յիսուս խնդրեց Աստուծմէ որ ներէ զինք տանջողներուն:

Հուսկ ուրեմն, Սովորատ աշակերտ մը ունեցաւ, Պղատոն, որմէ աւելի մեծ հանճար մըն էր որ թերևս մեծ յարգանք ունի իր ուսուցչին հանդէպ, սակայն ոչ կը պաշտէ զայն ոչ ալ անոր առջև նուատութեան զգացում կ'ունենայ: Մինչդեռ Պօղոս Առաքեալ որ իր կարգին կրօնական հանճար մըն է, ինքզինքը չափազանց նուատ կը զգայ բաղդատելով Յիսուսի հետ: Յիսուսի միտքը ամէնէն լաւ ըմբռնող և զայն մեկնող այս աշակերտն է որ իր վարդապետին աստուածային հանգամանքը կը շեշտէ:

Եթէ պատմական անձեր դասենք իրենց ձգած զրական ազդեցութեան սաստկութենէն, խորութենէն և մեծութենէն՝ կը տեսնենք որ Սոկրատ դասական աշխարհի սուրբը, շատ ետ կը մնայ Նազովրեցի մեծ վարդապետէն շարկաւ նման բաղդատութիւններ ընելով է որ մարդիկ եզրակացուցած են որ Յիսուսի մէջ աստուածային բացառիկ ուժ մը կար որ զինք կը զանազանէր իրմէ առաջ և իրմէ վերջ եկող բոլոր իմաստասէրներէն, մարգարէներէն և սուրբերէն:

Պզատոնի իմաստասիրութեանց և Աւետարաններու առարկայական և աննախապաշարեալ ընթերցումը այս ճշմարտութիւնը լաւագոյնս կը շեշտէ:

Փլովսիւ

Ս. ՎԵՑԻԿԵԱՆ

## Վ Ե Ր Ե Լ Ք Ի Ս Մ Է Ջ

Ու արդ վեհի՛ն, դեպ վեր, ո՛վ հրպարեսուրիւնս ոսկեղէն,  
Արարչօրէն հապնեպէ. մնացի՞նք վարն ընդերկար . . .  
Երակներուս դարերէն դու ծընար զերդ շանք մ'ամպէն,  
Պիտ 'արդ անհունն անոր պէս անցնիս մարմար առ մարմար . . .

Ո՛վ Պասմուրիւն, ո՛վ Անցեալ, ոսկորներուն ձեռ' հանգիս. . .  
Ո՛հ, իմ Երազըս որքա՛ն սանջրեցաւ նեսահար,  
Ու սիրսս որքա՛ն խընկարկեց ձեռ վիհերուն լայնանիս. . .  
Արդ յոյսը մեզ կը բաժնէ. Ոչինչը ձեզ շիւմաբար . . .

Եւ դու, վըհո՛ւկ, ո՛վ Անկում, մընաս բաւեա՛ւ. բարձրայժն՝  
Ես ապագան կը կրօցեմ. վարն՝ հեռօսին համար չէ.  
Պէտք է անհո՛ւն մարեւին ու հանճարին՝ հորիզոն . . .

. . . Ու արդ վեհի՛ն, դեպ վեր, ո՛վ հրպարեսուրիւնս, ու հրնչէ  
Վընիռդ. ի՞՞՞ ի՞՞՞ միջոցին, ճակատագրին ամպամած.  
Վե՛ր, Կեանքի՛ն, մեծ կիրքերո՛ւն, զերդ ճառագայթ, իբր Ասուած . . .

ՀՕՐԻՕՆ

## Հ Ն Չ Ե Ա Կ

Անո՛ււ աչեր, պարուրեցիք սիրս ու հոգիս յոյս քեւերով,  
Կենդանութի՛ւն զբախի յանկարծ իմ իդներու գաղտնագորով,  
Ներաշխարհիս պաշտամունքի բազինները դուք վառեցի՛ք,  
Ու քնաբիս վրայ քրքռացուցիք մեղեդիներ, վեհ, ամբարձիկ:

Անո՛ււ աչեր, դուք փաղցրութեան, նրբութեան զո՛յգ ակունքներ,  
Էութեան նեղեցիք ներս սիրոյ կայծեր արատուաբեր,  
Վիշտերու յուրք ամպերն համակ փարատելով եօրնաւորեան  
Ծիածան մը կամարեցիք երազներու ճամբուն վրան . . . :

Անո՛ււ աչեր, ձեր փրփումէն, հայեացներէն ներափանց  
Սիրոյ բարբա՛նն ես սուրվեցայ: Երունքիս սակ կեանք լսացան  
Հրաշքով լի կնիւտ սաղեր, գորս երգեցի գորովաձայն:

Անո՛ււ աչեր, յաւերժական ներշնչումի ջի՛նջ աղբերակ,  
Կ՛ոգեմ ըզձեզ, մինչ դուք հեռուէն, ասղերու պէս երկնանրւագ,  
Կը պարուրե՛ք սիրս ու հոգիս գուրգուրանքով, յոյզով մ՛անանց . . .

Իսթանպուլ, 1939

Թ. ԱԶԱՏԵԱՆ

ԹՈՐՈՍ ԱԶԱՏԵԱՆ, գրագէտ, ծնած է 1898-ին Ակնայ Ապշուղա գիւղը: Ուսումը ստացած է Ակնայ եւ Չմեկաձագի Միացեալ Ընկերութեան վարժարաններուն մէջ: Հայրենի բնութեան սետարաններէն ներշնչուած՝ գրական հակումներ ունեցած է շատ կանուխէն:

Ագասեանի գրական առաջին երկն է Մ. Մեծարեցի կեանքն գործուկնութեան նուիրումը հասորը որ յոյս սեաւ 1922ին: 1925-ին ստանձնած է Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին «Ընդարձակ Տարեցոյցին» խմբագրութիւնը: 1927էն սկսեալ յոյս ընծայած է «Աղբիւր Անմահութեան» բանաստեղծութեան երեք հատորներ: 1931ին հրատարակեց Կոմիսսարի կեանքն ու երաժշտական գործունէութիւնը պատկերացնող երկը: Խմբագրած է Արեւելք եւ Զարթօնք շաբաթաթերթերը:







Գ.

Արժանաշիշասակ Գէորգ Ե. Սուրէնեանց Ս. Կաթողիկոսը 1916-ին հովուական այցի կ'ելլէ, Տփլիսի մէջ որբերու հոգածու պ. Նազարեանը իր մօտ կանչած և խրախուսած է հեռեւեալ խօսքերով.

— «Քո այս գործը և հաղուագիւտ աշխատանքը որ իմ բացարձակ վստահութիւնն է շահել, արժանաւոր վարձատրութիւն չունի այս աշխարհում . . . դու մեր ազգից վարձատրութիւն մի՛ սպասեր, նա իւր անձնուէր գործիչների համար միայն մի՛ վարձատրութիւն ունի, փառաւոր, շնորհ թաղում, երբ մեռնում են: (Էջմիածին, «Արարատ» 1916 Յուլիս և Օգոստոս էջ 524):

Դ.

Հմուտ բարձրաստիճան Օրմանեան Պատրիարք՝ Ապտիւլ Համիտի ներկայութեան խօսակցութեան մը պահուն, Համիտ քմծիծաղով մը — «Օրմանեանն է՞քէնտի, դուն որպէս խորամանկ մարդ կարծեմ թէ կը խաբես զիս», կ'ըսէ.

— Վեհափա՛ռ, հապա Ձեր նախորարնե՞րը որոնք ամէն օր զիս կը խաբեն, բոլոր կատարած զիմուններուս «իճապընա պագարըզ» ըսելով. — կը պատասխանէ պատրիարք Սրբազանը: (Պատմութիւն):

Ե.

Պոլոտյ Պօղոս Պատրիարք Բ. Դուռը այցելութիւն տալով օրուան վարչապետի մօտ խնդրանք մը կատարած պահուն, ի միջի այլոց կ'ըսէ — Մենք ամէն կիրակի Վեհափառի և Ձեր արեւշատութեան համար մաղթանքներ և աղօթքներ կը կատարենք.

— Այո՛, կը պատասխանէ վարչապետը քմծիծաղով մը: «Թա գաւորաց Գրիստոնէից» ըսելով, այնպէ՞ս չէ: (Պատմութիւն):

Զ.

Նիկոմիդիոյ ժրջան Առաջնորդ Ստեփանոս Յովակիմեան Սըրբազանի ձեռամբ Թամարգի մէջ փառաւոր եկեղեցիի մը շինութիւնը երբ աւարտելու մօտ է եղեր, Կիրակի օր մը յանկարծ կը փլի կամարի մը մասը՝ առանց օրէէ արկած մը պատահելու:

Առաջել պատուելի անուն Բողոքական մը յարմար առիթ մը համարելով թղթակցութիւն մը կը գրէ «Աւետարներ» լրագրին թէ՛ Նիկոմիդիոյ Առաջնորդը Կիրակի օր ժողովուրդը աշխատողներուն համար, Աստուած բարկանալով եկեղեցին փլցուց:

Առաջնորդը վերստին կը սկսի շինութեան և Կիրակի օր մը ամբողջապէս զլուխ հանելէ ետք, իր մօտ կը կանչէ Առաջել պատուելի:



ամուր պառկած էր: Փեսան երբ տեսաւ քահանային գալուստը՝ գլուխը վերմակէն դուրս հանելով, — «Տէր հայր մի գար, նա՛, թագերը դուռին ետեւ կախած ենք, առ տէ գնա» ըսաւ: Ծերունի ութսունամեայ քահանան որ կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով տեսած էր այս տեսակ տգեղութիւն մը. — «Ծօ՛՛ աճէլէնիդ ի՞նչ էր, զիտնայի այսքան անհամբեր ըլլսինիդ՝ թագ չէի դնեք, անաչէններ, աճէլէնիդ ի՞նչ էր» ըսելով դուրս ելաւ: (Ականատես):

Ժ.

Իսմայիլ քաղաքի մեր նախորդներէն Տէր Աւետիս Ա. քն. էլմասեանց ինծի նման այնքան չորս պատերու մէջ պատարագ մատուցեր է որ օր մ'ալ պատարագի միջոցին երբ կը դառնայ ու պարագ կը տեսնէ եկեղեցին՝ ջրայնացած նոպայի տակ «Ողորդութիւն տուվարարա, Ալլան պալասընը վերսին եաթանլարա» կ'ըսէ իր քով գտնուող փրագուն շաւաքց:

Իսմայիլ

Հաւաքց  
ԳՐԻԳՈՐ ՔԼՆ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ



ՀԱՅԿԱՉ ՏԻԼԵՆԵԱՆ  
Աղեխանգրիոյ  
«Գաղութահայ Հրատարական»ի  
Գործունեայ ներկայացուցիչը

ԹՈՐՈՍ ԵՒԹԵՆԵՔԵԱՆ  
Եաֆայի  
«Հայ Հանրագիտակ»ի  
Նուանդուն ներկայացուցիչը

**Տ Ի Գ Ր Ս Ն Գ Ա Լ Է Մ Ճ Ե Ա Ն**

**ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԵՒ ԹԱՏԵՐԱԳԻՐ**

(1844—1920)

Տիգրան Գալեմճեան ծնած է Բերա (Պոլիս) 1844ին, Երեք ամսու էր երբ մայրը մեռաւ և իր հօրաքորերուն խնամքին յանձնուեցաւ, և երեք տարու էր երբ հայրն ալ զինքը որր ձգեց: Այսպէս դեռ երեխայ հասակին մէջ ծնողներէ որբացած՝ կեանքի զառնութեան բաժակը ըմպեց տղայ հասակէն:


1854ին, հօրաքորը Տիգրանը Ազգային Հիւանդանոցի շրջափակը գտնուող Ս. Փրկչի վարժարանը դրաւ, որ այդ ատենի կ. Պոլսոյ ամէնէն փայլուն դպրոցներէն մին էր:

Դպրոցական գրասեղանին վրայ թատերական երկեր կը սկսի յօրինել պատանին Տիգրան, որոնցմէ ոմանք նոյնիսկ կր ներկայացնեն դպրոցին մէջ: Կը գրէ ա՛յնքան ընտիր ոտանաւորներ զորս ուսուցիչները թերթերու մէջ հրատարակել կու տան:

Երբ 1860ին Տիգրան դպրոցի ընթացքը կ'աւարտէ՝ մեծ եղբայրը կը փորձէ զինքն ալ ոսկերիչ ընել. չի՛ յաջողիր, որովհետև ան միայն բեմին կ'ուզէր նուիրուիլ Այդ տարին իսկ իր ազգականներէն մէկուն միջոցաւ Բերայի ամէնէն մեծ թատրոնին տիրոջ մօտ զբազրութեան պաշտօն կը ստանայ:

1861ին երբ Պոլսոյ մէջ Մանասի գլխաւորութեամբ Արեւելեան Թատրալսումբը կը կազմուի՝ Տիգրան ալ այդ խումբին մէջ կը մտնէր իրեն վարպետ ունենալով հայ բեմի աստղերը Պ. Ազամեան, Թովմաս Ծասուլեան, Մազաքեանը, Մնակեանը, Պէնլեանը, և ուրիշներ: Տիգրան իր նախնական տարիներուն իսկ ցոյց կու տայ իր բեմական կարողութիւնը, որուն մէջ հսկայօրէն կը յառաջդիմէ նշանաւոր հանգիստնալով նաև իբրև յուշարար:

Այդ շրջաններուն կը ծանօթանայ երաժշտութեան մեծագոյն վարպետին անմահ՝ Տիգրան Չուհաճեանին, որ այդ ատեն (1861—4) Գ. Երանեանի հետ Քնար հայկական երաժշտութեան կիսամսեայ հան-



դէսը կը խմբագրէր, նպատակ ունենալով Եւրոպական երաժշտութիւնը ծանօթացնել հայութեան, որ այդ թուականներուն տակաւին կառչած կը մնար հայկական անրաւարար և թերի ձայնանիչերուն:

Տ. Դալէմճեան կը խնդրէ Չուհաճեանէն որ իր մասնակցութիւնը բերէ հայ թատրոնին. երաժշտագէտը կ'ընդունի եղած առաջարկը եւ անկէ յետոյ Արեւելեան թատերախումբի ներկայացումները կ'ըլլան յաճախ երաժշտութեամբ, որ մեծ ընդունելութիւն կը գտնէ: Չուհաճեան քաջայերուած՝ կը ձայնագրէ Թովմաս Թէրզեանի իտալերէնի թարգմանած Արչակ Բ.: Այս մեծ ողբերգութիւնը, որ երկար փորձերէ յետոյ այդ օրերուն Պոլիս գտնուող իտալական մեծ խումբի մը կողմէ պիտի ներկայացուէր՝ բեմ չ'ելլեր, որովհետև 1861ի Բերայի մեծ հրդեհը մոխիր դարձուցած էր Նաուսի շքեղ թատրոնը, հազարաւոր տուներու հետ ոչնչացնելով հազարէ աւելի մարդկային կեանքեր: Բերայի այս մեծ ու գեղազարդ թատրոնին հրկիզումին յաջորդ օրը՝ անոր տէր Նաում յանկարծամահ կ'ըլլայ: Անկէջ ետք Արչակ Բ. կարելի չըլլար ներկայացուիլ որովհետև մեծանուն հեղինակը ս'չ'յարմար թատրոն կրնար գտնել և ոչ ալ զայն արժանապէս ներկայացնող խումբ:

1863ին Վարդովեան նոր թատերախումբ մը կը հիմնէ: Այս անձը չախապէս Արեւելեան Քաթրախումբի դերասաններուն ծրարնելը կրելով. բեմայարդարին օգնելով կ'անցընէ կղեր իր օրը: Սակայն հետզհետէ ա'յնքան կ'իւրացնէ թատերական արուեստը որ, կը համարձակի առանձին թատերախումբ մը կազմել և մեծագումար ամսականներ վճարելով իրեն կը քաջէ Արեւելեան խումբին ամէնէն կարող դերասանները:

Ահա այդ թուականին կը սկսի հայ բեմի փառաշուք չըջանը: Յ. Վարդովեանի հանճարեղ վարչագիտութեանը շնորհիւ, հայ բեմը կը հասնի պանծալի բարձրութեան մը, և կ'ըսեն թէ նոյնիսկ կրնայ մրցիլ այդ առենի եւրոպական լաւագոյն խումբերու հետ:

Յ. Վարդովեան՝ իր բարեմասնութեանց հետ ունէր և դձուձ բնաւորութիւն, ա'յդ եղաւ պատճառ՝ որ իրեն կարող դերասաններէն ոմանք, որոնց հետ և Տիգրան Դալէմճեան՝ Տ. Չուհաճեանի նոր կազմած օրէրէթի խումբին միացան և րնականարար տեղի ունեցան առնախորժ գէպքեր և պայքարներ երկու խումբերու միջև:

Չուհաճեան—Վարդովեան պայքար:

Մին (Չուհաճեան) իտալիա աւարտած երաժշտագէտ և երգահան, իսկ միւսը (Վարդովեան) հիւսնի աչկերտութենէն թատրոնի բեմը ցատքող մը:

Վարդովեան իրապէս դործի մարդ, ինքն ալ կը սկսի գուսա ներգութեան: Եւրոպական բեմերու ամենաառաջին օրէրէթներէն Վեր Պրիկան՝ը, «Մատամ Անկոն», «Ժիրոֆիլէ Ժիրոֆիլան» եւ այլն թարգմանել տալով՝ զանոնք կը սկսի ներկայացնել:

Ճարպիկութիւնը կը յաղթէ տաղանդին: Չուհածեանի ներկայացումները անօտարանալ կը սկսին: Վարդովեան կրկին իրեն կը քաշէ զինքը ԼՁՊ դերասանները: Չուհածեանին կը մնան իրեն հաւատարիմ Տիկին Շողիկ (բրիմատոննա), Յ. Աճէմեան (թէնոր), ինչպէս նաեւ Տ. Գալէմճեան, թագւոր նախան և երգեցիկ խումբը:

Չուհածեանի խումբը սակայն չի կրնար պայքարին երկար դիմանալ. պարտքի տակ կ'իյնայ և կը ցրուի, իսկ Վարդովեան կը շարունակէ իր ներկայացումները:

Պէտք է խոստովանիլ թէ Հայ Բեմը միայն այդ հիւսնի աշկերթ Յ. Վարդովեանի բնատուր տաղանդին և վարչագիտութեան շնորհիւ էր, որ կրցաւ քօան երկար տարիներու ոսկեղէն և փառապանծ շրջան մը բոլորել:

Չուհածեանի խումբը ցրուելէ յետոյ Գալէմճեան կրկին Վարդովեանի խումբը կը մտնէ, այս անգամ իր փոխանորդ, և թատրոնի գրուեանի խումբը կը գործերը գրեթէ ինքը կը վարէ: Այդ շրջանին արուեստական բոլոր գործերը գրեթէ ինքը կը վարէ: Այդ շրջանին իր հայերէն հեղինակութիւններն եղան. Տիգրան Բ-ը, Մեծն Վարդանը և Արա Գեղեցիկը, բոլորն ալ երաժշտախառն, — եղանակները շարայա- և Արա Գեղեցիկը, բոլորն ալ երաժշտախառն, — եղանակները շարայա- րած էր Տիգրան Չուհածեան, որուն հետ մինչև վերջ մտերիմ մնաց, այնպէս որ Գալէմճեանի անդրանիկ մանչ զաւկին կնքահայրն եղաւ:

Այս ազգային թատերախաղերը մեծ յաջողութիւն գտան և շեղինակը բարոյապէս և նի. թապէո վարձաբուեցաւ, սակայն մոռո- վուրդին այս հայրենասիրական ներկայացումներուն հանդէպ ցոյց տուաւ անօրինակ խանդավառութիւնը՝ ուշադրութիւնը գրաւեց Հատուած անօրինակ խանդավառութիւնը: Արա Գեղեցիկին ներկայացումը վեր- միտեան բռնակալ ուժի մին: Արա Գեղեցիկին ներկայացումը վեր- ջինը եղաւ Ազգային թատերախաղերուն, թուրք կառավարութիւնը արգիլեց անոնց ներկայացումը և դեռ չբաւականանալով՝ փլցնել տուաւ կէտիկ փայտի մեծ թատրոնը:

Տ. Գալէմճեան ճարահատ թուրք խումբերուն մասնակցեցաւ, հեղինակեց թրքական կեանքէ առամներ և դաւեշտախաղեր, որոնք բեմադրուեցան մինչև 1896 թուականը:

Այդ զարհուրելի կոտորածներու թուականին ինքն այ շատ մը հայերու հետ վառնա կը գաղթէ. հոն կը գտնէ Արչակ Պէնյեանի խումբը, որ հոն միայն անարժէք ներկայացումներ կու տար թուր- քերէն լեզուով: Գալէմճեան այդ խումբին մէջ կը գտնէ լաւ ուժեր, որոնք էին, նոյն Պէնյեանը, Պապեանը, Արչակ Սվաճեանը, Տիկին Բնարը և դեռ ուրիշ ներկայանալի դերակատարներ:

Գալէմճեան նոր կեանք կու տայ խումբին, իր բիւններու ծրարը բանալով՝ հետզհետէ կը սկսի ներկայացնել եւրոպական ընտիր թա- տերախաղեր, որոնց մէջ մասը իր հեղինակութիւններն էին:

Պուլկար յեղափոխական կեանքէ բիւններ կը գրէ թուրք լեզուով ու այսպէս թուրքերէն զիտցող Պուլկարներ համակրելի և հետաքրքրուելի

կը սկսին հայ թատերախմբին հանդէպ: Գալէմճեան հայերէն լեզուով կը գրէ Սասնոյ հերոսները, Զեյթունի ապստամբութիւնը, և ամէնէն ուժեղ ու արժէքաւոր թատերախաղը՝ Վասպուրականի հերոսները, որուն մատնիչ քահանայի դերը՝ ինքը կատարած է մեծ յաջողութեամբ: (Իր մահէն 15 տարի ետքը 1935ին, սոյն թատերախաղը ներկայացուեցաւ հոս Վառնա Շահինեան խմբի կողմէ):

Ա. Պէնլեանի խումբը քիչ ատենուան մէջ ա՛յնքան կը յառաջանայ որ, կը սկսի եւրոպական դասական րիւսներ ներկայացնել: Տ. Գալէմճեան հետզհետէ կը թարգմանէ Վիկտոր Հիւկոյի, Էռնանին, Աբայի զբօսուն, Վերտիի Այսան. ձիագոնսան, Մօնքի Քիսրօն, որոնք յաջորդաբար կը ներկայացուին:

1902ի ձմեռը Վառնայի այս հայ դերասանական խումբը իր փառքի գագաթնակէտին կը հասնի: Գալէմճեան այս շրջանին համար թարգմանած է Շէյքսպիրի յայտնի գործերէն Օթելլօն, Համլէթը, Աբայ Լիրը, Մակպետը, Բուֆօ Ժիլիէթը, այս բոլոր ներկայացումները թուրքերէն էին, իսկ Աբայկը, Վահան Մամիկոնեանը եւ այլն հայերէն կը բեմադրուին, որոնց նիւթական հասոյթը խիստ ճշճիմ կ'ըլլար:

Այս խումբը ներկայացուցած էր նաև Զուհաճեանի Լեպլեպիին 1897ին Թեղոյն Սանբրալ սրահին մէջ ճիշդ այն գիշերը՝ երբ մեծանուն երգահանը պմէն կողմէ լքուած՝ առանձին և օտապազին իր հոգին կ'աւանդէր Իզմիրի մէջ...:

Տ. Գալէմճեան թարգմանած է Վերտիի Այսան նաև հայերէն լեզուով, որը 1908ին Գահիրէ Պրիքանիա թատրոնին մէջ ներկայացուեցաւ խուռն րազմութեան մը ներկայութեան, որուն անընդհատ ծափերը բեմ հրաւիրեցին թարգմանիչը:

Գալէմճեան 1876ին Գահիրէ գացած է Զուհաճեանի հետ ու մասնակցած է Զուհաճեանի հետ Լեպլեպիին, Քոստէ Քենեա, Զեմիրի Գասրն (Գալէմճեանէն զրուած) ներկայացումներուն և ճիշդ 30 տարի ետք 1906ի այնան Ա. Պէնլեանի խմբին հետ կը հասնի կրկին Գահիրէ, ներկայացնելու շարք մը թատերախաղեր թուրքերէն լեզուով: Սակայն այնտեղի ժողովուրդը ներկայ եղած ըլլալով եւրոպական մեծ թատերախումբերու փայլուն ներկայացումներուն՝ հայկական խումբը յաջողութեամբ չի գտնուիր:

1907ին Տ. Գալէմճեան ինք ներկայացուց իր հեղինակած Մեծն վարդանը, որ թէ բարոյապէս և թէ նիւթապէս վարձատրեց զինքը: Բաջալերուած՝ հայերէն լեզուով ներկայացուց իր թարգմանած եւ ընդառնած Վերտիի Այսան, իր զուլս զործոց հեղինակութիւնը եղող Աբայ Գեղեցիկը:

1908ին Թուրքիոյ Սահմանադրութիւնը հռչակուած ըլլալով՝ Պոլիս գնաց ուր անմիջապէս հեղինակել սկսաւ թուրք յեղափոխութեան անցքերէն բիէսներ ու հայ և թուրք խառն խումբի մը զուլսը





ունիս», տարաբախտ բանաստեղծը պատասխանած է — «Ոչ, քիչ ա-  
տենէն պիտի մեռնիմ»:


Ահա մարդ մը՝ որ ծնողքէն որբացած, թշուառութեան  
մէջ մեծցած՝ հայ բեմին զարդն եղած է, հեղինակած է ընտիր երկեր  
և ազգին տուած է իր պատիւը բարձր պահող զաւակներ:

Յարգանք իր անմեռ յիշատակին  
Վառնա, 1938

X

## ԱՐԺ. Տ. ԿԱՐԱՊԵՏ Ա. ՔԶ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ատրպատականի Առաջնորդական փոխանորդ այս ժրաջան եկեղե-  
ցականը ծնած է 1873 Դեկտ. 10ին Վասպուրականի Շատախ գու-  
ն



նումար գիւղը: Փոքր հասակին Վան  
փոխադրուելով հոն կը ստանայ միջ-  
նակարգ կրթութիւնը ու կը մտնէ Յե-  
ղափոխական ասպարէզ Արմենական  
կուսակցութեան դրօշի տակ իր հա-  
մեստ գործունէութեան բաժինը կա-  
տարելով: Իբրև ուսուցիչ պաշտօնա-  
վարած է Վանի Հայոց ձորի Նոր գիւղի  
(միաժամանակ մնալով յեղափոխական  
պրոպագանդիստ), Թիմարի Ամենաշար  
և Այիւր գիւղերուն մէջ:

1896ին երբ վրայ կը հասնի Վանի  
ինքնպապատկանութեան կոտիւր, Տէր  
Կարապետ (այն ատեն Արրահամ)  
կռուի ասպարէզը կը մանէ և հինգ  
օրուան մէջ տարուած յաղթա-  
նակէն ետք՝ կը թողու Վանը եւ  
800 հոգիով Սալմաստ (Իրան) կ'անցնի  
ցորեկը կռուելով ու զիշերը ճամբոր-  
դելով: Տէր Հայրը Սալմաստէն Ուրմի

կ'անցնի ուսուցչական պաշտօնով, յետոյ Նախիջեւանի Թափէ գիւղը  
կ'երթայ, կիսաւոր դպրոցը նորոգել տալով 2 տարի կը պաշտօնավարէ  
Իֆի Աղաջ գիւղը նոյն պաշտօնով: Ծինել տուած է Գիարդարադ գիւղի  
գպրոցն ու եկեղեցին: Մասնակցած է նաև Ռահիվ և Իքի Աղաջ գիւ-  
ղերու եկեղեցիները կառուցող յանձնախումբին: 1901 Յունուար 14ին  
Տէր Սահակ Արքեպ. Այվատեանէ քահանայ կը ձեռնադրուի Բարան-  
դաղի (Թրքախոս) հայ համայնքի համար և ատեն մը ուսուցչութիւն  
ըրած է մինչև 1908, յետոյ այդ տարին Թաւրիզի Լիվաւա թաղի Ա. Սարգիս  
եկեղեցւոյ ծխաժէր քն. կը կարգուի. 1909ին Կարապետ եպ. Տէր

Մկրտիչեան զինքը Առաջնորդական փոխանորդ կը կարգէ և մինչև  
այսօր ամբողջ 30 տարի այդ պաշտօնին գլուխը կը գանուի: 1909ին  
Ս. Առաջնորդէն ծաղկեայ փիրոն կը ստանայ. 1912 Հոկտ. 12ին Գէորգ  
Ե. Վեհ. կաթողիկոսէն՝ քահանայական լանջախաչ, 1915ին նոյն վեհա  
փառ կաթողիկոսէն աւագ քհ. ի պատիւ կ'ընդունի, ի վարձատրու  
թիւն անոր խոհեմ և աշայուրջ ու չրջահայեաց գործունէութեան՝  
թուրքերու Պարսկաստան գալու ժամանակ՝ ինչպէս կը յիշուի սրբա  
տառ կոնդակին մէջ:

Թաւրիզցիները կարող են վկայել թէ ինչպէս իրենց աները լքե  
ցին ու փախան կովկաս և վերադարձին գտան անձեռնմխելի ու տէր  
եղան իրենց տուն ու տեղին: Ռուսաց զօրքը վերագրաւելով Թաւրիզը  
ուզած էին թնդանօթներով քարուքանդ ընել զայն ու չորս պարսիկ  
հոգեւորականներ ու նահանգապետ Սարաթըրը կախել, որովհետեւ  
«Սրբազան պատերազմ» ստորագրած էին: Տէր Մանուկեան հօր մի  
շամառութեամբ ազատուած էին թէ՛ նահանգապետը և թէ՛ չորս հո  
գեւորականները ու Թաւրիզը աւերակ լինելէն: Ազատուածները այս  
եղելութիւնը երբ թէհրանի կեդր. կառավարութեան հաղորդեցին՝ Շահը  
1918 Դեկտ. ին շիր ու խուրչիփի պատուոյ նշան նուիրեց Արժ. Տէր  
Հօրը: 1918 Հոկտ. 5ին Հայաստանի նորակազմ Հանրապետութիւնը  
զօրք էր դրկած, որ զան մինչև Պարսկական սահման, սակայն  
Նախիջևանի թրքութիւնը ապստամբելով օգնութիւն խնդրեց: Իրանի  
կառավարութեանէն, որ ընդ առաջ երթալով անոնց ցանկութեան, որոշեց  
հայ և թուրք խառն պաշտօնաւորութիւն մ'ուղարկել այնպիսի ժամա  
նակ, որ ոչ մէկ հայ իր տունէն կարող չէր դուրս ելլել: Տէր հայրը ստանձնեց  
այդ դժուարին և պատարանատու պաշտօնը և զնաց մինչև Երևան,  
Հայկ. կառավարութեան հետ խօսելէ և հայտութիւն գոյացնէ ամիս  
մը ետք վերադարձաւ, իր հետ բերելով Հայկ. կառավարու  
թեան երկու ներկայացուցիչներ, որոնք Իրանի կառավարութեան հետ  
բարեկամական կապեր հաստատելով և պետութեան հիւրասիրութեամբ  
ամիս մը ետք պատուով Երևան դարձան:

Այս է կարծ ու շատ հակիրճ կենսագրականը՝ Մանուկ Աւագ քհ. ի:  
Ապագայ պատմագրին կը թողունք գրել անոր գործունէութիւնը  
1908—9ի ուս և պարսկական խռովութիւններու և 1914ի Թուրքե  
րու Պարսկաստան ներխուժելու ընթացքին, ուր ցոյց տուաւ այս  
անձնուէր եկեղեցականը ի պաշտպանութիւն Աթապատականի հայու  
թեան:

Ա. Գ.

Թաւրիզ 1938, Նոյեմբեր

## ՅՈՎՀ. ԱՒԱԳ ՔՀ. ՍԻՄՈՆԵԱՆ

Յովհ. քհ. Սիմոնեան ծնած է Վան քաղաքի Այգեստան Կլորտար թաղի մէջ 1885 Յուլիս Տին:

Իր նախնական ուսումը ստացած է Ս. Թարգմանչաց ծխական դպրոցին մէջ և ապա անցած է Համբարձում Երեմեանի Որբանոց-դպրոցը ընկերակցութեամբ Կլորտար թաղեցի Սահակ Բարաղամեանի:



Սրպէս ուսուցիչ պաշտօնավարած է Ս. Թարգմանչաց դպրոցին մէջ և և ապա 1909 Դեկտ. 19ին Լիմ անապատին մէջ քահանայ ձեռնադրուած Աղթամարայ կաթողիկոսի արտօնութեամբ և ժողովուրդին խնդրանքով Ռչտունցի Յովսէփ եպ. Խոսեղեանի ձեռամբ:

Տ. Յովհ. քհ. Սիմոնեանի պապերը Տէր Աւետիս և Տէր Մարգար, քրտական անիրաւութեանց չլիմանալով ձգած են Ապարանից Ս. Խաչ վանքը՝ եկած են Վան, այդ պատճառաւ Աղ-

թամարայ կաթողիկ. ժողովը կ'որոշէ ու Տէր Յովհ. քահանան որպէս Ապարանի Ս. Խաչի բնիկ՝ Մամրտոնք (Մոկս) կը զրկէ Ապարանից Ս. Խաչի և շրջակայ 22 գիւղերը ազատագրելու, տալով անոր կաթողիկոսական փոխանորդի լիազօր իշխանութիւն:

Նոյն թուականին (1909ին) Յովհ. քահանայ իր անդրանիկ առաքելութեան կը ձեռնարկէ, անձնուիրարար կ'աշխատի, ի հարկին կը բողոքէ, միշտ յարաբերութիւն պահելով Վանի և Պիթիսի Առաջնորդարաններուն, Աղթամարի կաթողիկոսութեան, Կ. Պոլսոյ պատրիարք Տ. Զսէն Արքեպ. Եղիայեանի հետ, և անոնց շնորհիւ 1912ին կը բանայ Ապարանից Ս. Խաչի դռները, անկից դուրս արտաքսելով Տալըր և Զսեա Քօյար քիւրտ աղաները և կ'ազատէ հայ ժողովուրդը վրանաբնակ աղաներու իշխանութենէն 1912 Մայիսին այդ պատմական վանքի խորանին վրայ կը մատուցանէ անդրանիկ պատարազը:

Եկեղեցիներու կապալ ըստաւ հասոյթը, որ Քիւրտերը սեփականացուցած էին՝ Հայերու վերադարձուեցաւ և եկեղեցիները դարձեալ ունեցան իրենց 70 տարիներու առաջուան պայճառութիւնը և քրտացած Հայեր մկրտուելով՝ ընդունեցին իրենց ճամբարի կրօնքը:

Աղթամարի կաթող. փոխանորդ Տ. Եզնիկ Ծ. Վ. և Պոլսոյ Զսէն պատրիարքի ջանքերուն շնորհիւ Տ. Յովհ. քհ. ի բողոքները լսելի

եղան և Ռադէշի կառավարութեան հրամանով Ապարանից Ս. Խաչի հողերը վանքին վերադարձուեցան:

Որովհետեւ այդ շրջանի մէջ դպրոց չկար՝ Տ. Յովհ. քն. գիւղէ գիւղ պտտեցաւ որպէսզի՝ դպրոց բանան և իրենց զաւակները կրթեն հոն: Աղթամար, Տէր Յովհաննէսի առաջարկով Ռափայէլ Երէցեանը Գաւաչ, Մոկս, Սպարկեր, և Խիղան զրկեց դպրոցներ բանալու համար. այս անձնուէր կրթական մշակը թէև հասաւ իր նպատակին, բայց բարբարոս ֆիւրտերէն սպանուեցաւ Զիարէթ գիւղին մէջ և վանքերուելով՝ հոն թաղուեցաւ:

Նոյն օրերը էջմիածին ուսած Տէր Խաչատուր՝ Տ. Յովհաննէսի տեղը Ս. Խաչի թեմին վրայ քահանայ կը ձեռնադրուի վերջինիս կեանքը ապահովելու համար. որ պիտանի և թանկագին գործիչ մը նկատուած էր, և իրեն կը վստահուէր Կ. Պոլսոյ, Աղթամարի, վանի և Բաղէշի յարաբերական զիւանի պաշտօնը:

Այդ շրջանի ժողովուրդը իր կեանքը Տ. Յովհաննէսի կը պարտի, որ 1915ին պատերազմի ատեն Մամրտանքի ժողովուրդը կանուխէն տեղահանելով՝ անկորուստ վան առաջնորդեց: 1915ին, ժողովուրդին հետ Աղրակի Ս. Բարդղղիմէոս վանքը անցաւ և աշխան Պարսկաստան և 1916ին վերադառնալով ժողովրդեան հետ վան հաստատուեցաւ:

և 1916ին վերադառնալով ժողովրդեան հետ վան հաստատուեցաւ: Վանի մէջ Տէր Յովհաննէս հոն կը վազէր ուր կարիք կար, դպրոցին մէջ կրօնք կը դասաւանդէր, Առաջնորդարանի գործերը կը վարէր, գինու օրներուն հագուստ կը հայթայթէր, Սելվի արհեստանոցին բէր, գինու օրներուն հագուստ կը հայթայթէր, 1918ին ինք բուրդ, առանց զանց առնելու աղօթքն ու պատարագը: 1918ին ինք եղաւ վերջին այցելուը Խրիմեան Հայրիկի պաշտելի վարագայ վանքին, ուր վարդանանց պատարագեց և երգեց:

Սա կամաւ քո քրիստոս եւ քիտօք ամենագոր Ս. Հոգւոյն եւ դասուցն հիւսակաց քուցեալ եկաւորես ի յետն վարագայ բնակելի ի նմա:

1918ին երբ ժողովուրդը Պարսկաստան անցաւ, Տէր Յովհաննէս հոն Հաւթուան գիւղին մէջ հիւանդանոց բացաւ քաղաքապետ Կոստանդին Համբարձումեանի օժանդակութեամբ:

Նոյն թուականին ժողովրդեան հետ հասաւ Պաքուպ՝ ուր արդէն խոնուած էին 2000 հայ և 40000 ասորի գաղթականներ: Պաքուպայի մէջ որբահաւաք գործին աշխատակցեցաւ և 1921ին Նահր-էլ-Օմար (Պասրա) անցաւ Բրիտանական պետութեան թոյլտուութեամբ:

Տէր Յովհաննէս Եգիպտոսի Առաջնորդ Տէր Թորգոմ Արք. թեմի հետ յնորհիւ կրցաւ 817 որբ որբուհներ յարաբերութեան մօտնելով՝ անոր շնորհիւ կրցաւ 817 որբ որբուհներ աղատել անապատի կեանքէն և բարերար Անգլիացիի ծախքով 1922 փետր. 11ին զանոնք շոգենաւով Երուսաղէմ փոխադրել. Ովկիանոսին վրայ 3 պսակ և մէկ թաղում կառարելով:

Տէր Յովհաննէս նոյն որբերէն բաղկացեալ 40 հոգինոց նուագախումբին հետ, իրը հոգեւոր հսկող 1924ին Եւթովպիա կը զրկուի, ուր խումբին հետ, իրը հոգեւոր հսկող 1924ին Եւթովպիա կը զրկուի, ուր

տարի մը մնալով 1925 Նոյին դարձեալ Երուսաղէմ վերադարձաւ իր որրաճողին մէջ: Տէր հայրը մինչև 1926 Սեպտ. ծառայեց հոն անխոնջ եռանդով:

Լուսահոգի Եղիշէ Սրբ. պատրիարք Վանի, Պաղտատի, Պարսկաստանի ազգայնոց և Հ. Բ. Հ. Միութեան վարչութեան խնդրանքին վրայ յատուկ կոնդակով լանջախաշ կրել արտօնեց Տէր Յովհ. քհն. իսկ լուսահոգի Բարգէն կթղ. Անթիլիասէն իր կենդանագիրքը նուէր ղրկեց ԱԻԱԳ քհն. Տէր Յովհաննէս հօր: Տ. Եղիշէ պատրիարք հօր կարգադրութեամբ 1926—1936, տասը տարի, Տէր Յովհաննէս Յոպպէի հայոց վանքին ժամարարութիւն ըրաւ, իսկ հիմա 1936—8 Բեթղեհէմ եկած է Նոյն պաշտօնով:

Տէր Յովհ. Աւագ քհն. ունի նաև անտիպ գործեր, զորս չէ կրցած ի լոյս ընծայել նւթականի պակասութեան պատճառաւ: Այդ գործերն են. Արձագանգ Ապարանից Ս. Խաչի, Օփիս Վասպուրականի 1896—1936 Քաւարան անձնական գիրք աղօթից:

Տէր Յովհ. քհն. Սիմոնեան եղած է ժամանակուայ մարզը, տարիներու և պարագաներու հետ յարմարուելով և գործելով անձնուիրաբար, Նոյնիսկ զոհելով բազմանդամ ընտանիքին ապագան. եղած է քաջ հովիւր իր ձօտին ամէն բանէ առաջ:

Երուսաղէմ 1938

Ս. Ա. ԺԻՆ



Տոբր. Ա. Լ. Լ. Ա. Հ. Վ. Ե. Բ. Տ. Ի. Օ. Ր. Գ. Ի. (Տես Յօդուածը էջ 91)



Օ. Չ. Բ. Ր. Օ. Ն. Ի. Ն. Ի. (Տես Յօդուածը էջ 75)



### ԵՂ. ՅԷՍՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ձակասագրին ողբերգութեանը մրռայ  
Հանդիսատես եղաւ աշխարհ արցունքով,  
Մահն անողոք յաղթեց կեանքին գեղափայլ,  
Ու ինկա՛ր, զերդ բռչուն նեհար հեգեխուով:

Հագիւ բիբերդ ուղղած վաղուան բարձունքին.  
Ու Պայքարին պատրաստւած բոցայոյս,  
Զայն մ'անձանօք որոտաց քեզ. «ո՛վ անգին,  
Քու արեալոյսդ պի՛ս՝ արդ ըլլայ վերջալոյս»:

Էի՛ր, որդեա՛կ, ոսկի երազ մը քրնճոյւ,  
Էի՛ր նանանչ մը յոյսի, յոյսն ամենուն,  
Էի՛ր տունիդ արեւը, սէ՛րն, երգն անոյւ:

Կու յա՛նք. քեպէս մեր աչքերուն մէջ արցունք  
Սլ չըմնաց, ու կը մըխայ մեր վիճն անհուն  
Յիսուսակիդ, որդեա՛կ, համբոյր, սրբիդ՝ խունկ...

## ԿԵՆՍՈՒԳՐԱԿԱՆ ԳԻՇԵՐ

Յաւես ողբացեալ Եղուարդ Ֆեսնեան ծնած է Պոլիս, 1914 ին: Իր ծնողաց հետ անցած է Ռումանիա եւ նախնական ուսումէն վերջ՝ զոր ստացած է Քոստանցայի Ա.գգ. վարժարանին մէջ, յանախած է Վենեսիկի Մուրաս Ռաֆայէլեան վարժարանը, ուր մնացած է վեց տարի, եւ 1934ին շրջանաւարտ եղած՝ ամենափայլուն նիւթերով:

Նոյն տարին կը վերադառնայ իր ծնողաց մօտ, ուր կը հետեւի Քիւմի Ինտուրքիայի նիւղին, 1935 եւ 1936ին կը կատարելագործուի Պրաեովի Շերկ եւ Թալփա մեծ ընկերութեան, մէջ: Յետոյ կ'աւելասի եւ կը զարգացնէ, Պուրէթի մէջ, իր հօր հիմնած կաշիի գործարանը: 1939ին զինք կը տեսնենք Քոստանցայի մէջ իր սեփական վանառասան գլուխը, մինչեւ նոյն տարւոյ Օգոստոսի եօրր, երբ՝ նակասագրական պահէն չկրնալով խուսափիլ՝ զոն կ'երթայ 24 տարեկան ծաղիկ հասակի մէջ, ինչպէս նաեւ ազգականներն ու բոլոր անոնք որ նանչցան զինք:

Եղուարդ Ֆեսնեան աւելաստէր, ընկերական եւ բարեհամբոյր երիտասարդ մըն էր որ պատիւ կը բերէր իր պատկանած համայնքին:

Օրհնեալ ըլլայ իր յիշատակը:



Ո՛վ հայ, զլխուդ տակ եքէ քար դնեն,  
Պէտք է արցունքովդ ծաղկեցրնես,  
Աւխարհին բեր կուրծքիդ վրայ տարեն՝  
Սրտիդ մէկ զարկով զայն ի բաց վանես:

— 0 —

Փօրէ՛ կզակն որ կը ծամէ հացն այլոց,  
Կոտրէ՛ գրիչն որ կը սէ ինքզինքին,  
Խոնարհներուն մէջ անհետի՛ր իբրեւ բոց  
Որ կը զլինէ տան եղունգներն Սլացլին:

— 0 —

Աւխասուրեամբ ո՛չ մէկը փող չը դիզեց,  
Հարուստն է լոկ անպատիժ գող մը արթուն,  
Ծոյլ մըն է որ կ'աւխասցրնէ ուրիշներ,  
Շինած տանունն է իր խղիւղ մահատուն:

— 0 —

Քարայրնէ՛ր մուր, խորունկ, քարայրներ անաղմուկ,  
Առաջին ու վերջին օրիւաններն էք դուք.  
Ա՛ն. զիտար յօտած՝ մարդիկ ձեզ պիտի գան  
Կրկին պատել ձեր մուրն իբրեւ վերջին արքան:

— 0 —

Նդի՛ր լեռան պէս անդորր ու մի՛տս վնիս իբր արձան  
Իբրեւ բէ գերծ ըլլայիր ժամանակէն. Միջոցէն.  
Նդիբ խորխոս ու անյայգ, անտառական լոյսին նման.  
Եւ մանն երբ գար զարնել քեզ ձուլուած գտնէր քեզ արդէն:

— 0 —

Ինչպէս բոլոր օղակները՝ ձկնորսներու մեծ ուռկանին,  
Մէկ դերձանով միայն հիշուած՝ իրարու են հազորդակից.  
Այսպէս ար. ո՛վ անկուտ մարդիկ, խառնուեցէ՛ք դուք Համայնին,  
Ապա բէ ոչ կեանքի ծովէն ձեր բաժինն է մամուռն եւ խին:

— 0 —

Չպիտեցէք ամէն ինչ իր սիրելու քափով.  
Հաննարն իսկ կ'անհետի սիրոյ մը մէջ հզոր.  
Բուրմունքն այերին մէջ գետերը՝ դէպի ծով,  
Կատարներ նոններուն՝ աստղազարդ ցայլին խոր:

Գաղափարներն են զգուկներ որ կը ծծեն արիւնն համակ,  
Ոսկորներու նարնասիւնն է որ հուսկ ուրեմն կը մնայ,  
Զառամութեան զազիր կմախֆն եւ խոռոչուած աչքեր ցամաֆ.  
Ինչո՞ւ չը ծնիլ կա՛մ միայն ճիւր եւ կամ միայն կա՛մֆ անխնայ.  
Ե. ԳՕԼԱՆՃՆԱՆ

---

## Ի Ր Ի Կ Ն Ա Յ Ի Ն

---

ԱԼՊԷՌ ՍԱՄԷՆ

I

Քարափին վրայ ամայի նաւերն հանդարտ փուն կ'ըլլան:  
Տարապարհակ աւխասանն ա՛լ աւարած է օրուան.  
Եւ Մընջա՛ղը կապոյտ՝ մեղկ ձեռքերով նագենի  
Կը մարէ գետն հրավառ. ուր յոյժ մեհաղ կը հոսէր:

Գործասուններն տենդաւխաս սեղմնակն իրենց կը թուլցնեն.  
Եւ մագերինն հովին դեմ, աղջնակներ հոգեմառ  
Լուսագրգի՛ռ կը վագեն դէպ՛ վիբրիւններն ոսկեղէն  
Ակնապարտ ֆարի խեղն իրենց փափաֆն սպաննելու:

Քաղափն վրայ մրասուեր որ ամբոխն հոծ կ'ալեծփի.  
Երկինն՝ հագած ֆաղցրութիւն մարգրտի ու սուսակի  
Երկինն, առուն իրիկուան, կ'ըսես, կ'իյնայ ոււարափ:

Ժամը կ'անցնի ինչպէս կին մը ծածկուած ֆողին քակ  
Եւ մութին մեջ, հեռօրօր, սիրսս կը բացուի, ֆաղելով  
Ինչ որ երազ կ'իջնէ վար աստեղունն հետ նորածագ:

II

Կ'անցնի պարիկն իրիկուան ծաղիկներու ֆովիկէն . . .  
Անուրջներու սիրունին կ'երգէ ժամու երգեունէն.  
Եւ երկինն ուր օրավերջը լուսավնիտ կը հալի,  
Յա՛մը կ'երկարէ գոյներու հոգեվաւր մը հրաւայի:

Կ'անցնի պարիկն իրիկուան եւ արտերու ֆովիկէն . . .  
Տարփանն անոյս գեփիւռին կոյսեր կ'ըմպեն պաւսգամէն.  
Եւ ծաղկանց վրայ դողդոջուն եւ կոյսերուն վրայ արտաւ  
Գանդադօրտն կը տեղան դալկութիւններ պաւսելի:

Պարեզդին մեջ մեն մի վարդ կը բառամի ոգեսպառ,  
 Եւ Շումանի նեւ հոգին բափառայած օդին մեջ  
 կը պասմէ ցաւ մը կարծես որուն բուծումն է անննար:

Տեղ մ'անպայման այս պահուս կը մեռնի տղայ մ'անուշիկ...  
 Ո՛վ իմ հոգիս, նսան մը դիր գրէ՛լ դ էջին առօրեայ,  
 Հրեւեակն առնել պիտի գայ այն երազն որ մեջդ կու լայ:

### III

Երկինք ժգո՞յն կը նուաղի նման լնի մը ոսկեայ:  
 կարծես քէ դաւար, հեռուն, ամայացած կը խոկայ,  
 Եւ պարապով ու լռութեամբ բնդարձակուող միջոցում  
 կը քեւածէ գիշերուան հոգին անեզր ու սրտում:

Մինչ հոս ու հոն կը փայլին զոդզոջ լոյսեր գեղջկական,  
 Խոտոր եզներ, զոյգ առ զոյգ նամբաներէ կը դառնան,  
 Եւ ձեռուկներ զղակով մեղմ երեկոն կը շնչեն,  
 Թուզք դրած քեւերնուն, խրեփքներու դռներէն:

Բնանկարն ուր կը քրքոյ գանգակի ձայն մը պայծառ  
 Տխրունակ է ու պարզուկ գերք նախնական մի նկար  
 Ուր կը սանի Առաջնորդն սպիտակ գառ մ'որ կ'ոստոսէ:

Երկնին վրայ մբամած աստղերն հաս հաս կը ձիւնուին,  
 Եւ հոն հեռուն, անտեւ, կասարին վրայ բլուրին,  
 Վայնջական սիլուէթն հովուի մը լ'ուն կ'երագէ:

Թարգ. Գրանտերէնէ  
 ԱԼԻՉԱՐ

Բլովտիւ



ԵՒ. ԳՕԼԱՆՃԵԱՆ



ԱԼԻՉԱՐ

## ՔԷՄԱՆՉԻՍՏ ՌՈՒԲԷՆ ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՅ ՄԷՉ

Ռուբէնը աստի աստի եւք կրկին Թրանսիլվանիա կը հանդիպի. կ'այցեիք նախ Ֆրումոսաս գիւղաքաղաքը, ուր փոքրիկ հայ զաղուծ մը կ'ապրի:

Հաղիւ կ'ողջագուրուինք՝ կը հարցնեմ.

— Ռուբէն, պատմէ՛. տասը տարուան մէջ Քէմանչէդ ի՞նչ նպաստ տուաւ հայ մշակոյթին:

Ո՛չ մէկ խօսք: Արուեստագէտը իմ առջև կը ղնէ հաստափոր ալպոմ մը, ուր հարիւրաւոր թղթակցութիւններ թերթերէ եւ հանդէսներէ մկրատուած՝ համեստ հայ աշուղին գործը կը պատմեն:



Այդ ալպոմը ստորագրողիս գրուածիքովը կը բացուի: 1927ին արդէն մարգարէացիք եմ Ռուբէնի ապագան: Յուզուած կը թղթաօթեմ, Բարիդի «Ապագայն», «Յառաջը», «Կեանք ու Արուեստը», «Նոր Երկիրը», «Արագած»ը, «Անահիտը», «Վէմ»ը, «Զանգու»ն, Եգիպտոսի «Արեան ու Յուսարիքը», «Արաքսան ու «Աւառանակ»ը, Պոլսոյ «Աղղարարան ու «Ժամանակ»ը, «Նոր Հուրան ու Արեւելք»ը, Պէյրու թի «Ազդակ»ն ու Հայէպի «Եփրատ»ը, Պարսկաստանի «Վերածնունդ»ն ու «Այիք»ը, Ամերիկայի «Հայրենիք»ը, «Պայքար»ը, «Հայաստանի Կոչնակ»ը, Վենետիկոյ «Բազմավէպ»ը... ղեռ ո՞րը

յիշեմ, անխտիր բոլոր թերթերը, բոլոր կուսակցութեանց օրկանները եւ նոյնիսկ «հանդէս»ներն եւ Տարեգիրքները:

Էջերը այս ալպոմին մէկիկ մէկիկ կը դարձնեմ ու կը կարգամ եւ կրկին կը կարդամ վաղամեռիկ, ապագայ խոստացող Աեբաստացի Սիրիստարբնակ հայ ուսուցչի մը, Միհրան Տէրտէրեանի «Քէմանչէին» ուղղած սա տողերը

Անյոյս օրջեր եմ, երկիրներ, հողեր,  
Սակայն ոչ մէկ սեղ քեզ չեմ բողեր.  
Առանց քեզ հոգիս կես է, յրման չէ,  
Ո՛ր իմ սիրական, սիրուն Քէմանչէ:

Պարզուկ ձեւ մ'ունիս, տեղ մ'անփառունակ,  
Նոյնն է կոնդ մ'էիր կամ բարունակ-  
Քեզ շինողն երբեք պէլծ չէ՛. գերման չէ՛,  
Այլ պարզուկ հայ ձեռք մ'ով իմ Քեմանչէ:

Ո՛չ Ասիացու ձեռնով բիրտ քառք,  
Ո՛չ Եւրոպացու սիրուն կիթառք,  
Եւ ո՛չ այլ նրագ քեզի նրման չէ,  
Ո՛վ իմ աննրման, աղուոր Քեմանչէ:

Մարդոց լեզուներ միտ կը կարկամին,  
Անձանօք լեզու երբ կամին.  
Դու գիտես ողջն ալ բուրիճէ, փուրմաննէ,  
Ո՛վ իմ լեզուազէս. խօսուն Քեմանչէ:

Թեպէս ձեռքիս մէջ յոզնած կփեր ես,  
Բայց քեզ լրսողին սիրտ կը գերես.  
Կի՛ն է, սրղամա՛րդ. աղջի՛կ քէ մանչ է,  
Ո՛վ իմ ձայնասու անո՛ւտ Քեմանչէ:

Հոգիս քու վրագ անհուն սէր ունի,  
Թէ որ մ'ես լինիմ դողողոջ ձեռունի,  
Քեզ բրոնող ձեռքս չը պիտ' նահանջէ,  
Զէ՛ ինձ ուժ կու տաս, հուժկու Քեմանչէ:

Թէ երբ հոգեառ խեղ նրեցակի  
Հարուածր հասնի սրտիս շեցակի,  
Վերջին ձայնս իսկ քեզ պիտի կանչէ,  
Ո՛վ իմ անբաժան ընկեր Քեմանչէ:

— Որո՞նք չեն սիրեր երգն ու երաժշտութիւնը:

— Չարե՛րբ. կ'ըսէ ժողովրդական առածը:

— Որո՞նք չեն սիրեր Քեմանչէն,

Պատասխանը մեր անմահ աշուղը, Սայաթ Նովան կու տայ:

Մտիկ ըրէ՛:

Ամեն սազի մեջը գոված դուն բամամ դասն իս Քեմանչա,  
Նախա մարդ քեզ չի կանայ տեսնի, դուն դրա պասն իս, Քեմանչա,  
Ղաստ առա էլ լաւ օրերուն ետեւըն հասնիս, Քեմանչա,  
Քեզ ինձնից ո՛վ կանայ խրիլ, առուղի պասն իս Քեմանչա:

Յուրէն միտնարի մը պէս ասաց տարի ման եկաւ էին աշխարհի

երեք մասերը: Գնաց հոն՝ ուր քանի մը հայեր կորսնցուցած իրենց մայրենի լեզուն, կտրուած մայր հայրենիքէն, թմրած և առանց աղ-  
գային զգացումի՝ հայ կեանքին հոգեվարքը կը մարմնաւորէին. ու  
այս Հայ Աշուղը, հեռուն նուագեց անոնց կոռնկը: «Կոռնկ, մեր  
աշխարհէն խապրիկ մը չուենի՞ս»: ու անունով կամ սերունդով հնդկա-  
հայեր կամ ճարտնարնակ հայեր, արթնցած իրենց թմրութենէն՝ ա-  
կանջնին տուին Քէմանչէին. իրենց մէջ յեղափոխութիւն մը զգացին.  
ակամայ՝ արցունքներով պօղեցան իրենց աչքերը. լեռ մը պատկե-  
րացաւ իրենց առջև. լեռ մը հսկայ, որուն ձիւնապատ գագաթը ամպի  
չղարշով մը քողարկուած էր այս՝ կը ճանչնան, տեսած են զայն  
գրքերու էջերուն վրայ. Արարատն է, Արարատը, կարծես այս օտա-  
րացածները իրենց մայրենի հողին վրայ են նստեր:

\* \* \*

Օձերն իսկ մարդակեր գաղաններն իսկ կանգ կ'առնեն. հլու  
մօտիկ կ'ընեն երգն ու երաժշտութիւնը:

Քէնոտ հայ զաւակնե՞րն են որ վերջ պիտի չտան իրեն բանա-  
վէճին ու կոուին:

1937ին Սիրանայի կրնոպլ քաղաքին քաղաքապետութեան  
«Կարմիր Սաչ» ստահին մէջ «երկու մասի բաժնուած» հայ զաղութի  
անդամները խուռներամ հաւաքուած են Քէմանչէն լսելու. հրաջք  
տեղի ունեցած է. երկու բաժնուած ճակատները զոջուով երգած են  
միասին. «Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր ենք մենք»...

\* \* \*

— Անցադի՛րդ, հէ՛յ անցորդ — խոժոռ ձայնով կը պահանջէ, սահ-  
մանադիտուն վրայ՝ քարսիրտ պաշտօնեան:

Հայ աշուղը իր պարապ դրպանները կը խուզարկէ. ո՛չ մէկ զիբ  
ունի հոն: Ճարահատ, սև զգաղէն դուրս կը հանէ խնդրեմերես Քէ-  
մանչէն, կը նստի խարխիլած աթոռի մը վրայ, ծնկին վրայ կը դնէ  
անոր մէկ հատիկ երկաթ սրունքը: Հիմա Քէմանչէն կ'աղերսէ ճամ-  
բայ տալ իրեն: Քարսիրտ պաշտօնեան կը հասկնայ այդ լեզուէն, կը  
յուզուի:

— Անցի՛ր, կ'ըսէ, ձեռքի շարժումով ճամբան ցոյց տալով:

\* \* \*

Քէմանչէն լեզու կու տայ մեր մեծ հիւանդին: Ռուբէն Մար-  
տիրոյ մէջ իր նուագանդները տալէ ետք՝ օր մը մեր վշտի մեծ  
Երգչին կ'այցելէ. որ ընդհանրապէս իրեն այցիլով վաղեմի բարե-  
Երգչին կ'այցելէ. որ ընդհանրապէս իրեն այցիլով վաղեմի բարե-  
կամներն իսկ անտարբերութեամբ կ'ընդունի: Հիւանդը գլուխը կախ,  
աջ թեւը կուրծքին կապած թիկնաթոռին մէջ ինկած և: Քէմանչէն երբ

կարծես արցունք թափելով Հիւանդին «Քնիր իմ Բալիկ»ը կը նուագէ՝ Ահարոնեան կարծես երազէ մը արթնցած իր երիտասարդ տարիքին մէջ՝ կը սթափի, կախ զուլեւը կը բարձրացնէ, կը նայի Բէմանչէին, ու բառերը, ի՛ր ստեղծագործութիւնը ի՛նք կը մոլաւայ — «Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացեր»:

«Կուռնկ»ը շա՛տ կը տխրեցնէ. կէս ձգել կու տայ. — Ա՛յ կը բաւէ Ռուբէն ջան:

Սայաթ Նովայի ուրախ կտորները կ'ողբելորեն զինքը — լաւ ա, լաւ ա, ապրիս:

\* \* \*

Ռուբէն բովանդակ հայ մամուլին, անխտիր, բարձրաստիճան անձնաւորութեանցի խաններու, եպիսկոպոսներու նոյնիսկ պատրիարքներու դրուատիքին արժանացաւ. Լուսահոգի Թորգոմ պատրիարք սատողերով արտայայտուեցաւ 1933ին՝ Ռուբէնինուազահանդէսէն ետք. — «Սրտագին շնորհակալութիւն մեծատաղանդ և սիրելի արուեստագէտ մամուլին, որոնց կը պարտինք այս երեկոյեան այս անոյշ և բարձր վամամուլին, որոնց կը պարտինք որ այս երանական վայելքը տուին յելքը... Օրհնեա՛լ ըլլան անոնք որ այս երանական վայելքը տուին այս իրիկուն մեզի» (Յուսաբեր 26 Ապրիլ):

\* \* \*

Բէմանչէն Ղարապաղցի Ռուբէնը այնքան բարձրացուց, որ իշխաններ ու նոյնիսկ արքաներ մեր համեստ արուեստագէտը իրենց ոեղանակից ըրին: Ռուբէն շահեցաւ Իրազի պնկախութեան պետական մարտի մրցումը իբրև հեղինակ:

\* \* \*

Ու տասը տարի ման գալէ ետք, ծովերն ու անապատները, Հայ Աշուղը կրկին Ռումանիա կը դառնայ՝ հո՛ս մնալու համար: Ո՛չ մէկ գաղութ, ո՛չ մէկ երկիր, չեն հրապուրած զինքը. բացի այս պատական երկրէն, ուր հասաւ 1922էն ետք:

Լուսաւորայ հանդիսաւոր տունին (1939ի ամառը) Ֆրուժոսաս եկաւ իր դաշնակահարուհի տիկնոջ հետ: Այս համեստ գիւղակին մէջքէն սահող գետակը, զոր անցեալին ուսմէն իշխան մը Սևի-Վիզ (գեղեցիկ ջուր) կոչած է ու հրամայած իր նոյնզին, խմէ՛ սա գեղեցիկ ջուրէն, Ռուբէն ճիշդ գեթիկին այդ գեղեցիկ ջուրին քովիկը անցիկ ջուրէն, Ռուբէն ճիշդ մէջ Բէմանչէին լեզու տալով Կէրկէնի, ցուց իր 60 օրերը. մէջ ընդ մէջ Բէմանչէին լեզու տալով Կէրկէնի, Մէրքուրէա-Չուքի, Թուշնատ-Պայի, Ֆրուժոսայի մէջ: Այս գեղեցիկ ջուրին կարկաչը հիւանց արուեստագէտին սիրան

Եւ հոգին, առտուներու խորհրդաւորութիւնը, գիւղական կեանքը,  
 հայ պատարագը ոգեւորեցին զինքը և Ռուբէն դեղջակայն տան մը  
 մէջ գրեց իր ամէնէն գեղեցիկ նուագը, զոր կոչեց Գեղջկական Առա-  
 ւօսը կամ Գիւղին երգը, զոր պիտի լսէ հայն ու օտարը սքանչացումով:  
 Ֆրունուսա 1939

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



Լուսանկար՝ Ե. Նազարեան

Նսած՝ աջէն Քեմանչիս Ռուբէն, Հ. Մ. Պոտուրեան,  
 Տոբ. Ս Սարգիսեան, Տիկ. Նազարեան  
 Ոսփ՝ Տիկին Ռուբէն, երկու հայեր, եղ. Նազարեան  
 Տիկին Ժամկոչեան, Ա. դասի Ժամկոչեան:



ՄԱՍԻՍ Գ. ՄԱԼԱԹԵԱՆ  
 (Յօդուածը սե'ս էջ 62)



Ա. ՃԷՎԱՀԻՐ  
 (Յօդուածը սե'ս էջ 148)



# ՊՈՒԼԿԱՐԱՅԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐ

## Ա. ՆԿԱՐԻՉՆԵՐ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՀԱՐՈՆԵԱՆ.— Պուլկարահայ յայտնի արձանագործ,  
աղանդաւոր և վաստակաշատ:

Ծնած է Թիֆլիս 1896ին, ուր նախակրթութիւնը ստանալէ յետոյ  
հետեւած Բեթրոկրաթի դեղարուեստից Ա-  
կադեմիայի դասերուն, ուրից պատկուած  
և Տրցանակով Ընդհանուր պատերազմի  
վերջաւորութեան անցած Պուլկարիա, ու-  
րու Սոֆիայի Գեղարուեստից Ակադե-  
միան աւարտած փայլուն կերպով 1924ին:  
Ապա մի քանի տարի վերջ, խոշոր զո-  
հողութիւններու զնով անցած Բարիզ՝ իր  
ուսումը կատարելագործելու: Այս առթիւ  
հոն մասնակցած նաև մի քանի արուես-  
տահանդէսներու, ինչպէս 1928ին Salon  
d'Automne ի և 1929ին Salon des Artis-  
tes Français ի ցուցադրութեանց եւայն:



1930ին վերադառնալով Սոֆիա, ինք-  
զինքը ամբողջովին նուիրած ստեղծա-  
գործ աշխատանքի, յաջորդաբար մեզի  
տալով արուեստի ընտիր և ինքնատիպ գործեր, որոնք առաջին իսկ  
օրէն ստեղծեցին հետաքրքրութիւն և արժանացան հեղինակաւոր ան-  
ձերու բարձր գնահատման: Այս առթիւ, իբր յառկանչական կէտ  
ձերու բարձր գնահատման, որ Ահարոնեանի արաջորու-  
մը կ'արմէ վեր առնել այն պարագան որ Ահարոնեանի արաջորու-  
մը թեանց կարելի է հանդիպիլ այսօր Պուլկարիոյ այլեայլ քաղաքներուն  
մէջ, սկսելով Սթարա Զակորայի պուլկարական եկեղեցւոյ պարաւզէն  
մինչև սկսելով Սթարա Զակորայի Մեխումիայի, Ներոքորի մէջ կանգնուած իր  
մինչև Քիւսթէնտիլի, Մեխումիայի «Պարիսովա» հանրային պարտէզին  
ձեւակերտները: Իրմէ ետև հայասէր բանաստեղծ Եսլոտովի  
մէջ պուլկար գերեզմանատան մէջ հայասէր գերեզմանատան մէջ Զօրավար  
գեղեցիկ արձանը: Սոֆիայի պուլկար գերեզմանատան արձանները, Քնեստեւոյի  
Վազովի, Սամոքովի մէջ Մայր Քաղցրովի արձանները, Քնեստեւոյի  
մէջ պատերազմի զոհերու յիշատակարանը, ինչպէս նաև Ազգ. գերեզ-  
մանատան մէջ Քրիստափորի կիսանդրին և Պոլսահայ յայտնի նկարիչ  
Պետրոս Մրապեանի պրոնզէ արձանը, եւայն եւայն:  
Իր գործերէն շատեր այսօր կը կազմեն զարդը հանրային Թան-



«Յուրաքանչեւ» (Գ. Ահարոնեանի)

ներուն եւն. և կ'անդամակցի պուլկար արուեստագէտներու «ժամանակակից Արուեստը» ընկերակցութեան: Ան նախագահն է միանգամայն Պուլկարիոյ Ռուս նկարիչ-



«Արմոնիա» (Գ. Ահարոնեանի)

ներու Միութեան, որու այս օտարուան Հոկտ.ին բացուելիք չորրորդ



Սոփիայի Հայոց եկեղեցւոյ մկրտութեան աւագանը (Գ. Ահարոնեանի)

տարեկան ցուցահանդէսին իր ներկայացնելիք գործերէն «Ֆուրդիցիա» (composition) և «Աւուրնիլա» (երգեհոն նուագողը) արձաններուն նկարները կու տանք հոս: Խորաթափանց, խղճամիտ և անվիճիթօրէն ինքնատիպ արուեստագէտ, Գրիգոր Անարոնեան կը հանդիսանայ ջերմեռանդ նուիրեալ մը իր արուեստին, իբր այդ և իր գործով պատիւ կը բերէ իր ցեղին:

Անոր տաղանդին անվերապահ ներրողն հիւսած են օտար հեղինակաւոր գրիչներ բազմիցս՝ թերթերու և կարեւոր պարբերականներու մէջ:

**ՏԻԿԻՆ ՀԱՅՎՈՒՀԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ (ՀԻԼՏԱ).—**

Քիչ են մեր մէջ արուեստի նուիրեալ կիներ, Տ/կին Յարութիւնովնա-Նաչատուրեան այդ հազուագիւտներէն է, որ արդէն իսկ անուն մը չինած է իրեն հայ և օտար գեղարուեստական շրջանակներու մէջ: Իր գործերը՝ ուրոնք կը կրեն արուեստի ինքնատիպ դրոշմ, մուտ գտած են արդէն պուլկար նկարչական ցուցահանդէսներու մէջ և արժանացած արուեստի մարդոց գնահատանքին:

Ծնած 1912ին վառնա, զուսօր Յարութիւն Ալարմճեանի, կը կարծուի արուեստի տեսակէտէն մեծ ազդեցութիւն կրած ըլլալ իր ծննդավայրի բնական գեղեցկութիւններէն: Իր մէջ սէրը դէպի նկարչութիւն՝ կը յայտնուի շատ կանուխէն՝ ի տղայ տիոց, այնպէս որ վառնայի մէջ երբ աշակերտ էր պուլկար աշխատանք վարժարանի՝ կը կազմակերպէ զիմանկարներու և բնութեան տեսարաններու (paysage) ցուցահանդէսներ, որոնց գտած յաջողութիւնը ապագայի գրգիռ մը կ'ըլլայ իրեն, մինչ միւս կողմէ կը վարձատրուի նաև վարժարանի անօրէնութեան կողմէ յատուկ մրցանակով:

1930ին կը մտնէ Գեղարուեստից Ակադեմիան, որուն շրջանը կ'աւարտէ յաջողութեամբ ու կը նուիրուի իր սիրելի արուեստին: 1935էն ի վեր ամէն տարի շարունակաբար կը կազմակերպէ զիմանկարներու ցուցահանդէսներ Սոֆիայի մէջ, միանգամայն մասնակցելով պուլկար «Արուեստագէտներու Միութեան» բոլոր ցուցահանդէսներուն:

Իր զիմանկարներէն, իրենց բացառիկ բնականութեամբ ու հարաշատութեամբ ուշադրաւ են մասնաւորաբար պուլկար առաջնա-



Գրում  
Նրանց Ապոյանեանի  
Գովիտ — Մարտիս

կարգ իրաւազէս Տոբ. ձիտօֆի դիմանկարը. Գրեզանդեմներով Օրի-  
 ուորը. Միլչօ, Ժէնիա Եաննօլս, Հայելիով Տիկինը. Քրիստոսի խաչելու-  
 քիւնը *և.և. և.և. մեծ մասամբ արժատուպուած պուլկար թերթերու մէջ՝  
 ներքողալից յիշատակութիւններով:*

Կ'անդամակցի «Ժամանակակից Արուեստ» ընկերակցութեան *և.և.*



«ՄԻԼՉՕ»

(Տիկ. Հայկունի Յարութիւնեանի)

Տոբ. ձիՏՏՈՎ (բօրբէ)

(Տիկ. Հայկունի Յարութիւնեանի)

*անկախ այս վերջնօյն նկարչական ցուցանանդէսէն, կը պատրաստուի  
 մօտերս կազմակերպելու դիմանկարներու նոր ցուցանանդէս մը ևս,  
 վստահօրէն հոն ալ անդամ մը ևս մեզ հաղորդակից ընելով իր անվի-  
 ճելի տաղանդին:*

Տիկին ԿԱԼԻՆԷ Ն. ՓԱՓԱՉԵԱՆ.— Յանձին Տիկին Կալինէ Ն.  
 Փափագեանի, Պուլկարահայու թիւնը կ'ողջունէ իր ուրիշ մէկ շնորհալի  
 արուեստագիտուհին:

Մնած Բլովաիւ (Ֆիլիպէ) 1896ին՝ Կալինէ դուստրն է Ներսէս  
 Փափագեանի, որ թրքական միւլթիութեան մօտ երկար ասրիներ  
 թարգմանի պաշտօն վարած և թուրք տիրապետութեան ժամանակ  
 շատ մը պուլկար քաղաքացիներ աղատած էր մահէ: Իսկ իր մօրեղ-

բայրն է Յովհաննէս Սվաճեանը, որ՝ ինչպէս յայտնի է՝ Ռուս եւ թուրք պատերազմին ժամանակ իր կայարանապետ Թ. Փաղարճըքի, քաղաքի զբոստոնեայ ընկելութիւնը փրկած էր ստոյգ սրածուծէնէ :



Կալինէ իր ծննդավայրի աղջային վարժարանը յաճախելէ յետոյ մտած է Պուլկարական Կիմնազիոն եւ աւելի վերջ Պուքրէշի Դեղարուեստից Ակադեմիան, որ շնորհիւ իր ընածին տաղանդին՝ մեծ յառաջիմութիւններ ջոյց առւած է նկարչութեան մէջ: Եւ տարիներ վերջ՝ այժմ իր այդ խնամուած պատրաստութեան եւ անվատ աշխատասիրութեան է որ կը պարտի իր

արուեստին գագած գնահատումն ու առօրեայ ապրուստը Սոֆիայի ղոնուարահան շրջանակներուն մէջ:

Տիկին Կալինէ Փափագեանի գործերն յիշատակելի են մասնա-

ւորաբար բաղձաթիւիւղաներկ նկարներ, յախճապակեայ դանազան անօթներու ընտիր գծագրութիւններ, զարդանկարներ ինչպէս նաև նրբին նկարումներ թաւիլի եւ այլ կտաւներու եւ շղարչներու վրայ:

Անոնք՝ գեղեցիկ ու պերճախօս վկայարանները ճշմարիտ արուեստի մը՝ ճանօթ են արդէն Սոֆիայի գեղարուեստասէր շրջանակներուն:

Հոս կու տանք իր նկարներէն մին, անուած իւղաներկ պատասէ մը 100x60 մեծութեամբ:



Իւղաներկ Կ. Փափագեանի

ՏՈՐՔ ԶԱՐԳԱՆՆԵՐ.— վարպետ paysagis'e մը, որ վերջին տարիներս քաջուած ըլլալ կը թուի իր երբեմնի այնքան սիրելի զբոսայգիներէն:



Ծնած 70 տկան թուականներուն Պոլսոյ մէջ, Տորք զաւակն է նկարիչ հօր մը՝ Ստեփան Զաքարեանի, որ Ակնայ հարուստ գերգաստաններէն սերած՝ իրր նկարիչ և իրր ազգային անհատ՝ հանրանուէր գործունէութիւն մը ունեցած է ատենին Պոլսոյ և Կիլիկիոյ մէջ: Տորք սնած ու մեծցած գերազանցապէս իր արուեստագէտ հօր շունչին տակ՝ շատ կանուխէն սկսած է նկարել, աւելի վերջերը հետեւելով նաև Պոլսոյ Գեղարուեստից վարժարանի դասերուն:

Պատանի Տորքի վրայ սակայն ո՛չ իր հօր առաջնորդող ցուցմունքները և ոչ ալ Գեղարուեստից վարժարանը չեն ունենար թերևս այն խոյր, ճակատագրական ազդեցութիւնը՝ որքան գեղեցիկ պատահար մը՝ իր հանդիպումը Յովի: Այվազովսքիի հետ:

Այլսարհահոյակ ծովանկարիչը երբ վերջին անգամ Պոլիս կ'այցելէ, Տորք՝ արուեստի հուրով բողբոջա պատանի՝ ամէն ճիգ կ'ընէ ձեռով մը անոր ներկայանալու: Ան իր այս փափաքը չի ծածկեր նաև ծանօթներէ, առիթ մը՝ միջոց մը գտնելու համար: Վերջապէս այդ չ'ուշանար գայու, շնորհիւ ճարտարօրէն նիւթուած հնարամտութեան մը:

Նոյն ատենուան պատրիարքը Խորէն Արք. Աշքեան իրր փոխայց Այվազովսքիի իր լուսանկարը կը ձօնէ անոր և բարապանին հետ կը դրկէ, ճամբան կը յաջողի վարպետութեամբ լուսանկար ատենել անոր ձեռքէն և հետը ամենով նաև իր գծած նկարներէն մին՝ կ'ուղղուի Hôtel d'Angleterre, ուր լջեանած էր հայազգի մեծ նկարիչը իր տիկնոջ հետ: Տորքի համար այնքան դժուար չ'ըլլար պանդոկին դուռը խոնուած հետաքրքիրներու բազմութիւնը ճեղգելը, բայց վարպետին տեսքն ու նկարին յանձնուած բաւական ներքին յուզումի կարողութիւնը: Այվազովսքի ընդունելով Աշքեան պատրիարքի նկարը Տորքէն, զայն բարապան կարծելով կը վարձատրէ ոսկիով մը: Տորք՝ յուզումէն դուրս գալով քաջութիւնը չ'ուշանար նոյնիսկ խօսելու և արձանացած կը մնայ իր տեղը: Այվազովսքի ի վերջոյ մօտենալով կը հարցնէ թէ ախրեօք ուրիշ ըսելի՞ք մը ունէր: Տորք ասկէ պահ մը քաջութիւն ատած՝ կը վերագտնէ իր համարձակութիւնը, և ՎՍԻՎ վարպետ ըսելով գողցուած քայլերով կը ներկայացնէ իր գծած մէկ նկարը՝ զոր թղթի մէջ ծրարուած՝ հետը բերած էր: Կը բացատրէ նաև թէ մուշքի դուռէն ազատ անցը ունենալու և իրեն կարենալ մօտենալու համար



շնորհիւ իր վարչական կարողութեանց՝ բարձրացած մինչև տնօրէնու-  
թեան պաշտօնին, տնօրէնութիւն՝ զոր վարած է 1926—1937 տարի-



ներու ընթացքին, 7 տարի Լոմի և 5 տարի  
Վիտինի մէջ: Սոյն դրամատան հաշուեյար-  
դարէն վերջ փոխադրուած է Սոֆիա, թող-  
լով դրամատուններու վարիչ չըջանակնե-  
րուն մէջ ուղղամիտ, վարչագէտ և ձեռնե-  
րէջ պաշտօնատարի համբաւ:

Սակայն ինչ որ հոս այսպէս մեր ու-  
շադրութիւնը կը հրաւիրէ, այն պարագան է,  
որ Տիրան Սարգիսեան՝ հակառակ այսքան  
պաաստիանատու պաշտօններով ծանրա-  
բեռն վիճակին՝ երբեք ձեռքէ չէ ձգած  
նկարչի վրձինն ու երանգապնակը, զոր իր  
կեանքի տեսակ մը անբաժան ընկեր միշտ  
հետը պտտցուցեր է ամենուրեք՝ դպրոցա-

կան զրօսեցանքներն սկսեալ մինչև պատերազմի դաշտը:

1934ին՝ իր իւզաներկ ընտիր աշխատութեանց ցուցադրութեան  
առթիւ, ընդունուած է իրր գործօն անդամ պուլկար արուեստագէտ-



«Չկնօրսներու խրհիթներ» (Տիրան Սարգիսեանի)

ներու «Ժամանակակից Արուեստ» ընկերակցութեան, և ներկայիս իրր  
կազմակերպիչ անդամ կը մասնակցի Պալկարիոյ Արուեստագէտներու  
ընդհանուր Միութեան», միանգամայն կանոնաւոր կերպով բերելով



իր մասնակցութիւնը 1934էն ասդին տուած բոլոր նկարտհանդէսներուն, ինչպէս նաև 1938—39 տարիներուն ալ Վիտինի արուեստահանդէսներուն:

Հոս կը ներկայացնենք «Ձկնորսներու խրճիթը», որ ցուցադրուած էր վերջին նկարահանդէսին, և որու մասին գովեստով խօսեցան նոյնպէս պուլկար թերթեր:

ՀՐԱՆԴ ԱՆԱՆԵԱՆ. — խոստմնայից երիտասարդ նկարիչ մը, որ արթադրած է արուեստի բաւական ուշագրաւ գործեր:

Ծնած է 1905ին Ալրիանուպոլսոյ մէջ, որուն Արշակունեաց Ազգ. վարժարանը յաճախելէ վերջ անցած Պոլիս՝ Սաքրդ Աղաճի Մխիթարեան և Ղալաթիոյ Փրանս. St. Benoit վարժարանները:



Արուեստներու, գլխաւորաբար նկարչութեան հանդէպ հակառակ փոքր տարիքէն իսկ ունեցած մեծ սէրին ու նուիրման, Հրանդի պակասած են միջոցներ՝ հետեւելու այդ ճիւղին վերաբերեալ տեսական դասերու: Այդ պակասը սակայն ջանացած է լրացնելու օրինակելի ինքնաշխատութեամբ մը, կանոնաւորաբար հետեւելով այդ մարդին մէջ եղած հրաշարակութիւններու և ցուցահանդէսներու: Եւ հարկ է ընդգծել որ

Արուեստներու, գլխաւորաբար նկարչութեան հանդէպ հակառակ փոքր տարիքէն իսկ ունեցած մեծ սէրին ու նուիրման, Հրանդի պակասած են միջոցներ՝ հետեւելու այդ ճիւղին վերաբերեալ տեսական դասերու: Այդ պակասը սակայն ջանացած է լրացնելու օրինակելի ինքնաշխատութեամբ մը, կանոնաւորաբար հետեւելով այդ մարդին մէջ եղած հրաշարակութիւններու և ցուցահանդէսներու: Եւ հարկ է ընդգծել որ

Հրանդ Անանեան շնորհիւ իր ջանադրութեան և բնատուր յատկու-



«Միջերկրականը հանդարտ» (pastel) (Հրանդ Անանեանի)

Թեանց է որ յաջողած է 1934 թուին հրապարակ գալ և թէև իբր  
 amateur՝ կազմակերպել իր մասնաւոր նկարահանողէսը, ուր ցուցա-




Ծաղկաման ճափոնական ոճով  
 (Հր. Անանեանի)

դրուած էին տարիներէ ի վեր իր պատրաստած աւելի քան հարիւր  
 նկարներն ու գծագրութիւնները, սալօնի զանազան գեղանկար ծաղ-  
 կամաններ, կտաւներ եւ այլն:

Հրանդ Անանեանի նախասիրած ճիւղն է գլխաւորաբար բնանկար  
 (paysage), ինչպէս նաև արդիական ոճով art décoratifը, որու շուրջ

աշխատածէ միջոց մը՝ երկու տարիի շափ նաև Սոֆիայի «Մօսէոն թատրոն»ի ռէժիսներու ճիւղին մէջ, իբր օգնական décorateur:



Փորորիկէն վերջ. իւղաներկ Հր. Աճաճեանի

Հրանդ Կ. Անանեան ունի դժեւու շնորհ և որոշ հասկացողութիւն և ինչպէս կ'երեւի՝ իր մէջ եռանդն ալ պէտք չէ պակսի: ՆՆՐՍԷՍ ԳԱՍԱԳԵԱՆ



ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ  
Բանասէր  
(ՏԵ՛ս յօդուածը էջ 121)



ՆՆՐՍԷՍ ԳԱՍԱԳԵԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Ա.

Ասանա 19 Ապրիլ 1910

Մեծայարգ բարեկամ  
Տիար Երուանդ Յակոբեան

Ֆիլիպի

Վաղը Ատանայէն կը մեկնիմ դէպի Զօք-Մարզուան, բայց ուզեցի  
կրկին գրել Ձեզի Զատիկի առթիւ շնորհակարութիւններս ու բարե-  
մաղթութիւններս տալու համար:

Ներփակ քանի մը լուսանկարներ կը ղրկեմ, կը կարծեմ թէ ի-  
րենց կարեւորութիւնը ունին:


Մեծ քարզը Տարսոնի կէմնիք գաբու ըսուած բերդի դուռը կը  
ներկայացնէ որուն վրայի արձանագրութեան լուսանկարն ալ կայ:

Յետոյ Լամբրոնի բերդին վրայի արձանագրութիւնն է: Թիւ 2ը  
հնութեան մը մէկմասն է:

Յետոյ Կիզնոս գետի ջրվէժի տեսարանը. այդ սպառաժներու  
մէջտեղը գացի Տարսոն:

Զատիկի առթիւ Կիլիկիան համեստ նուէրս խրկելով կը բարեւեմ  
յարգանօք Ս. ՍՈՒԻՆ

(Յ. Դ.) Զօք-Մարզուանէն փութով պիտի մեկնիմ Հայէպ: (Նոյն):



Հին ջրաւբարի մը մնացորդ  
աւերակը (թիւ 2)

Կիզնոս գետի (այժմ Տարսոնի մեջ) ջրվէժը  
Լուսանկարուած ողբ. Ս. Սուրեն

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ Ս. ՍՈՒԻՆԻ ՆԱՄԱԿԻՆ

Ահա կամբրոնի բերդի արձանագրութիւնը. համաձայն Ս. Սուինի.

«Կամաւ անմահ բարեբարին որ է պատճառ հանուրց գոյին սուրբ եւ հօր արքայն Աւետին Տեր քազաւոր Հայոց զարմին, կանգնեաց զամրոցս այս անապին նոցունց ուր աստ աստանին. զնիմնադիր այս ամրոցի զբազազարմն կոստանդին որ նա սիրէ մեծ զղեկին որ գեղն (ա՛յսպէս) քառա ուն կոչեն. աւարեցաւ ջանաւ սորին բուին ՉՆԸին (ա՛յսպէս), արդ որք ի աս աստանին եւ կամ մարմնոյ աչաւ նային զայն փոխարէն զտեր ողորմին յինել ժառանգ ադին դրախտին, ամեն»:

Այս արձանագրութիւնը որ ճանչցուած է զեղին քարի արձանագրութիւնն անուամբ ևս, ծանօթ է եղած նաև Հ. Դ. Ալիշանի, որ զայն հրատարակած է «Սիսուան»ի մէջ, էջ 144—145: Ս. Սուինի տուած թուականը՝ ՉՆԸ՝ հարկ է ուղղել ՉԿԸ (=1319) համաձայն Ալիշանի:

Այս առթիւ Ս. Սուին կու տայ նաև ուրիշ արձանագրութիւնն մըն ալ առնելով Տարսուսի եկեղեցին պահուած քարի մը վրայէն, որ ահա.

«Որ վասն այնչափ սիրոյ գոյին  
Բանդ ի կուսե առեր մարմին,  
Աղաչանաւ Աստուածամնին,  
Թող ըզյանցանսն Ձալիծին:  
Որ եւ հանգեաւ ի մեծ բուին  
ՉԿ հրնգին (=1316) յորժամ գայցես  
Յաշխարհ կրկին, յարո զա փառաւ գոյին»:  
Ն. Գ.

Բ.

(ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ)

Սիրելի բարեկամս  
պ. Երուանդ Յակոբեան

Ձառակական զբաղումներս արգիլեցին անմիջապէս պատասխանելու Ձեր դրութեան: Շատ ուրախացայ որ գեղարուեստական հաւաքոյթներ էք սարքել և համերգներ կազմակերպել:

Որոշել էք լուսանկարս բազմապատկել և ծախել յօգուտ բարեգործական նպատակներէ, ես հակառակ չեմ, եթէ կը կարծէք թէ արդիւնք կու տայ ըրէք:

Ողջոյն բոլոր բարեկամներու, Տէր Հօր վաղինակին, որ խոտի ծուխն ուրացել և հոգին կը խնկարկէ արդիս և անոր ընթանեացը:

Ողջոյն ազնիւ Տիկնոջէ և Քնդ  
Քոյք ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴԻԱՊԵՏ



## ՌՌԻՄԱՆԻՈՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԹԵՄ

Վիեննայի Մխիթարեան Միարանութեան ամէնէն Կարկառուն  
գէմքերէն մին Հայր Սահակ վրդ. Կողեան 1931ին Ֆիլիպէի Մխիթար-



եան նորարաց վարժարանի տեսչութենէն՝ բարձրացաւ Ռումանիոյ  
նորահաստատ թեմին Առաջնորդութեան անթոք: Ութը տարի Պուք-  
րէշ մնաց Հ. Կողեան այդ պաշտօնով, զգաց որ պիտի չկարենայ օգ-  
տակար ըլլալ իր թեմին, իր հրամարականը տուաւ Հոռոմայ Ս. Աթո-  
սին և Միացեալ Նահանգներու հայաշատ Պոսթընի Առաջնորդութիւնը  
ստանձնեց:


Հայր Կողեան սիրուեցաւ ու յարգուեցաւ Ռումանիոյ և ի մաս-  
նաւորի Պուքրէշի հայութենէն անխտիր, որոնք վայելեցին ճարտար  
բեմբասացին գեղեցիկ, հմտալից և ոգեւորիչ ճառերն ու բանախօսու-  
թիւնը՝ այլևայլ տօներու առթիւ:

ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՐ Տ. ՅՈՎՀ. Զ. ԼԵՆԿԷԼԵԱՆ

Ռումանիոյ հայ կթղ. թեմին ամէնէն երիտասարդը Տ. Յովհ.  
Զ. Լէնկէլ յաջորդեց Հ. Կողեանի, ընտրուած Հոռոմէն և հաստատուած  
առումէն կառավարութենէն: Գեր. Տ. Լէնկէլ հունգարահայ է. ստորեւ  
կու տամ իր ինքնակենսագրութիւնը բառ առ բառ որ հաճոյքով պի-  
տի կարդացուի, որովհետեւ նոր սորված է իր մայրենի լեզուն:

**Կենսագրութիւնս.** — Ծնած եմ Կեօրկէնի (Չոլֆ) 16 Փետր, 1908: Հայրս վանառական էր. կանուխ մեռած է: Իբր 5 տարեկան մանչ որք մնացի: Տարրական դպրոցներս Կեօրկէնի եւ Պուտաբէոս, Լիսէն Կեօրկէնի աւարած եմ: 1926ին bacaloriat քրած եմ Trg. Mures:

1926—30 Աստուածաբանութիւն սորված եմ Ալլա եւոլիայի սեմինարիոն մէջ: Այն ատեն սպաս էի հայ նախնիներուս լեզուն այ ուսումնասիրել, ան մինչեւ այն ատեն բոլորովին անձանօք լեզուն մը եր իմ առջեւ:



1930ին Կեօրկէնիի հայ կար. հասարակութեան առաստաւէր օգնութեամբք Վիեննա գացի, Մլիսիք. Հարց վանքը որ հայկական ձեւ իւրացնեմ:

1931 Յունվար 4ին քահանայ ձեռնադրեց Յովսէփ Թեոդորովիչ Լեմպերկի հայ կար. արեւպ.ը:

1931ին տուն վերադառնալով առաջին կայանս Կերլա էր, ուր օգն. ֆն. անուանուեցայ: Այն ատեն՝ երբ դէպ. Կոզեան Գերապայձառ իբր Ռումանիոյ հայ-կաթողիկէից նոր Առաջնորդը առաջին պատշոնական այցելութիւնը կատարեց. ես էի իրեն ֆով:

Քանի մը ամիս վերջ նորէն Վիեննա դրկուեցայ ուր մէկ տարի համալսարանն յանախեցի ու հայկական ուսումներս շարունակեցի:

1932 աւան՝ նորէն Կերլա կանչուեցայ իբր օգնական ֆն. եւ մանչերու որքանօցին փոքր վերակացու:

1934ին՝ Սոդոմոն եկեղեցւոյ քահանայ:

1935ին՝ Տնեսա բոլոր եկեղեցական կալուածներուն անուանուեցայ: Այս վերջին պատշոնիս մէջ (Ռումանիոյ Առաջնորդութիւնը կ'ակնարկէ Մ. Խ.) եկաւ այս անակնկալութիւնը, որ 1939 Օգոստոսի մէջ Ռումանիոյ բոլոր Հայ-Կաթողիկէից Առաքելական Առաջնորդ անուանել հանեց Սբ. Աթոռը եւ Ռումէն Տէրութիւնը՝ Գեր. Կոզեանի տեղ, որ հրաժարեցաւ:

Գեր. Յովհ. Զ. Լէնկէ: Իր Աթոռը ըստ Կոնկորատի Կերլայի  
 2. Մ. Գ.  
 242 հաստատուեց:



## ՀԱՆԳԻՍՏ Տ. Տ. ՍՈՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԻԼԻԿԻՈՅ

Նոյեմբերի մէջ հայ ազգը յանձին ողբ. հոգեւոյս Սահակ Կթ.ի նոր սուգի մը մէջ մտաւ:

Երկար է Ն. Սրբութեան կենսագրութիւնը, իր կեանքին պէս:



Ծնած է Պարրերդ 1849ին. 1867ին ընթացաւ արտ. նրուսաղէմի ժառ. վարժարանէն. 1874—79 խմբագրապետ «Սինոսի», Նուիրակ Ռուսաս. տանի 1881—5. Հոսարարապետ 1884ին, Արքեպ. 1902ին, Կաթողիկոս Սոսյ 1903ին: Իր պաշտօնավարութիւնները Կիլիկիան կսկիծնէր խորագրով Կաթող. դիւանէն լոյս ընծայուած են (տպ. Պէյրուք 1927): Ընդհ. պատերազմի շրջանին ԿԸ տարագրուի նրուսաղէմայ Ս. Յակոբայ վանքը: 1916ին Թուրքիոյ պատրիարքութիւնը և Աղթամարայ Կաթողիկոսութիւնը ջնջուելով Թուրք կառավարութեան Սահակ Կթղ. կ'անուան. ուր Կաթողիկոս-պատրիարք Թուրքիոյ Հայոց 1916ին Յուլիս 20ին:

1920ին Եւրոպայ յայտնեց և Ֆրանս. կառավարութեան մօտ ի նպաստ  
 իր հօտին դիմումներ կատարեց: 1928ին իր թարգմանը Վ. Լ. Սու-  
 պէսէրեան Հայէպի մէջ լոյս ընծայեց Օրագրութիւն Ուղեւորութեանը:  
 Կիլիկիոյ պարպումէն ետք Սահակ կթղ. ևս Սուրիա անցաւ, 1929-  
 ին Երուսաղէմայ միաբանութիւնը ընդ առաջ երթալով Ծերունա-  
 զարդ կթղ.ի խնդրանքին Սուրիոյ իր եկեղեցիները (Սոյ), զպրոցները,  
 վանատունները Կիլիկիոյ կաթողիկոսութեան յանձնեց:

Սահակ կաթողիկոս Պէյրութի մօտ Անթիլիաս փոխադրեց իր Ա-  
 թոռը, իրեն աթոռակից անուանեց Բարգէն Կիւլէսէրեան Արքեպ.ը,  
 հոն ժառանգաւորաց վարժարանը բարձր մակարդակի վրայ դրաւ՝ Շա-  
 հէն Արքեպ.ը անոր օտուէ կարգելով. իր ջանքերով Անթիլիասի հողը  
 գնուեցաւ, Ս. Լուսաւորիչ եկեղեցին կանգնուեցաւ և կեանքի 90  
 տարիները բոլորած՝ մարեցաւ ճրագի մը պէս 1939 Նոյեմբերին:

Սահակ կաթողիկոս գրասէր և գրական անձ մ'եղած է: Երուսա-  
 ղէմի ձեռագրաց կամ յիշատակարանաց ընդօրինակութիւնը սիրով  
 ըրած ու գրկած է:

Հոգելոյս կաթողիկոսին գրական գործերն են. Համաոս աշխար-  
 հագրութիւն Բնական, Քաղաքական, Ուսումնական տղ. Երուսաղէմ  
 1874, Նոր դասագիրք Տիեզերագրութեան, տպ. անդ 1876, Բովանդա-  
 կութիւն սզգային սեպիականութեանց, տպ. 1880, Բնական Պատմութիւն  
 տպ. 1888, Պատմութիւն ին կտակարանաց, տպ. 1896. Քաղաքութիւն սպա-  
 զիր Սոկրատի եւ Երուսաղէմի ձեռագրին տպ. 1898: Պատրաստած է նաև  
 Ս. Յակոբի մատենադարանին ձեռագիրներու ընդարձակ ցուցակա-  
 գրութիւնը:

Հանգիստ բաղմաչարչար և վաստակաւոր ձերունադարդ Հայրա-  
 պետին,  
 հՄԲ.

Արամ  
 Այսպետեան  
 — Մոսկովա

|         |       |
|---------|-------|
| Մեր     | 9     |
| րդած վր | 3     |
| իֆ հոս' | 9     |
|         | 9     |
|         | 6     |
|         | 4     |
|         | 16    |
|         | 17    |
|         | 22    |
|         | 1     |
|         | 6     |
|         | 14    |
|         | 21 14 |
|         | 22 17 |
|         | 153   |
|         | 155   |
|         | 155   |
|         | 157   |
|         | 159   |
|         | 160   |
|         | 161   |
|         | 162   |
|         | 163   |
|         | 170   |
|         | 176   |
|         | 179   |
|         | 186   |
|         | 190   |
|         | 193   |
|         | 194   |

Վ Ր Ի Պ Ա Կ — Ո Ի Ղ Ղ Ե Լ Ի

Մեր ընթերցողներուն ցերեղամտութիւնը կը խնդրենք գրէիս մէջ  
 ղրդած վրիպակներուն համար, որոնց կարելուրագոյնները կը նշանա-  
 յի հոս՝ խնդրելով որ նախքան կարդալը գայն սրբագրեն:  
 (Վ = վերէն, տ = տակէն)

| Եջ  | Տող       | Սխալ               | Ուղիղ                      |
|-----|-----------|--------------------|----------------------------|
| 7   | 9 Վ.      | հառաջանքի          | հառաջանքի                  |
| 14  | 3 տ.      | չուշնը             | չուշանը                    |
| 14  | 9 տ.      | աւահանք            | տահանք                     |
| 38  | 9 Վ.      | գիրցար             | գիրցար                     |
| 38  | 6 տ.      | բայց               | բա՛ց                       |
| 47  | 4 տ.      | Իսկայատուկ         | ինքնայատուկ                |
| 48  | 16 Վ.     | վերաբերեալ         | վերաբերեալ                 |
| 49  | 17 Վ.     | կը զրաղէին         | չզրաղէին                   |
| 49  | 22 Վ.     | նշմարուիլ          | համարուիլ                  |
| 55  | 11 Վ.     | նիարդ առ նիարդ     | նեարդ առ նեարդ             |
| 75  | 6 տ.      | վառն               | վառին                      |
| 14  | 7 Վ.      | տեսնուէր           | տեսնուեր                   |
| 21  | 14 տուն   | Հէլիս ու միտքս     | Հէլքս ու միտքս             |
| 22  | 17 տունին | 3-րդ տողը կղնեիդ   | կոնեիդ                     |
| 153 | 11 Վ.     | կայսեր             | կայսրներ                   |
| 155 | 1 Վ.      | Լօմարտիայէն        | Լօմպարտիայէն               |
| 155 | 10 տ.     | Ս. Հոսիփոսիմէի մէջ | Ս. Հոսիփոսիմէի տաճարին մէջ |
| 157 | 5 Վ.      | ԳրիփոՐ             | ԳրիֆոՐ                     |
| 159 | 4 տ.      | մայրաքաղաքան       | մայրաքաղաքին               |
| 160 | 19 տ.     | ի տեղուջէ          | ի տեղուջէ                  |
| 161 | 11 Վ.     | Կէլկէլեան          | Կէլկէլեան                  |
| 162 | 6 Վ.      | զաւակներուն        | զաւակներուն                |
| 163 | 12 տ.     | Ա՛լ ձեղ            | Ա՛լ ձեզ                    |
| 170 | 15 Վ.     | Յարէթը             | Արեթը                      |
| 176 | 3 Վ.      | Մինչ               | Մինչ                       |
| 179 | 11 տ.     | 1937               | 1897ին                     |
| 186 | 13 Վ.     | ալմխեմ             | ղլմխեմ                     |
| 190 |           | պատմութիւնը որ էր  | պատմութիւնը, գործին համար  |
| 193 | 15 Վ.     | կը պարուրէի        | կը պարուրէք                |
| 194 | 3.        | կենքէն             | կեանքէն                    |

1939-ի «Գաղ. Տարեգրք»-ի մէջի հետեւեալ վրիպակները եւս ուղղիլ

| Եջ | Տող | Տեղեկաւոր | Տողեկաւոր |
|----|-----|-----------|-----------|
| 50 | 9   | հեգեխառով | հողեխառով |
| 50 | 7   | ոտնահոս   | արնահոս   |

Այս

4145

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0612839